Զեռնարկը նախատեսված է արդարադատության իրականացման գործընթացում ներգրավված անձանց (մասնավորապես դատախազների, քրեական գործեր քննող դատավորների, դատախազների թեկնածուների, քրեաիրավական մասնագիտացման դատավորների թեկնածուների, քննիչների, քննիչների թեկնածուների, քրեաիրավական ոլորտում մասնագիտացած դատական ծառայողների) համար՝ ապացույցների և ապացույցների թույլատրելիության հարցերի շուրջ ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու նպատակով: Այն մշակվել է՝ հաշվի առնելով ՄԻԵԿ երաշխավորված իրավունքների (այդ թվում՝ խոշտանգումների արգելման, անձի ազատության և անձեռնմխելիության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, արդար դատաքննության իրավունքների պաշտպանության, անթույլատրելի ապացույցների օգտագործման արգելքի) պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ներպետական դատական պրակտիկայում դրա կիրառման հիմնահարցերը:

ARM

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոնցից 28-ը միաժամանակ նաև Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիան՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագիր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է անդամ պետությունների կողմից Կոնվենցիայի դրույթների կատարումը:

www.coe.int

Եվրոպական միությունը 28 եվրոպական ժողովրդավարական երկրների տնտեսական և քաղաքական յուրահատուկ գործընկերություն է՝ իր 500 միլիոն քաղաքացիների համար առավել արդար և ապահով աշխարհում խաղաղություն, բարգավաճում և ազատություն ապահովելու նպատակով: Այս ամենն իրագործելու համար ԵՄ երկրները հիմնել են մարմիններ՝ ԵՄ աշխատանքներն իրականացնելու և նրա օրենսդրությունն ընդունելու համար: Նրա հիմնական մարմիններն են Եվրոպական խորհրդարանը (որը ներկայացնում է Եվրոպայի ժողովրդին), Եվրոպական միության խորհուրդը (որը ներկայացնում է ազգային կառավարությունները) և Եվրոպական հանձնաժողովը (որը ներկայացնում է ԵՄ ընդհանուր շահերը):

http://europa.eu

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

Արտակ Հարությունյան
Տիգրան Պողոսյան

Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում

http://eap-pcf-eu.coe.int

Programmatic Cooperation Framework for Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova, Ukraine and Belarus

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

Արտակ Հարությունյան
Տիգրան Պողոսյան

Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում

ԵՐԵՎԱՆ 2017

Հեղինակներ

Ա. Գ. Հարությունյան
ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ
(Բաժին 1, Բաժին 2. § 3, Բաժին 3. § 1, § 3)

Տ. Ա. Պողոսյան
«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ, գիտահետազոտական վարչության մասնագետ (Բաժին 2. § 1, § 2, Բաժին 3. § 2)

Սույն ձեռնարկը պատրաստվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ «Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ» ծրագրի միջոցներով: Սույն ձեռնարկում ներկայացված տեսակետները որևէ ձևով չեն արտահայտում Եվրոպական միության կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները:

© Եվրոպայի խորհուրդ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....4

Բաժին 1. Ապացույցը ՀՀ քրեական դատավարությունում

§ 1. Ապացույցի հասկացությունը և որոշակի ապացույցի հիման վրա հաստատվող հանգամանքները ՀՀ քրեական դատավարությունում.....10

§ 2. Ապացույցի հավաքման և գնահատման դատավարական սուբյեկտները: Պաշտպանի դերը ապացուցման գործընթացում..... 36

§ 3. Դատախազը՝ որպես ապացուցման գործընթացի օրինականության ապահովման ինքնուրույն սուբյեկտ 48

§ 4. Վկայի, մեղադրյալի ցուցմունքները և այլ փաստաթուղթը՝ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի համատեքստում..... 54

Բաժին 2. Ապացույցների թույլատրելիության հիմնախնդիրները

§ 1. Ապացույցների թույլատրելիությունը՝ որպես արդար դատաքննության իրավունքն ապահովող կարևոր տարր 93

§ 2. Ապացույցների թույլատրելիության առանձին հարցերի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները.....100

§ 3. Ապացույցն անթույլատրելի ճանաչելու դատավարական կարգը և հետևանքները.....144

Բաժին 3. Օպերատիվ–հետախուզական գործունեության արդյունքների օգտագործումը ՀՀ քրեական դատավարությունում

§ 1. ՕՀԳ արդյունքների և ապացույցների հարաբերակցությունը 158

§ 2. Հանցագործության սադրանքը՝ որպես ՕՀԳ արդյունքների հավաստիության և թույլատրելիության վրա ազդող ինքնուրույն հանգամանք.....163

§ 3.Պետական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործումը..... 177

Դատական ակտերի և օգտագործված գրականության ցանկ 199

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը հռչակում է այն խնդիրներն ու նպատակները, որոնց լիարժեք իրացմանն է ուղղված ՀՀ քրեական դատավարությունն ընդհանրապես: Դրանք են՝ անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից, անձի և հասարակության պաշտպանությունը պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից՝ կապված իրական կամ ենթադրվող հանցավոր արարքի հետ, քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուրի բացահայտումը և քրեական օրենքով նախատեսված դեպքերում ու դատավարական օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելը, ոչ մի անմեղ անձի՝ հանցանքի կատարման մեջ չկասկածելը, չմեղադրելը և չդատապարտելը. որևէ մեկի՝ անօրինական կամ առանց անհրաժեշտության դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման չենթարկելը:

Ակնհայտ է, որ վերը նշված խնդիրների և նպատակների լիարժեք իրականացման գործընթացում ծանրակշիռ ու ինքնուրույն տեղ է զբաղեցնում ապացուցման գործընթացը՝ որպես քրեական դատավարության բոլոր փուլերին բնորոշ, օրենքով հստակ կանոնակարգված, պետական հատուկ իրավասու մարմինների կողմից իրականացվող գործունեություն, որի բաղկացուցիչ մասն է կազմում ապացուցման առարկան, այսինքն՝ կոնկրետ քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքների սպառիչ շրջանակը: Իր հերթին՝ այդ հանգամանքները քրեական դատավարությունում հանդես են գալիս ոչ թե ցանկացած, այլ որոշակի ֆորմալ և բովանդակային ձև ունեցող փաստական տվյալների՝ ապացույցների տեսքով, որոնց բավարարությունն էլ թույլ է տալիս պատասխանել անձին մեղսագրվող արարքն ապացուցված լինելու, այդ արարքի՝ քրեական օրենքով նախատեսված հանցակազմ պարունակելու, արարքի կատարման մեջ անձի մեղավորությունը հիմնավորված համարելու հարցերին և այդպիսով լուծելու քրեական դատավա-

ության խնդիրներն ու իրացնելու դատավարության՝ վերը հոչակված նպատակները:

Փաստորեն, աներկբա կարելի է փաստել, որ ապացուցումը քրեական դատավարության ամենաառանցքային գործընթացն է, իսկ ապացույցը՝ այդ գործընթացի բովանդակությունը կանխորոշող հանգամանք, որից կախված է իրականացվող քրեական դատավարության ընդհանուր արդյունքը, այն է՝ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելը կամ անմեղ անձին քրեական պատասխանատվությունից ազատելը:

Ակնհայտ է նաև այն, որ քրեական դատավարության վերը նշված նպատակներին կարելի է հասնել ոչ թե ցանկացած, այլ միայն թույլատրելի ապացույցների միջոցով, որպիսի հանգամանքը պայմանավորում է ապացույցների թույլատրելիության ինստիտուտի հետազոտումը՝ պրակտիկայում այս հարցի շուրջ առաջացող տարաբնույթ հարցերին հնարավորինս արդյունավետ լուծում տալու համար:

Փաստորեն, թույլատրելիությունը «ապացույց» հասկացության այն անբաժանելի հատկանիշն է, առանց որի խոսք չի կարող լինել փաստական որոշակի տվյալը որպես ապացույց համարելու, հետևաբար և քրեական դատավարության հետապնդած նպատակներին հասնելու մասին:

2001 թ. հունվարի 25–ին ստորագրելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան՝ Հայաստանի Հնարապետությունն ընդունեց Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների՝ իր համար պարտադիր իրավաբանական ուժ ունենալու հանգամանքը, որն իր ամրագրումը ստացավ նաև ներպետական օրենսդրությունում, մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և ՀՀ Դատական օրենսգրքում, որտեղ ներառված դրույթների համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի,

երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ապացույցների թույլատրելիության հարցին անդրադառնում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6–րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության իրավունքի շրջանակներում, որի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով»:

Նախատեսելով արդար դատաքննության իրավունքը՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6–րդ հոդվածն ամրագրում է ժողովրդավարական հասարակության հիմքը հանդիսացող օրենքի գերակայության սկբունքը և ընդգծում դատարանի բացառիկ դերը արդարադատության իրականացման հարցում:

Միևնույն ժամանակ, Կոնվենցիայի 6–րդ հոդվածով ամրագրված դրույթները Պայմանավորվող պետություններից բոլորի համար ընդհանրական արժեք են, որպիսի փաստն ավելի է կարևորում այդ դրույթների մեկնաբանությունների հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքին տիրապետելու անհրաժեշտությունը, որը ներպետական օրենսդրությունում այդ նախադեպային իրավունքը կիրառելու ամենակարևոր նախապայմաններից է:

Վերը նշվածից ելնելով է, որ հեղինակները խիստ կարևորում են ապացույցի թույլատրելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և մեծապես դրա հիման վրա ձևավորված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունը:

Հապավումներ

ՔԴՕ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք

ՔՕ՝ ՀՀ քրեական օրենսգիրք

ՎԴ՝ ՀՀ վճռաբեկ դատարան

ՄԻԵԿ՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա

ՄԻԵԴ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան

ՕՀԳ՝ Օպերատիվ–հետախուզական գործողություն(ներ)

Բաժին 1. Ապացույցը ՀՀ քրեական դատավարությունում

§ 1. Ապացույցի հասկացությունը և որոշակի ապացույցի հիման վրա հաստատվող հանգամանքները ՀՀ քրեական դատավարությունում:

§ 2. Ապացույցի հավաքման և գնահատման դատավարական սուբյեկտները: Պաշտպանի դերը ապացուցման գործընթացում:

§ 3.Դատախազը՝ որպես ապացուցման գործընթացի օրինականության ապահովման ինքնուրույն սուբյեկտ:

§4. Վկայի, մեղադրյալի ցուցմունքները և այլ փաստաթղթերը՝ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի համատեքստում:

Ուսումնական նպատակները

Ձեռնարկի այս մասն ուսումնասիրելով՝ ընթերցողը.

– կպատկերացնի քրեական դատավարության խնդիրները լուծելու և նպատակներն իրացնելու գործընթացում ապացույցի դերն ու նշանակությունը,

– կբացահայտի ապացույցի յուրաքանչյուր տեսակով հաստատվող հանգամանքի էությունը,

– կընդլայնի գիտելիքները ապացուցման գործընթացում հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի և պաշտպանի դերի մասին,

– կըմբռնի այս մասում զետեղված նյութի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան նախադեպային որոշումների բովանդակությունը և իմաստը,

– հստակ կըմբռնի «վկա» հասկացության ինքնավար բովանդակությունը,

– գիտելիքներ կունենա ցուցմունք տալիս մեղադրյալի հայտնած տվյալները որպես հանցագործության մասին սուտ մատնություն գնահատելու հնարավորության հարցի հետ կապված,

– կբացահայտի պրակտիկայում առավել հաճախ հանդիպող խնդիրները՝ կապված որոշակի փաստական տվյալը որպես այլ փաստաթուղթ ճանաչելու հարցի հետ:

§ 1. Ապացույցի հասկացությունը և որոշակի ապացույցի հիման վրա հաստատվող հանգամանքները ՀՀ քրեական դատավարությունում

Հիմնարար դրույթներ

- Ապացույցներ կարող են հանդիսանալ քրեական գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստական տվյալները:
- Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի:
- Փաստական տվյալը որպես ապացույց գնահատելու չափանիշներն են այդ տվյալի թույլատրելիությունը, վերաբերելիությունը և արժանահավատությունը:
- Կան առանձնահատուկ հանգամանքներ, որոնք ՀՀ քրեական դատավարությունում հաստատված են համարվում միայն հատուկ ապացույցի առկայության դեպքում:
- Ապացույցները պետք է լինեն բավարար՝ գործով նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները բացահայտված համարելու համար:

ՔԴՕ 104–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:

Կարելի է պնդել, որ ՔԴՕ 104–րդ հոդվածի 1–ին մասն է տալիս ապացույցի մասին հստակ պատկերացում ունենալու հիմնական չափանիշները, որոնք հանգում են հետևյալին.

ա. Ապացույց է այն փաստական տվյալը, որը կոչված է պարզելու, թե արդյոք տեղի է ունեցել հանցագործության հատկանիշներ պարունակող իրադարձություն, ում կողմից է կատարվել հանցագործությունը, արդյոք կատարված արարքի մեջ մեղադրյալը մեղք ունի, թե ոչ:

բ. Ապացույց է նաև այն փաստական տվյալը, որը «ա» կետում նշված՝ առաջնային կարևորություն ունեցող հարցերից բացի՝ ունակ է պարզելու նաև «գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ», այլ խոսքով՝ այնպիսի հանգամանքներ, որոնք իրավաբանական նշանակություն ունեն կոնկրետ գործով:

գ. Ապացույց է այն փաստական տվյալը, որը ձեռք է բերվել ՔԴՕ սահմանած կանոնների խստիվ պահպանմամբ:

դ. Ապացույց է այն փաստական տվյալը, որը գնահատվում է ՔԴՕ նախատեսված կոնկրետ սուբյեկտների, այն է՝ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի կողմից:

Այսպիսով՝ ՔԴՕ օրենսգրքի 104–րդ հոդվածի 1–ին մասը բացահայտում է այն չափանիշները, որոնց միաժամանակյա առկայությունը թույլ է տալիս պնդելու, որ փաստական տվյալը հանդիսանում է ապացույց, և այդ չափանիշներից թեկուզև մեկի բացակայությունը անվերապահորեն փաստում է փաստական տվյալի՝ ապացույց չհանդիսանալու մասին:

Արձանագրելով հանդերձ, որ ապացույց է ցանկացած փաստական տվյալ, ՔԴՕ–ն, միաժամանակ, սպառիչ թվարկում է այն աղբյուրները, որոնցից և կարող են ձեռք բերվել այդ փաստական տվյալները, այլ խոսքով՝ ՔԴՕ–ն սպառիչ թվարկում է ապացույցի այն տեսակները, որոնք հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի կողմից ենթակա են գնահատման և միայն որոնց հիման վրա է հնարավոր պարզել վերը նշված՝ «բ» և «գ» կետերում առկա հարցերը:

Համաձայն ՔԴՕ 104–րդ հոդվածի 2–րդ մասի՝ այդպիսի ապացույցներ են կասկածյալի ցուցմունքները, մեղադրյալի ցուցմունքները, տուժողի ցուցմունքները, վկայի ցուցմունքները, տվյալ գործի մեղադրանքի հետ առնչվող՝ մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի ցուցմունքները, դատապարտյալի ցուցմունքները,

փորձագետի եզրակացությունը, իրեղեն ապացույցները, քննչական և դատավարական գործողությունների արձանագրությունները, այլ փաստաթղթեր:

Նախատեսելով ապացույցների տեսակների նման բազմազանություն՝ ՔԴՕ–ն, այնուամենայնիվ, դրանցից բոլորի համար սահմանում է մեկ ընդհանուր կանոն, այն է՝ նշված բոլոր ապացույցները պետք է համապատասխանեն ապացույց հանդիսանալու վերը նշված չափանիշներին:

Թվարկված ապացույցներից որոշների՝ մեկը մյուսի հետ համեմատությունը թույլ է տալիս վերհանելու նաև այլ՝ մասնավոր ընդհանրություններ՝ ցուցմունք տալու իրավունքի, հարցաքննության կարգին, նույնիսկ բովանդակությանը վերաբերող: Այսպես, օրինակ՝ ՔԴՕ–ի 210–րդ հոդվածի համաձայն՝ տուժողի հարցաքննությունը կատարվում է վկայի հարցաքննության համար սահմանված կանոններով (հարցաքննության կարգին վերաբերող ընդհանրություն), ՔԴՕ 215–րդ հոդվածի համաձայն՝ իր նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանգամանքների շուրջ դատապարտյալի հարցաքննությունը կատարվում է մեղադրյալի հարցաքննության համար սահմանված կանոններով, ինչը, բացի հարցաքննության կարգի նմանությունը փաստելուց, փաստում է նաև տվյալ գործի մեղադրանքի հետ առնչություն ունեցող՝ մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի, իր նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանգամանքների շուրջ դատապարտյալի՝ կոնկրետ գործով հարցաքննվելիս լռելու իրավունք ունենալու հանգամանքը: ՔԴՕ 122–րդ հոդվածի 2–րդ մասը թույլատրում է, որ որոշակի դեպքերում այլ փաստաթուղթը ծառայի նաև որպես իրեղեն ապացույց, ինչը կոնկրետ դեպքերում նույնացնում է իրեղեն ապացույցը և այլ փաստաթուղթը (բովանդակության համընկնում):

Ապացույցների յուրաքանչյուրի էությունը դրևորվում է նաև այլ ապացույցների հետ ունեցած էական տարբերություններում: Այսպես՝ փորձագետի եզրակացությունը մյուս բոլոր ապացույցներից տարբերվում է նրանով, որ դրա ստացման աղբյուրը գործով չշահագրգռված անձն է՝ փորձագետը, որը գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի

որևէ բնագավառում տիրապետում է հատուկ գիտելիքների (ՔԴՕ 85–րդ հոդված, մաս 1–ին)։ Ապացույցի՝ վերը թվարկված որևէ այլ աղբյուրի համար ՔԴՕ–ն գործով չշահագրգռվածության կամ հատուկ գիտելիք ունենալու պահանջ չի նախատեսում։

ՔԴՕ–ում նախատեսված ապացույցի տեսակները տարբերվում են ստացման ձևով։ Այսպես, օրինակ՝ վկան կամ տուժողը պետք է ցանկանա համապատասխան տվյալներ հայտնել, որպեսզի հնարավոր լինի դրանք գնահատել որպես ցուցմունք, այսինքն՝ ապացույց, մինչդեռ, օրինակ, առարկան իրեղեն ապացույց է, քանի որ հանցագործության գործիք է ծառայել կամ իր վրա հանցագործության հետքեր է պահպանել, կամ հանցավոր գործողությունների օբյեկտներ է եղել, այլ խոսքով՝ առարկան իրեղեն ապացույց է իր անհատական հատկանիշների բերումով, և նրա՝ ապացույց հանդիսանալը դատավարական որևէ սուբյեկտի ցանկությամբ պայմանավորված չէ։

Անկախ այն հանգամանքից, թե այս կամ այն բնորոշ հատկանիշով որքան են նման կամ տարբեր ապացույցները, ՔԴՕ–ն սահմանում է դատավարական համապատասխան սուբյեկտի կողմից այդ ապացույցների գնահատման մեկ ընդհանուր և պարտադիր կանոն, որի համաձայն՝ ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի։ Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան, մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում (ՔԴՕ–ի 25–րդ հոդված, 2–րդ մաս)։

Վկայակոչված կանոնի իմաստը լիարժեք հասկանալու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչ է իրենից ներկայացնում ապացույցի գնահատումը։

ՔԴՕ–ի 124–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ ապացուցումը գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է։

Վերոգրյալից պարզ է դառնում, որ ապացույցի գնահատումը ապացուցման գործընթացի բաղկացուցիչ մասն է, առանց որի չի կարող հավաստվել վերը նշված՝ «բ» և «գ» կետերում առկա հարցերը պարզելու ապացույցի ունակությունը:

Ապացույցի գնահատմանը, որպես ապացուցման գործընթացի անբաժանելի տարր, անդրադարձել է ՎԴ–ն՝ Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ գործով 2010 թ. փետրվարի 12–ի թիվ ԵՔՐԴ/0632/01/08 որոշման մեջ, համաձայն որի՝ «*Ապացույցների գնահատումը, որպես ապացուցման գործընթացի տարր, իրենից ներկայացնում է մտավոր, տրամաբանական գործունեություն, որի արդյունքում եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին:*

Ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա: Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. մի կողմից՝ այն պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից՝ անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

Ապացույցները, որոնք հավաքվել և ստուգվել են օրենքին համապատասխան, կազմում են ներքին համոզմունքի այն օբյեկտիվ հիմքը, որն իր դրսևորումն է գտնում ընդունվող որոշումներում: Թեպետ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, այն չի կարող լինել կամայական: Դրա հիմքում պետք է դրված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը:

Գնահատման ենթակա են ինչպես ստացված տեղեկությունների բովանդակությունը, այնպես էլ աղբյուրները: Ապացույցների գնահատումը համապատասխան որոշումներում պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների ձևով՝ հիմնավորելով, թե ինչու որոշ ապա-

ցույցներ դրվել են որոշման հիմքում, իսկ մյուսները մերժվել են՝ ճանաչվելով ոչ հավաստի: (....)

Ապացույցները գնահատելիս պետք է ղեկավարվել օրենքով: Քրեադատավարական օրենքը քրեական դատավարության խնդիրների և սկզբունքների միջոցով սահմանում է ապացուցման առարկայի, ապացույցների հատկանիշների, ապացույցների հավաքման, ստուգման կանոնների, դատավարական որոշումներին և դրանց կայացման պայմաններին առաջադրվող պահանջները:

Որոշակի հանցանքի կատարման մեջ անձի մեղավորության կամ անմեղության մասին եզրահանգումների հիմնավորվածությունը կախված է նաև բացահայտված փաստերի վերաբերելիության ճիշտ գնահատականից: Հետևաբար, օրենսդիրը քիչ կարևոր չի համարում ապացույցի գնահատականը՝ գործին վերաբերելու կամ չվերաբերելու տեսանկյունից: Վերջին հաշվով, յուրաքանչյուր ապացույցի վերաբերելիության ճիշտ որոշումը պետք է հանգեցնի օրինական և հիմնավոր որոշում կայացնելու համար անհրաժեշտ և բավարար ապացույցների հավաքմանը:

Ապացույցների ազատ գնահատումն օրենսդիրը հռչակել է որպես քրեադատավարական օրենքի սկզբունք, համաձայն որի՝ ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: (...)

Համաձայն նշված սկզբունքի՝ ապացույցը գնահատող անձը մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերի ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տա: Միևնույն ժամանակ, ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ ապացույցը գնահատող անձը կաշկանդված չէ տվյալ ապացույցին դատավարության նախորդ փուլերում կամ տվյալ փուլի շրջանակներում այլ անձանց կամ մարմինների տված գնահատականներով:

Նախապես հաստատված ապացույցի ուժ չունենալու օրենսդրական արգելքը բացառում է որևէ ապացույցի նկատմամբ կանխակալ մոտեցում ցուցաբերելը (մյուս ապացույցների նկատմամբ այդ փաստական տվյալի ապացուցողական արժեքին առավելություն վերագրելը կամ այդ

արժեքը նվազեցնելը), քանի դեռ այդ ապացույցը քրեադատավարական օրենսգրքով ամրագրված ընթացակարգով օրինականության, մրցակցության և կողմերի իրավահավասարության, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման և այլ սկզբունքների պահպանմամբ չի հետազոտվել պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

Այնուհանդերձ, ապացույցների ազատ գնահատման սկզբունքն ապացույցների նկատմամբ կանխակալ մոտեցման արգելքը պայմանավորում է «մինչև դրանց հետազոտումը» բառակապակցությամբ, ուստի նշված նորմը չի կարող մեկնաբանվել այնպես, որ օրենսդիրն ապացույցների հետազոտումից հետո նույնպես արգելում է ապացույցների գնահատման արդյունքում դրանցից մի մասին մյուսների նկատմամբ առավելություն կամ նվազ կարևորություն վերագրելու հնարավորությունը, հակառակ դեպքում հակասական ապացույցների առկայության պարագայում հնարավոր չէ հիմնավորված հետևության հանգել անձի մեղավորության կամ անմեղության և այլ հարցերի վերաբերյալ»:

Այսպիսով՝ փաստական տվյալը կարող է գնահատվել որպես ապացույց, եթե այն թույլատրելի է, վերաբերելի և արժանահավատ: Այսինքն՝ ապացույցի գնահատման նպատակը դրա՝ վերոգրյալ հատկանիշները ունենալու հանգամանքը պարզելու մեջ է:

Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի վերաբերյալ գործով 2014 թ. հոկտեմբերի 31–ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշմամբ ՎԴ–ն, մեկնաբանելով ապացույցի՝ վերը նշված հատկանիշներից յուրաքանչյուրը, ձևավորել է նախադեպային հետևյալ դիրքորոշումը.

«*Ապացույցների թույլատրելիության հատկանիշը վերաբերում է դրանց ձևական կողմին: Դրա էությունը կազմում է ապացույցները ձեռք բերելիս օրենքով նախատեսված դատավարական պահանջների պահպանվածությունը և ենթադրում է.*

– աղբյուրի օրինականություն՝ ապացույցը պետք է ձեռք բերվի միայն օրենքով սահմանված աղբյուրներից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104–րդ հոդվածի 2–րդ մաս),

– ձեռքբերման միջոցների օրինականություն՝ պետք է պահպանված լինեն ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ կատարելուն օրենքով առաջադրված պահանջները,

– դատավարական ձևակերպում՝ ապացույցը, դրա ձեռքբերման գործընթացը պետք է օրենքով սահմանված կարգով ենթարկվեն դատավարական ձևակերպման,

– լիազորված սուբյեկտ՝ այն պետք է ստացված լինի ապացույց ձեռք բերելու լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից: (...)

Վերաբերելիությունն ապացույցի կարողությունն է իր բովանդակությամբ ծառայելու ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքները, գործի քննության և լուծման համար նշանակություն ունեցող այլ տվյալները բացահայտելուն և հաստատելուն: Այլ խոսքով՝ ապացույցի վերաբերելիության հատկանիշն արտացոլում է ապացույցի և գործի քննության ու լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների միջև կապը: Ապացույցը կհամարվի վերաբերելի, եթե տեղեկություններ պարունակի գործի համար որևէ նշանակություն ունեցող փաստի մասին:

Ապացույցի արժանահավատության հատկանիշը նույնպես վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.

ա) ապացույցի աղբյուրի հատկանիշները (օրինակ՝ փորձագետի ձեռնհասությունը, ցուցմունք տվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հատկանիշները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հատկանիշներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մտապահելու, վերարտադրելու գործընթացի վրա),

բ) ապացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից կոնկրետ հանգամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),

գ) ապացուցողական տեղեկությունը ձեռք բերելու միջոցը,

դ) ապացույցի բովանդակությունը կազմող տեղեկությունը հաստատող կամ հերքող հանգամանքների առկայությունը,

ե) նույն տեղեկության ստացումն այլ աղբյուրից:

Յուրաքանչյուր ապացույց արժանահավատության տեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների ստացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից ստացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել ստացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում՝ դրա պատճառները:

Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական տվյալների վրա»:

Այսպիսով՝ ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է նշել, որ ապացույց է օրենքով նախատեսված, դատավարական սուբյեկտի կողմից ձեռք բերված այն փաստական տվյալը, որը, բավարարելով թույլատրելիության, վերաբերելիության և արժանահավատության չափանիշներին, գործով էական նշանակություն ունեցող կոնկրետ հարցերին տալիս է որոշակի պատասխաններ:

Ապացույցը՝ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 1–ին մասի «արդար դատաքննության իրավունքի» դատական ստուգման շրջանակներում

ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի վերաբերյալ ձևավորած նախադեպային իրավունքում ՄԻԵԴ–ը բազմիցս նշել է, որ ապացույցի՝ վերը նշված չափանիշներին բավարարելու և, ըստ այդմ, այս կամ այն հանգամանքը ապացուցելն ունակ լինելու գնահատման հարցը ներպետական օրենսդրության և դատարանների խնդիրն է: ՄԻԵԴ–ն այդ հարցին չի միջամտում այնքան ժամանակ, մինչև որ ներպետական դատարանների դատական ակտերը չեն թվում կամայական կամ անհիմն: Այլ խոսքով՝ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի նպատակը ոչ թե ներպետական դատական

ատյանների որոշումների սխալ կամ ճիշտ լինելու հանգամանքը պարզելն է, այլ այն, թե որքանով է դիմողին (պաշտպանական կողմին) հնարավորություն տրվել ներկայացնելու իր փաստարկները և հերքելու այն փաստարկները, որոնք կեղծ է համարում, քանի որ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածը սահմանում է ներպետական ատյանների կողմից ի հայտ բերած փաստական հանգամանքների արժանահավատության չափազանց լուրջ կանխավարկած *(Մատիցինան ընդդեմ Ռուսաստանի* գործով 2014 թ. մարտի 27–ի վճիռը, գանգատ թիվ 58428/10, կետ 151, *Ռամանաուսկասն ընդդեմ Լիտվայի* գործով 2008 թ. փետրվարի 5–ի վճիռը, գանգատ թիվ 74420/01, կետեր 48–74): Իր այդ մոտեցումը ՄԻԵԴ–ը բավականին բովանդակալից կերպով արտահայտել է Կոնվենցիայի 6–րդ հոդվածի հիմքով ընդդեմ Հայաստանի Հանրապետության կայացրած առաջին վճռում՝ *Գալստյանն ընդդեմ Հայաստանի* գործով դատական ակտում, որից կատարում ենք հետևյալ մեջբերումը.

«Դատարանը հիշեցնում է, որ իր լիազորությունների մեջ չի մտնում ներկայացված փաստերի ու ապացույցների ներպետական դատարանի կողմից կատարված գնահատումը փոխարինել իր սեփականով, որպես կանոն՝ ներպետական դատարաններն են, որ պետք է գնահատեն ներկայացված ապացույցները ...: Ավելին՝ չնայած 6–րդ հոդվածը երաշխավորում է արդար դատաքննությունը, այն որպես այդպիսին չի սահմանում ապացույցների ընդունելիության կանոններ, ինչը հիմնականում հանդիսանում է ներպետական օրենսդրության կարգավորման առարկա: Այդ իսկ պատճառով սկզբունքորեն դա Դատարանի խնդիրը չէ՝ որոշելու, թե արդյոք որոշակի խմբի ապացույցները կարող են ընդունելի լինել, կամ արդյոք դիմումատուն մեղավոր է, թե՝ ոչ: Հարցը, որին պետք է պատասխանել, այն է, թե արդյոք դատավարությունը, որպես ամբողջություն, ներառյալ՝ ապացույցները ձեռքբերելու միջոցները, եղել է արդար: Որպեսզի գնահատվի, թե արդյոք դատավարությունը իր ամբողջության մեջ եղել է արդար, պետք է գնահատվի նաև, թե արդյոք հարգվել է պաշտպան ունենալու իրավունքը: Մասնավորապես, պետք է քննարկվի, թե արդյոք դիմումատուին հնարավորություն տրվել է

վիճարկելու ապացույցների վավերականությունը կամ հակադրվելու դրանց կիրառմանը: Ի լրումն, ապացույցների որակը ևս պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ արդյոք այդ ապացույցների ձեռքբերման պայմանները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ: Չնայած անպայման չէ, որ ձեռքբերված ապացույցի արդարացիության խնդիր առաջանա, երբ այն զուգորդված չէ այլ նյութերով, կարելի է նշել, որ եթե ապացույցը շատ ուժեղ է և չկա դրա անվստահելի լինելու ռիսկ, այլ ապացույցների անհրաժեշտությունը համապատասխանաբար նվազում է» (Գալստյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 26986/03, 15/11/2007, § 77):

Վերը նշվածից կարելի է դուրս բերել ՄԻԵԴ–ի դատական ստուգման շրջանակների հետևյալ հիմնական հատկանիշները.

Դատավարության արդարացիությունը Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին մասի ներքո որոշելիս ՄԻԵԴ–ը.

– չի վերագնահատում ներպետական դատարանների կողմից գնահատված փաստերն ու ապացույցները,

– քննության չի առնում ներպետական դատարանների կողմից այս կամ այն ապացույցի ընդունելիության հարցը,

– քննության չի առնում մեղքի մասին հարցը:

Դրա փոխարեն ՄԻԵԴ–ը.

– գնահատում է պաշտպանական կողմի իրավունքների սահմանափակումների շրջանակը (մասնավորապես՝ համաչափությունը),

– ապացույցների որակը, որը ներառում է ապացույցի վերաբերելիության, արժանահավատության և ընդունելիության հարցերը:

Առաջին հայացքից թվում է, թե ՄԻԵԴ–ը հակասում է ինքն իրեն, քանի որ մի կողմից՝ նշում է, որ իր վերահսկողության շրջանակների մեջ չի մտնում ներպետական դատարանների կողմից արդեն գնահատված փաստերի ու ապացույցների վերագնահատումը, ինչպես նաև ապացույցների ընդունելիության հարցերը, իսկ մյուս կողմից՝ նշում է, որ ապացույցի որակը, այդ թվում՝ ապացույցի ստացման եղանակը դրա վերաբերելիության և ճշգրտության առումով (որոնք, ըստ էության, նույնն

են, ինչ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ապացույցի գնահատման ընդունելիության, վերաբերելիության և արժանահավատության կանոնները) նույնպես իր քննության առարկա են: Այդուհանդերձ, ՄԻԵԴ նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը վկայում է, որ ՄԻԵԴ–ը ապացույցի որակը քննության է առնում միայն այնքանով, որքանով դա **անհրաժեշտ է գնահատելու համար պաշտպանական կողմի իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը** և համաչափությունը գնահատելու համար: Եթե պաշտպանական կողմի իրավունքների սահմանափակումը անհամաչափորեն մեծ է, նշանակում է դատավարությունը իր ամբողջության մեջ (հետաքննություն, նախաքննությունը դատաքննությունը առաջին ատյանի դատարանում, վերաքննիչ և վճռաբեկ վարույթներում) համարում է անարդարացի: Ընդ որում՝ նույնիսկ եթե ապացույցի որակը խնդրահարույց է (օրինակ՝ ապացույցը ստացվել է առանց դատարանի թույլտվությամբ կատարված քննչական գործողությամբ) և/կամ պաշտպանական կողմի իրավունքները սահմանափակվել են (օրինակ՝ պաշտպանական կողմի միջնորդությունը մերժվել է կամ պաշտպանական կողմին զրկել են իր պաշտպանյալի դեմ ցուցմունք տված վկային հակընդդեմ հարցման ենթարկելու հնարավորությունից), ՄԻԵԴ–ը դեռ չի շտապում հայտարարել դատավարության՝ իր ամբողջության մեջ արդարացիության խախտման մասին, մինչև որ չհամոզվի, որ տվյալ ապացույցը ապացույցների զանգվածում եղել է «միակ կամ վճռորոշ ապացույցը»: Այսինքն՝ ՄԻԵԴ–ը կիրառում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105–րդ հոդվածի 2–րդ մասով սահմանված «էական» քրեադատավարական խախտում սկզբունքը, համաձայն որի՝ *«ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա»:* Այս մոտեցումը ՎԴ–ն կիրառել է Համայակ Սահակյանի գործով 2011 թ. հոկ-

տեմբերի 20–ի թիվ ԼԴ/0212/01/10 որոշման մեջ՝ հակընդդեմ հարցման իրավունքի փաստական հիմքով, որում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«...Հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքով չապահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելը քրեադատավարական օրենքի էական խախտում չի կազմի, եթե այդ ապացույցը վճռական կշիռ չունի անձի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում: Այլ կերպ՝ առանց հակընդդեմ հարցման՝ ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելու արգելքը բացարձակ բնույթ չի կրում: Ուստի այս պարագայում հանրային և մասնավոր իրավաչափ շահերի հավասարակշռությունը հնարավոր է ապահովել հանրային շահերի առավել մեծ ընդգրկմամբ (կետ 23):

«Միակ կամ վճռորոշ» կանոնի (ըստ ՄԻԵԴ–ի) կամ «էական քրեադատավարական խախտում» կանոնի (ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի կանոնի) կիրառմանը մենք ականատես ենք լինում ՄԻԵԴ–ի կողմից կայացված բազմաթիվ վճիռներում, եթե խոսքը վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6–րդ հոդվածի հիմքով «արդար դատաքննության» իրավունքին: Օրինակ՝ *Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի* գործում ՄԻԵԴ–ը պետք է որոշեր, թե արդյոք պաշտպանական կողմին վկայի դատարանում հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքից զրկելը կարող էր խախտել մեղադրյալի՝ Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին կետով սահմանված արդար դատաքննության իրավունքը: Ուսումնասիրելով դատապարտման հիմքում ընկած ապացույցները՝ դրանց վերաբերելիության, արժանահավատության, թույլատրելիության, այդ թվում նաև բավարար համակցության տեսանկյունից, ՄԻԵԴ–ը գտավ, որ մեղադրանքը հիմնավորող ապացույցները այնքան առատ էին, որ դրանց համակցության մեջ մեկ վկայի նախաքննական ցուցմունքի վրա հիմնվելը և նրան դատարանում հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքից պաշտպանական կողմին զրկելը թեև «սույն գործի պարագայում չի սահմանափակել պաշտպանական կողմի իրա-

վունքներն **այնչափ**[1], որ հանգեցնի 6–րդ հոդվածի 3–րդ մասի (դ) կետի խախտման»: Այսինքն՝ ՄԻԵԴը գնահատել է պաշտպանական կողմի իրավունքի սահմանափակման համաչափությունը գործի հանգամանքների լույսի ներքո:

Վերը նշվածին առավել մանրամասն մենք կանդրադառնանք այլ բաժիններում, իսկ առայժմ ի մի բերելով նշենք, որ ՄԻԵԴ–ի մոտեցումը ապացույցների ձեռքբերման ու գնահատման ընթացքի մասին, որպես կանոն, աներկբա է և հանգում է նրան, որ ՄԻԵԴ–ը չի քննում ազգային դատարանի դատավճռի հիմնավորվածության հարցը, այլ կերպ՝ այն, թե արդյոք ճիշտ է գնահատել ազգային դատարանը ապացույցները՝ անձի մեղավորության մասին հետևության հանգելիս: Խնդիրը հանգում է մեկ հարց որոշելուն, այն է՝ արդյոք քննությունը եղել է արդար, այսինքն՝ արդյոք քննությունը եղել է մրցակցային և իրավահավասար, որի ընթացքում կողմերը հնարավորություն են ունեցել ծանոթանալու մեկը մյուսի ներկայացրած փաստարկներին և առարկելու դրանց դեմ (*Շենքն ընդդեմ Շվեյցարիայի* գործով 1988 թ. հուլիսի 12–ի վճիռը, գանգատ թիվ 10862/84, կետեր 45–49): Ընդ որում, ինչպես արդեն նշվեց, համաձայն ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքի, դատավարության արդարացիության հարցը գնահատվում է բոլոր փուլերի հավաքական վերլուծության արդյունքում՝ սկսած նախնական քննությունից մինչև քննությունը վերաքննիչ կամ վճռաբեկ ատյաններում (*Հովհաննիսյանն ընդդեմ Բուլղարիայի* գործով 2010 թ. դեկտեմբերի 21–ի վճիռ, գանգատ թիվ 31814/03, կետ 30, *Խոդորկովսկին և Լեբեդևն ընդդեմ Ռուսաստանի* գործով վճիռ, գանգատներ թիվ 11082/06 և 13772/05, կետ 710):

ՔԴՕ 108–րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական գործով վարույթում ստորև նշված հանգամանքները կարող են հաստատվել միայն հետևյալ ապացույցները նախապես ստանալով և հետազոտելով.

1) Մահվան պատճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը՝ դատաբժշկական փորձագետի եզրակացությունը.

2) Հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության

[1] Ընդգծումը մերն է:

հետևանքով մեղադրյալի ունակ չլինելը դեպքի պահին գիտակցելու իր գործողությունների (անգործության) բնույթը և նշանակությունը, դրանց վնասակարությունը կամ ղեկավարելու դրանք՝ դատահոգեբուժական կամ դատահոգեբանական փորձագետի եզրակացությունը.

3) Վկայի կամ տուժողի ունակ չլինելը ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները՝ դատահոգեբուժական փորձագետի եզրակացությունը.

4) Գործի համար նշանակություն ունենալու դեպքում՝ տուժողի, կասկածյալի, մեղադրյալի որոշակի տարիքի հասնելը՝ տարիքի մասին փաստաթուղթը, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատաբժշկական և դատահոգեբանական բնագավառների փորձագետների եզրակացությունները.

5) Կասկածյալի և մեղադրյալի մոտ նախկին դատվածության առկայությունը և նրան որոշակի պատիժ նշանակելը՝ համապատասխան տեղեկանքը, իսկ հնարավորության դեպքում՝ նաև դատարանի դատավճռի պատճենը»:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ անկախ նրանից, թե վերոշարադրյալ հանգամանքների մասին վկայող ուրիշ ինչ ապացույցներ են գործով ձեռք բերվել, միևնույն է, մահվան պատճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը, հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության հետևանքով դեպքի պահին իր գործողությունների (անգործության) բնույթը և նշանակությունը, դրանց վնասակարությունը գիտակցելու կամ իր գործողությունները ղեկավարելու մեղադրյալի ունակությունը, քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու վկայի կամ տուժողի ունակությունը, գործի համար նշանակություն ունենալու դեպքում՝ տուժողի, կասկածյալի, մեղադրյալի որոշակի տարիքի հասնելը, կասկածյալի և մեղադրյալի մոտ նախկին դատվածության առկայությունը պետք է հավաստվեն բացառապես վերոգրյալ ապացույցներով:

Չնայած նրան, որ նշված փաստերը հաստատելու համար ՔԴՕ–ն թույլատրում է օգտագործել միայն հատուկ ապացույցներ, այնուամե-

նայնիվ, այդ ապացույցները հանցանք կատարելու մեջ անձին մեղավոր ճանաչելու հարցում կարող են նշանակություն ունենալ միայն այն պարագայում, երբ դրանք կապակցված են այլ, անձին մեղավոր ճանաչելու հարցին սպառիչ պատասխաններ տվող այլ ապացույցների հետ, այլ խոսքով՝ անձը կարող է հանցանք կատարելու մեջ ճանաչվել մեղավոր, եթե դրա մասին է փաստում գործով հավաքված ու գնահատված ապացույցների բավարար համակցությունը:

«Ապացույցի բավարարություն» եզրույթը ՎԴ–ն մեկնաբանել է Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով 2011 թ. դեկտեմբերի 22–ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման մեջ, համաձայն որի՝ «*եթե ապացուցման առարկան ցույց է տալիս, թե ինչ է անհրաժեշտ պարզել յուրաքանչյուր քրեական գործով, ապա ապացույցների բավարարությունը կապված է այն ապացուցողական նյութի հետ, որը վերաբերում է ապացուցման առարկային և թույլ է տալիս այդ հանգամանքների մասին գալ արժանահավատ հետևության: Որոշելով ապացույցների բավարարությունը՝ վարույթն իրականացնող մարմինները լուծում են քրեական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների հետազոտման խորության աստիճանի հետ կապված հարցերը, մասնավորապես այն, թե ինչ աստիճանի պետք է մանրացվի յուրաքանչյուր հանգամանքը, և ինչ ծավալի ապացույցներ են անհրաժեշտ այդ հանգամանքները հավաստի պարզելու և դրա հիման վրա այս կամ այն դատավարական որոշումը կայացնելու համար:*

Այսպիսով՝ ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը:

Ի տարբերություն ապացուցման առարկայի՝ «ապացույցների բավարարություն» հասկացության բովանդակությունը քրեական դատավարության օրենսդրությամբ բացահայտված չէ, այսինքն՝ օրենքում հստակ

նշում չկա այն մասին, թե մինչև երբ պետք է հավաքվեն և հետազոտվեն ապացույցները, որպեսզի յուրաքանչյուր գործով պարզվի ապացուցման առարկան ամբողջությամբ կամ նրա փարրերն առանձին վերցրած: Բացի այդ՝ օրենքում սահմանված չէ միասնական չափանիշ առ այն, թե երբ են ի հայտ գալիս յուրաքանչյուր քրեական գործով ապացուցման առարկան բացահայտված համարելու հիմքերը:

Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծության հիման վրա արձանագրում է ապացույցների բավարարությունը որոշելու հետևյալ ընդհանուր չափանիշները՝

1) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունք,

2) դատավարական որոշումների հիմնավորվածություն և պատճառաբանվածություն,

3) անմեղության կանխավարկած»:

Ներքին համոզմունք: Ինչպես արդեն նշվեց, Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ գործով 2010 թ. փետրվարի 12–ի թիվ ԵՔՐԴ/0632/01/08 որոշմամբ ՎԴ–ն արձանագրել է, որ «*Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն մի կողմից՝ պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից՝ անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:*

Ապացույցները, որոնք հավաքվել և ստուգվել են օրենքին համապատասխան, կազմում են ներքին համոզմունքի այն օբյեկտիվ հիմքը, որն իր դրսևորումն է գտնում ընդունվող որոշումներում: Թեպետ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, այն չի կարող լինել կամայական: Դրա հիմքում պետք է դրված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը:

Գնահատման ենթակա են ինչպես ստացված տեղեկությունների բովանդակությունը, այնպես էլ աղբյուրները: Ապացույցների գնահատումը համապատասխան որոշումներում պետք է արտահայտվի պատճառա-

բանված եզրահանգումների ձևով՝ հիմնավորելով, թե ինչու որոշ ապացույցներ դրվել են որոշման հիմքում, իսկ մյուսները մերժվել են՝ ճանաչվելով ոչ հավաստի»:

Վերը նշված մոտեցումն արտահայտված է նաև ՄԻԵԴ որոշումներում: Մասնավորապես, *Պոպովն ընդդեմ Ռուսաստանի* գործում (թիվ 26854/04, 13/07/2006) ՄԻԵԴ–ի խնդիրն էր որոշելը, թե արդյոք ազգային դատարանի կողմից պաշտպանի միջնորդությունների մերժումը, որով վերջինս փորձում էր ապացուցել իր պաշտպանյալի այլուրեքությունը, անհամաչափորեն չէր սահմանափակել պաշտպանության իրավունքները և այդպիսով հանգեցրել արդար դատաքննության իրավունքի խախտումը: Դա որոշելու համար ՄԻԵԴ–ը որոշեց նախ ուսումնասիրել, թե ինչ ապացույցներ էին ընկած մեղադրանքի հիմքում.

«177. Դատարանը կրկնում է, որ զենքերի հավասարության սկզբունքից բխում է, որ դիմողին պետք է տրամադրվի «ողջամիտ հնարավորություն», որ իր գործը ներկայացնի այնպիսի պայմաններում, որպեսզի չհայտնվի իր հակառակորդի նկատմամբ էապես անբարենպաստ վիճակում:

178. Զենքերի հավասարության սկզբունքը չի սահմանափակվում 6–րդ հոդվածի 3(դ) կետով, և ոչ էլ այս հոդվածի 1–ին մասով… Դատարանի խնդիրն է պարզել, թե արդյոք վարույթն իր ամբողջությամբ եղել է արդարացի, ինչպես պահանջվում է հոդվածի 1–ին մասով…:

179. Այդ պատճառով, թեև սովորաբար ազգային դատարաններն են որոշում, թե արդյոք անհրաժեշտ է դատակոչել կոնկրետ վկայի, այնուամենայնիվ, որոշ առանձնահատուկ հանգամանքների դեպքում Դատարանը կարող է եզրակացնել, որ վկային չհարցաքննելը հակասել է 6–րդ հոդվածին:

180. Որպեսզի [Դատարանը] որոշի, թե արդյոք տվյալ դեպքում դիմողին տրվել է ողջամիտ հնարավորություն իր գործը ներկայացնելու այնպես, որպեսզի դատախազի համեմատ հայտնված չլինի էապես անբարենպաստ վիճակում, և թե արդյոք դատաքննությունն իր ամբողջությամբ իրականացվել է արդարացի կերպով, Դատարանն առաջին հերթին կուսումնասիրի, թե որոնք էին դիմողին դատապարտելու հիմքերը»:

Թվում է, թե ՄԻԵԴ–ը խախտում է սուբսիդիարության սկզբունքը, քանի որ քննության է առնում մեղադրանքի և դատապարտման հիմքում ընկած, ազգային դատարանների կողմից գնահատված ապացույցները: Այդուհանդերձ, դա այդպես կլիներ, եթե ՄԻԵԴ–ը դա աներ մեղքի մասին հարցը լուծելու կամ գնահատելու նպատակով, մինչդեռ նման քայլը պայմանավորված է զուտ որոշելու համար, թե արդյոք պաշտպանական կողմի իրավունքները, բացառապես վերջինիս միջնորդությունները մերժելու արդյունքում, չեն սահմանափակվել ավելին, քան դա խստորեն անհրաժեշտ է դատավարության արդարացիությունը ապահովելու նպատակով:

Մանրամասն վերլուծելով դատապարտման հիմքում ընկած ապացույցները՝ դրանց վերաբերելիության ու արժանահավատության տեսանկյունից, կամ, ինչպես նշվեց վերևում, դրանց բովանդակությունը և աղբյուրները, ՄԻԵԴ–ը միաժամանակ գնահատման է ենթարկել, թե ինչպես էին ազգային դատարանները հանգել իրենց եզրահանգումներին, կամ թե ինչու էին ազգային դատարանները առավելություն տվել ապացույցների մի խմբին և մերժել ապացույցների մյուս խումբը՝ դրանք ճանաչելով ոչ արժանահավատ.

«Ինչևէ, Դատարանը, սակայն, նկատում է, որ առաջին ատյանի դատարանը ոչ մի բացատրություն չի տվել, թե վերը նշված [ապացույցները] ինչպես էին ապացուցում դիմողի մեղքը, և ոչ էլ բացատրել է, թե դրանք ընդհանրապես ինչ կապ ունեին գործի հետ՝ բացի մահացածի դատաբժշկական փորձաքննությունը և դեպքի վայրի արձանագրությունը, որոնք թեև գործի հետ կապ ունեին, սակայն միայն հաստատում էին մահվան փաստը… Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ դատարանը չի պարզել ո՛չ վեճի պատճառը և ո՛չ էլ սպանության գործիքը…. վերաքննիչ դատարանն էլ չի կատարել փաստերի իր սեփական գնահատականը: Հետևաբար, Դատարանի կարծիքով, դիմողին սպանության համար դատապարտելը վճռորոշ մասով հիմնված էր այն ենթադրության վրա, որ դիմողը զոհի հետ ինչ–որ կռվի մեջ է ներգրավված եղել, որը տեղի է ունեցել հանցանքի վայրից ոչ հեռու, որն էլ առաջին ատյանի դատարանը հիմնավորել է դպրոցականների հայտարարություններով» (կետ 183):

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, թե ինչպես է միջազգային ատյանը գնահատման ենթարկում ազգային դատավորի կողմից փաստերի և ապացույցների վերլուծության եղանակը, ընդ որում՝ դա անում է զգուշորեն, որպեսզի չխախտի սուբսիդիարության ընդհանուր սկզբունքը (կամ ազգային իրավական համակարգի ինքնավարությունը), քանզի դատական ստուգման նպատակն է բացառապես Կոնվենցիայի կիրառությունը ստուգելը: Պարզելու համար, թե արդյոք պաշտպանական կողմի իրավունքները չեն սահմանափակվել անհամաչափորեն, դատարանը սահմանափակման նպատակահարմարությունը համադրում է ոչ միայն մեղադրանքի հիմքում ընկած ապացույցների արժանահավատության և վերաբերելիության հետ, այլ նաև, թե ինչպես են ազգային դատարանները հանգել իրենց եզրահանգումներին: Իսկ եթե նշենք առավել ամփոփ, Դատարանը փնտրում է կամայականության տարրեր ազգային դատարանների որոշումներում, որոնք կարող էին անհամաչափորեն սահմանափակել պաշտպանական կողմի իրավունքները և այդպիսով ազդել գործի ելքի վրա, ինչպես նաև դատավարության՝ իր ամբողջության մեջ արդարացիության վրա՝ Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին մասի հիմքով:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ թեև ՄԻԵԴ–ը չի քննարկում անձի դատապարտման հիմնավորվածության հարցը, հետևաբար չի անդրադառնում դատապարտելիս ապացույցների բավարարության հարցին, սակայն ապացույցների բավարարությունն է այն հենքը, որի արդյունքներով կարելի է խոսել անձի դատապարտման հիմնավորվածության մասին, ինչպիսի փաստից է մեծապես կախված նաև անձի նկատմամբ իրականացված դատաքննության արդարությունն ընդհանրապես:

Դատավարական որոշումների հիմնավորվածություն և պատճառաբանվածություն:

Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով 2011 թ. դեկտեմբերի 22–ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշմամբ արձանագրվել է, որ քրեական վարույթի ընթացքում ընդունվող որոշումներից յուրաքանչյուրը պահանջում է ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների ապացուցվածության տարբեր աստիճաններ: Օրինակ՝ քրեական գործ հարուցելու

կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշման համար բավարար է նաև այդ հանգամանքների ենթադրյալ ապացուցվածությունը, մինչդեռ մեղադրական դատավճռի դեպքում պահանջվում է այդ հանգամանքների հավաստի ապացուցվածություն:

Ապացույցների բավարարությունն այս տեսանկյունից ընդգծում է ապացուցողական գործունեության շրջանակները, որն ապահովում է այս կամ այն դատավարական որոշումը կայացնելու համար անհրաժեշտ հանգամանքների վերաբերյալ ապացուցման սուբյեկտի իմացության չափը:

Ապացույցների բավարարության մասին ՎԴ–ի նախադեպային իրավունքն իր զարգացումը ստացավ Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի վերաբերյալ 2014 թ. հոկտեմբերի 31–ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման մեջ, համաձայն որի՝ «*Գործի լուծման համար բավարար ապացույցներ ասելով՝ պետք է հասկանալ թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցություն, որը, հաղթահարելով անմեղության կանխավարկածը, անաչառ դիտորդի մոտ կձևավորի հիմնավոր կասկածից վեր համոզվածություն անձի մեղավորության վերաբերյալ, ինչպես նաև կհաստատի գործով ապացուցման առարկան կազմող մյուս հանգամանքները և հնարավորություն կտա կայացնելու հիմնավորված և պատճառաբանված որոշում» (...):*

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով՝ պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով,

որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած»:

Վերը նշվածով առաջին անգամ ՀՀ ներպետական իրավական համակարգում ներմուծվեց *ապացույցի շեմ* հասկացությունը: ՀՀ դատավարական օրենսգրքերը և իրավական ակտերը սահմանում են ապացույց, ապացույցի բեռ, ապացույցի գնահատման եղանակներ, սակայն *ապացույցի շեմ* հասկացությունը երբեք մինչ այս որոշումը շոշափելի, առարկայական ձևակերպում չի ստացել: «Հիմնավոր կասկածից վեր» շեմը ըստ Վճռաբեկ դատարանի սահմանում է ապացույցների համակացության «քանակը»: Քրեական դատավարության օրենսգրքում դա չափվում է «բավարար» եզրով, մինչդեռ Վճռաբեկ դատարանը տվեց այդ եզրի չափման միավորը: *Ապացույցի շեմ* հասկացությունը ակտիվորեն կիրառում է ՄԻԵԴ–ը և այդ շեմը տարբեր է՝ կախված գործի բնույթից: «Ողջամիտ կասկածից վեր» շեմը ՄԻԵԴ–ը կիրառում է, որպես կանոն, այնպիսի գործերում, որտեղ իրավախախտումը հիմնավորող ապացույցները առերևույթ հասանելի չեն և ՄԻԵԴ–ը ստիպված հիմնվում է իրավախախտման հետևանքը ցույց տվող փաստական տվյալների առատության վրա, նույնիսկ եթե դրանք չունեն ապացույցի ուժ ազգային դատավարական նորմերի համաձայն: Օրինակ, եթե անձը փաստաթղթերով կամ վկաներով հիմնավորում է, որ մինչև ձերբակալվելը կամ կալանավորվելը չի ունեցել մարմնական վնասվածքներ, իսկ ձերբակալումից կամ կալանավորումից հետո դիտորդների վկայությամբ նրա մարմնի վրա առկա են եղել ծեծի և անմարդկային վերաբերմունքի հետքեր, ապա նույնիսկ դատաբժշկական փորձաքննության եզրակացության բացակայության դեպքում ՄԻԵԴ–ը կարող է հաստատված համարել իրավախախտման առկայությունը, եթե փաստերի առատությունից կարելի է բխեցնել «ողջամիտ կասկածից վեր» շեմից, որ անձը ստացել է մարմնական վնասվածքներ: Իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարմնական վնասվածքները ստացվել են նրա ձերբակալումից հետո, այսինքն՝ ոստիկանության բացարձակ իրավազորության ներքո գտնվելիս, ապա փաստի կանխավարկածի ուժով իրավախախտումը կվերագրվի ոստիկանությանը՝ անկախ այն հանգամանքից, ինչ-

պես նշվեց վերևում, որ բացակայում է ապացույց, թե ում կողմից, երբ, որտեղ և ինչպես են հասցվել մարմնական վնասվածքները:

Պետք է նշել, որ «ողջամիտ կասկածից վեր» շեմը, ըստ ՄԻԵԴ–ի, բավականին բարձր շեմ է, և դիմումատուներից երբեմն մեծ ջանքեր են պահանջվում հիմնավորելու համար փաստերի ուժով պնդելու իրենց պահանջների հիմնավորվածությունը և արժանահավատությունը: ՀՀ–ի դեմ կայացված մի շարք վճիռներում ՄԻԵԴ–ը կիրառել է ապացուցման այս շեմը: Մասնավորապես, *Վիրաբյանն ընդդեմ Հայաստան*ի գործով վճռում ՄԻԵԴ–ը ողջամիտ կասկածից վեր շեմը կիրառել է ոստիկանների կողմից անձին խոշտանգման ենթարկելու և քրեական գործով քննություն իրականացնող մարմնի կողմից անձի նկատմամբ խտրական վերաբերմունքի առկայությունը հիմնավորելու համար (թիվ 40094/05, 02/10/2012, §§ 150, 220):

Անմեղության կանխավարկած

Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի վերաբերյալ գործով 2011 թ. դեկտեմբերի 22–ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշմամբ ՎԴ–ն արձանագրել է, որ «*արդար դատական քննության հիմնարար իրավունքի ապահովումն առանց անմեղության կանխավարկածի պահպանման հնարավոր չէ: Նշված սկզբունքը ենթադրում է, որ հանցագործություն կատարած յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքը չի ապացուցվել օրենքով նախատեսված կարգով: Անմեղության կանխավարկածի սկզբունքը կանխորոշում է քրեական գործի դատաքննության ողջ բովանդակությունը և էությունը՝ անկախ քրեական հետապնդման իրավական ելքից:*

Անմեղության կանխավարկածի բովանդակությունն արտացոլված է միջազգային իրավունքում համընդհանուր ճանաչում ստացած՝ «կասկածը մեկնաբանվում է հօգուտ մեղադրյալի» (in dubio pro reo) կանոնի մեջ: (...)

Անմեղության կանխավարկածի նկատմամբ հարգանքի պահանջն առաջին հերթին վերաբերում է դատարանին՝ որպես գործն ըստ էության լուծող անկողմնակալ մարմնի»:

Անդրադառնալով անմեղության կանխավարկածին՝ որպես ՄԻԵԿ–ի

6–րդ հոդվածի բաղկացուցիչ տարրի, *Վուլախը և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի* գործով վճռում ՄԻԵԴ–ն ընդգծել է. «*Դատարանը շեշտում է, որ վերջնական մեղադրական դատական ակտի բացակայության պայմաններում առկա է հիմնարար տարբերություն անձի կողմից հանցանք կատարված լինելու վերաբերյալ կասկած արտահայտելու և դատական ակտում անձի կողմից տվյալ հանցանքը կատարված լինելու վերաբերյալ հստակ ձևակերպում տալու միջև: Հաշվի առնելով շրջանային և ռեգիոնալ դատարանների դատական ակտերում առկա ձևակերպումների հստակ և անվերապահ բնույթը՝ Դատարանը գտնում է, որ դրանք հանդիսացել են պարոն Վուլախի մեղքի վերաբերյալ դատողություն, որը կատարվել է նախքան նրան օրենքով սահմանված կարգով մեղավոր ճանաչելը: Դատարանն ընդգծում է, որ ներպետական դատարանի կողմից նման բնույթի ժամանակավրեպ դատողություն անելու համար ոչ մի արդարացում չի կարող լինել* (...)» (*Վուլախը և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2012 թվականի հունվարի 10–ի վճիռը, գանգատ թիվ 33468/03, կետեր 33–37):

Համաձայն ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքի՝ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 2–րդ կետով սահմանված՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը կիրառելի է քրեական դատավարության ողջ ընթացքի նկատմամբ՝ անկախ դրա արդյունքից, քանի որ անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում կարող է արձանագրվել նաև այն դեպքում, երբ անձը վերջնական դատական ակտով չի դատապարտվել (*Մինելլին ընդդեմ Շվեյցարիայի* գործով 1983 թ. մարտի 25–ի վճիռը, գանգատ թիվ 8660/79, կետեր 25–41):

Հարկ է նշել նաև, որ ՄԻԵԴ–ն անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտումը չի գնահատում դատաքննության ամբողջ համատեքստում՝ ավելի շատ այն դիտարկելով իբրև դատավարական առանձին և ինքնուրույն թերացում: Այդպիսի թերացման հարցը քննարկելիս Դատարանը շեշտադրում է վիճահարույց արտահայտությունը հետևյալ հարցերի համատեքստում.

- Ո՞ր փուլում է գտնվել դատավարությունը, և ինչ ընդհանուր համատեքստում է արվել վիճարկվող արտահայտությունը:

- Հատկապես ինչ տեքստային ձևակերպում է ունեցել այդ արտահայտությունը
- Վիճարկվող արտահայտությունն ինչ նշանակություն է ունեցել (*Դակպարասն ընդդեմ Լիտվայի* գործով 2000 թ. հունվարի 11–ի վճիռը, գանգատ թիվ 42095/98, կետեր 42–45):

Միևնույն ժամանակ, համաձայն ՄԻԵԴ–ի դիրքորոշման, կասկած արտահայտող ձևակերպումների առկայությունը մինչդատական քննության ընթացքում չի պարունակում անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման հատկանիշներ, սակայն պետական պաշտոնյաները պարտավոր են զգուշավոր լինել այդ կասկածին վերաբերող իրենց արտահայտություններում (*Իսմաիլովը և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2009 թ. նոյեմբերի 26–ի վճիռը, գանգատ թիվ *33947/05*, կետեր 162–170):

ՄԻԵԴ–ը նշում է նաև, որ «մեղք» և «ապացուցված» չափազանց միանշանակ բառերի օգտագործումը կարող է և չհանգեցնել ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 2–րդ կետի խախտման արձանագրման, եթե դրանց իմաստը որոշակի ոչ հրապարակայնացված կամ ոչ հանրային համատեքստում կարող է տրամաբանորեն այլ կերպ ընկալվել, օրինակ՝ այն դեպքում, երբ դրանք ընդամենը վկայում են դատախազի՝ նախաքննությունից դատաքննության փուլին անցնելու համար ապացույցների բավարարությանը վերաբերող համոզմունքի մասին (*Դակպարասն ընդդեմ Լիտվայի* գործով 2000 թ. հունվարի 11–ի վճիռը, գանգատ թիվ 42095/98, կետեր 42–45): Այդուհանդերձ, եթե խոսքը վերաբերում է նախաքննական մարմինների կողմից քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործը կարճելու մասին որոշումներին, անմեղության կանխավարկածը պետք է հարգել: *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում, վկայակոչված վերևում, ՄԻԵԴ–ը անմեղության կանխավարկածի խախտում համարեց քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման հետևյալ հիմնավորումը.

«Հաշվի առնելով այն փաստը, որ հանցանքի կատարման պահին [դիմումատուն] ևս կրել է իր առողջության համար միջին ծանրության

վնաս.... ենթարկվել է վիրահատության.... ինչն անդառնալի, և, ըստ էության, զրկանքներ կրելով՝ նա փոխհատուցել է իր մեղքը և այդպիսի հանգամանքներում նպատակահարմար չէ նրա նկատմամբ իրականացնել քրեական հետապնդում, ես որոշել եմ .... դադարեցնել հետապնդումը [դիմումատուի նկատմամբ] (կետ 82):

Փաստորեն, ոչ արդարացման հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը նույնպես չպետք է պարունակի արտահայտություն անձի մեղքի մասին:

Համաձայն ՄԻԵԴ–ի դիրքորոշման՝ անմեղության կանխավարկածը գործում է նաև վերաքննիչ, ընդհուպ մինչև վճռաբեկ վարույթներում՝ անձին չզրկելով ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 2–րդ կետով սահմանված երաշխիքներից (*Կոնստասն ընդդեմ Հունաստանի* գործով 2011 թ. մայիսի 24–ի վճիռը, գանգատ թիվ 53466/07, կետեր 34–37):

Անմեղության կանխավարկածը կարող է խախտվել նաև խափանման միջոց կալանավորման մասին դատարանի որոշմամբ, որի նպատակը թեև անձի նկատմամբ խափանման միջոցի հարցի լուծումն է, սակայն դրանում կարող են տեղ գտնել մեղքի մասին առերևույթ հայտարարություններ: Այդ խնդրին անդրադարձել է ՀՀ վճռաբեկ դատարանը Ա. Առաքելյանի գործով 2010 թ. հուլիսի 23–ին թիվ ԵԿԴ/0580/06/09 գործով կայացրած որոշման մեջ այն փաստական հիմքով, որ առաջին ատյանի դատարանը մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կալանավորման անհրաժեշտությունը բխեցրել է, inter alia, այն փաստի, որ նա հրաժարվել է ցուցմունք տալուց (կետ 19): Այդ առումով Վճռաբեկ դատարանը արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը, որ իր դեմ ցուցմունք չտալու մեղադրյալի իրավունքի բովանդակությունն առաջին հերթին կազմում է լռություն պահպանելու իրավունքը և մեղադրյալի կողմից իր դատավարական իրավունքների իրականացումը ոչ մի դեպքում չի կարող մեկնաբանվել ի վնաս մեղադրյալի և հիմք հանդիսանալ ինչպես կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, այնպես էլ կալանավորման ժամկետը երկարացնելու համար (նույն տեղում):

§ 2. Ապացույցի հավաքման և գնահատման դատավարական սուբյեկտները: Պաշտպանի դերը ապացուցման գործընթացում

Հիմնարար դրույթներ

- Հետաքննության մարմինը ապացույցների հավաքման սահմանափակ հնարավորություն ունեցող սուբյեկտ է:
- Ապացույցների հավաքման գլխավոր սուբյեկտը քննիչն է:
- Պետությունն ունի պոզիտիվ պարտականություն՝ փոխարինելու իրավաբանական օգնությունն ակնհայտ ոչ պատշաճ իրականացնող պաշտպանին:
- Դատավարական հնարավորությունների հավասարության սկզբունքը ենթադրում է, որ պաշտպանության կողմը պետք է ունենա մեղադրանքի կողմի համեմատ հավասար իրավունքներ ապացույցների հավաքման գործընթացում:

Ինչպես արդեն նշվեց վերևում, մարդու անմեղությունը քրեական դատավարության կարևորագույն կանխավարկածներից է, որն ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և օրենքներով, այնպես էլ ՄԻԵԴ–ի և ՎԴ–ի նախադեպային իրավունքով: Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Միևնույն ժամանակ անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:

ՔԴՕ–ն, ամրագրելով անմեղության կանխավարկածի սկզբունքը, սահմանում է, որ կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանու-

թյուն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը, և որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բաավարար ամբողջությամբ (ՔԴՕ, 18–րդ հոդված, 2–րդ և 3–րդ մասեր):

Դատավարական օրենքի նշված դրույթներն իրենց արձանագրումն են ստացել Մարգար Հակոբյանի վերաբերյալ գործով ՎԴ–ի 2013 թ. մայիսի 8–ի թիվ ԵԿԴ/0168/01/12 որոշման մեջ, որի համաձայն՝ «*Հանցանքի մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի վերաբերյալ՝ ապացուցման ենթակա յուրաքանչյուր հանգամանքի կապակցությամբ դատարանի հետևությունը պետք է հիմնված լինի ոչ թե գնահատողական դատողությունների, կանխատեսումների կամ կարծիքների, այլ կոնկրետ գործով օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղսագրվող հանցագործության և դրա հատկանիշների ապացուցման բեռը կրում է մեղադրանքի կողմը, իսկ չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի: Դրանից հետևում է, որ մեղադրանքի կողմը կրում է անձի մեղքը հաստատելու համար բավարար ապացույցներ ներկայացնելու պարտականությունը*»:

ՄԻԵԴ–ը, կարևորելով կոնկրետ գործով արդար դատական քննություն կատարված լինելու հանգամանքը, նշել է նաև, որ քրեական վարույթի իմաստով արդար դատական քննությունը ներառում է նաև անմեղության կանխավարկածի պահպանումը, ինչը նշանակում է, որ դատավորը չպետք է ելնի այն կանխավարկածից, թե անձը կատարել է իրեն մեղսագրվող հանցանքը, հանցանքի կատարման մեջ անձի մեղավորությունն ապացուցելու պարտականությունը կրում է դատախազությունը և կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի (*Թելֆներն ընդդեմ Ավստրիայի* գործով 2001 թ. մարտի 20–ի վճիռը, գանգատ թիվ 33501/96, կետ 15, *Նատունենն ընդդեմ Ֆինլանդիայի* գործով 2009 թ. մարտի 31–ի վճիռը, գանգատ թիվ 21022/04, կետ 53): Այդուհանդերձ, վերը նշվածի հետ միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ

Կոնվենցիան անհնարին չի համարում որոշ քրեական գործերով, ելնելով վարույթի, քննության, ինչպես նաև մեղադրանքի բնույթից, ապացույցի բեռը դնել մեղադրյալի վրա: Ապացուցման բեռը հայտնվում է մեղադրյալի վրա այն դեպքում, երբ դատավարությունը թույլ է տալիս կիրառել *փաստի կանխավարկած* հասկացությունը՝ կախված հանցագործության բնույթից: Ըստ ՄԻԵԴ–ի՝ դա կարող է արդարացված լինել միայն այն հանգամանքով, թե «ինչ է դրված խաղատախտակի վրա» (ակնհայտորեն նկատի ունենալով հանրային շահը), ինչպես նաև պայմանով, որ մեղադրյալի իրավունքները ապահովվեն (*Սալաբիակուն ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 10519/83, 07/10/1988, § 28):

Այսպիսով՝ ՀՀ Սահմանադրության, միջազգային կոնվենցիաներին համապատասխան հռչակելով և պահպանելով անմեղության կանխավարկածի սկզբունքը, ՔԴՕ–ն անձի մեղավորության հարցի հիմնավորումը, հետևաբար և ապացուցման պարտականությունը, դնում է խիստ որոշակի սուբյեկտային կազմի՝ մեղադրանքի կողմի վրա՝ հանձինս քրեական հետապնդման մարմինների՝ հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի:

Վերոգրյալը պայմանավորում է ապացույցների հավաքման, ստուգման և գնահատման պրոցեսում վերը նշված սուբյեկտների դերին անդրադառնալու անհրաժեշտությունը:

Հետաքննության մարմինը

ՔԴՕ–ի 56–րդ հոդվածը հետաքննության մարմինների շարքին է դասում՝

- Ոստիկանությանը.
- Զորամասերի, զորամիավորումների հրամանատարներին և զինվորական հիմնարկների պետերին՝ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև այն արարքների վերաբերյալ գործերով, որոնք կատարվել են զորամասի տարածքում կամ վերագրվում են ժամկետային ծառայության զինծառայողներին.
- Ռազմական ոստիկանությանը՝ օրենքով նրա իրավասությանը հանձնված գործերով.

- Հայաստանի փրկարար ծառայության մարմիններին՝ փրկարարական ծառայության հետ կապված գործերով.
- Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությանը՝ հրդեհներին և տեխնիկական անվտանգությանը վերաբերող գործերով.
- Հարկային մարմիններին՝ հարկային հանցագործությունների գործերով.
- Մաքսային մարմիններին՝ մաքսանենգության և օրենքով նախատեսված դեպքերում մտավոր սեփականության իրավունքի խախտման գործերով.
- Ազգային անվտանգության մարմիններին՝ օրենքով նրանց իրավասությանը հանձնված գործերով.
- Քրեակատարողական հիմնարկներին՝ այդ հիմնարկների տարածքում կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերով.
- Օդանավի հրամանատարին՝ օդանավում թռիչքի ժամանակ տեղի ունեցած հանցագործությունների վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, դատավարական օրենքը, նախատեսելով հետաքննության սահմանափակ տևողություն և հետաքննության մարմնի կողմից կատարվող քննչական գործողությունների սպառիչ շրջանակը, փաստորեն, դրան զուգահեռ հստակ ընդգծում է ապացուցման գործընթացում այս մարմնի մասնակցության աստիճանը:

Այսպես՝ ՔԴՕ–ի 188–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ «Հետաքննությունը կարող է լինել քննության սկզբնական փուլ՝ քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում», իսկ ՔԴՕ 57–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելուց հետո հանցագործություն կատարած անձին հայտնաբերելու, հանցագործության հետքերը հայտնաբերելու և ամրապնդելու ուղղությամբ կատարում է քննչական անհետաձգելի գործողություններ՝ զննություն, խուզարկություն, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների լսում, առգրավում, քննում, կասկածյալի ձերբակալում ու հարցաքննություն, տուժողների և վկաների հարցաքննություն, առերեսում, նշանակում է փորձաքննություն»:

ՔԴՕ–ի 55–րդ հոդվածի 4–րդ մասի 10–րդ կետի համաձայն՝ «Քննիչը լիազորված է առանձին քննչական գործողությունների կատարումը հանձնարարելու հետաքննության մարմնին»:

Փաստորեն, կարելի է արձանագրել, որ հետաքննության մարմինը ապացուցման գործընթացում սահմանափակ մասնակցություն ունեցող սուբյեկտ է, քանի որ.

- Ընդհանրապես կարող է չմասնակցել ապացուցման գործընթացին, եթե գործով միանգամից սկսվել է նախաքննություն, որի ընթացքում քննիչը որևէ քննչական գործողության կատարում նրան չի հանձնարարել,
- Եթե նույնիսկ քրեական գործ հարուցվելուց հետո գործով իրականացվում է հետաքննություն, ապա հետաքննության մարմինը կարող է կատարել միայն սահմանափակ տեսակի քննչական գործողություններ, հետևաբար այդ գործողությունների կատարմամբ ձեռք բերվող ապացույցների տեսակները նույնպես սահմանափակ են:

Քննիչը

ՔԴՕ–ի 188–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Նախաքննությունը պարտադիր է բոլոր քրեական գործերով»:

ՔԴՕ–ի 55–րդ հոդվածի 1–ին մասը սահմանում է, որ քննիչը պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում քրեական գործով իրականացնում է նախաքննություն:

Նույն հոդվածի 4–րդ մասի 2–րդ կետը սահմանում է, որ քննիչը լիազորված է հարցաքննելու կասկածյալին, մեղադրյալին, տուժողին, վկային, նշանակելու փորձաքննություն, կատարելու զննություններ, խուզարկություններ, առգրավումներ և այլ քննչական գործողություններ, իսկ 29–րդ կետը քննիչին է լիազորում նախնական քննության արդյունքներն ամփոփող դատավարական ակտի՝ մեղադրական եզրակացության կազմումը:

Վկայակոչված հոդվածների բովանդակությունից բխում է այն փաստը, որ քննիչն է նախաքննություն կատարող միակ դատավարական սուբյեկտը ՀՀ քրեական դատավարությունում, քննիչը քննչական գործողությունների կատարմամբ ապացույցներ է ձեռք բերում ու գնա-

հատում բոլոր քրեական գործերով, քննիչը ունի դատավարական օրենքով նախատեսված բոլոր քննչական գործողությունները կատարելու, հետևաբար և օրենքով նախատեսված ապացույցների բոլոր տեսակները ձեռք բերելու ու դրանք նախնական քննության համար որպես վերջնական գնահատելու իրավունք:

Վերոգրյալն իր հերթին քննիչին դարձնում է քրեական դատավարությունում ապացուցման բացառիկ սուբյեկտ, և արդար դատաքննությունը դատավարության բոլոր փուլերին վերաբերելի լինելու կանոնի հաշվառմամբ կանխորոշում քննիչի ուրույն դերը արդար դատաքննության իրավունքի ապահովման գործընթացում:

Պաշտպանը

ՔԴՕ–ի 73–րդ հոդվածի 1–ին մասի 5–րդ կետի համաձայն՝ «Պաշտպանը, նպատակ ունենալով պարզելու մեղադրանքը հերքող, կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը և դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները, նրա օրինական շահերը պաշտպանելու, կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի քրեական գործով ձեռք բերելու նյութեր, դրանք ներկայացնելու քրեական գործին կցելու և հետազոտելու համար»:

Նույն հոդվածի 1–ին մասի 9–րդ կետը նախատեսում է պաշտպանի՝ վարույթն իրականացնող մարմնին միջնորդություններ ներկայացնելու իրավունքը:

Վկայակոչված իրավանորմերի համակցությունից հետևում է որ, պաշտպանը քրեական գործով ապացույցներ ձեռք բերելու իրավունք չունի և նրա ձեռք բերած նյութերը կարող են որպես ապացույց ճանաչվել ու քրեական գործին կցվել այդ մասին վարույթն իրականացնող մարմնին համապատասխան միջնորդություն պաշտպանի կողմից ներկայացվելու դեպքում:

Այս առումով անհրաժեշտ է համարվում նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը, ելնելով մինչդատական վարույթում կողմերի մրցակցության իրավունքը հնարավորինս հավասարակշռելու

նկատառումից, պաշտպանի համար նախատեսում է օրենքով սահմանված կարգով ապացույցներ ձեռք բերելու և քրեական գործին կցելու ու հետազոտելու համար դրանք վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու իրավունք (43–րդ հոդված, 1–ին մաս, 5–րդ կետ):

Ընդ որում՝ ուշադրության է արժանի նաև այն, որ վարույթն իրականացնող մարմինը այդ ապացույցը դատարանին չներկայացնելու իրավունք չունի, և համարելով, որ պաշտպանի կողմից ներկայացված ապացույցն անթույլատրելի կամ ոչ վերաբերելի է, քննիչն ընդամենը կարող է այդ մասին կազմել եզրակացություն ու ներկայացված ապացույցի հետ մեկտեղ այն ներկայացնել դատարանին՝ գնահատման համար (34–րդ հոդված, 1–ին մաս, 5–րդ կետ):

Խոդորկովսկին և Լեբեդևն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռում ՄԻԵԴ–ն ընդգծել է, որ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածը մեղադրանքի և պաշտպանության կողմերին չի ընձեռում հավասար հնարավորություններ ապացույցներ ձեռք բերելու հարցում՝ միաժամանակ փաստելով, որ պաշտպանության կողմը պետք է ապացույց ձեռք բերի և դատարանին ներկայացնի այն նույն պայմաններով, ինչ մեղադրանքի կողմը (*Խոդորկովսկին և Լեբեդևն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2013 թ. հուլիսի 25–ի վճիռ, գանգատներ թիվ 11082/06 և 13772/05, կետ 728):

Նախադեպային պրակտիկայում ՄԻԵԴ–ն արձանագրել է նաև, որ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 1–ին կետով արձանագրված՝ դատավարական հնարավորությունների հավասարության սկզբունքը ենթադրում է, որ պաշտպանության կողմը պետք է ունենա մեղադրանքի կողմի համեմատ հավասար իրավունքներ ապացույցների հավաքման գործընթացում: Դատական քննության ընթացքում ապացույցների հավաքման և ներկայացման ներպետական օրենսդրությամբ սահմանված կանոնները չպետք է խոչընդոտեն, որպեսզի պաշտպանության կողմն իր վերը նշված իրավունքն իրականացնի ազատորեն (*Մատիցինան ընդդեմ Ռուսաստանի* գործով 2014 թ. մարտի 27–ի վճիռը, գանգատ թիվ 58428/10, կետ 187):

Նույն՝ *Մատիցինան ընդդեմ Ռուսաստանի* գործով 2014 թ. մարտի 27–ի վճռում ՄԻԵԴ–ը, առարկայացնելով իր՝ վերը նշված դիրքորոշումը, արձանագրել է, որ, օրինակ, պաշտպանության կողմը պետք է հնարավո-

ություններ ունենա վիճարկելու փորձագիտական ապացույցները, այդ թվում՝ այլ եզրակացություններ և կարծիքներ գործին կցելով: *Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացրած որոշման մեջ ՄԻԵԴ–ը արտահայտեց իր նախադեպային իրավունքով հաստատված կայուն նախադեպային դրույթը առ այն, որ բոլոր ապացույցները, որպես կանոն, պետք է հետազոտվեն մեղադրյալի մասնակցությամբ գործի հրապարակային քննության ընթացքում: Այսպիսով՝ ՄԻԵԴ–ը սահմանում է ապացույցների հետազոտումը **հրապարակային** դատավարության պայմաններում անցկացնելը որպես կանոն: Այդուհանդերձ, ՄԻԵԴ–ը կանոնից սահմանում է բացառություն, համաձայն որի՝ նախաքննության (այսինքն՝ ոչ հրապարակային դատավարության) պայմաններում ստացված տվյալը որպես ապացույց օգտագործելը չի խախտի արդար դատաքննության իրավունքը, եթե պաշտպանական կողմին տրվել է պատշաճ ու համարժեք հնարավորություն վիճարկելու այդ ապացույցը այն պահին, երբ դա ստացվել է, կամ էլ հրապարակային դատավարության պայմաններում (թիվ 25083/05, 16.03.2010, § 42): «Համարժեք» արտահայտությունը այստեղ նշանակում է ապացույցի վիճարկման այն հնարավորությունը, որը նա կունենար հրապարակային դատավարության պայմանում:

Փորձաքննության եզրակացությունն առանց պաշտպանության կողմի մասնակցության ստացված լինելու հանգամանքն ինքնին ՄԻԵԿ–ին չի հակասում՝ պայմանով, որ պաշտպանության կողմը դատաքննության ընթացքում ունենա դատավարական համապատասխան գործիքներ՝ այդ եզրակացությունը հետազոտելու և արդյունավետորեն վիճարկելու (կետեր 169, 175):

Միևնույն ժամանակ, նախադեպային որոշ ակտերում ՄԻԵԴ–ը կարևորել է պաշտպանի կողմից մեղադրյալին իրավաբանական որակյալ օգնություն ցույց տալու հանգամանքը, որն, իհարկե, ներառում է նաև ապացույցներ ձեռք բերելու ու դրանք դատարանին ներկայացնելու պաշտպանի գործունեությունը:

Այսպես՝ նախադեպային իրավունքում ՄԻԵԴ–ը նախ արձանագրել է, որ պետության կողմից մեղադրյալին պաշտպանով ապահովելն ինքնին չի նշանակում, որ տրամադրվող իրավաբանական օգնությունը

որակյալ է: Դրա հետ մեկտեղ պետությունը չի կարող պատասխանատու լինել պաշտպանի կողմից ոչ որակյալ կամ թերի իրավաբանական օգնություն ցույց տալու հետևանքով մեղադրյալի համար առաջացած ցանկացած բացասական հետևանքի համար: Պաշտպանի վարքագիծը, ըստ էության, պաշտպանյալի և պաշտպանի միջև առկա խնդիր է՝ անկախ նրանից, թե պաշտպանը նշանակվել է պետության կողմից, թե վարույթին ներգրավվել է մեղադրյալի հրավերով: Իրավասու ազգային մարմինները ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ կետի հիմքով պետք է միջամտեն, եթե միայն պաշտպանի կողմից արդյունավետ ներկայացուցչություն չապահովելն ակնհայտ է: Այս դեպքում պետությունը կրում է նշանակված պաշտպանին փոխարինելու պոզիտիվ պարտականություն կամ, որպես այլընտրանք, պետք է գործող պաշտպանին իր գործառույթներն ըստ պատշաճի իրականացնելու հնարավորություն ընձեռնվի դատական նիստը հետաձգելու եղանակով: Սրա հետ մեկտեղ պաշտպանի կողմից ակնհայտ ոչ պատշաճ իրավաբանական օգնություն ցուցաբերելու գնահատման միասնական չափանիշ ձևավորելը շատ բարդ է՝ հաշվի առնելով այն, որ նրա կողմից զգալի ջանքեր չգործադրելու առանձին դեպքը չի կարող բավարար համարվել, որպեսզի պետության համար առաջանա պարտականություն՝ շտկելու պաշտպանի թույլ տված թերացումները նոր պաշտպան վարույթում ներգրավելու եղանակով (*Պավլենկոն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2010 թ. ապրիլի 1–ի վճիռը, գանգատ թիվ 42371/02, կետ 99, *Արտիկոն ընդդեմ Իտալիայի* գործով 1980 թ. մայիսի 13–ի վճիռը, գանգատ թիվ 6694/74, կետեր 99–107, *Տրիպոդին ընդդեմ Իտալիայի* գործով 2001 թ. հոկտեմբերի 18–ի վճիռը, գանգատ թիվ 40946/98, կետեր 27–31):

Դատաքննության ընթացքում պաշտպանի՝ ապացուցման գործընթացին մասնակցելու դատավարական հնարավորությունը նույնպես նախատեսված է ՔԴՕ–ի 73–րդ հոդվածով, մասնավորապես նշված հոդվածի 1–ին մասի 13–րդ կետով, համաձայն որի՝ պաշտպանն իրավունք ունի մասնակցելու առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերի և գործի նյութերի հետազոտմանը:

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում ընդգծել, որ դատաքննու-

թյան ընթացքում համապատասխան նյութեր ձեռք բերելու և այն դատարանին ներկայացնելու հատուկ իրավունք դատավարական օրենքի 73–րդ հոդվածը պաշտպանի համար չի նախատեսում՝ ըստ երևույթին բավարարվելով նույն հոդվածի 1–ին մասի՝ արդեն իսկ վկայակոչված 5–րդ կետով, որի համաձայն՝ պաշտպանն իրավունք ունի քրեական գործով ձեռք բերելու նյութեր, դրանք ներկայացնելու քրեական գործին կցելու և հետազոտելու համար:

Փաստորեն, հիշյալ դրույթը դատավարական օրենքը պաշտպանի համար սահմանում է որպես ընդհանուր՝ և՛ նախնական քննության, և՛ դատական քննության փուլերի համար՝ հաջորդիվ հոդվածներում նախատեսելով այդպիսի նյութերը դատարանին ներկայացնելու կարգը: Այսպես՝ դատավարական օրենքի 331–րդ հոդվածի 1–ին մասից, 336–րդ հոդվածի 8–րդ մասից և 353–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետից բխում է, որ պաշտպանն իր՝ հիշյալ իրավունքը կարող է իրացնել կամ դատական քննության նախապատրաստական փուլում, երբ դատարանը դեռևս չի անցել ապացույցների հետազոտմանը, կամ դատաքննության ընթացքում՝ մեղադրյալի (ամբաստանյալի) ցուցմունք տալուց հետո կամ դատաքննության ավարտին, երբ հետազոտված են մինչ այդ դատարանին ներկայացված բոլոր ապացույցները և պաշտպանը միջնորդում է հետազոտել նոր ապացույցներ:

Դատարանը

ՔԴՕ–ի 23–րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա:

2. Քրեական հետապնդումը, պաշտպանությունը և գործի լուծումը տարանջատված են. դրանք իրականացնում են տարբեր մարմիններ և անձինք:

3. Դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը:

4. Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության

կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ:

Դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար:

5. Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով (...)»:

Վկայակոչված հոդվածի 4–րդ մասի 2–րդ պարբերությունը մասնավորեցված է ՔԴՕ–ի 331–րդ հոդվածի 3–րդ մասում, համաձայն որի՝ «Դատարանն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնելու վկաներ կանչելու, փորձաքննություն նշանակելու, այլ ապացույցներ պահանջելու մասին»:

Անդրադառնալով ապացուցման գործընթացում դատարանի ունեցած դերին, մասնավորապես ՔԴՕ–ի 331–րդ հոդվածի 3–րդ մասով սահմանված իրավունքը իրացնելու իրավիճակներին՝ Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով 2011 թ. դեկտեմբերի 22–ի՝ արդեն իսկ վկայակոչված թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշմամբ ՎԴ–ն հայտնել է նախադեպային դիրքորոշում այն մասին, որ «*արդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովման անկյունաքարը, ի թիվս քրեական դատավարության այլ կարևորագույն սկզբունքների, մրցակցության սկզբունքն է, որը կարող է երաշխավորվել երեք բաղադրատարրերի միաժամանակյա պահպանման դեպքում: Դրանք են՝*

ա) կողմերի դատավարական իրավահավասարություն՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար,

բ) կողմերի միջև մեղադրանքի և պաշտպանության գործառույթների տարանջատում և դրանց սահմանազատում գործի լուծման գործառույթից,

գ) անկախ և անկողմնակալ դատարանի առկայություն»:

(...) Գործող քրեադատավարական օրենսդրությունը դատական քննության փուլում ապացուցման գործունեության հիմքում դրել է ոչ թե յուրաքանչյուր քրեական գործով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայ-

տելու պարտադիր պայմանը, այլ մրցակցության և կողմերի իրավահավասարության ապահովման պահանջը, որը համարվում է արդարացի դատական ակտ կայացնելու գլխավոր պայմանը: Միաժամանակ արձանագրում է, որ դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը, ինչպես նաև այն, որ դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մրցակցությունը և ապացուցման գործընթացում դատարանի ակտիվությունը չեն հակասում միմյանց, սակայն կարևոր է հստակ որոշել դատական ակտիվության սահմանները և նպատակը, որպեսզի թույլ չտրվի դատարանին ներքաշվելու մեղադրանքի կամ պաշտպանության կողմին օգնելու, մեղադրյալի մեղքի ապացուցման կամ հերքման գործին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացուցման գործունեության մեջ դատարանի ակտիվությունը նրա համար է, որպեսզի՝

ա) ապահովվի կողմերի իրական հավասարությունը և մրցակցությունը,

բ) կանխվեն անձի իրավունքների ու օրինական շահերի խախտումները կամ անհիմն սահմանափակումները,

գ) դատարանը կայացնի հիմնավորված, օրինական և արդարացի դատական ակտ:

Վերոնշյալից հետևում է, որ դատարանը չի կրում մեղադրանքը ապացուցելու կամ քրեական հետապնդման մարմնի թույլ տված թերացումները վերացնելու պարտականություն: Ապացուցմանը մասնակցելը դատարանի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը, ընդ որում՝ դատարանն ինքն է որոշում նոր ապացույց հավաքելու անհրաժեշտության հարցը՝ բնականաբար, նպատակ չհետապնդելով աջակցելու մեղադրանքը ապացուցելուն:

(...) Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը պարտավոր է դատական ճշմարտությունը պարզելու նպատակով կողմերի համար ապահովել հավասար պայմաններ՝ միաժամանակ բացառելով անձի իրավունքների և օրինական շահերի խախտումները կամ

անհիմն սահմանափակումները: Այս առումով դատարանը սեփական նախաձեռնությամբ նոր ապացույցներ հավաքելու իր իրավունքը կարող է իրացնել միայն այն ժամանակ, երբ դատաքննության ընթացքում հետազոտվել են բոլոր ապացույցները, և կողմերը նոր ապացույցներ ձեռք բերելու միջնորդություններ չեն ներկայացրել և այն պայմանով, որ հետազոտված ապացույցները դատարանին օբյեկտիվորեն հնարավորություն չեն տալիս կայացնելու հիմնավորված, պատճառաբանված և արդարացի դատական ակտ»:

Այսպիսով՝ ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է արձանագրել, որ դատարանը՝

1. օժտված է ապացույցներ ձեռք բերելու ինքնուրույն լիազորությամբ,
2. նշված լիազորությունն իրացնում է այն դեպքում, երբ կողմերը նոր ապացույցներ ձեռք բերելու նախաձեռնությամբ հանդես չեն գալիս,
3. ապացույցներ ձեռք բերելու լիազորությունն իրացնում է բացառապես այն դեպքում, երբ արդեն իսկ եղած ապացույցների համակցությունը օբյեկտիվորեն դատարանին հնարավորություն չի տալիս կայացնելու հիմնավորված, պատճառաբանված և արդարացի դատական ակտ:

§ 3. Դատախազը՝ որպես ապացուցման գործընթացի օրինականության ապահովման ինքնուրույն սուբյեկտ

Հիմնարար դրույթ

- Դատախազը նախնական քննության ընթացքում ձեռք բերված ապացույցները վերջնականապես գնահատող դատավարական սուբյեկտն է գործով մինչդատական վարույթում:

ՔԴՕ–ն դատախազին քննչական գործողություններ կատարելու, հետևաբար և անմիջականորեն ապացույցներ ձեռք բերելու լիազորություն չի ընձեռում: Նշվածը, սակայն, դույզն–ինչ չի կարող նշանակել, որ դատախազը չունի կարևորագույն դերակատարում ինչպես ապացույց-

ներ ձեռք բերելու, այնպես էլ այդ ապացույցները գնահատելու հարցում: Այսպես՝ ՔԴՕ–ի 53–րդ հոդվածի 1–ին մասի 6–րդ կետի համաձայն՝ «Դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է հետաքննության և նախաքննության նկատմամբ իրականացնել դատավարական ղեկավարում»:

Նույն հոդվածի 2–րդ մասի 6–րդ կետը սահմանում է նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս քննչական գործողություններ կատարելու մասին հետաքննության մարմնին, քննիչին գրավոր ցուցումներ տալու դատախազի լիազորությունը, իսկ 14–րդ կետը միայն դատախազի հաստատմանն է վերապահում նախնական քննության արդյունքներն, այդ թվում՝ ապացույցների գնահատման արդյունքներն ամփոփող դատավարական ակտի՝ մեղադրական եզրակացության հաստատումը:

Վերոգրյալը նախանշում է նախնական քննության ընթացքում կատարվող ապացուցման գործընթացում դատախազի ինքնուրույն ու կարևոր դերը հետևյալ երկու ուղղություններով.

1. Որպես ապացույցներ ձեռք բերելու գործընթացը նախաձեռնող սուբյեկտ, քանի որ դատավարական օրենքի 53–րդ հոդվածի 1–ին մասի 6–րդ կետի հիմքով դատախազը լիազորված է հետաքննության մարմնին կամ քննիչին տալու ցուցում՝ ուղղված ցանկացած քննչական գործողություն կատարելուն, հետևաբար և ցանկացած ապացույց ձեռք բերելուն:

2. Որպես հետաքննության մարմնի և քննիչի ձեռք բերած ապացույցները նախնական քննության փուլում վերջնականորեն գնահատող սուբյեկտ, քանի որ դատավարական օրենքի 53–րդ հոդվածի 2–րդ մասի 14–րդ կետի հիմքով հենց դատախազն է լիազորված հաստատելու մեղադրական եզրակացությունը, հետևաբար և գնահատելու՝ արդյոք ձեռք բերված ապացույցները հաստատում են գործով էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները:

Հարկ է նշել, որ մեղադրական եզրակացությունը հաստատելիս դատախազի լուծմանը վերապահված հարցերը, այդ թվում՝ ապացույցների գնահատման մասով, ՔԴՕ–ում ստացել են ուղղակի ամրագրում: Այսպես՝ դատավարական օրենքի 273–րդ հոդվածի համաձայն՝ «Դատա-

խազն ուսումնասիրում է մեղադրական եզրակացությամբ ստացված գործը, որպեսզի ստուգի՝

1) ապացուցված է արդյոք մեղադրյալին մեղսագրվող արարքը, և այն պարունակում է արդյոք հանցակազմ.

2) հիմնավորված է արդյոք մեղադրյալի մեղավորությունը.

3) մեղադրանքի ձևակերպման մեջ ընդգրկված են արդյոք մեղադրյալի կատարած բոլոր հանցագործությունները.

4) գործով որպես մեղադրյալ ներգրավված են արդյոք հանցագործությանը մասնակցած բոլոր անձինք.

5) կան արդյոք քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հանգամանքներ.

6) ճիշտ են որակված մեղադրյալի կատարած արարքները.

7) ճիշտ է ընտրված խափանման միջոցը.

8) ձեռնարկված են արդյոք միջոցներ՝ ապահովելու քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերը.

9) բացահայտված են արդյոք հանցագործությանը նպաստող հանգամանքները, և ձեռնարկված են արդյոք միջոցներ դրանք վերացնելու ուղղությամբ.

10) կատարված է արդյոք գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն.

11) մեղադրական եզրակացությունը բավարարում է արդյոք սույն օրենսգրքի 270–րդ և 271–րդ հոդվածներով նախատեսված պահանջները.

12) պահպանված են արդյոք նախաքննության կատարման կարգը որոշող սույն օրենսգրքի բոլոր մյուս կանոնները»:

Ինչպես կարելի է համոզվել, վերոգրյալի հարցերից յուրաքանչյուրի վերաբերյալ կարելի է հիմնավոր հետևության գալ գործով այդ հարցերից յուրաքանչյուրի կապակցությամբ ձեռք բերված ապացույցները գնահատելուց հետո միայն:

Դատախազի՝ որպես ապացույցների գնահատման վերջնական սուբյեկտի մասին պատկերացումն ամբողջացնում է ՔԴՕ–ի 274–րդ հոդվածը, որի համաձայն՝

«1. Դատախազը մեղադրական եզրակացությամբ գործը ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, պարտավոր է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.

1) հաստատել մեղադրական եզրակացությունը.

2) իր որոշմամբ մեղադրանքի ձևակերպումից հանել առանձին կետեր, որակել հանցագործությունն այն օրենքին համապատասխան, որն, ի տարբերություն մեղադրական եզրակացությամբ կատարված որակումի, նախատեսում է նվազ ծանր պատասխանատվություն, և այդ փոփոխություններով հաստատել մեղադրական եզրակացությունը.

3) իր ցուցումներով գործը վերադարձնել քննիչին՝ լրացուցիչ քննություն կատարելու կամ մեղադրական եզրակացությունը վերակազմելու համար.

4) կասեցնել քրեական գործով վարույթը.

5) կարճել քրեական գործի վարույթը կամ դադարեցնել քրեական հետապնդումը:

2. Մեղադրանքը լրացնելու կամ այն առավել ծանր կամ փաստական հանգամանքներով նախորդ ներկայացված մեղադրանքից էապես տարբերվող մեղադրանքով փոխարինելու հիմքերի առկայության դեպքում դատախազը պարտավոր է գործը վերադարձնել քննիչին՝ լրացուցիչ մեղադրանք առաջադրելու կամ մեղադրանքը փոխելու համար»:

Ինչպես հետևում է վկայակոչված հոդվածից, դատախազը, գնահատելով գործով հավաքված ապացույցները և համարելով, որ դրանք բավարար չեն վերը նշված հարցերից յուրաքանչյուրի կապակցությամբ հիմնավոր հետևությունների գալու համար, կարող է, իսկ մեղադրանքը լրացնելու կամ այն առավել ծանր կամ փաստական հանգամանքներով նախորդ ներկայացված մեղադրանքից էապես տարբերվող մեղադրանքով փոխարինելու հիմքերի առկայության դեպքում պարտավոր է գործը վերադարձնել լրացուցիչ քննության՝ այդ կերպ փաստորեն ձևավորելով ապացուցման լրացուցիչ առարկա կամ փաստելով, որ քննիչի կողմից գործով ձեռք բերված ապացույցները գնահատվել են թերի:

Բացի այդ՝ համարելով, որ ձեռք բերված ապացույցները բավարար չեն ներքոշարադրյալ հետևություններին գալու համար, դատախազը,

չհամաձայնելով քննիչի կողմից կազմված մեղադրական եզրակացությունում առկա դիրքորոշման հետ, կարող է համարել, որ ապացուցված չէ մեղադրյալին մեղսագրվող արարքը կամ այդ արարքը հանցակազմ չի պարունակում կամ մեղադրյալի մեղավորությունն ապացուցված չէ՝ նշված հիմնավորումներով դադարեցնելով անձի նկատմամբ քրեական հետապնդումը և/կամ կարճելով գործով վարույթը ու այդ կերպ բացառելով վարույթի շարունակվելը:

Փաստորեն նշվածից հետևում է, որ նախնական քննության արդյունքները գնահատող վերջնական դատավարական սուբյեկտը հենց դատախազն է, և որևէ ապացույց չի կարող մեղադրանքի կամ որևէ հանգամանք հաստատված համարելու հիմքում դրվել, եթե դատախազը ապացույցի թույլատրելիության, վերաբերելիության, արժանահավատության ու բավարարության մասին ունի քննիչի հետևությանը հակառակ դիրքորոշում:

Ինչ վերաբերում է դատաքննության փուլում դատախազի՝ ապացուցման գործընթացքում ունեցած դերակատարությանն, ապա հարկ է նշել, որ նշված փուլում դատախազը ունի նույնաբովանդակ լիազորություններ, ինչ պաշտպանության կողմը, ինչը համահունչ է ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածով սահմանված՝ կողմերի մրցակցության իրավունքը և ընդհանրապես արդար դատաքննության իրավունքն ապահովելու կոնվենցիոն պահանջին՝ նկատի ունենալով բոլոր ապացույցները մեղադրանքի կողմի հետ հավասար պայմաններում ձեռք բերվելու, մեղադրյալի ներկայությամբ, հրապարակային դատաքննության ընթացքում ներկայացվելու և հետազոտվելու անհրաժեշտության մասին ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքը (*Միրիլաշվիլին ընդդեմ Ռուսաստանի* գործով 2008 թ. դեկտեմբերի 11–ի վճիռը, գանգատ թիվ 6293/04, կետեր 162, 225, *Շապչաշվիլին ընդդեմ Գերմանիայի* գործով 2015 թ. դեկտեմբերի 15–ի վճիռը, գանգատ թիվ 9154/10, կետ 103):

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում ընդգծել, որ, ի տարբերություն պաշտպանության կողմի, դատախազի՝ դատաքննության ընթացքում դատարանին ապացույցներ ներկայացնելու լիազորությունը հատուկ նախատեսված է ՔԴՕ–ով: Այսպես՝ դատավարական օրենքի

54–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ կետի համաձայն՝ «Քրեական գործը դատարանի կողմից քննելիս մեղադրողը լիազորված է ներկայացնել ապացույցներ, հետաքննության մարմնին նրա համար պարտադիր հանձնարարություններ տալ՝ ապահովելու դատարանին ապացույցներ ներկայացնելը»:

Փաստորեն դատավարական օրենքը ոչ միայն հատուկ ընդգծում է դատախազի հիշյալ լիազորությունը, այլ նաև շեշտում, որ դատախազը դատարանին է ներկայացնում ապացույցներ՝ ի տարբերություն 73–րդ հոդվածի 1–ին մասի 5–րդ կետի, որի համաձայն՝ պաշտպանը քրեական գործին կցելու համար դատարանին է ներկայացնում ոչ թե ապացույցներ, այլ նյութեր:

Այսինքն՝ եթե դատախազը կարող է դատարանին միանգամից ապացույցներ ներկայացնել և վերջինիս համար միանգամից առաջացնել պարտականություն՝ գնահատելու նշված ապացույցը, ապա պաշտպանի կողմից նյութեր ներկայացնելու դեպքում դատարանը նախ պետք է այդ նյութերը ճանաչի որպես ապացույց, որից հետո միայն անդրադառնա դրա գնահատմանը:

§ 4. Վկայի, մեղադրյալի ցուցմունքները և այլ փաստաթուղթ՝ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի համատեքստում

Հիմնարար դրույթներ

- ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետի իմաստով «վկա» եզրույթը հավասարապես վերաբերում է նաև տուժողին, փորձագետին և դատարանում ցուցմունք տվող այլ անձանց:
- ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետը մեղադրյալին չի ընձեռում հնարավորություն՝ դատարանում անսահմանափակ թվով վկաներին հարցաքննելու:
- ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետի իմաստով պարտադիր է համարվում, որպեսզի պաշտպանության կողմը հնարավորություն ունենա կամ նախնական քննության ընթացքում, կամ ավելի ուշ՝ դատական քննության ընթացքում, հարցաքննելու (հակընդդեմ հարցման ենթարկելու) մեղադրող կողմի այն վկային, որի ցուցմունքը միակ ապացույցն է՝ ընկած մեղադրանքի հիմքում կամ վճռորոշ չափով օգտագործվում է մեղադրանքի հիմնավորման նպատակով:
- Առանցքային վկային հարցաքննելու իրավունքը վերաբերում է ինչպես առաջին ատյանի դատարանում գործի քննությանը, այնպես էլ դատական ակտի բողոքարկման փուլերին:
- ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքը չի բացառում նաև վկաների՝ մինչդատական վարույթում տված ցուցմունքի հրապարակումը դատաքննության ընթացքում:
- ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետը պահանջում է հավասարակշռել վկայի հարցաքննության անանունության առումով պաշտպանության կողմի շահը և կոնկրետ անձի պաշտպանությունն ապահովելու հանրային շահը:
- Վկայի՝ դատարանում հարցաքննության վերաբերյալ ՄԻԵԴ–ի նախադեպային որոշ դիրքորոշումներ վերաբերելի են փորձագիտական ապացույցները հետազոտելիս և կարող են կիրառվել համապատասխան հարմարեցումներով:

- Վկայի կողմից սուտ ցուցմունք տալու հանցակազմի առկայության կամ բացակայության մասին հետևության հնարավոր կլինի հանգել միայն համապատասխան դատական ակտը կայացնելուց հետո:
- Մեղադրյալն ունի լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունք ցանկացած ծանրության աստիճանի հանցագործությունների գործերով:
- Խոշտանգումների միջոցով ձեռք բերված ապացույցները որևէ պարագայում ընդունելի լինել չեն կարող, նույնիսկ, երբ դրանք չեն հանդիսանում մեղադրյալի դեմ ուղղված առանցքային կամ վճռորոշ ապացույց:
- ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի խախտման բացարձակ արգելքը ՄԻԵԴ–ը վերաբերելի է համարում նաև քրեական դատավարության մյուս մասնակիցների մասով:
- ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածով սահմանված երաշխիքներից, այդ թվում՝ պաշտպանության իրավունքից մեղադրյալի հրաժարումը չպետք է հակասի հանրային շահին, պետք է հաստատվի հստակ կերպով և պետք է իրականացվի հրաժարվելու կարևորությանը համապատասխանող նվազագույն երաշխիքների առկայության դեպքում:
- Սուտ մատնության հանցակազմի սուբյեկտ կարող է հանդիսանալ նշված պահանջներին բավարարող ցանկացած անձ՝ անկախ իր դատավարական կարգավիճակից:
- «Այլ փաստաթուղթ» ապացույցի տեսակը ներառում է տեղեկության (ինֆորմացիայի) նյութական կրողների բոլոր տեսակները, եթե այն նշանակություն ունի ապացուցման ենթակա հանգամանքները պարզելու համար:

Վկայի ցուցմունքը

ՔԴՕ–ի 23–րդ հոդվածի 5–րդ մասի համաձայն՝ «քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով: Դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ»:

Արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչը կազմող՝ մրցակցության իրավունքի այս դրսևորումը էական նշանակություն է ձեռք բերում վկայի հարցաքննության համատեքստում:

Հակընդդեմ հարցման իրավունք

Նախ՝ կարևոր է նկատի ունենալ, որ «վկա» եզրույթը Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետում լիովին ինքնավար իմաստ ունի և չի վերաբերում միայն գործով վերաբերելի տեղեկություններ ունեցող անձանց: ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետի իմաստով «վկա» եզրույթը հավասարապես վերաբերում է նաև տուժողին, փորձագետին և դատարանում ցուցմունք տվող այլ անձանց (*Միրիլաշվիլին ընդդեմ Ռուսաստանի* գործով 2008 թ. դեկտեմբերի 11–ի վճիռը, գանգատ թիվ 6293/04, կետ 158):

Ըստ այդմ՝ պաշտպանության կողմի՝ իր վկաներին մեղադրանքի կողմի համեմատ նույն պայմաններում հարցաքննելու իրավունքը պետք է մեկնաբանվի լայնորեն և վերաբերի պաշտպանության կողմի ներկայացրած այլ ապացույցների, այդ թվում՝ նյութական ապացույցների, փորձագետի եզրակացությունների հետազոտման իրավունքին:

Կարելի է պնդել, որ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետը բաղկացած է երեք տարրերից.

ա. Մեղադրող կողմի ներկայացրած վկաներին հարցաքննելու (կամ մեղադրանքի հիմնավորման նպատակով մեղադրող կողմի ներկայացրած այլ ապացույցները վիճարկելու) իրավունք (*Շատչաշվիլին ընդդեմ Գերմանիայի* գործով 2015 թ. դեկտեմբերի 15–ի վճիռը, գանգատ թիվ 9154/10, կետ 105),

բ. Որոշակի հանգամանքներում իր ընտրությամբ դատարանում ցուցմունք տալու նպատակով վկաներ (պաշտպանության կողմի վկաներ) հրավիրելու իրավունք (*Միրիլաշվիլին ընդդեմ Ռուսաստանի* գործով 2008 թ. դեկտեմբերի 11–ի վճիռը, գանգատ թիվ 6293/04, կետ 227**)**,

գ. Մեղադրող կողմի վկաներին նույն պայմաններում հարցաքննելու իրավունք, ինչպես պաշտպանության կողմի վկաների պարագայում է (*Խոդորկովսկին և Լեբեդևն ընդդեմ Ռուսաստանի* գործով վճիռը, գանգատներ թիվ 11082/06 և 13772/05, կետ 728):

Վերը նշված իրավունքների խախտման հարցը քննելիս ՄԻԵԴ–ը հաշվի է առնում այդ իրավունքների ապահովման գործընթացում պաշտպանության կողմի առջև ծառացած տարատեսակ խոչընդոտների հանրագումարը՝ որոշելու, թե որքանով է այն ազդել ողջ դատաքննության արդարացիության վրա:

Բնական է, որ այս համատեքստում առաջին ենթադրյալ խախտման մասին կարող է վկայել հատկապես ամբաստանյալի՝ մեղադրող կողմի վկային անձամբ կամ պաշտպանի միջոցով դատարանում հարցաքննելու հնարավորություն չունենալը:

Նույնիսկ այն դեպքերում, երբ պաշտպանության կողմը մինչդատական վարույթում ունեցել է վկաներին կամ փորձագետներին հարցաքննելու հնարավորություն, այն չի կարող փոխարինել վերջիններիս հարցաքննությանը դատարանում դատավորի ներկայությամբ:

Արդար դատաքննության կարևոր երաշխիք է մեղադրյալի և վկայի առերեսումը դատավորի ներկայությամբ, որպեսզի դատավորն անձամբ լսի վկային, հետևի նրա վարքագծին և գա համապատասխան հետևության նրա ցուցմունքի արժանահավատության վերաբերյալ (*Մատիցինան ընդդեմ Ռուսաստանի* գործով 2014 թ. մարտի 27–ի վճիռը, գանգատ թիվ 58428/10, կետ 153):

Միևնույն ժամանակ ՄԻԵԴ–ը նշում է, որ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածը մեղադրյալին չի ընձեռում հնարավորություն՝ դատարանում անսահմանափակ թվով վկաներին հարցաքննելու (*Գանին ընդդեմ Իսպանիայի* գործով 2013 թ. փետրվարի 19–ի վճիռը, գանգատ թիվ 61800/08, կետ 37):

ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի իմաստով պարտադիր է համարվում, որ պաշտպանության կողմը հնարավորություն ունենա դատարանում հարցաքննելու (հակընդդեմ հարցման ենթարկելու) մեղադրող կողմի այն վկային, որի ցուցմունքը միակ ապացույցն է՝ ընկած մեղադրանքի հիմքում կամ վճռորոշ չափով օգտագործվում է մեղադրանքի հիմնավորման նպատակով (*Վան Մեհելենը և մյուսներն ընդդեմ Նիդերլանդների* գործով 1997 թ. ապրիլի 23–ի վճիռը, գանգատներ թիվ 21363/93, 21364/93, 21427/93, 22056/93, կետ 55):

Ըստ այդմ՝ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի խախտում չի համարվի այն

իրավիճակը, երբ մրցակցային դատավարության ժամանակ չի հարցաքննվել այն վկան, որն առանցքային վկա չէ, այսինքն՝ դատավճռում առկա հետևությունները բացառապես կամ վճռորոշ չափով այդ վկայի ցուցմունքների հիման վրա չէ, որ հաստատված են:

«Միակ ապացույց» ասելով՝ պետք է հասկանալ մեղադրյալի դեմ միակ ապացույցը:

«Վճռորոշ ապացույց» հասկացությունը պետք է մեկնաբանվի նեղ իմաստով՝ որպես այնպիսի նշանակության կամ կարևորության տվյալ, որը գործի ելքի համար ունի որոշիչ նշանակություն[2]:

Այն դեպքում, երբ վկայի ցուցմունքը հաստատված է նաև այլ ապացույցով, որոշելու համար, թե արդյոք այդ ցուցմունքը վճռորոշ է, պետք է գնահատել այդ ցուցմունքը հաստատող ապացույցի ուժը: Որքան վերջինս մեծ է, այնքան վկայի ցուցմունքը չի կարող գնահատվել իբրև վճռորոշ:

Այդպիսի հաստատող ապացույցներ, օրինակ, հանդիսանում են մինչդատական քննության ընթացքում վկայի հարցաքննության տեսաձայնագրությունը, դեպքից անմիջապես հետո վկայի հետ առնչված անձանց ցուցմունքները, դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, բացակայող վկայի և մեկ այլ վկայի՝ դեպքի հանգամանքների վերաբերյալ տված ցուցմունքների նմանությունը, վերջինիս հետ մեղադրյալի առերես հարցաքննության արձանագրությունը, բացակայող վկային գրավոր հարցեր ուղղելու հնարավորության ընձեռումը պաշտպանության կողմին (*Ալ Քավայան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2011 թ. դեկտեմբերի 15–ի վճիռը, գանգատներ թիվ 26766/05–ի և 22228/06, կետեր 131, 156, *Շատչաշվիլին ընդդեմ Գերմանիայի* գործով 2015 թ. դեկտեմբերի 15–ի վճիռը, գանգատ թիվ 9154/10, կետեր 127–128):

Վկան կարող է առանցքային համարվել նաև այն դեպքում, երբ նրա ցուցմունքը կարող է ընդամենը հաստատել կամ հերքել դիմողի կողմից վկայակոչվող, ի պաշտպանություն իրեն բերված հանգաման-

[2] «Միակ» կամ «վճռորոշ» ապացույց հասկացություններին անդրադարձել ենք նաև 2–րդ բաժնի 2–րդ պարագրաֆում:

քը, օրինակ՝ իր դեմ սադրանք գործադրված լինելը (*Ռամանաուսկասն ընդդեմ Լիտվայի* գործով 2008 թ. փետրվարի 5–ի վճիռը, գանգատ թիվ 74420/01, կետեր 69–74):

Վկայի ցուցմունքի՝ առանցքային լինել–չլինելու գնահատումը կարող է արվել մեղադրական եզրակացության կամ հետագայում մեղադրական դատավճռի կառուցվածքում կոնկրետ վկայի ցուցմունքի կարևորության վերլուծության հիման վրա (*Բիրուտիսը և մյուսներն ընդդեմ Լիտվայի* գործով 2002 թ. հունիսի 28–ի վճիռը, գանգատներ թիվ 47698/99 և 48115/99, կետեր 28–35): Այս հարցը քննարկելիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշ դեպքերում կարող է վերլուծել նաև մեղադրյալի դեմ օգտագործված այլ ապացույցների որակն ու արժանահավատությունը: Այսպես, թեև նախադեպայի իրավունքը կտրականապես չի բացառում ուրիշի խոսքերի վրա հիմնվող ցուցմունքների օգտագործումը, դրանք չեն կարող հիմք ծառայել այն իրավիճակում, երբ ընդհանրապես չի հարցաքննվել անմիջական ականատեսը: Նույն տրամաբանությունն է կիրառելի գործով մյուս ամբաստանյալների խոստովանական ցուցմունքների մասով, որոնք չեն կարող հիմք համարվել այն ամբաստանյալի նկատմամբ մեղադրական դատավճռի կայացման համար, ով իր մեղքը չի խոստովանել (*Վլադիմիր Ռոմանովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2008 թ. հուլիսի 24–ի վճիռը, գանգատ թիվ 41461/02, կետեր 97–106):

Հարկ է նշել նաև, որ առանցքային վկային հարցաքննելու իրավունքը վերաբերում է ինչպես առաջին ատյանի դատարանում գործի քննությանը, այնպես էլ դատական ակտի բողոքարկման փուլերին, այնքանով, որքանով որ ապահովվում է գործի փաստական հանգամանքների հետազոտումը դատական համակարգի երկրորդ մակարդակում (*Գարսիա Հերնանդեսն ընդդեմ Իսպանիայի* գործով 2010 թ. նոյեմբերի 16–ի վճիռը, գանգատ թիվ 15256/07, կետեր 26–36):

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ դատաքննության որոշակի պահին վկաների չներկայանալը ամենայն հավանականությամբ Դատարանի կողմից չի գնահատվի իբրև ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետի խախտում այն դեպքում, երբ կոնկրետ վկան քրեական դա-

տավարության ավելի վաղ փուլում հարցաքննվել է պաշտպանության կողմի ներկայությամբ, օրինակ՝ մինչդատական քննության փուլում կատարվել է առերեսում տվյալ վկայի և մեղադրյալի միջև (*Միրիլաշվիլին ընդդեմ Ռուսաստանի* գործով 2008 թ. դեկտեմբերի 11–ի վճիռը, գանգատ թիվ 6293/04, կետ 214): Սակայն ամեն դեպքում պետք է նկատի ունենալ, որ մեղադրող կողմի վկաների ցուցմունքների վիճարկումը պաշտպանության կողմից վերջինիս իրավունքների ամբողջական երաշխավորման իմաստով բավարար կլինի միայն այն դեպքում, երբ այդպիսի վիճարկումը զուգորդված է եղել դատավարական իրական երաշխիքներով (*Միրիլաշվիլին ընդդեմ Ռուսաստանի* գործով 2008 թ. դեկտեմբերի 11–ի վճիռը, գանգատ թիվ 6293/04, կետ 217):

ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքը չի բացառում նաև վկաների՝ մինչդատական վարույթում տված ցուցմունքի հրապարակումը դատաքննության ընթացքում, ավելին, թույլատրելի են համարվում այն դեպքերը, երբ մեղադրական դատավճիռը հիմնվում է նաև հրապարակված ցուցմունքների վրա: Սակայն այս հանգամանքի թույլատրելիության չափանիշը դարձյալ նույնն է, այն է՝ պաշտպանության կողմը պետք է ունենա բավարար դատավարական հնարավորություններ՝ վիճարկելու վկայի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքը:

Դատարանում չհարցաքննված վկայի ցուցմունքը որպես ապացույց օգտագործելու համար հաշվի են առնվում հետևյալ չափանիշները.

ա. Արդյոք վկան դատարան չի ներկայացել հարգելի պատճառով:

բ. Արդյոք վկայի ցուցմունքը հանդիսացել է միակը կամ վճռորոշը մեղադրյալին դատապարտելու համար:

գ. Արդյոք կան բավարար դատավարական երաշխիքներ չհարցաքննված վկայի ցուցմունքը որպես ապացույց գնահատելիս պաշտպանության կողմի իրավունքներն ապահովելու համար:

Վկայի՝ դատարան չներկայանալը հարգելի համարելու համար դատարանը պետք է տիրապետի բավարար փաստական և իրավաբանական տվյալների: Այդ հարգելի պատճառների մասին կարող են վկայել, օրինակ, վկայի մահը, վախը, վատառողջ վիճակը:

Այն դեպքում, երբ վկան չի ներկայանում այլ տեղում գտնվելու պատ-

ճառով, դատարանը պետք է ողջամիտ միջոցներ ձեռնարկի վկայի ներկայանալու համար, քանզի բացակայության փաստն, ինքնին, չի նշանակում ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի պահպանում: Այդպիսի ողջամիտ միջոցներ, օրինակ, կարող են հանդիսանալ ներքին գործերի մարմինների միջոցով, միջազգային իրավական օգնության շրջանակներում վկային փնտրելը (*Ալ Քավայան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2011 թ. դեկտեմբերի 15–ի վճիռը, գանգատներ թիվ 26766/05–ի և 22228/06, կետեր 118, 119–125, 126–147, *Շատչաշվիլին ընդդեմ Գերմանիայի* գործով 2015 թ. դեկտեմբերի 15–ի վճիռը, գանգատ 9154/10, կետ 121): *Գաբրիելյան ընդդեմ Հայաստանի* գործում (թիվ 8088/05, 10/07/2012) ՄԻԵԴ–ը խախտում արձանագրեց այն հիմքով, որ Քրեական վերաքննիչ դատարանը բավարար ջանքեր չէր գործադրել երկու առանցքային վկաներին հայտնաբերելու և նրանց ներկայությունը դատարանում ապահովելու նպատակով: Թեև, ըստ ՄԻԵԴ–ի, դատարանը դիմել էր ոստիկանությանը երկու վկաներին հայտնաբերելու և բերման ենթարկելու համար, ինչպես նաև բանավոր հարցում էր արել վկաների բնակության վայրի համայնքի ղեկավարին նրանց գտնվելու վայրի մասին, ՄԻԵԴ–ը այդ գործողութունները բավարար չհամարեց, քանի որ փաստերը ցույց էին տալիս, որ դատարանը այնուհետև հավելյալ ջանքեր չէր գործադրել պարզելու համար, թե ոստիկանությունը ինչ միջոցներ էր կիրառել վկաներին հայտնաբերելու ուղղությամբ, թե արդյոք անհրաժեշտ էր դիմել միջազգային իրավական օգնության ընթացակարգերին, արդյոք վկաները իրապես բացակայում էին Հայաստանից, թե պարզապես խուսափում էին ներկայանալ դատարան: Դատարանը նկատեց, որ նման հավելյալ հարցումներ կատարելու համար վերաքննիչ դատարանը ժամանակ չէր տրամադրել, և ոչ էլ իրավասու մարմիններին համապատասխան հրահանգներ էին տվել, այլ դրա փոխարեն դատարանը բավարարվել էր հաջորդ դատական նիստում վկաների նախաքննական ցուցմունքները հրապարակելով, թեև նախկին նիստում նույն դատարանը հայտարարել էր այդ վկաների դատարան ներկայանալու պարտադիր լինելը: Այդ պատճառով ՄԻԵԴ–ը գտավ, որ վերաքննիչ դատարանը բավարար միջոցներ չէր ձեռնարկել երկու

առանցքային վկաների ներկայությունը դատարանում ապահովելու համար, որպեսզի պաշտպանական կողմը հնարավորություն ունենար նրանց հակընդդեմ հարցման ենթարկելու, որի հիմքով էլ սահմանեց Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետի խախտում (հակընդդեմ հարցման իրավունք)՝ 6–րդ հոդվածի 1–ին մասի համակցությամբ (արդար դատաքննության իրավունք)[3]:

Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ վկաների ներկայությունը չի ապահովվում նրանց փախուստի, վախի պատճառով կամ եթե նրանք պահանջել են անանունություն պահպանել, օգտվել են լռություն պահպանելու իրենց իրավունքից կամ մահացել են, ապա այս դեպքում կարևորվում է այն հարցը, թե արդյոք հանցագործության բացահայտման և անձին պատժելու հետ կապված հանրային շահը գերակա է ամբաստանյալի արդար դատաքննության իրավունքն ապահովելու մասնավոր շահի նկատմամբ (*Ալ Քավայան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2011 թ. դեկտեմբերի 15–ի վճիռը, գանգատներ թիվ 26766/05 և 22228/06, կետեր 120–165):

Ինչ վերաբերում է վկայի՝ դատարան չներկայանալուն վախի պատճառով, ապա այդ առումով ՄԻԵԴ–ը առաջարկում է հետևյալ հետաքրքիր մոտեցումը.

«Անհրաժեշտ է տարբերակում անցկացնել երկու տեսակի վախի միջև. վախը, որը պայմանավորված է մեղադրյալի սպառնալիքներով կամ այլ գործողություններով, և վախը, որը պայմանավորված է առա-

[3] ՄԻԵԴ վճռի 04/10/2010 թ. ուժի մեջ մտնելուց հետո Ա. Գաբրիելյանը ՄԻԵԴ վճիռը որպես նոր հանգամանքի հիմքով դիմեց ՀՀ վճռաբեկ դատարան 2005 թվականին ավարտված քրեական գործի վերաբացման հիմքով: Վճռաբեկ դատարանը դիմումը համարեց ընդունելի, հարուցեց գործի վերաբացման վարույթ, բեկանեց նախկինում կայացված բոլոր դատական ակտերը, այդ թվում նաև իր դատական ակտը, և գործն ուղարկեց Երևանի Ավան և Նոր նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ գործով նոր քննություն կատարելու համար: Նոր քննության ընթացքում դատարանը կրկին ոստիկանությունից պահանջեց բերման ենթարկել վկաներին, որպեսզի Ա. Գաբրիելյանը իրականացնի հակընդդեմ հարցման իր իրավունքը, որից զրկվել էր 2005 թվականի դատավարության ընթացքում: Վկաներին չհաջողվեց հայտնաբերել, որից հետո դատարանը Ա. Գաբրիելյանի վերաբերյալ 2014 թ. հուլիսի 22–ին կայացրեց արդարացման որոշում:

վել ընդհանուր բնույթի վախով՝ կապված ընդհանրապես դատարանում ցուցմունք տալու հանգամանքով: Եթե վկայի վախը պայմանավորված է մեղադրյալի կամ նրա անունից գործող անձանց գործողություններով, ապա միանգամայն ընդունելի է, որպեսզի տվյալ վկայի ցուցմունքը դատարանում հետազոտվի առանց այդ վկայի ներկայության կամ որպեսզի այդ վկան հակընդդեմ հարցման չենթարկվի մեղադրյալի կամ նրա ներկայացուցիչների կողմից, նույնիսկ եթե նման ապացույցը մեղադրյալի դեմ միակ կամ վճռորոշ ապացույցն է: Տուժողների և վկաների իրավունքների հետ անհամատեղելի է, եթե թույլ տրվի, որ մեղադրյալը օգտվի վկաների նկատմամբ վախ սերմանելու հետևանքներից: Չի կարելի ակնկալել, որ որևէ դատարան երբևէ թույլ կտա, որպեսզի նման եղանակով աղավաղվի դատավարության ընթացքը: Հետևաբար պետք է ակնկալել, որ նման քայլի դիմելով՝ մեղադրյալը հրաժարվում է 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետով սահմանված՝ վկային հարցաքննելու իր իրավունքից» (*Ալ–Խավայան ու Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով վճիռը, թիվ 26766/05 և 22228/06, §§ 122–123):

Հարկ է նշել նաև, որ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը մշտապես շեշտադրում է նաև մեղադրող կողմի պարտականությունը՝ ձեռնարկելու ողջամիտ և գործուն միջոցներ առանցքային վկայի՝ դատարան ներկայանալն ապահովելու համար, այն վկայի, որի բնակության հասցեն անհայտ է, կամ որը արտերկրում է բնակվում: Այդուհանդերձ, նշված պարտականության կատարումը կարող է դիտարկվել իբրև ոչ անհրաժեշտ, եթե, օրինակ, նախաքննության փուլում օտարերկրացի վկային հարցաքննելու նպատակով համապատասխան քննիչ է գործուղվել վկայի բնակության վայր՝ պայմանով, որ պաշտպանության կողմին ևս հնարավորություն ընձեռվի մասնակցելու այդ վկայի հարցաքննությանը (*Սոլակովն ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրապետության* գործով 2001 թ. հոկտեմբերի 31–ի վճիռը, գանգատ թիվ 47023/99, կետեր 56–67):

Այս համատեքստում ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի խախտում չէ նաև օտարերկրացի վկաներին դատարանում չհարցաքննելը, եթե նրանք բերման ենթարկվել չեն կարող և նրանց ցուցմունքները հաստատվել են

այլ ապացույցներով (*Կլիմենտևն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2006 թ. նոյեմբերի 16–ի վճիռը, գանգատ թիվ 46503/99, կետ 126)[4]:

Անանուն վկաների ցուցմունքների օգտագործումը

Վկայի անանունության պահպանումը կարող է ուղղված լինել ոստիկանության գործակալ, իրազեկիչ հանդիսացող անձանց ինքնության գաղտնիության պահպանմանը, որը պայմանավորված է նման անձանց, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքով՝ ըստ Կոնվենցիայի 8–րդ հոդվածի: Այսինքն՝ նման իրավիճակումներում բախվում են մրցակցող լեգիտիմ շահեր՝ մի կողմից մեղադրյալի արդար դատաքննության իրավունքը, իսկ մյուս կողմից՝ նրա դեմ ցուցմունք տվող վկայի անձնական և/կամ ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը: ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքի համաձայն՝ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածը վկային անանուն հարցաքննելու իրավունքն, ըստ էության, թողնում է պետության հայեցողությանը, որը և պետք է կայացնի որոշում՝ վկաների անանունության պահպանման իրավաչափության մասին: Դրա հետ մեկտեղ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետը պահանջում է հավասարակշռել վկայի հարցաքննության անանունության առումով պաշտպանության կողմի շահը և կոնկրետ անձի պաշտպանությունն ապահովելու, իսկ որոշ դեպքերում էլ, կախված գործի հանրային նշանակությունից, նաև արդարադատության իրականացման հանրային շահը:

Յուրաքանչյուր դեպքում ներպետական դատարանը պետք է գնահատի, թե վկայի ինքնության կամ փաստաթղթի գաղտնիության պահպանման համար կան արդյոք բավարար հիմքեր: Նշված հետևությանը գալիս էական է այն, թե արդյոք գաղտնիությունը ազգային անվտանգության ապահովմանն է ուղղված, թե ոչ (*Վան Մեհելենը և մյուսներն ընդդեմ Նիդերլանդների* գործով 1997 թ. ապրիլի 23–ի վճիռը, գանգատներ թիվ 21363/93, 21364/93, 21427/93, 22056/93, կետեր 59–65):

Դրա հետ մեկտեղ ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքը պահանջում է, որ անգամ եթե անանուն վկաներն առանցքային չեն, պաշտպանության

[4] Թեմայի մասին առավել մանրամասն տես 117–132 էջերում:

կողմին, այնուամենայնիվ, պետք է հնարավորություն ընձեռվի ստուգելու այդ ցուցմունքների արժանահավատությունը՝

ա. գրավոր հարցեր ուղղելու միջոցով (*Կոստովսկին ընդդեմ Նիդերլանդների* գործով 1989 թ. նոյեմբերի 20–ի վճիռը, գանգատ թիվ 11454/85, կետեր 40–44),

բ. պաշտպանին անանուն վկայի հարցաքննությանը մասնակցելու հնարավորություն ընձեռելու միջոցով՝ վերջինից նախապես ստանալով պատշաճ հավաստիացում՝ վկաների ինքնությունը դիմողին չհայտնելու վերաբերյալ (*Դորսոնն ընդդեմ Նիդերլանդների* գործով 1996 թ. մարտի 26–ի վճիռը, գանգատ թիվ 20524/92, կետեր 60–80),

գ. վկաների ձայնի կամ արտաքինի քողարկմամբ դիմողին տեսաձայնային կապով այդ վկաներին հարցեր ուղղելու հնարավորություն ընձեռելու միջոցով (*Բիրուտիսը և մյուսներն ընդդեմ Լիտվայի* գործով 2002 թ. հունիսի 28–ի վճիռը, գանգատներ թիվ 47698/99 և 48115/99, կետեր 28–35)[5]:

Փորձագիտական ապացույցներ

ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքին հայտնի է «փորձագիտական ապացույցներ» եզրույթը, որի ներքո դատարանը ներառում է այն տվյալները, որոնք ոչ թե գործի կոնկրետ փաստական հանգամանքներ են նկարագրում, այլ պարունակում են տեխնիկական կամ այլ նման բնույթի վերլուծություն այդ հանգամանքների մասին:

ՄԻԵԴ–ն ընդունում է, որ վկան և փորձագետը դատավարական տարբեր սուբյեկտներ են, բայց փորձագետի ցուցմունքների վրա նույնպես ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածով սահմանված երաշխիքները գործում են:

ՄԻԵԴ–ը համարում է, որ վկայի՝ դատարանում հարցաքննության վերաբերյալ նախադեպային որոշ դիրքորոշումներ վերաբերելի են փորձագիտական ապացույցները հետազոտելիս և կարող են կիրառվել համապատասխան հարմարեցումներով:

Պաշտպանության կողմը պետք է հնարավորություն ունենա՝ վիճարկելու փորձագիտական ապացույցները՝ այդ թվում այլ եզրակացություն-

[5] Թեմայի մասին տե՛ս նաև 128–132 էջերում:

ներ կամ կարծիքներ գործին կցելով, իսկ կոնկրետ դեպքում այլընտրանքային փորձաքննության չնշանակումը կարող է ազդել դատաքննության արդարացիության վրա (*Մատիցինան ընդդեմ Ռուսաստանի* գործով 2014 թ. մարտի 27–ի վճիռը, գանգատ թիվ 58428/10, կետեր 167–169):

Փորձագետ վկաների նկատմամբ 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետի վերաբերմունքը, որպես կանոն, նույնն է, ինչ մյուս վկաների դեպքում և չի պահանջում, որ նրանք բավարարեն չեզոքության չափանիշը, այսինքն՝ չլինեն դատավարական որևէ սուբյեկտի կողմից նշանակված: Այդուհանդերձ, ՄԻԵԴ–ը որոշ դեպքերում գտել է, որ պաշտպանության կամ մասնավոր հիմունքներով ներգրավված փորձագետի համեմատ դատարանի կողմից նշանակված կամ այսպես կոչված պաշտոնական փորձագետի հայտնածին առավելություններ տալը արդար դատաքննության իրավունքի խախտում է:

ՄԻԵԴ–ը արդար դատաքննության իրավունքի խախտում է համարում նաև այն իրավիճակը, երբ դատարանի կողմից նշանակված փորձագետի ցուցմունքների անսպասելի և ամբողջական փոփոխության պարագայում ծագել է այդ ցուցմունքի արժանահավատության մասին հարց, սակայն դատարանը չի քննարկել նոր փորձաքննություն նշանակելու և ոչ ձեռնահաս փորձագետին փոխարինելու հարցը (*Բյոնիշն ընդդեմ Ավստրիայի* գործով 1985 թ. մայիսի 6–ի վճիռը, գանգատ թիվ 8658/79, կետեր 28–35):

Ինչ վերաբերում է փորձագետի՝ դատարան ներկայանալուն, ապա այս դեպքում նույնպես, ինչպես վկայի պարագայում է, ՄԻԵԴ–ը նախատեսում է ներկայանալուն խոչընդոտող մի շարք հանգամանքներ, օրինակ՝ մահը, վախը և այլն:

Միաժամանակ ՄԻԵԴ–ը գտնում է, որ փորձագետի եզրակացության առկայությունը դեռևս չի վերացնում փորձագետին հարցաքննելու անհրաժեշտությունը, հակառակ դեպքում մեկ անգամ հարցաքննված վկան այլևս չէր հարցաքննվի: Բացի այդ, ըստ ՄԻԵԴ–ի, փորձաքննության եզրակացության անարժանահավատությունն ապացուցելը, առանց փորձագետի հարցաքննության, դժվար է, այդ իսկ պատճառով պաշտպանության կողմը պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու իր փաստարկները, այդ թվում՝ փորձագետին հարցաքննելու միջոցով:

Պաշտպանության կողմի՝ վկային հարցաքննելու միջնորդությունը դատարանը քննարկում է այն տեսանկյունից, թե արդյոք վկայի ցուցմունքները կարող են գործով ունենալ էական նշանակություն: Նույնը՝ փորձագետին հարցաքննելու միջնորդության քննարկման դեպքում է (*Խոդորկովսկին և Լեբեդևն ընդդեմ Ռուսաստանի* գործով վճիռը, գանգատներ թիվ 11082/06 և 13772/05, կետեր 714–715, 721–731):

ՄԻԵԴ–ն արձանագրում է նաև, որ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածը ազգային դատարաններին չի պարտավորեցնում նշանակել փորձաքննություն կամ կատարել այլ դատավարական գործողություններ միայն նրա համար, որ այդ մասին միջնորդում է կողմը: Սակայն եթե դատարանը որոշի, որ նոր փորձաքննությունն անհրաժեշտություն է, ապա պաշտպանության կողմը պետք է իրավունք ունենա ձևակերպելու առանձին հարցեր փորձագետներին տալու համար, բացարկ հայտնելու կամ հարցաքննելու նրանց դատաքննության ընթացքում:

Փորձաքննության եզրակացության՝ առանց պաշտպանության կողմի մասնակցության ստացված լինելն ինքնին ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածին չի հակասում՝ պայմանով, որ պաշտպանության կողմը դատաքննության ընթացքում ունենա դատավարական համապատասխան գործիքներ՝ այդ եզրակացությունն արդյունավետ կերպով վիճարկելու:

Պաշտպանության կողմը պետք է հնարավորություն ունենա վիճարկելու այն սուբյեկտների բարեխղճությունը, որոնք տվել են այդ եզրակացությունը, այդ թվում՝ փորձագետներին հարցաքննելու միջոցով (*Մատիցինան ընդդեմ Ռուսաստանի* գործով 2014 թ. մարտի 27–ի վճիռը, գանգատ թիվ 58428/10, կետեր 175, 177, 183):

Վկայի կողմից սուտ ցուցմունք տալը

ՀՀ քրեական օրենսգրքի 338–րդ հոդվածով նախատեսված հանցակազմը բովանդակում է հետևյալը.

«1. Քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով սուտ ցուցմունք տալը, քրեական գործով վկայի կամ տուժողի կողմից սուտ ցուցմունք տալը, քրեական կամ քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալը, թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմա-

նություն կատարելը պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեք հարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը՝

1) կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրանքի առնչությամբ,

2) զուգորդվել է այլ արհեստական ապացույցներ ստեղծելով,

3) կատարվել է շահադիտական դրդումներով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1–ին և 2–րդ մասերով սահմանված հիմքով անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իր արարքը նշանակություն չէր կարող ունենալ գործի լուծման համար, կամ նա նախնական քննության կամ դատական քննության ընթացքում մինչև դատարանի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանության մասին»:

Վկայի կողմից սուտ ցուցմունք տալու հանցակազմին ՎԴ–ն անդրադարձել է Կարեն Սարուխանյանի վերաբերյալ գործով 2010 թ. օգոստոսի 27–ի թիվ ԼԴ/0301/01/09 որոշմամբ, որով նախադեպային դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «*Միայն դատարանի կողմից արդարադատության իրականացումը ենթադրում է, որ մինչդատական վարույթում արված հետևությունները նախնական բնույթ են կրում և իրենցով փաստացի չեն կարող փոխարինել վերջնական դատական ակտով կատարվող հետևություններին: Եթե որևէ ցուցմունք գնահատվի որպես «սուտ» նախքան տվյալ գործով վերջնական դատական ակտով այդ ցուցմունքի գնահատումը, ապա դա կխաթարի արդարադատության Սահմանադրական գործառույթի բուն էությունը:*

Բացի այդ, եթե քրեական գործով մինչդատական վարույթում քրեական հետապնդման մարմինը հնարավորություն ունենա քրեական հետապնդում հարուցելու ենթադրաբար սուտ ցուցմունք տված քրեա-

կան դատավարությանը մասնակցող անձի նկատմամբ, ապա քրեական հետապնդման ենթարկվող անձը կարող է արդարացված մտավախություն ունենալ առ այն, որ դա իր հանդեպ հոգեբանական ճնշում է՝ մեղադրանքի կողմի համար ցանկալի ցուցմունքներ ստանալու նպատակով: Այդ մտավախությունից դրդված՝ քրեական հետապնդման ենթարկվող դատավարությանը մասնակցող անձը կարող է փոխել իր ցուցմունքները մեղադրանքի կողմի համար ցանկալի եղանակով, անգամ քրեական հետապնդման մարմնի համապատասխան աշխատակիցների բարեխղճության պարագայում: Այդպիսով՝ կխաթարվի արդար դատաքննության սահմանադրական արժեքը և հանրային շահը:

(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338–րդ հոդվածով նախատեսված սուտ ցուցմունք տալու հանցակազմի առկայության կամ բացակայության մասին հետևության հնարավոր կլինի հանգել միայն համապատասխան դատական ակտը կայացնելուց հետո»:

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նախադեպային դիրքորոշում է ձևավորել նաև վկայի հարցաքննության կարգի վերաբերյալ՝ արձանագրելով հետևյալը.

«Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վկան նախազգուշացվում է տվյալ գործով իրեն հայտնի ամեն ինչ պատմելու պարտականության, ինչպես նաև ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վկայի ցուցմունքը կդիտվի որպես քննչական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված, եթե նախքան ցուցմունք վերցնելը վկան չի տեղեկացվել, թե որ քրեական գործով է հարցաքննվում»:

Փաստորեն, համաձայն ՎԴ–ի՝ վկայակոչված նախադեպային դիրքորոշման՝ արարքում սուտ ցուցմունք տալու հանցակազմն առկա լինելու հանգամանքը հիմնավորված համարելու համար անհրաժեշտ է բացառապես հետևյալ փաստերի միաժամանակյա առկայություն.

ա. Տասնվեց տարին լրացած, ֆիզիկական, մեղսունակ անձը, քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով վկան կամ տուժողը՝ քրեական գործով, նախազգուշացված լինելով սուտ ցուցմունք

տալու համար քրեական պատասխանատվություն նախատեսված լինելու մասին, սուտ ցուցմունք են տվել:

բ. Մինչև դատարանի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը հիշյալ սուբյեկտները չեն հայտնել իրենց կողմից տրված ցուցմունքների՝ իրականությանը չհամապատասխանելու վերաբերյալ:

գ. Դատական ակտով փաստվել է հիշյալ սուբյեկտների կողմից տրված ցուցմունքների՝ գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունենալու (այդպիսի նշանակություն ունենալու հնարավորության) հանգամանքը:

Մեղադրյալի ցուցմունքը

Կոնկրետ քրեական գործով ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածն ապահովված լինելու փաստը մեծապես կախված է քրեական դատավարությունում մեղադրյալի՝ լռելու և իր դեմ ցուցմունք չտալու, ցուցմունքը պաշտպանի մասնակցությամբ տալու դատավարական իրավունքները լիարժեք իրականացրած լինելու հարցի գնահատականից: Միևնույն ժամանակ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածն ապահովված լինելու հարցի գնահատականը պետք է տալ՝ նկատի ունենալով, որ մեղադրյալի համար նախատեսված վերոգրյալ դատավարական երաշխիքները չեն կարող մեկնաբանվել բացարձակ կերպով, և դրանց՝ ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքում հանդիպող իրավաչափ սահմանափակումները չեն կարող ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի խախտման մասին հետևության գալու հիմք հանդիսանալ:

Լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունք

ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածով սահմանված դատավարական երաշխիքները վերոգրյալ համատեքստում սկսում են գործել այն պահից, երբ անձին մեղադրանք է առաջադրվում:

Մեղադրանքը իրավասու մարմնի կողմից անձին ուղղված պաշտոնական ծանուցում է այն ենթադրության մասին, որ այդ անձը կատարել է հանցագործություն (*Ալեքսանդր Զայչենկոն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2010 թ. փետրվարի 18–ի վճիռը, գանգատ թիվ 39660/02, կետ 51): Այդուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ մեղադրանք հասկացու-

թյունը նույնպես ինքնավար նշանակություն ունի Կոնվենցիայի ներքո, և, ըստ այդմ, մեղադրանքը, բացի վերը նշվածից, կարող է բխել նաև անձի նկատմամբ որոշակի այնպիսի գործողությունների առկայությունից, որոնք իրենց մեջ պարունակում են կասկած, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա (Գագիկ Միքայելյանի գործով Վճռաբեկ դատարանի 18.12.2009 թ., թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշում, կետ 21): Հետևաբար ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածով սահմանված դատավարական (կոնվենցիոն կամ սահմանադրական) երաշխիքները կարող են գործել նաև մինչև անձին մեղադրանքի մասին պաշտոնապես ծանուցելը (մեղադրանք առաջադրելու մասին որոշումը նրան ներկայացնելը): Այդպիսի իրավիճակ է առաջանում, օրինակ, երբ անձին վկայի կարգավիճակում տալիս են մեղադրող բնույթի հարցեր կամ, ըստ Գագիկ Միքայելյանի գործով ՎԴ որոշման, անձին բերման են ենթարկում և երեք ժամ հետո նրան ազատ չեն արձակում, սակայն այդ ընթացքում շարունակում են նրան պահել անազատության մեջ: Առաջինի դեպքում նրան մեղադրող բնույթի հարցեր տալու փաստին ինքնին իր մեջ պարունակում է կասկած, իսկ երկրորդի դեպքում՝ նրան անազատության մեջ պահելը, որը էապես ներգործում է նրա իրավիճակի վրա (անձնական ազատությունից զրկված լինելու հանգամանքը) նույնպես հավասարազոր է կասկածի՝ հետևաբար նաև մեղադրանքի առկայության մասին: Լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը վերաբերում է ցանկացած ծանրության աստիճանի հանցագործությունների քննությանը (*Սաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 1996 թ. դեկտեմբերի 17–ի վճիռը, գանգատ թիվ 19187/91, կետ 74):

ՄԻԵԴ–ի նախադեպային պրակտիկայում հանդիպում են երեք իրավիճակներ, որտեղ առկա է մեղադրյալի կամքի անտեսմամբ նրանից ցուցմունք ստանալու դեպքեր.

ա. Ցուցմունք տալու պարտականություն՝ զուգորդված քրեական հետապնդման ենթարկելու և պատիժ սահմանելու սպառնալիքով (*Սաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 1996 թ. դեկտեմբերի 17–ի վճիռը, գանգատ թիվ 19187/91, կետ 70).

բ. Ֆիզիկական կամ հոգեբանական հարկադրանք, ընդհուպ մինչև խոշտանգում, անմարդկային կամ արժանապատվությունը նվաս-

տացնող վերաբերմունք՝ ցուցմունք ստանալու նպատակով (*Ջալոհն ընդդեմ Գերմանիայի* գործով 2006 թ. հուլիսի 11–ի վճիռը, գանգատ թիվ 54810/00, կետեր 103–123, *Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2007 թ. հունիսի 28–ի վճիռ, գանգատ թիվ 36549/03, կետեր 58–66, *Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի* գործով 2008 թ. հունիսի 30–ի վճիռը, գանգատ թիվ 22978/05, կետեր 169–188).

գ. Ցուցմունք ստանալը խաբեության միջոցով՝ զուգորդված հետախուզական գաղտնի մեթոդների կիրառմամբ (*Ալենն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2013 թ. հուլիսի 12–ի վճիռը, գանգատ թիվ 25424/09, կետեր 45–53):

Լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի էությունը գնահատելիս կիրառվում են երեք հիմնական չափանիշներ.

ա. Ապացույցներ ստանալու նպատակով գործադրված հարկադրանքի բնույթը և աստիճանը.

բ. Տվյալ իրավախախտման քննության և սահմանող պատժի նկատմամբ հանրության հետաքրքրվածության աստիճանը.

գ. Համապատասխան դատավարական երաշխիքների առկայությունը (*Ջալոհն ընդդեմ Գերմանիայի* գործով 2006 թ. հուլիսի 11–ի վճիռը, գանգատ թիվ 54810/00, 117 կետ):

1. Ընդհանուր առմամբ, գործում է հետևյալ կանոնը. հարկադրանքի միջոցով ձեռք բերված ապացույցները չպետք է վճռորոշ կամ էական կշիռ ունենան մեղադրական դատավճիռ կայացնելիս (*Սաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 1996 թ. դեկտեմբերի 17–ի վճիռը, գանգատ թիվ 19187/91, կետ 68): Լրացուցիչ կամ ոչ էական ապացույցների ընդունումը, բացառությամբ ապացույցների՝ խոշտանգման միջոցով ձեռք բերման դեպքերի (ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի խախտում), չի կարող հանդիսանալ հիմք՝ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի խախտում արձանագրելու համար, անգամ եթե այդ ապացույցը ստացվել է ներպետական օրենսդրության կամ ՄԻԵԿ–ի ինքնավար պահանջների խախտմամբ (*Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2000 թ. հոկտեմբերի 4–ի վճիռը, գանգատ թիվ 35394/97, կետեր 35–37):

Խոշտանգումների միջոցով ձեռք բերված ապացույցները որևէ պարագայում ընդունելի լինել չեն կարող, նույնիսկ, երբ դրանք չեն հան-

դիսանում մեղադրյալի դեմ ուղղված առանցքային կամ վճռորոշ ապացույց, եթե խոշտանգման փաստը հաստատվել է ՄԻԵԴ–ի կողմից (*Յուսուֆ Գեզերն ընդդեմ Թուրքիայի* գործով 2009 թ. դեկտեմբերի 1–ի վճիռը, գանգատ թիվ 21790/04, կետեր 40–45):

Արդար դատաքննության իրավունքի խախտում կարող է արձանագրվել ոչ միայն այն դեպքում, երբ դաժան վերաբերմունքի փաստը հաստատվել է ներպետական մակարդակում կամ առանձին գործով՝ ՄԻԵԴ–ի կողմից, այլ նաև այն դեպքում, երբ ներպետական ատյաններում գործի քննության ավարտին դեռևս չեն վերացել դաժան վերաբերմունքի մասին առկա ծանրակշիռ կասկածները (*Գլադիշևն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2011 թ. դեկտեմբերի 6–ի վճիռը, գանգատ թիվ 7097/10, կետեր 76–80):

ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

ՄԻԵԴ–ի նախադեպային պրակտիկայի համաձայն՝ դաժան վերաբերմունքը պետք է հասնի դաժանության նվազագույն աստիճանի: «Նվազագույն» հասկացությունը հարաբերական է և կախված է գործի կոնկրետ հանգամանքներից, մասնավորապես խիստ վերաբերմունքի դրսևորումները, տուժողի ֆիզիկական և հոգեկան վիճակի վրա ունեցած ազդեցությունը, սեռը, տարիքը և այլն:

Վերաբերմունքն անմարդկային է, եթե այն կրել է դիտավորյալ բնույթ, գործադրվել է մի քանի ժամ անընդմեջ և պատճառել է մարմնական վնասվածքներ կամ հոգեկան և ֆիզիկական տառապանք:

Արժանապատվությունը նվաստացնող է այն վերաբերմունքը, որը տուժողի մոտ առաջացնում է վախի, տագնապի կամ անլիարժեքության զգացում, որը հանգեցնում է նրա նվաստացմանը և ֆիզիկական կամ բարոյական դիմադրություն ցույց տալու ունակության նվազմանը:

Մարդու արժանապատվությունը վիրավորելու և նվաստացնելու դիտավորության բացակայությունը բավարար չէ ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի խախտման բացակայությունը փաստելու համար:

Տառապանքի և նվաստացման աստիճանը ցանկացած դեպքում ավելի բարձր պետք է լինի իրավաչափ հարկադրանքի դեպքում մար-

դու մոտ առաջացող նույնաբնույթ զգացումների աստիճանից (*Ջալոհն ընդդեմ Գերմանիայի* գործով 2006 թ. հուլիսի 11–ի վճիռը, գանգատ թիվ 54810/00, կետեր 67–68): Օրինակ, եթե անձին ձերբակալել կամ կալանավորել են, ապա նա չի կարող պնդել, որ ենթարկվել է արգելված վերաբերմունքի զուտ այն բանի համար, որ ազատությունից զրկելը իրեն պատճառել է հոգեկան տառապանքներ, տագնապ, հիասթափություն և այլն, քանի որ դրանք այնպիսի զգացմունքներ են, որոնք, որպես կանոն, զգում է անձը ազատությունից զրկվելիս: Մինչդեռ արգելված վերաբերմունքի հատկանիշ ունեցող հոգեկան տառապանքը կամ անհանգստությունը պետք է լինի ավելին, քան նման դեպքերում սովորաբար անձը զգում է: Այդպիսին են, օրինակ, կալանավայրի անմարդկային պայմանները, կալանավորի նկատմամբ բռնի ուժ կիրառելը, առողջական ծանր վիճակում անձին կալանավայրում պահելը, եթե վերջինս չունի անհրաժեշտ պայմաններ պահանջված բժշկական խնամք ու բուժում տրամադրելու համար և այլն:

Հարկ է նշել նաև, որ ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի խախտման բացարձակ արգելքը ՄԻԵԴ–ը վերաբերելի է համարում նաև քրեական դատավարության մյուս մասնակիցների մասով և արձանագրում, որ նմանատիպ ցանկացած դեպք անդրադառնում է մեղադրյալի արդար դատաքննության իրավունքի վրա՝ խախտելով այն (*Լուցենկոն ընդդեմ Ուկրաինայի* գործով 2009 թ. մարտի 12–ի վճիռը, գանգատ թիվ 30336/04, կետեր 44–53):

Թեև Սալդուզն ընդդեմ Թուրքիայի գործով որոշմամբ ՄԻԵԴ–ն արձանագրել է, որ եթե թույլ է տրվել մեղադրյալի իրավունքների չհիմնավորված սահմանափակում, ապա հետագա երաշխիքների տրամադրումը չի կարող շտկել այն (*Սալդուզն ընդդեմ Թուրքիայի* գործով 2008 թ. նոյեմբերի 27–ի վճիռը, գանգատ թիվ 36691/02, կետ 58), այնուամենայնիվ, ՄԻԵԴ–ն իր նախադեպային իրավունքում պահանջում է, որպեսզի խոշտանգման յուրաքանչյուր դեպք քննվի անկախ մարմնի կողմից և հիմնավորվելու պարագայում հանգեցնի մեղավոր անձի քրեական պատասխանատվությանը և համարժեք պատժի նշանակմանը (*Մամադովն ընդդեմ Ադրբեջանի* գործով 2007 թվականի հունվարի 11–ի վճիռը, գանգատ թիվ 34445/04, կետ 74):

Եվրոպական դատարանի նախադեպային հիշյալ արձանագրումը տեղ է գտել նաև ՎԴ–ի նախադեպային իրավունքում, մասնավորապես Արայիկ Գզոյանի վերաբերյալ գործով 2010 թ. փետրվարի 12–ի թիվ ԵԱՔԴ/0049/01/09 որոշմամբ ՎԴ–ն արձանագրել է, որ *«(...) Եթե դատարաններն իրենց վարույթում գտնվող քրեական գործի քննության ընթացքում հայտնաբերում են հանցագործության ակնհայտ հատկանիշներ, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184–րդ հոդվածի 1–ին մասի հիման վրա պարտավոր են քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին: (...)*

Նախաքննության մարմնի դեմ ներկայացված բողոքները պետք է քննվեն անկախ մարմնի կողմից, որը չպետք է կապված լինի նախաքննության մարմնի հետ և պետք է առանձնացված լինի վերջինից»:

Ամփոփելով լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի էությունը գնահատելիս կիրառվող 1–ին չափանիշի մասին շարադրանքը՝ նշենք նաև, որ հարկադրանքի կամ ճնշման թույլատրելիությունը, մասնավորապես գործադրված հարկադրանքի բնույթը և աստիճանը գնահատելիս առաջին քայլով ավելի մեծ ուշադրություն է դարձվում այն դեպքերին, երբ առկա է եղել ուղղակի պարտադրանք, մասնավորապես ցուցմունք չտալու համար նախատեսված տուգանք (*Սաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 1996 թ. դեկտեմբերի 17–ի վճիռը, գանգատ թիվ 19187/91, կետ 70):

2. Գնահատման երկրորդ՝ հանրային հետաքրքրության կետի մասով անհրաժեշտ է հաշվի առնել քննվող հանցագործության ծանրությունը և արդյունքում հավանական համարվող պատժամիջոցի բնույթն ու ծավալն՝ այն տրամաբանությամբ, որ որքան ավելի թեթև է հանցագործությունը, և, ըստ այդմ, ավելի մեղմ է պատիժը, այդքան ավելի մեծ չափով կարող է ընդունելի լինել հարկադրանքը (*Օ. Հալորան և Ֆրենսիսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2007 թ. հունիսի 29–ի վճիռ, գանգատներ թիվ 15809/02 և 25624/02, կետ 58): Միևնույն ժամանակ, եթե տույժ է սահմանվում գործի հիմքում ընկած քրեական վարույթի համատեքստից դուրս, նույնիսկ աննշան գումարի չափով տույժը չի կարող խոչընդոտ դառնալ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի խախտում արձանագրելու

համար (*Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի* գործով 1993 թ. փետրվարի 25–ի վճիռը, գանգատ թիվ 10828/84, կետ 43)**:**

3. Գնահատման երրորդ տարրի՝ կիրառման ենթակա դատավարական երաշխիքների համատեքստում, հիմնական չափանիշը հետևյալն է՝ արդյոք տվյալ ապացույցն առանցքային կամ վճռորոշ նշանակություն է ունեցել մեղադրյալի դատապարտման համար (*Սաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 1996 թ. դեկտեմբերի 17–ի վճիռը, գանգատ թիվ 19187/91, կետ 68): Օրինակ՝ գաղտնի հսկողության կամ գաղտնալսման մասին խոսելիս ՄԻԵԴ–ն արձանագրում է, որ գաղտնի հսկողությունը կամ գաղտնալսումը չի հանգեցնի ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի խախտմանը, անգամ եթե այդ գործողությունները հակասում են ներպետական օրենսդրությանը կամ Կոնվենցիայի 8–րդ հոդվածին, եթե այդ ճանապարհով ձեռք բերված ապացույցները չեն օգտագործվում որպես վճռորոշ կամ առանցքային՝ ամբաստանյալին մեղավոր ճանաչելու հարցում (*Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2000 թ. հոկտեմբերի 4–ի վճիռը, գանգատ թիվ 35394/97, կետեր 35–37)**:**

Միաժամանակ ՄԻԵԴ–ն արձանագրում է նաև, որ մեղադրյալից խաբեությամբ խոստովանություն կորզող մասնավոր իրազեկիչի օգտագործումը, անգամ եթե այդ խոստովանությունը տվյալ գործի ապացույցների վճռորոշ բաղադրիչն է դառնում, հակասության մեջ չի լինի լռություն պահպանելու իրավունքի հետ այնքանով, որքանով որ այն ձեռք է բերվել հանրային գործունեության համատեքստում և ոչ քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս: Միևնույն ժամանակ հետախուզական հնարքները կարող են կիրառվել միմիայն անցյալում կատարված հանցագործության վերաբերյալ ապացույցների ձեռքբերման, ոչ թե նոր հանցագործություն հրահրելու նպատակով (*Ալենն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2013 թ. հուլիսի 12–ի վճիռը, գանգատ թիվ 25424/09, կետեր 42–47)**:**

Խոսելով լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի ու այն ապահովող դատավարական երաշխիքների մասին՝ ՄԻԵԴ–ը միաժամանակ արձանագրում է նաև, որ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածին հակասող չէ այն իրավիճակը, երբ մեղադրյալին ի վնաս են մեկնաբանվում նրա լռությու-

նից արված ողջամիտ հետևությունները (*Սալաբյակուն ընդդեմ Ֆրանսիայի* գործով 1988 թ. հոկտեմբերի 7–ի վճիռը, գանգատ թիվ 10519/83, կետ 28):

Հարցաքննվելը պաշտպանի մասնակցությամբ

ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածը և դրան համահունչ՝ ՄԻԵԴ–ի նախադեպային պրակտիկան պահանջում են, որ պաշտպան ներգրավվի կասկածյալի առաջին հարցաքննության պահից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կոնկրետ հանգամանքների լույսի ներքո հիմնավորվում է, որ առկա են լուրջ պատճառներ այդ իրավունքը սահմանափակելու համար: Քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձը, որը չի կամենում պաշտպանել ինքն իրեն, պետք է իրավունք ունենա հայցելու, որպեսզի մեկ այլ անձի կողմից նշանակվի պաշտպան (*Պավլենկոն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2010 թ. հոկտեմբերի 4–ի վճիռը, գանգատ թիվ 42371/02, կետեր 97–98):

ՄԻԵԴ–ն արձանագրում է նաև, որ անկախ հարցաքննվող անձի դատավարական կարգավիճակից, երբ կա հավանականություն, որ այդ անձը կարող է դառնալ կասկածյալ կամ եթե հարցաքննությունն անցկացվում է սթրեսային կամ ճնշող միջավայրում և առանց փաստաբանի, հարցաքննվող անձը պետք է տեղեկացվի լռություն պահպանելու իրավունքի վերաբերյալ (*Ալեքսանդր Զայչենկոն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2010 թ. փետրվարի 18–ի որոշում, գանգատ թիվ 39660/02, կետեր 42, 54):

«Անկախ դատավարական կարգավիճակից» եզրույթով ՄԻԵԴ–ն առավելապես նկատի ունի այն դեպքերը, երբ հստակ չէ՝ անձը որպես վկա է հարցաքննվում, թե՝ որպես կասկածյալ, մինչդեռ վերջինս լռություն պահպանելու իրավունք ունի, իսկ վկան՝ չունի: Նման դեպքերը վերլուծելիս ՄԻԵԴ–ը հաշվի է առնում ոչ միայն հարցաքննվող անձի դատավարական կարգավիճակը, այլև հարցաքննության շուրջ եղած փաստացի հանգամանքները՝ նպատակ ունենալով պարզելու, թե արդյոք նշած անձը կարող էր պոտենցիալ կասկածյալ համարվել, ըստ այդմ՝ կարող էր արդյոք հայցվել լռություն պահպանելու իրավունքը, թե՝

ոչ (*Բրյուսկոն ընդդեմ Ֆրանսիայի* գործով 2010 թ. հոկտեմբերի 14–ի վճիռը, գանգատ թիվ 1466/07, կետեր 44–55): Այս խնդրին Վճռաբեկ դատարանը անդրադարձել է իր երկու կարևոր որոշումներում՝ Գագիկ Միքայելյանի գործով 2009 թ. դեկտեմբերի 18–ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշմամբ և Նորիկ Պողոսյանի գործով 2010 թ. մարտի 26–ի թիվ ՀՅՔՐԴ/0153/01/08 որոշմամբ: Առաջինում ՎԴ–ն համարեց, որ այն փաստի ուժով, որ անձը բերման ենթարկվելու երեք ժամը լրանալուց հետո ազատ չէր արձակվել անձը ինքնաբերաբար ձեռք էր բերում բերվածի, հետևաբար նաև կասկածյալի կարգավիճակ և այդ հիմքով ցանկացած դատավարական գործողություն այդ փուլում անընդունելի կարող է համարվել: Երկրորդում ՎԴ–ն որոշեց, որ եթե անձը վկայի կարգավիճակում հարցաքննվել ու նրան տրվել են մեղքի մասին մեղադրող բնույթի հարցեր, հարցաքննությունը և դրանից բխող արձանագրությունը անթույլատրելի ապացույցներ են, և որ հետագայում դրանցից բխող, օրինակ, մեղադրյալի կարգավիճակում ստացված հարցաքննության արձանագրությունները նույնպես անթույլատրելի են: Ինչ վերաբերում է ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածով սահմանված երաշխիքներին, այդ թվում՝ պաշտպանության իրավունքից մեղադրյալի հրաժարման հնարավորությանը, ապա, ընդունելով հանդերձ նման հնարավարությունը, ՄԻԵԴ–ն արձանագրում է, որ այդպիսի հրաժարումը չպետք է հակասի հանրային շահին, պետք է հաստատվի հստակ կերպով և պետք է իրականացվի հրաժարվելու կարևորությանը համապատասխանող նվազագույն երաշխիքների առկայության դեպքում: Ավելին՝ մինչ կարելի կլինի ասել, որ կասկածյալն իր վարքագծին համապատասխան կերպով հրաժարվել է ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածով նախատեսված իրավունքից, պետք է ցույց տալ, որ նա կարողացել է հիմնավորապես կանխատեսել, թե ինչպիսին կլինեն իր վարքագծի հետևանքները **(***Ալեքսանդր Զայչենկոն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2010 թ. փետրվարի 18–ի որոշում, գանգատ թիվ 39660/02, կետ 40**):**

Հռչակելով հանդերձ, որ լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը կոչված է պաշտպանելու մեղադրյալին պետական մարմինների հարկադրանքից և օգնում է խուսափել դատական սխալներից ու հասնել

ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածով սահմանված նպատակներին, ՄԻԵԴ–ի նախադեպային պրակտիկան, սակայն, ընդունելի է համարում այն դեպքերը, երբ հարկադիր կարգով մեղադրյալից ձեռք են բերվում տեղեկություններ, որոնք առկա են՝ անկախ նրա կամքից:

Խոսքը, մասնավորապես, այն դեպքերի մասին է, երբ բժշկական միջամտության եղանակով մեղադրյալի օրգանիզմից ստացվում են ապացույցներ՝ շնչառության, արյան, մեզի, մազի, ձայնի, քրտինքի նմուշներ:

Այս կապակցությամբ ՄԻԵԴ–ը նախ արձանագրում է, որ նշված ապացույցները մեղադրյալից հարկադրաբար կարող են վերցվել՝ անկախ այն հանգամանքից, թե, կոնկրետ իրավիճակի հանգամանքներով պայմանավորված, արդյոք առկա է մեղադրյալի նկատմամբ բժշկական միջամտության անհրաժեշտություն, թե ոչ:

Չնայած դրան՝ ՄԻԵԴ–ն արձանագրում է նաև կատարված բժշկական միջամտությանը վերաբերող կոնկրետ չափանիշներ, մասնավորապես այն, որ այդպիսի միջամտությունը չպետք է գերազանցի դաժանության աստիճանը, որ միջամտությունը կատարված լինի հատկապես բժշկի կողմից և չունենա բացասական ազդեցություն մեղադրյալի առողջության վրա:

Առարկայացնելով հիշյալ չափանիշները կոնկրետ բժշկական միջամտության տեսակի վրա՝ ՄԻԵԴ–ն արձանագրել է, որ, օրինակ, հարկադիր փսխման միջոցով իրեղեն ապացույցի դուրս բերումը կասկածյալի օրգանիզմից մարդու առողջությունը վտանգող մեթոդ է: Ավելին՝ ՄԻԵԴ–ը նաև սահմանեց, որ եթե այդպիսի ապացույցը իրեղեն ապացույց է, ապա դա լուրջ խնդիրներ կարող է առաջացնել ապացույցի ընդունելիության համար այն իմաստով, որ նման ապացույցը կարող է համարվել անձի լռելու իրավունքի խախտումով ստացված ապացույց: Այս իմաստով ՄԻԵԴ–ը տարբերակում անցկացրեց այն դեպքի հետ, երբ փաստական տվյալը ստացվել է անձից նմուշ ստանալու փորձաքննության միջոցով (մեզի, մազի, արյան, սերմնահեղուկի): Վերջինի դեպքում նույնիսկ եթե առկա է հարկադրանք, սակայն ապացույցը կարող է համարվել թույլատրելի, եթե դա չի առնչվում իրեղեն ապացույցին, մինչդեռ

իրեղեն ապացույցի ստացման պարագայում հարկ է, որ ապահովվեն առավել բարձր երաշխիքներ արդարության սկզբունքի պահպանման համար և այդ իմաստով բժշկական միջամտության եղանակով իրեղեն ապացույցի ստացումը կարող է բացասաբար անդրադառնալ դատավարության արդարացիության վրա (*Ջալոհն ընդդեմ Գերմանիայի* գործով 2006 թ. հուլիսի 11–ի վճիռը, գանգատ թիվ 54810/00, կետեր 70–74, 76, 78):

Մեղադրյալի կողմից կատարված սուտ մատնությունը

Ինչպես վերը նշվեց, մեղադրյալի՝ ցուցմունք տալու կամ պաշտպանության իրավունքը չի կարող մեկնաբանվել բացարձակ կերպով և ներառել նաև այն իրավիճակները, երբ մեղադրյալը հայտնում է իրականությանը չհամապատասխանող տվյալներ, որոնք իրենց հերթին խախտում են այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը:

Այս կապակցությամբ ՄԻԵԴ–ը հայտնել է իրավական դիրքորոշում, համաձայն որի՝ *«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի* 6–րդ հոդվածի 3–րդ կետի «գ» ենթակետը չի նախատեսում պաշտպանության նպատակով ցանկացած փաստարկ օգտագործելու անսահմանափակ իրավունք: Հանցանք կատարելու մեջ մեղադրվող անձանց պաշտպանության իրավունքի գաղափարը կծանրաբեռնվեր, եթե ենթադրեր, որ նրանք չեն կարող ենթարկվել պատասխանատվության, երբ նշված իրավունքն իրացնելիս դիտավորյալ կեղծ կասկած հարուցեն վկաների կամ քրեական դատավարությանը ներգրավված այլ անձանց կողմից պատժելի վարքագիծ դրսևորելու մասին: Մեղադրյալին իր պաշտպանության նպատակով արված հայտարարությունների համար պատասխանատվության ենթարկելու հնարավորությունն ինքնին չի ենթադրում 6–րդ հոդվածի 3–րդ մասի «գ» կետով երաշխավորված իրավունքների խախտում (*Բրանդշտետտերն ընդդեմ Ավստրիայի* գործով 1991 թվականի օգոստոսի 28–ի վճիռը, գանգատներ թիվ 11170/84, 12876/87, 13468/87, կետեր 52–53):

Այսպիսով՝ մեղադրյալի՝ ցուցմունք տալու իրավունքին հակադրման է ենթակա սուտ մատնության համար նրան քրեական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը, որն իր արտացոլումն է գտել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Այսպես՝ ՔԴՕ–ի 63–րդ հոդվածի 4–րդ և 65–րդ հոդվածի 3–րդ մասերը սահմանում են, որ կասկածյալի կամ մեղադրյալի վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել իր տված ցուցմունքների և բացատրությունների համար՝ բացի այն դեպքերից, երբ նա հայտարարել է հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձի կողմից հանցանք կատարելու մասին:

Դատավարական օրենքի հիշյալ նորմերը մեկնաբանվեցին Հեղինե Գալստյանի վերաբերյալ գործով ՎԴ–ի՝ 2015 թ. հունիսի 5–ի թիվ ԼԴ/0051/01/14 որոշմամբ, մասնավորապես այդ որոշմամբ ՎԴ–ն արձանագրել է հետևյալը.

«*Իրեն առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու անձի իրավունքը բացարձակ չէ: Դրա շրջանակները սահմանված են «օրենքով չարգելված բոլոր միջոցներով» (ՀՀ Սամանադրության 18–րդ, 42–րդ, ՀՀ քրեական դատավարության 19–րդ, 63–րդ, 65–րդ հոդվածներ) և «չի խախտում այլոց իրավունքներն ու ազատությունները» (ՀՀ Սահմանադրության 42–րդ հոդված) չափորոշիչներով: Հետևաբար մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը չի կարող ենթադրել անօրինական, այլոց իրավունքներն ու ազատությունները խախտող, այդ թվում՝ հանցավոր միջոցներով պաշտպանություն իրականացնելու իրավունք: Հակառակ մեկնաբանումը կհակասի օրինականության սկզբունքին, ինչպես նաև վերացական կդարձնի անձի իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու պետության պարտականության կատարումը (ՀՀ Սահմանադրության 3–րդ հոդված):*

ՀՀ քրեական օրենսգրքի 333–րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում սուտ մատնություն կատարելու համար, հետևաբար վերջինս օրենքով արգելված արարք է: Նշված հոդվածի բովանդակությունից հետևում է, որ դրանով նախատեսված հանցագործության սուբյեկտն ընդհանուր է, այն է՝ 16 տարին լրացած մեղսունակ

ֆիզիկական անձը: Հետևաբար ակնհայտ սուտ մատնության սուբյեկտ կարող է հանդիսանալ նշված պահանջներին բավարարող ցանկացած անձ՝ անկախ իր դատավարական կարգավիճակից:

Ավելին՝ մեղադրյալի (կասկածյալի) կողմից քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակով սուտ մատնություն կատարելու արդյունքում կխախտվեն այլ անձանց՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված մի շարք իրավունքներ (անձի պատվի, արժանապատվության, բարի համբավի, ազատության և անձնական անձեռնմխելիության, արդար դատաքննության և այլն), ինչն անթույլատրելի է իրավական պետությունում: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում իր ամրագրումը ստացած այն նորմը, ըստ որի՝ մեղադրյալի (կասկածյալի) վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել իր տված ցուցմունքների և բացատրությունների համար (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63–րդ հոդվածի 4–րդ, 65–րդ հոդվածի 3–րդ մասեր), չի կարող բացառել սուտ մատնություն կատարելու համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը»:

Նույն որոշմամբ ՎԴ արձանագրել է նաև, որ «*Սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելը այս հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ չէ: Քրեական օրենսդրության որևէ այլ դրույթ նույնպես չի սահմանում սուտ մատնության համար քրեական պատասխանատվության առկայության մասին անձին նախազգուշացնելը՝ իբրև պատասխանատվության ենթարկելու պարտադիր պայման:*

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177–րդ հոդվածի 3–րդ մասում ամրագրված՝ քրեական պատասխանատվության մասին նախազգուշացնելու վերաբերյալ կանոնին, ապա այն քրեադատավարական պահանջ է, որը տարածվում է հանցագործությունների մասին հաղորդումների գրանցման դատավարական կարգի նկատմամբ: Այն չի սահմանում և չի էլ կարող սահմանել (ՀՀ քրեական օրենսգրքի 5–րդ և 7–րդ հոդվածներ), որ քրեական պատասխանատվության մասին նախազգուշացնելու դատավարական պահանջի խախ-

տումը բացառում է սուտ մատնության համար անձի քրեական պատասխանատվությունը:

Քննարկվող քրեադատավարական կանոնը կիրառելի է այն դեպքում, երբ անձը հանցագործության մասին հաղորդումն անմիջականորեն ներկայացնում է իրավասու մարմիններին: Մինչդեռ հաղորդումները կամ հայտարարությունները կարող են ի սկզբանե ներկայացված չլինել վարույթն իրականացնող մարմիններին, ինչպես նաև ուղարկվել փոստի միջոցով: Նման դեպքերում օբյեկտիվորեն հնարավոր չէ անձին նախազգուշացնել սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Բացի այդ՝ վերոշարադրյալ քրեադատավարական պահանջը նաև սուտ մատնության հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայությունը կամ բացակայությունը որոշելու չափանիշ ծառայել չի կարող: Հետևաբար ինքնին այդ պահանջի խախտումը չի կարող բացառել սուտ մատնություն կատարելու դիտավորության առկայությունը: Ուստի սուտ մատնության համար քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը ողջամտորեն չի կարող պայմանավորվել դրա առկայության մասին անձին նախազգուշացնելու հանգամանքով: (...)

ՀՀ քրեական օրենսգրքի 333–րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված չլինելու հանգամանքը չի կարող հանդիսանալ այդ հանցագործության համար անձի քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք: Այս դեպքում գործում է նաև «օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից (ignorantia non est argumentum)» հանրահայտ սկզբունքը (...)»:

Այլ փաստաթուղթը

ՔԴՕ–ի 122–րդ հոդվածի համաձայն՝ «Փաստաթուղթ է թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որով կարող են հաստատվել քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալները»:

Նույն հոդվածի 3–րդ մասը սահմանում է, որ այլ փաստաթղթեր ապացույց են ճանաչվում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ:

Այլ փաստաթղթին՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակի, անդրադարձել է ՎԴ–ն՝ Ալեքսեյ Մկրտչյանի վերաբերյալ 2009 թ. փետրվարի 17–ի թիվ ՎԲ–01/09 որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը.

«*Ապացույցի այս տեսակն իր մեջ ներառում է տեղեկության (ինֆորմացիայի) նյութական կրողների բոլոր տեսակները, եթե այն նշանակություն ունի ապացուցման ենթակա հանգամանքները պարզելու համար»:*

(...) Այլ փաստաթղթերի՝ ապացույցի կարգավիճակ ձեռք բերելու համար որևէ քննչական գործողության կատարում չի պահանջվում. անհրաժեշտ է կոնկրետ փաստաթուղթն ապացույց ճանաչելու և գործի նյութերին կցելու մասին որոշման ընդունում: Նախաքննության ընթացքում մեղադրող կողմի հավաքած փաստաթղթերը կցվում են գործին և դառնում ապացույց քննիչի (հետաքննության մարմնի) որոշմամբ»:

Նույն որոշմամբ ՎԴ–ն, անդրադառնալով կոնկրետ քրեական գործով ձեռք բերված և որպես այլ փաստաթուղթ ճանաչված՝ փորձաքննության եզրակացությանը, տեսաերիզների զննման արձանագրությանը, քննչական փորձարարության փաստը պարունակող տեսաերիզներին, արձանագրել է, որ դրանք իբրև ապացույց թույլատրելի են, քանի որ.

«ա. Ձեռք են բերվել տվյալ դատավարական գործողությունը կատարելու համար լիազորված սուբյեկտի կողմից:

բ. Ստացվել են քննչական և դատավարական գործողությունների կատարման կարգի պահպանմամբ:

գ. Ձեռք են բերվել քննչական և դատավարական գործողությունների ընթացքի և արդյունքների ամրագրումը կարգավորող օրենքի բոլոր պահանջներին համապատասխան»:

Այսպիսով՝ չնայած նրան, որ վերոհիշյալ արձանագրումը վերաբերել է կոնկրետ գործով ձեռք բերված փաստաթղթերն ապացույց ճանաչելուն, այնուամենայնիվ, կարելի է պնդել, որ այլ փաստաթուղթն իբրև թույլատրելի ապացույց ճանաչելու հիշյալ չափանիշները պարտադիր են թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառումը որպես այլ փաստաթուղթ ճանաչելու համար:

ՔՕ–ի 72–րդ հոդվածի համաձայն՝ «Առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայականով, աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը»:

Նույն օրենսգրքի 62–րդ հոդվածի 1–ին մասի 9–րդ կետի համաձայն՝ «Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է մեղայականով ներկայանալը»:

ՔՕ–ի վկայակոչված հոդվածներից հետևում է, որ մեղայականով ներկայանալը քրեաիրավական էական նշանակություն ունի անձին ինչպես քրեական պատասխանատվությունից ազատելու, այնպես էլ նրա նկատմամբ մեղմ պատիժ նշանակելու հարցում: Նշված հանգամանքն իր հերթին պայմանավորում է մեղայականով ներկայանալու արձանագրությունը որպես այլ փաստաթուղթ ճանաչելու անհրաժեշտությունը, հետևաբար և այն հարցը քննարկելը, թե որ դեպքերում է, որ մեղայականով ներկայանալու արձանագրությունը կարող է ճանաչվել իբրև թույլատրելի ապացույց՝ այլ փաստաթուղթ:

Նախ՝ անհրաժեշտ է փաստել, որ մեղայականով ներկայանալու արձանագրությունը, ինչպես և քրեադատավարական ցանկացած ապացույց, պետք է բավարարի թույլատրելիության և վերաբերելիության՝ արդեն իսկ քննարկված ընդհանուր չափանիշներին:

Բացի դրանից՝ մեղայականով ներկայանալու արձանագրությունը պետք է արժանահավատ լինի, որպիսի հատկանիշը մեկնաբանված է ՎԴ–ի՝ Անդրանիկ Ավետիսյանի վերաբերյալ գործով թիվ ԵԱՆԴ/0091/01/09 և Էդվարդ Ադամյանի վերաբերյալ գործով թիվ ԵԷԴ/0048/01/14 որոշումներում: Այսպես՝ Անդրանիկ Ավետիսյանի վերաբերյալ գործով 2011 թ. հուլիսի 13–ի թիվ ԵԱՆԴ/0091/01/09 որոշմամբ ՎԴ–ն արձանագրել է.

«*Մեղայականով ներկայանալը նշանակում է, որ անձը կամավոր ներկայանում է իրավապահ մարմիններին (ոստիկանություն, դատախազություն և այլն) և հայտնում է իր կողմից միանձնյա կամ այլ անձի հետ կատարած հանցագործության մասին: Այլ կերպ՝ մեղայականով ներկա-*

յացած անձը կամավոր, անկեղծ խոստովանություն է անում, քրեական հետապնդում իրականացնող մարմնին բանավոր կամ գրավոր կերպով հայտնում իր կողմից կամ իր մասնակցությամբ կատարված հանցագործության մասին: Հնարավոր են իրավիճակներ, երբ հանցագործություն կատարած անձը չի կարող անձամբ ներկայանալ և հայտնել հանցագործության մասին, և Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման դեպքերում հեռախոսով կամ փոստով հաղորդումները ևս պետք է դիտվեն որպես մեղայականով ներկայանալ:

Շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 62–րդ հոդվածի 1–ին մասի 9–րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե կատարված հանցագործության փաստով հարուցված քրեական գործով այդ հանցանքը կատարած անձը պարզված չէ, ապա հանցանք կատարած անձի կողմից դրա մասին իրավապահ մարմիններին կամավոր հայտնելը ևս պետք է դիտվի որպես մեղայականով ներկայանալ»:

Էդվարդ Ադամյանի վերաբերյալ գործով 2014 թ. դեկտեմբերի 16–ի թիվ ԵԷԴ/0048/01/14 որոշմամբ ՎԴ–ն, զարգացնելով թիվ ԵԱՆԴ/0091/01/09 որոշմամբ արտահայտած նախադեպային դիրքորոշումը, արձանագրել է, որ «*Մեղայականով ներկայանալու էությունը կայանում է նրանում, որ հանցագործությունը կամ այն կատարող անձը (անձինք) անհայտ լինելու պայմաններում հանցավորը կամովին և մեղայականով ներկայանում է համապատասխան մարմիններ և հայտնում իր կողմից միանձնյա կամ այլ անձանց հետ համատեղ կատարած հանցանքի մասին, անում է անկեղծ խոստովանություն, քրեական հետապնդման մարմիններին բանավոր կամ գրավոր հայտնում հանցագործության հանգամանքները: Ընդ որում՝ քննարկվող մեղմացնող հանգամանքը հաշվի առնելու համար որևէ նշանակություն չունի՝ ինչքան ժամանակ է անցել հանցանք կատարելուց հետո, ինչպես նաև որոնք են ներկայանալու շարժառիթները (զղջում, պատասխանատվության ենթարկվելու վախ, ամոթ և այլն):*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ վարույթ իրականացնող մարմին ներկայանալու ոչ բոլոր դեպքերն են իրենց բնույթով և հատկանիշներով համարվում մեղայականով ներկայանալ և հան-

գեցնում պատասխանատվության ու պատժի պարտադիր մեղմացման: Հարկ է նկատել, որ թեև ՀՀ քրեական օրենսգրքի 62–րդ հոդվածի 1–ին մասի 9–րդ կետը պարունակում է միայն մեղայականով ներկայանալու եզրույթը, այնուամենայնիվ, յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է պարզել՝ արդյոք այն եղել է նաև կամովին և հակառակը՝ կամովին ներկայանալու դեպքերը արդյոք պարունակում են մեղայականով ներկայանալուն բնորոշ հատկանիշները:

Այսպես՝ ներկայանալը կարող է համարվել կամովին այն դեպքում, երբ անձն ինքնակամ, սեփական կամահայտնությամբ դիմում է համապատասխան մարմիններին՝ գիտակցելով քննությունից թաքնվելու հնարավորությունը: Ընդ որում՝ ներկայանալու նախաձեռնությունը կարող է բխել ինչպես հանցավորից, այնպես էլ այլ անձանցից (օրինակ՝ մերձավորների կողմից համոզելու, հորդորելու, խորհուրդներ տալու և այլ դեպքերում): Տվյալ պարագայում սկզբունքայինն անձի նկատմամբ հոգեկան կամ ֆիզիկական հարկադրանքի բացակայությունն է:

Միաժամանակ կամովին ներկայանալը կհամարվի մեղայականով ներկայանալ, եթե հանցավորն ընդունի իր մեղքը հանցանքի կատարման կամ դրան հանցակցելու մեջ, անկեղծորեն զղջա կատարվածի համար և տա ճշմարտացի ցուցմունքներ գործին վերաբերող իրեն հայտնի բոլոր հանգամանքների վերաբերյալ:

Միայն վերոնշյալ հատկանիշների միաժամանակյա առկայությունն է վկայում հանցավորի անկեղծ զղջալու, հանցագործության բացահայտմանն աջակցելու պատրաստակամության և, հետևաբար, նրա հանրային վտանգավորության աստիճանի էական նվազման մասին, ինչն էլ հիմք է նրա նկատմամբ համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում մեղմ պատիժ նշանակելու համար:

Սույն որոշման նախորդ կետում շարադրված դատողությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցավորի կողմից իրավապահ մարմին ներկայանալը և իր կամ իր մասնակցությամբ կատարված հանցագործության մասին հայտնելը չի կարող դիտվել որպես մեղայականով ներկայանալ և, հետևաբար, հանդիսանալ պատասխանատվության ու պատժի պարտադիր մեղմացման պայման, եթե հանցավորը նախապես իմացել է իր մերկացման մասին: Այսինքն՝

եթե հանցանք կատարած անձը ներկայանում է իրավապահ մարմին՝ նախապես իմանալով, որ հայտնի է հանցանքն իր կողմից կատարելու փաստը, և գիտակցելով քննությունից երկար թաքնվելու հնարավորության բացակայությունը, ապա խոսք չի կարող լինել ներկայանալու կամովին բնույթի և կատարվածի համար անկեղծորեն զղջալու մասին:

Վերոշարադրյալ եզրահանգումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 62–րդ հոդվածի 1–ին մասի 9–րդ կետի իմաստով մեղայականով համապատասխան մարմիններ ներկայանալը դիտվում է որպես անձի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք, եթե՝

1) հայտնի չէ հանցագործության դեպքը ու այն կատարած անձը, և նա կատարվածի վերաբերյալ կամովին հաղորդում է ներկայացնում իրավապահ մարմիններ (այս դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177–րդ հոդվածի 6–րդ մասի համաձայն՝ մեղայականով ներկայանալը հանդիսանում է քրեական գործ հարուցելու առիթ).

2) հայտնի է հանցագործության դեպքը, սակայն հայտնի չէ հանցավորի անձը, և վերջինս կամովին ներկայանում է համապատասխան մարմիններ.

3) հայտնի է ինչպես հանցագործության դեպքը, այնպես էլ այն կատարած անձը, և հանցավորը կամովին ներկայանում է՝ չգիտակցելով, որ ինքն արդեն իսկ մերկացված է հանցագործության կատարման մեջ (օրինակ՝ անձը գտնվում է հետախուզման մեջ, սակայն չգիտի այդ մասին և համոզված է, որ իրավապահ մարմիններին հայտնի չէ հանցագործության կամ այն իր կողմից կատարելու հանգամանքը և այլն),

4) հանցանք կատարելու մեջ կասկածվող անձը ձերբակալվելուց հետո կամովին հայտնում է իր կողմից կատարված այլ հանցանքի մասին այն պարագայում, երբ մինչ այդ իրավապահ մարմինները չեն տիրապետել բավարար տվյալների, որոնք կվկայեին նրա առնչությունն այդ դեպքին:

Հարկ է նշել, սակայն, որ Վճռաբեկ դատարանը չի բացառում, որ որոշ դեպքերում վարույթ իրականացնող մարմին հանցանք կատարած անձի զուտ ներկայանալու փաստը, որը չի ենթադրում մեղայականով ներկայանալ, դատարանը կարող է ՀՀ քրեական օրենսգրքի 62–րդ

հոդվածի 2–րդ մասով սահմանված կարգով գնահատել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող այլ հանգամանք՝ հաշվի առնելով հանցավորի փաստացի ներկայանալու նշանակությունը հանցագործության արագ բացահայտման և գործի քննության համար»:

Պրակտիկ կարևոր նշանակություն ունի նաև քրեական գործի հարուցման փուլում ենթադրյալ հանցանք կատարած անձից վերցված բացատրությունը քրեական գործ հարուցելուց հետո որպես ապացույց՝ այլ փաստաթուղթ ճանաչելու հարցը:

Արդեն նշվել է, որ ՄԻԵԴ–ն արդար դատաքննության իրավունքը տարածում է նաև մինչդատական վարույթի նկատմամբ, այլ խոսքով՝ գործի նախնական քննության ընթացքում ձեռք բերված ապացույցները նույնպես պետք է մեղադրյալի համար ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածից բխող նվազագույն երաշխիքներն ապահովեն:

ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքի հիման վրա՝ «քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է հասկացվի ոչ թե ձևական (փաստաթղթային), այլ բովանդակային (գործնական) իմաստով (Դևեերն ընդդեմ Բելգիայի գործով 1980 թ. փետրվարի 27–ի վճիռը, գանգատ թիվ 6903/75, կետ 44): Այսինքն՝ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա (Էկլեն ընդդեմ Գերմանիայի գործով 1982 թ. հուլիսի 15–ի վճիռը, գանգատ թիվ 8130/78, կետ 73, *Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի* գործով 2007 թ. հունվարի 18–ի վճիռը, գանգատ թիվ 19611/04, կետ 62, Գ. Կ–ն ընդդեմ Լեհաստանի գործով 2004 թ. հունվարի 20–ի վճիռը, գանգատ թիվ 38816/97, կետ 98): Ընդ որում՝ մինչդատական վարույթի նկատմամբ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 1–ին և 3–րդ մասերի կիրառման եղանակը պայմանավորված է տվյալ վարույթի առանձնահատկություններով (Շաբելնիկն ընդդեմ Ուկրաինայի գործով 2009 թ. փետրվարի 19–ի վճիռը, գանգատ թիվ 16404/03, կետ 52):

Վերոգրյալի հիման վրա՝ Գագիկ Միքայելյանի վերաբերյալ գործով 2009 թ. դեկտեմբերի 18–ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշմամբ ՎԴ–ն նախադեպային դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*բերվածի (հան-*

ցագործություն կատարելու կասկածանքով ոստիկանություն տարվածի) իրավական վիճակը համապատասխանում է «քրեական մեղադրանքի» ներկայացման Կոնվենցիոն պահանջին՝ Եվրոպական դատարանի բովանդակային մեկնաբանմամբ: Ուստի բերվածի կարգավիճակի առանձնահատկությունները հաշվի առնելով (նախնական և կարճաժամկետ բնույթը)՝ բերվածը պետք է օժտված լինի առնվազն հետևյալ իրավունքներով.

ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը (բխում է ՀՀ Սահմանադրության 16–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին նախադասությունից, Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 3 (ա) ենթակետից),

բ) տեղեկացնելու իրեն բերման ենթարկելու մասին (բխում է ՀՀ Սահմանադրության 16–րդ հոդվածի 2–րդ մասի 2–րդ նախադասությունից),

գ) հրավիրելու իր փաստաբանին (բխում է ՀՀ Սահմանադրության 20–րդ հոդվածի 1–ին մասից),

դ) լռելու (բխում է ՀՀ Սահմանադրության 22–րդ հոդվածի 1–ին մասից):

Համապատասխանաբար քրեական հետապնդման մարմինը պարտավոր է ապահովել բերվածի իրավունքների իրականացումը՝ բերվածի իրավունքները գրավոր պարզաբանելու, նրան առնվազն մեկ զանգի հնարավորություն ընձեռելու, բերվածի փաստաբանի մուտքը չխոչընդոտելու եղանակներով:

Այնքանով, որքանով վերաբերելի են (mutatis mutandis), սույն կետում ամրագրված նվազագույն իրավունքներով և երաշխիքներով օժտված են նաև ոստիկանությունում կամ քրեական հետապնդման այլ մարմնում գտնվող, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող այն անձինք, որոնք կարող են ողջամտորեն ենթադրել, որ (1) իրենց ազատությունը սահմանափակված է, կամ իրենք ազատությունից զրկված են, և միաժամանակ, որ (2) իրենք կասկածվում են հանցագործության մեջ»:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերը նշվածը՝ կարելի է փաստել, որ ՀՀ քրեական դատավարությունում, ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի և դրա հիման վրա ՄԻԵԴ–ի ձևավորած նախադեպային իրավունքի հիմքով, լիարժեք ապահովում է քրեական գործ դեռևս հարուցված չլինելու պայմաններում այն անձի՝ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածից բխող նվազագույն իրավունքները, ով ոստիկանություն կամ քրեական հետապնդման այլ

մարմին է տարվել հանցագործության մեջ կասկածվելու պատճառով և ողջամտորեն կարող է ենթադրել, որ իր ազատությունը սահմանափակված է, կամ ինքն ազատությունից զրկված է՝ անկախ այն հանգամանքից, թե անձը քրեադատավարական կարգավիճակ ունի, թե ոչ:

Մասնավորապես, ինչպես նշվեց, հիշյալ կարգավիճակի անձը՝ բերվածը, ունի լռելու և իր փաստաբանին հրավիրելու իրավունք: Դրան համապատասխան՝ ՔԴՕ–ն հանցագործության մեջ կասկածվող անձի համար չի նախատեսում պարտականություն՝ նյութերի նախապատրաստման կամ քրեական գործի հարուցման փուլում տալու բացատրություն:

Հովհաննիսյանն ընդդեմ Բուլղարիայի գործով ՄԻԵԴ–ը շեշտել է, որ արդար դատաքննության իրավունքը կոպտորեն կարող է խախտվել, եթե ոստիկանությունում անձը խոստովանական բացատրություն է տվել առանց փաստաբանի (*Հովհաննիսյանն ընդդեմ Բուլղարիայի* գործով 2010 թ. դեկտեմբերի 21–ի վճիռ, գանգատ թիվ 31814/03, կետ 33): Այս իրավիճակը լիովին կիրառելի է անձից բացատրություն վերցնելու ընթացակարգում, եթե նա բացատրությունը տվել է փաստացի բերման ենթարկված լինելու վիճակում:

Միաժամանակ, ինչպես արդեն առիթ է եղել նշելու, ՄԻԵԴ–ն ազգային դատարանների համար չի ձևավորում ապացույցի թույլատրելիության կոնկրետ չափանիշներ՝ թողնելով այն ներպետական օրենսդրության կարգավորմանը: Դատարանի խնդիրն է որոշելը, թե արդյոք դատավարությունն, այդ թվում՝ նախնական քննության ընթացքում, եղել է արդարացի՝ ըստ Կոնվենցիայի:

ՄԻԵԴ–ի նախադեպային վերը նշված պրակտիկային համահունչ՝ ՔԴՕ–ն, սահմանելով ապացույցների թույլատրելիության կոնկրետ չափանիշներ և ըստ այդմ՝ ապացույցների սպառիչ տեսակները, բացատրությունը չի նախատեսում որպես ապացույցի տեսակ, մինչդեռ, ինչպես նշվեց վերևում, եթե բացատրությունը տրվել է նրա նկատմամբ կասկածի առկայության պարագայում, Գագիկ Միքայելյանի գործով Վճռաբեկ դատարանի վերը շարադրված պայմանները կիրառելի են:

Բաժին 2. Ապացույցների թույլատրելիության հիմնախնդիրները

§ 1. Ապացույցների թույլատրելիությունը՝ որպես արդար դատաքննության իրավունքն ապահովող կարևոր տարր:

§ 2. Ապացույցների թույլատրելիության առանձին հարցերի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները:

§ 3. Ապացույցն անթույլատրելի ճանաչելու դատավարական կարգը և հետևանքները:

Ուսումնական նպատակները

Ձեռնարկի այս մասն ուսումնասիրելով՝ ընթերցողը.

– Կընդլայնի գիտելիքները ապացույցների թույլատրելիության բովանդակության վերաբերյալ.

– Պատկերացում կկազմի ապացույցների թույլատրելիության տեղի և դերի մասին՝ արդար դատաքննության իրավունքի համատեքստում.

– Կընդլայնի գիտելիքները ապացույցների թույլատրելիության ներպետական և եվրոպական չափանիշների վերաբերյալ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների և Մարդու իրավուքների Եվրոպական դատարանի վճիռների համատեքստում.

– Կստանա ընդլայնված գիտելիքներ քրեական դատավարության առանձին փուլերում ձեռք բերված ապացույցներն անթույլատրելի ճանաչելու հիմքերի ու կարգի մասին:

§ 1. Ապացույցների թույլատրելիությունը՝ որպես արդար դատաքննության իրավունքն ապահովող կարևոր տարր

Հիմնարար դրույթներ

- ՄԻԵԴ–ի խնդիրը ոչ թե ապացույցներն անթույլատրելի ճանաչելու կանոնների սահմանումն է, այլ այնպիսի հարցի պարզումն է, թե արդյոք դատական քննությունն ամբողջությամբ եղել է արդարացի՝ ներառյալ ապացույցները ստանալու եղանակները:
- Մինչդատական կամ դատական վարույթներում ապացույցների թույլատրելիության հարցերին առնչվելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 1–ին մասի դրույթները կարող են հանդես գալ ինքնուրույն կամ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի այլ մասերի, ինչպես նաև ՄԻԵԿ–ի այլ հոդվածների հետ փոխկապակցված:

Փաստելով, որ կազմակերպված հանցավորության աճը պահանջում է պատշաճ միջոցների ձեռնարկում, ՄԻԵԴ–ը անընդհատ հիշեցնում է, որ արդար դատաքննության իրավունքը, որը ենթադրում է պատշաճ արդարադատության իրականացման պահանջ, ենթակա է պահպանման բոլոր հանցագործությունների պարագայում՝ ակնհայտ պարզից մինչև շատ բարդ: Արդար դատաքննության իրավունքը այնպիսի կարևոր տեղ է զբաղեցնում ժողովրդավարական հասարակությունում, որ այն չի կարող զոհաբերվել նպատակահարմարությանը (տե՛ս *Դելքուրտն ընդդեմ Բելգիայի* գործով 1970 թ. հունվարի 17–ի վճիռը, կետ 25, *Բաննիկովան ընդդեմ Ռուսաստանի* գործով 2010 թ. նոյեմբերի 4–ի վճիռը, գանգատ թիվ 18757/06, կետ 33):

Արդեն նշվել է, որ թեև ՄԻԵԿ–ը ապացույցների թույլատրելիության վերաբերյալ որևէ կոնկրետ դրույթ չի նախատեսում, սակայն ՄԻԵԴ–ն այս հարցի կապակցությամբ ձևավորել է որոշակի նախադեպ, որն ամեն դեպքում պետք է հաշվի առնվի ներպետական մարմինների կողմից (մինչդատական և դատական մարմինների) այս կամ այն ապացույցի թույլատրելիության հարցը լուծելիս:

Արդար դատաքննության իրավունքի հիմնական մոտեցումը կայանում է նրանում, որ քրեական գործով քննությունը, ներառյալ ընթացակարգին վերաբերող տարրերը, պետք է լինեն մրցակցային և պետք է հավասարություն սահմանվի մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար, ինչը նշանակում է, որ ինչպես մեղադրանքի, այնպես էլ պաշտպանության կողմերին պետք է հնարավորություն տրվի իմանալու հակառակ կողմի ներկայացված ապացույցների և դիրքորոշումների մասին, ինչպես նաև կարծիք հայտնել դրանց վերաբերյալ (*Մատիցինան ընդդեմ Ռուսաստանի* գործով 2014 թ. մարտի 27–ի վճիռը, գանգատ թիվ 58428/10, կետ 151, *Ռոուվ ու Դևիսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2000 թ. փետրվարի 16–ի վճիռը, գանգատ թիվ 28901/95, կետ 60):

ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածը չի պահանջում, որ ապացույցների ձեռք բերման հարցում պաշտպանության կողմը օժտված լինի նույն իրավունքներով, ինչ մեղադրանքի կողմը: Սակայն, անկախ նրանից, թե ինչ քրեական դատավարության համակարգ է գործում, եթե մեղադրյալը ընտրում է ակտիվ պաշտպանության վարքագիծ, ապա այն պետք է իրավունք ունենա հավաքելու և վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու ապացույցներ «այն նույն պայմաններում», ինչ մեղադրանքի կողմը (տես *Խոդորկովսկին և Լեբեդևն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2013 թ. հուլիսի 25–ի վճիռը, գանգատներ թիվ 11082/06, 13772/05, կետ 728, *Միրիլաշվիլին ընդդեմ Ռուսաստանի* գործով 2008 թ. դեկտեմբերի 11–ի վճիռը, գանգատ թիվ 6293/04, կետ 225): Ակնհայտ է, որ այդ «պայմանները» չեն կարող բոլոր հարցերում բացարձակ նույնը լինել, օրինակ՝ պաշտպանության կողմը չի կարող ունենալ նույն հնարավորությունները, ինչ մեղադրանքի կողմը՝ ապացույցներ որոնելու և դրանք առգրավելու գործում: Սակայն ինչպես բխում է ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետի տեքստից, պաշտպանության կողմը պետք է հնարավորություն ունենա իրականացնելու ակտիվ պաշտպանություն, օրինակ՝ իր կողմից վկաներ կանչելու եղանակով կամ այլ ապացույցներ ներկայացնելու միջոցով (տես Խոդորկովսկու և Լեբեդևի գործը, կետ 728):

Յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքի կոնվենցիոն

մոտեցումները ամրագրված են ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածում, որի 3–րդ մասը սահմանում է մեղադրյալի նվազագույն իրավունքները, որոնք պարտավոր է ապահովել պետությունը քրեական դատավարության ընթացքում:

Այսպես՝ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետի համաձայն՝ յուրաքանչյուրին, ում ներկայացված է քրեական մեղադրանք, երաշխավորված է իրավունք՝ «հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները»: Նշված դրույթը հանդիսանում է յուրաքանչյուրի՝ նրան առաջադրված ցանկացած մեղադրանքի շրջանակներում արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը:

Շարունակելով հարկ է նշել, որ թե՛ մինչդատական և թե՛ դատական վարույթներում ապացույցների թույլատրելիության հարցերին առնչվելիս դատախազը՝ սեփական կամ պաշտպանության կողմի կամ դատարանի նախաձեռնությամբ, առաջին հերթին պետք է նկատի ունենա ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 1–ին մասի դրույթները, որոնք կարող են հանդես գալ ինչպես ինքնուրույն[6], այնպես էլ փոխկապակցված լինեն ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «գ» կետի կամ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետի հետ, ինչպես նաև ՄԻԵԿ–ի այլ հոդվածների հետ: Օրինակ՝ ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի հետ, որն արգելում է խոշտանգումները, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը (տես *Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* 28.07.2007 թ. № 36549/03 (խոշտանգումների արգելք), *Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի* 01.06.2010 թ. № 22978/05 (խոշտանգումների արգելք), *Ջալլոհն ընդդեմ Գերմանիայի*, 11.07.2006 թ. № 54810/00 (լռելու իրավունք, գործերով վճիռներ)[7] կամ

[6] Օրինակ՝ «հանցագործության սադրանքի» վերաբերյալ բոլոր գործերը՝ «ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի ներքո սահմանված քրեական գործերով դատաքննությանը ներկայացվող պահանջներից բխում է, որ հանցավորության դեմ պայքարի հանրային շահը չի կարող արդարացնել այն ապացույցների օգտագործումը, որոնք բերել են ոստիկանի կողմից իրականացված սադրանքի արդյունքում»: Մանրամասն տես 3–րդ բաժնի 2–րդ պարագրաֆում:

[7] Մանրամասն տես սույն բաժնի 2–րդ պարագրաֆում:

ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի հետ, որը պետական մարմիններին արգելում է միջամտել յուրաքանչյուրի անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքի իրականացմանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով (տե՛ս *Շենքն ընդդեմ Շվեյցարիայի* 12.07.1988 թ. №10862, *Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության,* 12.05.2000 թ. № 3594/97, *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* 02.10.2012 թ. № 22491/08, *Սմիռնովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2007 թ. հունիսի 7–ի վճիռը, գանգատ թիվ 71362/01, կետ 37, *Կոլեսնիչենկոն ընդդեմ Ռոսաստանի* գործով 2009 թ. ապրիլի 9–ի վճիռ, գանգատ թիվ 19856/04, կետ 30)[8]:

ՄԻԵԿ–ի 19–րդ հոդվածի համաձայն՝ ՄԻԵԴ–ի խնդիրը Բարձր պայմանավորվող պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ապահովումն է: ՄԻԵԴ–ը բազմիցս նշել է, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության դեմ կայացված վճիռներում (*Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2010 թ. մարտի 16–ի վճիռը, գանգատ թիվ 25083/05, *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2015 թ. մայիսի 31–ի վճիռ, գանգատներ թիվ №9935/06, 23339/06), որ ապացույցների թույլատրելիության հարցերը, հիմնականում կարգավորվում են ներպետական օրենսդրությամբ, և որպես կանոն՝ դրանց գնահատումը պետք է իրականացնեն ներպետական դատարանները: Այսպես՝ Բաննիկովայի գործով ՄԻԵԴ–ը նշել է, որ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ ապացույցն անթույլատրելի ճանաչելու ընթացակարգը սկզբունքորեն հանդիսանում է համապատասխանող…: Սակայն ինչ ընթացակարգի էլ չդիմեն ներպետական դատարանները, ՄԻԵԴ–ը պահանջում է, որ այն լինի մրցակցային, հիմնովին, բազմակողմանի և ունենա որոշիչ նշանակու-

[8] Մանրամասն տե՛ս սույն բաժնի 2–րդ պարագրաֆում:

թյուն այն հարցի կապակցությամբ, որը բարձրացրել է դիմումատուն՝ ապացույցն անթույլատրելի ճանաչելու իր միջնորդության մեջ (Բաննիկովայի գործը, կետ 56–57): Ըստ ՄԻԵԴ–ի՝ ՄԻԵԴ–ի խնդիրը ոչ թե ապացույցները անթույլատրելի ճանաչելու կանոնների սահմանումն է, այլ այնպիսի հարցի պարզումն է, թե արդյոք դատական քննությունը ամբողջությամբ եղել է արդարացի՝ ներառյալ ապացույցները ստանալու եղանակները (տես *Շապչաշվիլիի* գործը, կետեր 100–101, *Հորնքասլը և այլք ընդդեմ ՄԹ*–ի՝ 16.12.2014 թ. № 4184/10, *Ալ Քավայան և Տահերիյի գործը*, կետ 118, *Ռամանաուսկասն ընդդեմ Լիտվայի* 05.02.2008 թ. № 74420/01, կետ 52, *Հարությունյանն ընդդեմ Հայաստանի*՝ 28.06.2007 թ. № 36549/03 կետեր 60–63, *Մամիկոնյանի* գործը, կետ 41): Օրինակ՝ ներպետական օրենսդրությունը չպետք է թույլատրի այն ապացույցների օգտագործումը, որոնք ստացվել են պետության գաղտնի գործակալների սադրանքի արդյունքում: Եթե այն դա թույլատրում է, ապա ներպետական օրենսդրությունը այդ առումով չի համապատասխանում արդար դատաքննության սկզբունքին (տես *Թեքսիերա դե Կաստրոյի* գործը կետ 36, *Խուդոբինն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2006 թ. հոկտեմբերի 26–ի վճիռը, գանգատ թիվ 59696/00, կետ 133): Ինչպես նշել է ՄԻԵԴ–ը Բաննիկովայի գործով, «որպեսզի դատական քննությունը ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի իմաստով համարվի արդարացի, ապա բոլոր ապացույցները, որոնք ստացվել են ոստիկանության սադրանքի արդյունքում, պետք է ճանաչվեն անթույլատրելի (տես Բաննիկովայի գործը, կետ 56):

Ապացույցների թույլատրելիության կանոնները կարող են երբեմն հակասել կողմերի հավասարության և մրցակցային դատավարության սկզբունքներին կամ այլ ձևով առնչվել դատավարության արդարացիությանը (տես *Խոդորկովսկու և Լեբեդևի* գործը, կետ 728, *Տամիններն ընդդեմ Ֆինլանդիայի* գործով 2004 թ. հունիսի 15–ի վճիռը, գանգատ թիվ 40847/98, կետեր 40–41): Օրինակ՝ Մատիցինայի գործով վճռում ՄԻԵԴ–ը նշել է, որ «փորձագիտական ապացույցների համատեքստում ապացույցների թույլատրելիության կանոնները չպետք է զրկեն պաշտպանության կողմին դրանք արդյունավետ վիճարկելու հնարա-

վորությունից: Մասնավորապես, այլընտրանքային կարծիքների և եզրակացությունների ստացման և ներկայացման եղանակով: Որոշակի հանգամանքների առկայության պարագայում այլընտրանքային ապացույցի ընդունման մերժումը կարող է դիտարկվել որպես ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 1–ին մասի խախտում» (տե՛ս *Մատիցինայի* գործը, կետ 169, *Ստոյմենովն ընդդեմ Մակեդոնիայի* գործով 2007 թ. ապրիլի 5–ի վճիռը, գանգատ թիվ 17995/02, կետ 38): *Մատիցինայի* գործով, օրինակ, ապօրինի բժշկական գործունեության համար մեղադրվող Մատիցինայի մեղադրանքի հիմքում դրվել էին մի շարք փորձագիտական եզրակացություններ, որոնք պատշաճ կերպով վիճարկելու հնարավորություն մեղադրյալը չէր ունեցել, մասնավորապես հնարավոր չէր եղել հարցեր տալ անմիջապես եզրակացությունները կազմող փորձագետներին: Նման պայմաններում դատարանները մերժել էին պաշտպանների միջնորդությունները՝ այլընտրանքային փորձագիտական կարծիքները հետազոտելու և ապացույց ճանաչելու մասով՝ պատճառաբանելով, որ նման կարգ ՌԴ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում:

Միրիլաշվիլին ընդդեմ Ռուսաստանի գործով վճռում ՄԻԵԴ–ը նշել է. «Քանի որ զինվորական դատարանը դատավճռում հիմնվել է վկաներ Գրիգորաշվիլիի, Մարգվելաշվիլիի և Կերվալիշվիլիի ցուցմունքների վրա, ապա հաշվի առնելով սույն գործի փաստական հանգամանքները՝ ՄԻԵԴ–ը գտել է, որ վերը նշված վկաները հանդիսացել են կարևոր վկաներ: Միաժամանակ ո՛չ մինչդատական վարույթում, ո՛չ էլ դատաքննության ընթացքում դիմումատուին իրավունք չի տրվել հարցաքննելու վերոնշյալ վկաներին: Դատաքննությունը սկսելուց հետո միայն պաշտպանները կարողացել են հանդիպել վերոնշյալ վկաներին Վրաստանում և հարցաքննել: Պաշտպանները դիմել են դատարանին՝ նշված վկաների հայտարարությունները և պաշտպաններին կամովին տրված ցուցմունքները որպես ապացույց ընդունելու միջնորդությամբ: Սակայն դատավճռում զինվորական դատարանը նշված ապացույցները ճանաչել է անթույլատրելի և դատավճռի հիմքում դրել է նշված վկաների ցուցմունքները, որոնք տրվել էին նախաքննության փուլում: Պաշտպանության կողմի տրամադրված ապացույցները ճանաչվել էին անթույ-

լատրելի ձևական հիմքերով: Ներպետական դատարանները գտել էին, որ օրենքն արգելում է փաստաբաններին հարցաքննել վկաներին վերջիններիս մեղադրանքի կողմից հարցաքննելուց հետո և օրենքով նախատեսված ապացույցների հավաքման «պատշաճ» ընթացակարգից դուրս: Պաշտպանության կողմը դրվել է ոչ շահավետ վիճակում ի համեմատ մեղադրանքի կողմի, քանի որ մեղադրանքի կողմը վկաներին անձամբ հարցաքննելու հնարավորություն է ունեցել, ինչպիսի հնարավորությունից պաշտպանության կողմը զրկված է եղել: Բացի այդ՝ պաշտպանության կողմին չէր թույլատրվել ներկայացնել վկաների գրավոր հայտարարությունները, որոնք վերաբերել են և՛ գործի հանգամանքներին, և՛ նախկինում տրված իրենց ցուցմունքներին: Նշված երեք վկաների ցուցմունքները մեղադրանքի կողմի վճռորոշ ապացույցներ էին: Նրանցից նոր ցուցմունքներ ստանալով՝ պաշտպանության կողմը ձգտել է ստեղծելու ոչ միայն արդարացնող ապացույցներ, այլ ձգտել է նաև վիճարկելու դիմումատուի դեմ ներկայացված մեղադրական ապացույցը: ՄԻԵԴ–ը եզրակացրել է, որ հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները, մասնավորապես այն, որ դիմումատուն չի կարողացել լսել մի շարք վճռորոշ վկաների ցուցմունքները ո՛չ դատաքննության ընթացքում, ո՛չ էլ ծայրահեղ դեպքում մինչդատական վարույթում, ուստի արդարացված չի եղել պաշտպանության կողմի տրամադրված նյութերի (վկաների հայտարարությունների և ցուցմունքների) ընդունման մերժումը»: Միևնույն ժամանակ ՄԻԵԴ–ը ընդգծել է, որ որևէ դիրքորոշում չի կարող հայտնել այդ հայտարարությունների և վկաների ցուցմունքների հնարավոր գնահատականների վերաբերյալ, ինչը ազգային դատարանների իրավասությունն է (տե՛ս *Միրիլաշվիլիի* գործը, կետեր 218–227)[9]:

[9] Այդ մասին տե՛ս սույն բաժնի 2–րդ պարագրաֆում:

§ 2. Ապացույցների թույլատրելիության առանձին հարցերի վերաբերյալ ՄԻԵԴ–ի դիրքորոշումները

Հիմնարար դրույթ

- Օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումն ինքնին ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի խախտում չի համարվում: Անթույլատրելի ապացույցների օգտագործումը կհամարվի ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի խախտում, եթե դատավճիռը հիմնվի բացառապես այդ ապացույցների վրա:

Ինչպես արդեն նշվել է, ՄԻԵԿ–ը և ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքը որպես այդպիսին չեն նախատեսում կամ սահմանում «ապացույցների թույլատրելիության» հասկացությունը և դրա պահանջները: Եթե փորձ արվի ամփոփելու այդ պահանջները մի քանի բառով, ապա այն կարելի է բացահայտել որպես «արդար դատաքննության իրավունքի ապահովում»: Եվ ինչպես կտեսնենք ստորև, այդ պահանջները հատկապես արդիական են դառնում, երբ խոսք է գնում ապացույցների թույլատրելիության մասին, մասնավորապես, երբ թեկուզև տեղի է ունենում անձի իրավունքների խախտում կամ տեսականորեն նման խախտումները չեն բացառվում, սակայն վարույթն ամբողջությամբ համարվում է արդարացի: Դա տեղի է ունենում այն բացառությունների շնորհիվ, որոնք արձանագրվում են ՄԻԵԴ–ի կողմից՝ կոնկրետ գործի քննության շրջանակներում ձևավորելով կայուն նախադեպային դիրքորոշումներ: Այդ բացառություններից կարելի է նշել «հակակշիռ փաստերը», որոնց առկայության դեպքում մեղմացվում է անձի՝ հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքի սահմանափակումը (տե՛ս Ալ Քավայայի և Թահերիի գործով Մեծ Պալատի 2011 թվականի դեկտեմբերի 15–ի վճիռը, գանգատներ թիվ 26766/05 և 22228/06, Շատչաշվիլու գործի 117–131, *Սեթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2016 թ.

մարտի 31–ի վճիռը, գանգատ թիվ 55287/10 և *Դիմովիչն ընդդեմ Սերբիայի* գործով 2016 թ. հունիսի 28–ի վճիռը, գանգատ թիվ 24463/11): «Հակակշիռ փաստերի» այն եռաստիճան թեստի մեկ մասնիկն է, որ ձևավորվեց *Ալ Քավայային և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով, իր զարգացումը ստացավ *Շատշաշվիլին ընդդեմ Գերմանիայի* գործով և մինչ օրս ՄԻԵԴ–ը, քննելով ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետի խախտման վերաբերյալ գործերը, հիմնականում կիրառում է այդ երկու գործերով ձևավորված ընդհանուր սկզբունքները (տե՛ս Սեթոնի գործը, կետեր 57–59, Դիմովիչի գործը, կետեր 33–40):

Այսինքն՝ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումն ինքնին ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի խախտում չի համարվում: Անթույլատրելի ապացույցների օգտագործումը կհամարվի ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի խախտում, եթե դատարանի վճիռը հիմնվի բացառապես կամ վճռորոշ մասով այդ ապացույցների վրա[10]: Փաստորեն այն, թե նման ապացույցների օգտագործումն արդար դատաքննության իրավունքի խախտում է, թե ոչ, կախված է կոնկրետ գործի հանգամանքներից:

Սույն պարագրաֆում կբացահայտվեն բոլոր այն տարածված իրավիճակները, որոնց լույսի ներքո ՄԻԵԴ–ն անդրադարձել է ապացույցների թույլատրելիության հասկացությանն ու չափորոշիչներին[11]:

Բացի հոդվածների առանձնացումից (ՄԻԵԿ–ի 3–րդ, 6–րդ և 8–րդ հոդվածներ)՝ ապացույցների թույլատրելիության չափորոշիչները սույն պարագրաֆում կբացահայտվեն երկու տեսանկյունից.

Առաջին՝ ցուցմունքների թույլատրելիության, այդ թվում՝ հակընդդեմ հարցման իրավունքի իրականացման *չափորոշիչների* տեսանկյունից.

Երկրորդ՝ *իրեղեն ապացույցների թույլարտելիության չափորոշիչների* տեսանկյունից:

I. Ցուցմունքների թույլատրելիության չափորոշիչները

Քրեադատավարական հարաբերությունների մասնակիցներից տե-

[10] Այդ մասին մանրամասն տե՛ս էջ 111–117:

[11] Բացառություն կկազմեն «հանցագործության սադրանքի» վերաբերյալ իրավիճակները, որոնց մասին անդրադարձ կկատարվի 3–րդ բաժնի 2–րդ պարագրաֆում:

ղեկությունները ստացվում են առաջին հերթին վերբալ եղանակով՝ *բացատրություններ ստանալու* (ՔԴՕ–ի 180–րդ հոդվածի 2–րդ մաս) և կասկածյալի, մեղադրյալի, տուժողի, վկաների ու այլ մասնակիցների ցուցմունքների միջոցով: Այդ գործողությունների արդյունքում ձևավորվում են ՔԴՕ 104–րդ հոդվածում նշված հետևյալ ապացույցները՝ կասկածյալի, մեղադրյալի, տուժողի, վկայի, դատապարտյալի ցուցմունքները, տվյալ գործի մեղադրանքի հետ առնչվող մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի ցուցմունքները[12]:

Այժմ առանձնացնենք այն հանգամանքները, որոնք կարող են ազդել այդ ապացույցների հետագա թույլատրելիության վրա.

1) Տեղեկությունները, որոնք ստացվել են հարցաքննության ընթացքում, պետք է համապատասխանեն դատավարական աղբյուրին:

ՄԻԵԴ–ի իրավական դիրքորոշման համաձայն՝ հարցաքննության ընթացքում պետք է հաշվի առնվի ոչ միայն հարցաքննվողի ձևական կարգավիճակը, այլ նաև հարցաքննության փաստական հանգամանքները: Դա անհրաժեշտ է, որպեսզի պարզվի թե արդյոք եղել են ողջամիտ հիմքեր՝ անձին որպես պոտենցիալ կասկածյալ դիտելու, և այդ առումով նա արդյոք ունեցել է հնարավորություն օգտվելու լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքից:

Այսպես, *Բրյուսկոն ընդդեմ Ֆրանսիայի* գործով փաստական հանգամանքները հետևյալն էին. 1998 թվականին երկու անձանց կողմից հարձակման ենթարկվելուց հետո տուժողը դիմումատուի դեմ բողոք է ներկայացրել ոստիկանություն: Բացի այդ՝ հարձակման մասնակիցներից մեկը նույնպես ցուցմունքներ է տվել դիմումատուի դեմ: Դիմումատուն արգելանքի է վերցվել և տեղափոխվել ոստիկանության բաժանմունքում գտնվող ժամանակավոր պահման վայր (այսուհետ՝ ոստիկանության մեկուսարան): Մինչև դիմումատուի հարցաքննությունը նրան ստիպել են, որ վկաների հարցաքննության համար նախատեսված երդում ընդունի: Որպես վկա իր տված ցուցմունքում դիմումատուն ընդու-

[12] Ինչ վերաբերում է անձանց բացատրությունների՝ որպես ապացույց օգտագործման իրավաչափության հարցերին, ապա դրանց անդրադարձ է կատարվել սույն ձեռնարկի 1–ին բաժնում:

նել է, որ երկու անձանց գտել և ներգրավել է այն բանի համար, որ նրանք վախեցնեն տուժողին, սակայն մերժել է այն հանգամանքը, որ առաջարկել է այդ երկու անձանց նաև բռնություն գործադրել տուժողի նկատմամբ: Քննությունը սկսելուց հետո նա կալանավորվում է և հետագայում դատապարտվում ազատազրկման: Բողոքները դատավճռի դեմ վերադաս դատարանների կողմից մերժվում են:

ՄԻԵԴ–ը, քննելով բողոքը ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 1–ին և 3–րդ մասերի ենթադրյալ խախտման տեսանկյունից, եկել է հետևյալ հետևությանը. «Երբ դիմումատուին առաջարկվել է երդում տալ, նա պահվել է ոստիկանության մեկուսարանում: Այն ժամանակ թույլատրվել է անձանց պահել ոստիկանության մեկուսարաններում, նույնիսկ այն ժամանակ, երբ բացակայել են էական և փոխկապակցված ապացույցներ կամ նույնիսկ ողջամիտ կասկածի բացակայության պայմաններում: Սակայն տվյալ գործում առկա են եղել տուժողի բողոքը և հնարավոր հարձակվողներից մեկի ցուցմունքը դիմումատուի դեմ՝ որպես հարձակման կազմակերպչի: Ուստի իշխանությունները բոլոր հիմքերն ունեցել են՝ կասկածելու դիմումատուին կատարված հանցագործության մեջ, և պատասխանող պետության բոլոր պնդումներն առ այն, որ դիմումատուն հարցաքննվել է որպես հասարակ վկա, համոզիչ չեն: Բացի այդ՝ դիմումատուին արգելանքի վերցնելը և ոստիկանության մեկուսարան տեղափոխելը իրականում առաջացրել են լուրջ հետևանքներ, քանի որ նախաքննություն է սկսվել, և նա կալանավորվել է: Ուստի այն իրավիճակում, երբ նրան ոստիկանությունում առաջարկել են ցուցմունքներ տալ որպես վկա, նրան արդեն ներկայացված են եղել քրեական մեղադրանքներ և համապատասխանաբար իրավունք է ունեցել պահպանելու լռություն և ցուցմունքներ չտալու իր դեմ: Երդման ներքո տրված իր ցուցմունքները հետագայում օգտագործվել են իր դեմ դատարանների կողմից նրա մեղավորության փաստը հաստատելիս: Երդում ընդունելու պարտականությունը մինչև ցուցմունքներ տալը հանդիսացել է նրա վրա ազդելու ձև, հատկապես այն պարագայում, երբ նրան կսպառնար քրեական պատասխանատվություն սուտ ցուցմունք տալու համար:

Բացի այդ՝ հարցաքննությունից առաջ դիմումատուն հավանա-

բար չի տեղեկացվել լռելու, հարցերին չպատասխանելու կամ մասնակի պատասխանելու իր իրավունքների մասին: Քանի որ ոստիկանության մեկուսարանում գտնվելու ընթացքում նրան թույլատրվել է օգտվել պաշտպանի օգնությունից միայն 20 ժամ հետո, ուստի պաշտպանը չի կարողացել նրան պարզաբանել իր իրավունքները և աջակցել նրան հարցաքննության ընթացքում, ինչպես դա պահանջում է ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածը»: Ուստի ՄԻԵԴ–ը գտել է, որ տեղի է ունեցել ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 1–ին և 3–րդ մասերի խախտում՝ կապված լռություն պահպանելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքների հետ (տես *Բոյուսկոն ընդդեմ Ֆրանսիայի* 2010 թ. հոկտեմբերի 14–ի վճիռը, գանգատ թիվ 1466/07, կետեր 44–55): Սակայն ոչ բոլոր դեպքերում է ՄԻԵԴ–ը նման իրավիճակներում արձանագրել ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի խախտում: Այստեղ կարևոր են գործի հանգամանքները, որոնց վերջնական վերլուծության և գնահատման արդյունքում է ՄԻԵԴ–ը գալիս համապատասխան հետևության: Օրինակ՝ *Բանդալետովն ընդդեմ Ուկրաինայի* գործով թեկուզև վկան առաջին անգամ խոստովանական ցուցմունքները (երկու անձանց սպանության մեջ է մեղադրվել ամբաստանյալը) տվել էր վկայի կարգավիճակում, սակայն ՄԻԵԴ–ը, հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները, գտել է, որ տվյալ դեպքում խախտում տեղի չի ունեցել: Մասնավորապես, հաշվի է առնվել այն, որ նա հետագայում այդ ցուցմունքները պնդել է արդեն որպես մեղադրյալ իր տված ցուցմունքներում, այդ թվում նաև պաշտպանի մասնակցությամբ (տես *Բանդալետովն ընդդեմ Ուկրաինայի* գործով 2013 թ. հոկտեմբերի 31–ի վճիռը, գանգատ թիվ 23180/06, կետեր 59–73):

Մեկ այլ դեպքում, երբ անձի՝ մեղայականով ներկայանալու և արարքը խոստովանելու մասին արձանագրությունը դրվել է մեղադրանքի հիմքում, ՄԻԵԴ–ը գտել է, որ տեղի է ունեցել ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի խախտում, քանի որ խախտվել է պաշտպանության իրավունքը (տես *Սոբկոն ընդդեմ Ուկրաինայի* 2015 թ. դեկտեմբերի 17–ի վճիռը, գանգատ թիվ 15102/10, կետեր 51–62):

Նորիկ Պողոսյանի վերաբերյալ որոշմամբ ՎԴ–ն անհրաժեշտ է համարել դիրքորոշում հայտնել այն մասին, թե նախաքննության ընթաց-

քում ապացույցների ձեռքբերման ժամանակ Ն. Պողոսյանն ունեցել է արդյոք կասկածյալի դատավարական կարգավիճակ:

ՔԴՕ 62–րդ հոդվածի 1–ին մասի և 128–րդ հոդվածի 1–ին մասի դրույթների վերլուծությունից ելնելով՝ ՎԴ–ն գտել է, որ «ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը կասկածյալի կարգավիճակ ձեռք բերելը կապում է օրենքով նախատեսված գործողությունների կատարման կամ որոշման կայացման պահի հետ: Մասնավորապես, ձերբակալվածի, հետևաբար նաև կասկածյալի կարգավիճակ ձեռք բերելու համար անձը պետք է (1) փաստացի զրկվի ազատությունից, (2) բերվի իրավասու մարմնի մոտ, (3) պետք է կազմվի ձերբակալման արձանագրություն և (4) այդ մասին պետք է նրան հայտարարվի: Այսպիսով՝ ՔԴՕ իմաստով անձը կարող է ձերբակալվածի, հետևաբար նաև կասկածյալի կարգավիճակ ստանալ վերջին՝ չորրորդ գործողությունը կատարելու պահից, այսինքն՝ քրեական հետապնդման մարմնում ձերբակալման արձանագրության մասին անձին հայտարարելու պահից: Կամ կասկածյալի կարգավիճակ ձեռք բերելու համար անձի նկատմամբ պետք է խափանման միջոց ընտրելու մասին որոշում կայացվի:

Վերոգրյալի հիման վրա ՎԴ–ն արձանագրել է, որ ՔԴՕ–ի իմաստով անձը կասկածյալի կարգավիճակ է ձեռք բերում ձևական (փաստաթղթային) ընթացակարգի ավարտման պահից, այսինքն՝ կասկածյալի կարգավիճակի ձեռքբերումը կապվում է ձևական առումով «քրեական մեղադրանքի» առկայության հետ (տես Նորիկ Պողոսյանի վերաբերյալ 26.03.2010 թ. թիվ ՀՅՔՐԴ2/0153/01/08 որոշումը, կետեր 17–22):

Անդրադառնալով գործի նյութերին՝ ՎԴ–ն նշում է, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը, տեղեկություններ ունենալով, որ Ա. Լալայանին ապօրինի թմրամիջոց է իրացրել Ն. Պողոսյանը, վերջինիս քրեական գործի վարույթին ներգրավել և հարցաքննել է որպես վկա, նախազգուշացրել ակնհայտ սուտ ցուցմունք տալու և ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին և հարցաքննության ընթացքում առաջադրել է հանցագործության կատարման մեջ Ն. Պողոսյանին մերկացնող հարցեր:

Ուստի հիմք ընդունելով վերոնշյալը՝ ՎԴ–ն գտել է, որ «նախաքննու-

թյան ընթացքում ապացույցների ձեռք բերման ժամանակ Ն.Պողոսյանը փաստացի եղել է կասկածյալ և պետք է օգտվեր այդ կարգավիճակից բխող իրավունքներից» (տե՛ս Նորիկ Պողոսյանի վերաբերյալ 26.03.2010 թ. թիվ ՀՅՔՐԴ2/0153/01/08 որոշումը, կետեր 17–22)[13]:

2) Քրեադատավարական հարաբերությունների մասնակիցների ցուցմունքները կլինեն թույլատրելի միայն այն դեպքում, եթե դրանց ստացման ընթացքում պահպանվել են նրանց իրավունքները և օրինական շահերը:

Այստեղ կարևոր են և որոշ դեպքերում նաև փոխկապակցված՝ պաշտպանության իրավունքը և խոշտանգումների, անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքի արգելքը:

ա) Պաշտպանության իրավունքը

Իրավաբանական ներկայացուցիչ ունենալու իրավունքը կարևոր է նաև քրեական վարույթի արդարությանն առնչվող ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի իմաստով, որի 3–րդ մասի «գ» կետը մեղադրյալին ընձեռում է փոխկապակցված երեք իրավունքներ՝ «իրեն անձամբ պաշտպանելու», «իր ընտրած դատապաշտպանների միջոցով» իրեն պաշտպանելու և «դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար բավարար միջոցներ չունենալու դեպքում անվճար նշանակված դատապաշտպան ունենալու» իրավունքը, եթե դա է պահանջում արդարադատության շահը: Պաշտպանության իրավունքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի տեսանկյունից կարող են խնդիրներ առաջացնել ապացույցների թույլատրելիության տեսանկյունից և որպես հետևանք կասկածի տակ դնել ողջ դատավարության արդարացիությունը:

Ինչպես արդեն նշվել է, Սալդուզն ընդդեմ Թուրքիայի գործով ՄԻԵԴ–ը սահմանել է, որ, որպես կանոն, պաշտպանից օգտվելու իրա-

[13] Վկայի հարցաքննության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված ապացույցների խնդրին ՎԴ–ն անդրադարձել է նաև արդեն իսկ 1–ին բաժնում նշված՝ Կարեն Սարուխանյանի գործով որոշմամբ:

վունքը պետք է տրամադրվի առաջին հարցաքննության պահից: Այդ իրավունքի սահմանափակումը հնարավոր է միայն այն դեպքերում, երբ առկա են անհերքելի հիմքեր՝ հաշվի առնելով գործի հանգամանքները: Պաշտպանության իրավունքը անվերականգնելիորեն կխախտվի, եթե ոստիկանությունում տրված խոստովանական ցուցմունքները տրվել են պաշտպանի բացակայության պայմաններում և դրվել են մեղադրանքի հիմքում:

Այն հարցը, թե արդյոք առանձին վերցված դեպքում խախտվել է մեղադրյալի պաշտպանության իրավունքը, միշտ քննության է առնվում արդար դատաքննության իրավունքի համատեքստում՝ հաշվի առնելով գործի հանգամանքները: ՄԻԵԴ–ը բազմիցս նշել է, որ ՄԻԵԿ–ը կոչված է երաշխավորելու ոչ թե տեսական և պատրանքային, այլ գործնականում և արդյունավետ իրականացվող իրավունքներ: Դա հատկապես վերաբերում է պաշտպանության իրավունքին (տես *Արտիկոն ընդդեմ Իտալիայի* գործով 1980 թ. մայիսի 13–ի վճիռը, գանգատ թիվ 6694/74, կետ 33, *Հերմին ընդդեմ Իտալիայի* գործով 2006 թ. հոկտեմբերի 18–ի վճիռը, գանգատ թիվ 18114/02, կետ 95): Մի շարք դեպքերում ՄԻԵԴ–ը քննարկման առարկա է դարձրել ներպետական իրավակիրառ մարմինների ձևական մոտեցման խնդիրը մեղադրյալի պաշտպանության իրավունքի հանդեպ, որի ներքո, առաջին հերթին, հասկացվում է փաստաբանի մասնակցությունը քննչական և դատավարական գործողություններին, դատական նիստերին, հատկապես այն դեպքերին, երբ գործին մասնակցել է նշանակված պաշտպան: Բացի այդ՝ ՄԻԵԴ–ը նշել է, որ պաշտպան նշանակելիս դատարանը պետք է հաշվի առնի մեղադրյալի ցանկությունը: Սակայն այդ ցանկությունը կարող է հաշվի չառնվել, երբ դա են պահանջում արդարադատության շահերը (*Կրուասանն ընդդեմ Գերմանիայի* գործով 1992 թ. սեպտեմբերի 25–ի վճիռ, գանգատ թիվ 13611/88, կետ 29, *Վոժիգովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2007 թ. ապրիլի 26–ի վճիռ, գանգատ թիվ 5953/02, կետեր 39–48): Քննության սկզբնական փուլերում մեղադրյալի պաշտպանության իրավունքի չապահովումը կհամարվի արդար դատաքննության իրավունքի խախտում, եթե այդ հանգամանքը ազդել է գործի ելքի վրա: Այսպես,

օրինակ՝ *Շիշկինն ընդդեմ Ռուսաստանի* գործով ոստիկանությունում տեղի ունեցած սկզբնական հարցաքննությունների ընթացքում դիմումատուն զրկված է եղել իրավաբանական օգնությունից: Մոտավորապես 10 օր շրջանային ոստիկանության բաժնում գտնվելու ընթացքում նա զրկված է եղել փաստաբանի հետ խորհրդակցելու հնարավորությունից: Վերոնշյալ՝ *Բոյուսկոյի* գործով այդ ժամանակը կազմել էր 20 ժամ:

Նախորդիվ արդեն իսկ նշվել է ՄԻԵԴ դիրքորոշումն այն մասին, որ պետությունը չի կրում պատասխանատվություն փաստաբանի յուրաքանչյուր սխալի համար, ինչպես նաև պաշտպանության կողմի գործողությունների համար: Այդ հարցը հանդիսանում է քննարկման առարկա պաշտպանի և մեղադրյալի միջև՝ իրավական օգնություն ցուցաբերելու շրջանակներում կամ դրանից դուրս: Միևնույն ժամանակ, եթե իրավաբանական օգնություն տրամադրող փաստաբանի անկարողությունն ակնհայտ է և պատշաճ կերպով ներկայացված է իրավասու պետական մարմինների ուշադրությանը, ապա նրանք պարտավոր են միջամտել: Իրավասու մարմինները դա կարող են անել փաստաբանին փոխարինելու միջոցով՝ պարտադրելով, որ կատարի իր պարտականությունները կամ այլ միջոցներով, այդ թվում՝ կասեցնելով դատական ընթացքը, որպեսզի պաշտպանին տրվի հնարավորություն՝ պատշաճ կազմակերպելու իր պարտականությունները (տե՛ս Արտիկոյի գործը, կետ 33):

Բացի այդ՝ *Պիսչալնիկովն ընդդեմ Ռուսաստանի* գործով ՄԻԵԴ–ը նշել է, որ եթե մեղադրյալը չի հրաժարվում պաշտպանից, ապա անթույլատրելի է իրականացնել հարցաքննություն մինչ այն պահը, երբ ապահովված չի լինի մեղադրյալի և պաշտպանի միջև շփումը, բացառությամբ այն դեպքերի, երբ անձն ինքն է նման ցանկություն հայտնում: Ավելին՝ ՄԻԵԴ–ը նշում է, որ դիմումատուի վարքագիծն, ինքնին, չի ազատում իշխանություններին որոշակի քայլերի ձեռնարկումից, որպեսզի երաշխավորվի պաշտպանության արդյունավետությունը: Այսպես՝ մի շարք գործերում պաշտպանի բացակայությամբ իրականացված դատաքննությունները վերաքննիչ դատական ատյանում դիտվել էր ՄԻԵԴ–ի կողմից որպես պաշտպանության իրավունքի խախտում (տե՛ս *Շուլեպովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2008 թվականի հունիսի 26–ի

վճիռը, գանգատ թիվ 15435/03, կետեր 31–39, *Սևոստյաննովն ընդդեմ Ռուսաստանի* 2010 թ. ապրիլի 22–ի վճիռը, գանգատ թիվ 37024/02, կետեր 66–67, *Էդուարդ Ռոժկովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2013 թ. հոկտեմբերի 31–ի վճիռը, գանգատ թիվ 11469/05, կետեր 18–26, *Սիյրակն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2013 թ. դեկտեմբերի 19–ի վճիռը, գանգատ թիվ 38094/05, կետեր 25–29): ՄԻԵԴ–ը արձանագրել է խախտում նաև այն դեպքում, երբ դիմումատուն և նրա պաշտպանը պատշաճ չեն ծանուցվել վերաքննիչ դատարանում դատական նիստի օրվա և ժամի մասին (տես *Նեֆյոդովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2013 թվականի մարտի 13–ի վճիռը, գանգատ թիվ 40962/04, կետեր 35–48):

Հարկ է նշել նաև, որ պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացմանը վերաբերող պահանջները հավասարապես վերաբերելի են ինչպես սեփական կամքով ընտրված պաշտպանի (այդ թվում՝ մեղադրյալի հարազատների կողմից), այնպես էլ նշանակված պաշտպանի հանդեպ (տես *Դվորսկին ընդդեմ Խորվաթիայի* գործով 2015 թ. հոկտեմբերի 20–ի վճիռը, գանգատ թիվ 25703/11, կետեր 76–111):

Պաշտպանության իրավունքի խախտման դեպքերի հետ կապված՝ առանձին որոշումներ են եղել նաև Հայաստանի դեմ: Այսպես՝ *Գալստյանն ընդդեմ Հայաստանի* գործով, ՄԻԵԴ–ը հիշեցնելով, որ պաշտպանության իրավունքը *«հանդիսանում է արդար դատաքննության հիմնարար բնութագրիչներից մեկը»*, միևնույն ժամանակ քննության առնելով և վերլուծելով գործի փաստական հանգամանքները, եզրակացրել է, որ թե՛ մինչդատական վարույթում և թե՛ դատական վարույթում պաշտպանից հրաժարումը դիմումատուի կամքն էր, ուստի ՄԻԵԴ–ը գտել է, որ իշխանությունները չէին կարող պատասխանատու լինել այն փաստի համար, որ նա վարչական դատավարության ընթացքում ներկայացված չի եղել փաստաբանի միջոցով: Հետևաբար այստեղ առկա չէ ՄԻԵԿ 6–րդ հոդվածի 3–րդ մասի «գ» կետի և 6–րդ հոդվածի 1–ին մասի զուգակցմամբ խախտում» (տես *Գալստյանն ըմդդեմ Հայաստանի* գործով 2007 թ. նոյեմբերի 15–ի վճիռը, գանգատ թիվ 26986/03, կետեր 89–92): Ի դեպ՝ այս գործում դիմումատուն պնդում էր, թե ոստիկանները իրեն խաբեությամբ համոզել էին հրաժարվել պաշտպանից,

քանի որ այդ դեպքում խոստացել էին արագացված դատաքննություն և մեղմ պատիժ: Այդուհանդերձ, նշվածի մասին որևէ ապացույց չէր ներկայացվել դիմումատուի կողմից: ՄԻԵԴ–ը չընդունեց այդ պնդումը, քանի որ, ըստ գործի փաստերի, դիմումատուն անձամբ ստորագրել էր վարչական պատասխանատվության ենթարկելու մասին արձանագրությունը, ինչպես նաև պաշտպանից հրաժարվելու մասին փաստաթուղթ, որի պայմաններում ասվում է, որ հրաժարումը տեղի էր ունեցել որոշակիորեն: Ոչ էլ ներկայացվել էր որևէ ապացույց առ այն, որ նա ենթարկվել էր սպառնալիքների կամ հարկադրանքի պաշտպանից հրաժարվելու համար:

Մեկ այլ՝ *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով ՄԻԵԴ–ն արձանագրել է 6–րդ հոդվածի 3–րդ մասի «գ» կետի և 6–րդ հոդվածի 1–ին մասի զուգակցմամբ խախտում այն բանի համար, որ դատարանը չէր ապահովել ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձանց պաշտպանի ներկայությունը քրեական վերաքննիչ դատարանում, իսկ վերջինս հրաժարվում էր ներկայանալ դատարան, քանի որ դատարանը չէր կարողանում ապահովել նրա անվտանգությունը դատարանի դահլիճում (*Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2015 թվականի մարտի 31–ի վճիռը, գանգատներ թիվ 9935/06 և 23339/06, կետեր 136–150):

բ) Խոշտանգումներ

Խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կիրառությունն արգելված է կասկածյալների հարցաքննության ողջ ընթացքում: Եթե ապացույցները ստացվել են խոշտանգման կամ վատ վերաբերմունքի միջոցով (ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի խախտմամբ), ապա դատարանում դրանց հետագա օգտագործումը կհամարվի ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի խախտում[14]: Իսկապես, ՄԻԵԴ–ը համարել է, որ «ՄԻԵԿ–ով երաշխավորված կարևորագույն և բացարձակ իրավունք-

[14] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers, (2013 Council of Europe Publishing), p. 89.

ներից մեկի խախտման արդյունքում ստացված այդպիսի ապացույցի օգտագործումը մշտապես լուրջ խնդիրներ է առաջացնում վարույթի արդարության առումով (տես *Գաֆգենի* գործը, կետ 165), անգամ եթե ապացույցը վճռորոշ չի եղել մեղադրական դատավճիռ կայացնելու հարցում» (տես *Ջալլոհի* գործը, կետեր 99 և 105):

Ուստի ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի խախտման արդյունքում ստացված ցուցմունքների օգտագործումը քրեական վարույթում, անկախ վերաբերմունքը որպես խոշտանգում, անմարդկային կամ նվաստացուցիչ համարելուց, վարույթն ամբողջության մեջ ինքնաբերաբար դարձնում է անարդար և առաջացնում է ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի խախտում (տես *Էլ Հասկին ընդդեմ Բելգիայի* գործով 2012 թ. սեպտեմբերի 25–ի վճիռը, գանգատ թիվ 649/09, կետ 166):

Այսպես՝ արդեն նշված Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի գործով ոստիկանությունը գանգատաբերից ապացույցները ստացել էր հարցաքննության այնպիսի մեթոդներով, որոնք ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի իմաստով առաջացրել էին վատ վերաբերմունք: Վատ վերաբերմունքը ոստիկանության կողմից անհրաժեշտ էր համարվել երեխայի կյանքը փրկելու նպատակով, ում գանգատաբերն արդեն սպանել էր, թեպետ այդ ժամանակ ոստիկանությունը չգիտեր դրա մասին: Ավելի ուշ գանգատաբերը խոստովանել էր իր մեղքը և ոստիկաններին տարել էր այն վայրը, որտեղ թաքցրել էր տուժողի մարմինը: Հետագայում գանգատաբերը կրկնել էր իր խոստովանությունը դատախազի առջև: ՄԻԵԴ–ում նա փորձել է պնդել, թե տվյալ իրեղեն ապացույցը վճռորոշ էր եղել իր նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելու հարցում, քանի որ իրենից կորզված խոստովանության շրջանակում սեփական մեղքի ապացույցներն անհրաժեշտ նախապայման էին հանդիսացել սպանության մեջ իրեն մեղավոր ճանաչելու համար: Այնուհանդերձ, ՄԻԵԴ–ը խախտում չի արձանագրվել այդ հիմքով, և դա արել է այն պատճառով, որ դիմումատուն դատավարության ավելի ուշ փուլում իր պաշտպանի և քննիչի ներկայությամբ, առանց որևէ հարկադրանքի տակ գտնվելու, կամովին և ազատորեն խոստովանել էր իր մեղքը: Ընդ որում՝ խոստովանությունը կատարվել է այն բանից հետո, երբ քննիչը նրան երաշխա-

վորել էր, որ խոշտանգումից հետո նրա տված բոլոր ցուցմունքները, այդ թվում նաև բոլոր ապացույցները, որոնք ածանցվում էին արգելված վերաբերմունքից, որպես ապացույց ճանաչվելու էին անթույլատրելի (տե՛ս Գաֆգենի գործը, կետեր 162–188):

Նախորդ պարագրաֆներում արդեն իսկ նշվել է, որ խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքը կիրառելի է ոչ միայն այն ժամանակ, երբ ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածին հակասող վերաբերմունքից տուժողն անձամբ ամբաստանյալն է, այլ նաև երբ դա վերաբերում է երրորդ անձանց (*Էլ Հասկին ընդդեմ Բելգիայի* գործը, կետ 85): Մասնավորապես, ՄԻԵԴ–ը գտել է, որ խոշտանգմամբ ստացված ապացույցի օգտագործումը դատաքննության մեջ արդարադատության ակնհայտ ոտնահարում է անգամ, երբ այդ եղանակով կորզված ապացույցը ստացվել է երրորդ անձից (տե՛ս Օթոմանն (*Աբու Քատադան) ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2012 թվականի հունվարի 17–ի վճռը, գանգատ թիվ 8139/09, կետեր 263 և 267):

Խոշտանգումների արդյունքում ձեռք բերված ապացույցների խնդրին ՄԻԵԴ–ը անդրադարձել է նաև Հայաստանի դեմ գործերում: Այսպես՝ *Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* գործով գանգատաբերին և երկու վկաներին խոշտանգման ու ահաբեկման արդյունքում հարկադրել էին ցուցմունք տալ: Արձանագրելով 6–րդ հոդվածի խախտումը՝ ՄԻԵԴ–ը գտել է, որ «մեղադրող ապացույցը, լինի դա խոստովանության կամ իրեղեն ապացույցի տեսքով, որը ձեռք է բերվել բռնությունների գործադրման միջոցով կամ դաժանությունների կամ այլ վերաբերմունքի, որը կարելի է բնութագրել որպես խոշտանգում, երբեք չպետք է դրվի մեղադրանքի հիմքում՝ որպես մեղքը հիմնավորող ապացույց, անկախ նրա ապացուցողական նշանակությունից: Ցանկացած այլ եզրահանգում միայն կծառայի բարոյապես դատապարտելի արարքը անուղղակիորեն արդարացնելու համար, որը ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի հեղինակները ջանացել են արգելել, այլ կերպ՝ թույլ կտա դաժանությունների գործադրումն օրենքի քողի տակ» (տե՛ս *Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2007 թ. հունիսի 28–ի վճիռը, 28.06.2007 թ., գանգատ թիվ 36549/03, կետ 63):

Ապացույցներ ձևավորելիս ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածին են առնչվում նաև անձի նկատմամբ հարկադիր բժշկական միջամտության, անձից հարկադրանքի միջոցով նմուշներ վերցնելու դեպքերը: Նման իրավիճակներին ՄԻԵԴ–ը առնչվել է մի շարք գործերով, որոնցից ամենահայտնի գործն արդեն իսկ հիշատակված՝ *Ջալլոհի գործն է՝ ընդդեմ Գերմանիայի*, որտեղ ամփոփվել են ՄԻԵԴ–ի դիրքորոշումները այդ հարցի կապակցությամբ և դարձել կայուն նախադեպային պրակտիկա[15]:

Ջալլոհի գործում ՄԻԵԴ–ը քննության առավ այն հարցը, թե արդյոք լռելու իրավունքի խախտում չէ համարվում բժշկական միջամտության արդյունքում անձից նրա կամքին հակառակ ապացույց ստանալը: Ըստ ՄԻԵԴ–ի արտահայտած իրավական դիրքորոշումների՝ ինքն իր դեմ մեղադրող բնույթի ցուցմունքներ չտալու իրավունքը ենթադրում է, որ վարույթն իրականացնող մարմինը չի կարող ապացույցներ ստանալ՝ օգտվելով մեղադրյալի նկատմամբ հարկադրանքի և ճնշումների եղանակներից, կամ ապացույց ստանալ մեղադրյալի ակտիվ մասնակցությամբ՝ իր կամքին հակառակ: Տվյալ դեպքում դա դրսևորվել էր նրանով, որ դիմումատուին ներարկել էին այնպիսի դեղ, որի ազդեցության տակ նա փսխել էր և դրա արդյունքում նրա մարմնից դուրս էր եկել իրեղեն ապացույցը՝ թմրանյութը: Դիմումատուն պնդում էր, որ ներարկված դեղի ազդեցության տակ իր մարմինը իր կամքին, գիտակցությանը հակառակ քննությունը վարող մարմնի համար «արտադրել էր» ապացույց, որը հանգեցնում է լռելու իրավունքի խախտմանը, քանի որ բոլոր դեպքերում ապացույցի բեռը մեղադրող կողմի վրա է, մինչդեռ իրենից որպես կասկածյալի ապացույցը ստացվել էր իր կամքին հակառակ: Ըստ ՄԻԵԴ–ի՝ լռելու, ինքն իր դեմ ապացույց չտրամադրելու իրավունքը չի տարածվում այն նյութերի վրա, որոնք թեև ստացվել են մեղադրյալից

[15] Տես, օրինակ, Սալիխովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճիռ, 03.05.2012 թ. № 23880/05, §§ 73–78: Նշված գործով անձը մեղադրվել է բռնաբարության կատարման մեջ և քննության ընթացքում հրաժարվել է արյան և եղունգների նմուշներ տրամադրելուց: Վարույթն իրականացնող մարմնի կողմից դրանք ստանալու նպատակով ուժ էր կիրառվել, սակայն այդպես էլ չէր հաջողվել ստանալ: ՄԻԵԴ–ը, հաշվի առնելով գործի հանգամանքները, այդ նմուշները ստանալուն ուղղված իրավապահ մարմինների նախնական և հետագա գործողությունները, գտել է, որ տեղի է ունեցել ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի խախտում:

հարկադրանքի միջոցով, սակայն դրանք, անկախ մեղադրյալի կամքից, օբյեկտիվորեն գոյություն ունեցել են, օրինակ՝ շնչառության, արյան, մեզի, մազի, ձայնի, սերմնահեղուկի փորձանմուշները կամ գենետիկական փորձաքննության անցկացման նպատակով մարմնի հյուսվածքները: Տվյալ դեպքում ստամոքսում թաքցված իրեղեն ապացույցը, որը ստացվել է բժշկական հարկադիր միջամտության արդյունքում, պատկանում է այն նյութերի շարքին, որոնց գոյությունը պայմանավորված էր անկախ կասկածյալի կամքից: Այդուհանդերձ, անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ, որոնք թույլ են տալիս շեղվել այդ կանոնից: **Առաջին՝** տվյալ դեպքում խոսքը գնում է իրեղեն ապացույցի մասին, այլ ոչ թե մի նյութի, օրինակ՝ արյան, որն անհրաժեշտ էր ենթարկել փորձաքննության՝ պարզելու համար նրանում իրեղեն ապացույցի՝ թմրանյութի առկայությունը: Հետևաբար, էական հանգամանք է, թե արդյոք հարկադրական միջամտությունը կատարվել է իրեղեն ապացույց, թե օժանդակ ապացույց ստանալու նպատակով: **Երկրորդ՝** անհրաժեշտ է հաշվի առնել հարկադրանքի աստիճանը: Երբ անձից ստացվում է շնչառության, մեզի, մազի, ձայնի, սերմնահեղուկի, մարմնի այլ հյուսվածքների փորձանմուշ, թեև բոլոր դեպքերում առկա է անձի անհամաձայնությունը, սակայն իր ամբողջության մեջ ֆիզիկական կամ բժշկական հարկադրանքի աստիճանը նվազագույն է, քանի որ նման փորձանմուշները ստացվում են օրգանիզմի բնականոն գործունեության արդյունքում: Ջալլոհի գործում հարկադրանքի աստիճանը բարձր էր, քանի որ կիրառվել էր ֆիզիկական ուժ մի քանի ոստիկանների կողմից՝ նրան ստիպելով պառկել, կապելով նրա ձեռքերն ու ոտքերը, որից հետո ռետինե խողովակով (զոնդով) ներարկվել էր դեղ, որը հանգեցրել է օրգանիզմի արհեստական հակազդեցությանը (ռեակցիայի), որի արդյունքում անձը փսխել է, այսինքն՝ իրեղեն ապացույցը չի ստացվել օրգանիզմի բնական նյութափոխանակության կամ գործունեության արդյունքում: **Երրորդ՝** անհրաժեշտ էր հաշվի առնել նաև ստացված ապացույցի ապացուցողական նշանակությունը ապացույցների զանգվածում: Տվյալ դեպքում ստացված նյութը իրեղեն ապացույց էր, որն առանցքային ապացույց էր, մեղադրանքը վճռորոշ մասով հիմնված էր այդ ապացույցի վրա:

Վերը նշված բոլոր երեք հանգամանքները համակցելով՝ ստացվում է, որ տվյալ դեպքում անձի նկատմամբ կիրառվել է բժշկական հարկադրանք, որի արդյունքում ստացվել է իրեղեն ապացույց, որն ուներ վճռորոշ ապացուցողական նշանակություն մեղադրանք առաջադրելու և դատապարտելու համար: Նման եղանակով և նման բնույթի ապացույցի օգտագործումը դատավարությունն իր ամբողջության մեջ դարձրել է անարդար:

Սալիխովն ընդդեմ Ռուսաստանի գործով ՄԻԵԴ–ը նշել է, որ «ընդհուպ այն դեպքերում, երբ բացակայում են բժշկական միջամտության անհրաժեշտությունը ՄԻԵԿ–ի 3–րդ և 8–րդ հոդվածները որպես այդպիսին չեն արգելում բժշկական միջոցառումների կիրառումը կասկածյալի կամքին հակառակ՝ պարզելու համար նրա առնչությունը կատարված հանցագործությանը: Այսպես՝ Կոնվենցիոն հաստատությունները բազմիցս ընդունել են, որ հանցագործության քննության նպատակով կասկածյալի արյան կամ թքի նմուշները վերցնելը նրա կամքին հակառակ չի խախտել ՄԻԵԿ–ի նշված հոդվածները՝ հաշվի առնելով ուսումնասիրված դեպքերի կոնկրետ հանգամանքները:

Սակայն յուրաքանչյուր նման միջամտություն պետք է հիմնված լինի գործից բխող համոզիչ հանգամանքներից: Դա հատկապես ճիշտ է այն դեպքում, երբ միջոցառումը նպատակ է հետապնդում մարդու մարմնից ստանալու ռեալ տվյալներ այն հանցագործության մասին, որում նա կասկածվում է: Նման միջոցառման առանձնապես խիստ, միջամտող բնույթը պահանջում է առավել խիստ վերահսկողություն և առավել բարձր դատավարական երաշխիքներ բոլոր ուղղորդող հանգամանքների վրա: Օրինակ՝ Ջալլոհի գործում էական էր այն հանգամանքը, որ նյութը, որ դուրս հանվեց օրգանիզմից, իրեղեն ապացույց էր, հետևաբար նման ապացույցի ստացումը պետք է ուղեկցվի առավել բարձր երաշխիքներով: Այդ առումով անհրաժեշտ է նաև պատշաճ հաշվի առնել կատարված հանցագործության ծանրությունը: Իշխանությունները նաև պետք է ցույց տան, որ նրանք հաշվի են առել ապացույցների ստացման ալտերնատիվ եղանակները, այսինքն՝ նվազ միջամտող, համաչափ միջոցները, որոնց միջոցով կարելի է հասնել նույն արդյուն-

քին: Բացի այդ՝ միջամտության ընթացքը չպետք է հանգեցնի կասկածյալի առողջության երկարատև քայքայմանը: Եթե միջամտությունը իրականացվում է թերապևտիկ նպատակներով, ապա այն հարկադիր բժշկական մեթոդը, որին ենթարկվում է անձը, չպետք է գերազանցի ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի լույսի ներքո ՄԻԵԴ–ի կողմից նախատեսված՝ խստության նվազագույն մակարդակը: Մասնավորապես պետք է հաշվի առնվի, թե արդյոք անձը տարել է ուժեղ ցավ կամ տառապանք հարկադիր բժշկական միջամտության արդյունքում:

Մեկ այլ կարևոր հանգամանք է հանդիսանում այն, թե արդյոք այդ միջամտությունը նշանակված է եղել և անցկացվել բժիշկների կողմից, ինչպես նաև արդյոք անձը այդ ողջ ընթացքում գտնվել է անընդհատ բժշկական հսկողության ներքո:

Կարևոր գործոն է նաև այն, թե արդյոք հարկադիր բժշկական միջամտությունը առաջացրել է առողջության վատթարացում կամ երկարատև բացասական հետևանքներ առողջության համար (Սալիխովի գործը, կետեր 73–74):

Կարևորելով ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածով երաշխավորված իրավունքի **բացարձակ բնույթը**, ինչպես դրա նյութական (բովանդակային), այնպես էլ դատավարական տեսանկյունից, պետության նեգատիվ և պոզիտիվ պարտավորությունների լույսի ներքո ՎԴ–ն իր մի շարք որոշումներում անդրադարձել է ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածով երաշխավորված իրավունքների բացահայտմանը, այդ թվում՝ ապացույցների թույլատրելիության և մասնավորապես «թունավոր ծառի պտուղների» տեսության լույսի ներքո, որն իր արտացոլումն է գտել արդեն իսկ նախկինում հիշատակված՝ Արայիկ Գզոյանի որոշման մեջ (*Արայիկ Գզոյանի* վերաբերյալ գործով 2010 թ. փետրվարի 12–ի թիվ ԵԱՔԴ/0049/01/09 որոշումը):

3) ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետի խախտմամբ ձեռք բերված ապացույցների անթույլատրելիության հարցերը

ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետի համաձայն՝ «Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները. (…),

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության (...)»:

ՄԻԵԴ–ը, կիրառելով և մեկնաբանելով «ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետը, եկել է այն հետևության, որ եթե մեղադրյալին դատավարության որևէ փուլում հնարավորություն չի տրվել հարցեր ուղղելու իր դեմ ցուցմունք տված անձին, ապա նա զրկվում է արդար դատաքննության իրավունքից (տե՛ս *Ունտերպերտինգերն ընդդեմ Ավստրիայի* գործով ՄԻԵԴ–ի 1986 թվականի նոյեմբերի 24–ի վճիռը, գանգատ թիվ 9120/80, 31–33–րդ կետեր): Անձի դատապարտումը չի կարող ամբողջապես կամ վճռական չափով հիմնվել այնպիսի անձի հայտնած տվյալների վրա, որին հարցեր ուղղելու համարժեք հնարավորություն պաշտպանության կողմը չի ունեցել (տե՛ս *Սադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի* (թիվ 1) գործով ՄԻԵԴ–ի 2001 թվականի հուլիսի 17–ի վճիռը, գանգատներ թիվ 29900/96, 65–րդ կետ):

Ունտերպերտինգերի և Սադակի գործերով ՄԻԵԴ–ի արտահայտած իրավական դիրքորոշումները կայուն նախադեպային պրակտիկայի արտահայտություն են, որոնք բազմիցս վերահաստատվել ու կիրառվել են (տե՛ս *Հուլկի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի* գործով 2003 թ. հունիսի 19–ի վճիռը, գանգատ թիվ 28490/95, կետեր 53–54, *Գոսսան ընդդեմ Լեհաստանի* գործով 2007 թ. հունվարի 9–ի վճիռը, գանգատ թիվ 47986/99, կետեր 54–55, *Բալսիտե–Լիդեիկյենեն ընդդեմ Լիտվայի* գործով 2008 թ. նոյեմբերի 4–ի վճիռը, գանգատ թիվ 72596/01, կետ 86, *Չական ընդդեմ Ալբանիայի* գործով 2009 թ. դեկտեմբերի 8–ի վճիռը, գանգատ թիվ 44023/02, կետ 102):

Սակայն պարզ է, որ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր կիրառել նշված մեխանիզմը: Սրընթաց զարգացում ապրող աշխարհում, որտեղ արագ զարգանում է ոչ միայն գիտությունը, այլ նաև հանցավորությունը, և ի հայտ են գալիս հանցագործությունների կատարման նոր եղանակներ, զարգանում են նաև կազմակերպված հանցավորությունն ու միջազգային հանցավորությունը (օրինակ՝ թմրամիջոցների, զենքի ապօրինի շրջանառության, թրաֆիքինգի ոլորտներում): Բացի այդ՝ առանձին տեսակի հանցագործություններով, մասնավորապես բռնի և սեքսուալ բնույթի հանցագործություններով, անհրաժեշտություն է առաջա-

նում հաշվի առնելու տուժողների առանձնահատկությունները և նրանց կրկնակի վիկիտիմիզացիայի ենթարկելու հանգամանքները: Ի վերջո վկան կարող է մահանալ, վախից ելնելով՝ դատարան չներկայանալ, վերադառնալ իր մշտական բնակության երկիր կամ երկարատև ժամանակով մեկնել այլ երկիր, տառապել ծանր հիվանդությամբ և այլն:

Օրինակ՝ *S. N–ն ընդդեմ Շվեդիայի* և *W. S–ն ընդդեմ Լեհաստանի* գործերով ՄԻԵԴ–ն ընդունել է, որ «սեռական ոտնձգությունների վերաբերյալ գործերով կոնկրետ միջոցներ պետք է ձեռնարկվեն հանցագործության զոհերին պաշտպանելու նպատակով. այն հաշվով, որ նման միջոցները պետք է զուգակցվեն պաշտպանության կողմի իրավունքների արդյունավետ և համարժեք իրականացմամբ:

Հաշվի առնելով սեռական հանցագործությունների առանձնահատկությունները՝ չի կարող այնպիսի մեկնաբանություն տրվել, որ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետը պահանջում է, որպեսզի բոլոր գործերով հարցադրումները խաչաձև հարցաքննության կամ այլ միջոցներով առաջադրվեն ուղղակիորեն մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից» (տես *S. N–ն ընդդեմ Շվեդիայի* գործով գանգատ թիվ 34209/96, կետ 2002 թ. հուլիսի 2–ի վճիռը, գանգատ թիվ 34209/96, կետ 52 և *W. S–ն ընդդեմ Լեհաստանի* 19.06.2007 թ. հունիսի 19–ի վճիռը, գանգատ թիվ 21508/02, կետ 55):

Ալ Քավայան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում ՄԻԵԴ–ի կողմից ձևավորվել է հետևյալ դիրքորոշումը.

«ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ (դ) կետն ամրագրում է մի սկզբունք, որի համաձայն՝ մեղադրյալին դատապարտելուց առաջ նրա դեմ ուղղված բոլոր ապացույցները պետք է ներկայացվեն նրա ներկայությամբ դռնբաց դատավարության ընթացքում մրցակցող փաստարկների ներկայացման նպատակով: Այս սկզբունքից բացառություններ հնարավոր են, սակայն չպետք է խախտեն պաշտպանության կողմի իրավունքները: Որպես կանոն՝ դա պահանջում է, որ մեղադրյալը պետք է համարժեք և պատշաճ հնարավորություն ունենա առարկելու կամ հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկային ցուցմունք տալու ընթացքում կամ հետագայում՝ դատաքննության ընթացքում: Այս ընդհանուր սկզբունքից բխում են երկու հետևանքներ.

Առաջին՝ պետք է բավարար հիմքեր լինեն բացակա վկայի ցուցմունքն ընդունելու համար: Բավարար հիմքերն առկա են, *inter alia,* եթե վկան մահացել է կամ բացակայում է՝ մեղադրյալից կամ նրա անունից գործող անձանցից վախենալով: Երբ վկայի բացակայությունը պայմանավորված է ցուցմունք տալու ընդհանուր վախով, որը չի վերաբերում մեղադրյալին կամ նրա ներկայացուցիչներին, գործը քննող դատարանը պետք է անհրաժեշտ ուսումնասիրություն իրականացնի՝ պարզելու, թե արդյոք առկա են օբյեկտիվ հիմքեր այդ վախի համար: Մինչև վկային վախի հիմքով ցուցմունք տալուց ազատելը, գործը քննող դատարանը պետք է հավաստիանա, որ բոլոր հնարավոր այլընտրանքներն, ինչպես, օրինակ՝ վկայի անանունությունը և այլ հատուկ միջոցառումներ, անհամապատասխան են և ոչ գործնական:

Երկրորդ՝ դատապարտումը, որը բացառապես կամ վճռորոշ չափով հիմնված է բացակա վկայի ցուցմունքի վրա, որին մեղադրյալը հնարավորություն չի ունեցել նախնական քննության կամ դատաքննության ընթացքում հարցաքննելու կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները հարցաքննվեն, ընդհանուր առմամբ համարվում է ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածով սահմանված արդարության պահանջներին հակասող («միակ և վճռորոշ կանոն»): Սա, այնուամենայնիվ, բացարձակ կանոն չէ և պետք է կիրառվի ճկուն ձևով՝ չանտեսելով համապատասխան իրավական համակարգի առանձնահատկությունները, այլապես այն կվերածվի բութ գործիքի, որը գործում է հակառակ ՄԻԵԴ–ի՝ դատավարությունների ընդհանուր արդարության վերաբերյալ ունեցած ավանդական մոտեցման, այսինքն՝ պաշտպանության կողմի, տուժողի և վկաների մրցակցող շահերի և արդարադատության արդյունավետ իրականացման հանրային շահի հավասարակշռմամբ: Հետևաբար, եթե նույնիսկ ուրիշի խոսքերի վրա հիմնված ցուցմունքը մեղադրյալի դեմ վկայող միակ կամ վճռորոշ ապացույցն է, դրա՝ ապացույց ճանաչելն ինքնին չի հանգեցնում ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 1–ին մասի խախտմանը: Միևնույն ժամանակ, երբ մեղադրանքը հիմնված է բացառապես կամ վճռորոշ չափով բացակա վկայի ցուցմունքի վրա, Դատարանը պետք է դատաքննության ընթացքում մանրակրկիտ հետազոտություն իրականաց-

նի: Այդպիսի ապացույցի ընդունման վտանգների պատճառով այն հավասարակշռության չափազանց կարևոր գործոն է դառնում, որը պահանջում է բավարար հակակշռող գործոնների, ներառյալ ամուր դատավարական երաշխիքների գոյությունը: Յուրաքանչյուր գործով հարցը կայանում է նրանում, թե արդյոք առկա էին բավարար հակակշռող գործոններ, որոնք թույլ են տալիս արդար և պատշաճ գնահատել տրված ցուցմունքների արժանահավատությունը»:

Այդ կապակցությամբ ՄԻԵԴ–ը համարել է, որ «ներպետական օրենսդրությունը պարունակել է արդարության երաշխավորման համար նախատեսված ամուր երաշխիքներ: Ինչ վերաբերում է նրան, թե գործնականում ինչպես են կիրառվել այդ երաշխիքները, ապա ՄԻԵԴ–ը երեք հարց է հաշվի առել հիշյալ գործով.

1. Արդյոք անհրաժեշտ է եղել որպես ապացույց թույլատրել բացակա վկայի ցուցմունքները: Այդ առումով արդյոք բավարար միջոցներ ձեռնարկվել են վկաներին դատարան ներկայացնելու համար:

2. Արդյոք բացակա վկայի ցուցմունքը միակ և վճռորոշ հիմքն է հանդիսացել յուրաքանչյուր մեղադրյալի դատապարտման համար:

3. Արդյոք առկա են եղել բավարար հակակշռող գործոններ՝ ներառյալ ամուր դատավարական երաշխիքներ՝ դատավարության արդարության ապահովման համար:

Այս հարցադրումները (Ալ Քավայայի եռաստիճան թեստը) մինչ օրս էլ կիրառվում է ՄԻԵԴ–ի կողմից այն գործերով, որտեղ քննարկման առարկա է դառնում մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի խախտման հարցը (տե՛ս *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով 10.04.2012 թ. վճիռը[16], գանգատ թիվ 8088/05, *Սալիխովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 03.05.2012 թ. № 23880/05 վճիռը, *Եվգենի Իվանովն ընդդեմ Ռուսաստանի* 25.04.2013 թ. գանգատ թիվ 27100/03, *Բլոխինն ընդդեմ Ռուսաստանի* 23.03.2016 թ. № 47152/06 վճիռը, արդեն իսկ նշված Շատչաշվիլու, Սեթոնի և Դիմովիչի գործերը):

Այդ թեստերի բովանդակությունը առավել ամբողջական ամփոփվել են

[16] Սույն գործով վերլուծությունը՝ վկայի չներկայանալու հիմքով, տրված է վերևում՝ «Հակընդդեմ հարցման իրավունք» ենթաբաժնի ներքո:

արդեն իսկ վկայակոչված՝ Շատչաշվիլու գործով որոշման մեջ (կետեր 119–131):

Այսպես՝ ***առաջին թեստի կապակցությամբ*** ՄԻԵԴ–ի դիրքորոշումները ամփոփվել են հետևյալ կերպ. վկայի բացակայության «լավ» (հարգելի) պատճառները պետք է առկա լինեն առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում: ՄԻԵԴ–ը պետք է ունենա ամուր իրավական և փաստական հիմքեր, որպեսզի չապահովվի վկայի ներկայությունը դատարանում: Եթե նման հիմքեր առկա են, ապա կարող են հանդիսանալ լավ պատճառներ և արդարացվել դատարանի կողմից վկայի չստուգված ցուցմունքների օգտագործումը՝ որպես ապացույց: ՄԻԵԴ–ն իր նախադեպային իրավունքում առանձնացրել է մի շարք նման հիմքեր: Դրաք են՝

– մահը կամ վախի զգացումը (տես Ալ Քավայայի և Թահերիի գործը, կետեր 120–125),

– հիվանդությունը (տես *Բոդեշն ընդդեմ Ռումինիայի* 2013 թ. հուլիսի 18–ի վճիռը, գանգատ թիվ 29752/05, կետեր 39–40, *Վրոնչենկոն ընդդեմ Էստոնիայի* գործով 2013 թ. հուլիսի 18–ի վճիռը, գանգատ թիվ 59632/09, կետ 58, Մատիցինայի գործը, կետ 163),

– անհասանելիությունը:

Վկաների անհասանելիությանը վերաբերող գործերում ՄԻԵԴ–ը պահանջում է, որպիսի ներպետական դատարանները ձեռնարկեն բոլոր ողջամիտ միջոցները՝ դատարանում վկայի ներկայությունը ապահովելու համար (տես Գաբրիելյանի գործը, կետ 78, *Յեբերն ընդդեմ Չեխիայի* գործով 2012 թ. նոյեմբերի 22–ի վճիռը, գանգատ թիվ 46203/08, կետ 48, *Կոստեցկին ընդդեմ Լեհաստանի* գործով 2013 թ. հունիսի 4–ի վճիռը, գանգատ թիվ 14932/09, կետեր 65 և 66): Այն փաստը, որ ներպետական դատարաններին չի հաջողվել հայտնաբերել վկային կամ այն փաստը, որ վկան բացակայել է երկրից, որտեղ անցկացվել է դատաքննությունը, ինքնին բավարար չէ որպեսզի վկայի բացակայությունը համարվի իրավաչափ: ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետից բխում է, որ ՄԻԵԿ–ի մասնակից պետությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր պոզիտիվ միջոցները, որպեսզի մեղադրյալը օգտվի

կոնֆրոնտացիայի իրավունքից (տես Գաբրիելյանի գործը, կետ 78, Ցեբերի գործը, կետ 48, Լուչիչի գործը, կետ 79):

ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածով երաշխավորված իրավունքների արդյունավետ իրականացման ապահովումը հանդիսանում է ՄԻԵԿ մասնակից պետությունների կողմից իրենց վրա վերցված պարտավորությունների մասը (տես Գաբրիելյանի գործը, կետ 81): Հակառակ դեպքում վկայի բացակայությունը կվերագրվի ներպետական մարմինների թերացմանը (տես Ցեբերի գործը, կետ 48, Լուչիչի գործը, կետ 79): ՄԻԵԴ–ը նշել է, որ ինքը չի հանդիսանում դատարան, որը պետք է կազմի սպառիչ ցանկ այն մասին, թե ինչ միջոցառումներ պետք է ձեռնարկեն ներպետական դատարանները՝ բացակայող վկային հայտնաբերելու նպատակով: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ դրանք պետք է ներառեն իր մեջ վկային հայտնաբերելուն ուղղված ներպետական մարմինների, այդ թվում՝ ոստիկանության կողմից ձեռնարկվող միջոցները (տես Սալիխովի գործը, կետեր 116–117, *Պրաժինան ընդդեմ Ռումինիայի* գործով 2014 թ. հունվարի 7–ի վճիռը, գանգատ թիվ 5592/05, կետ 47, Լուչիչի գործը, կետ 79) և միջազգային համագործակցության մեխանիզմները այն դեպքերում, երբ դրանք հասանելի են (տես Գաբրիելյանի գործը, կետ 83, Լուչիչի գործը, կետ 80, *Ֆավրովիչն ընդդեմ Լեհաստանի* գործով 2012 թ. ապրիլի 17–ի վճիռը, գանգատ թիվ 43609/07, կետ 56):

Վկաներին դատավարությանը ներկա գտնվելու ապահովմանն ուղղված բոլոր անհրաժեշտ ողջամիտ ջանքերը ենթադրում են ներպետական դատարանների կողմից նման հիմքերի մանրակրկիտ հետազոտում՝ հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները յուրաքանչյուր վկայի դատարան չներկայանալու պատճառների մասով (տես *Նեչտոն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2012 թ. հունվարի 24–ի վճիռը, գանգատ թիվ 24893/05, կետեր 119–125 և 126–27, *Սիգմատուլինն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2012 թ. ապրիլի 24–ի վճիռը, գանգատ թիվ 1413/05, կետեր 54–56, *Եվգենի Իվանովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2013 թ. ապրիլի 25–ի վճիռը, գանգատ թիվ 27100/03, կետեր 45–50):

Երկրորդ թեստի կապակցությամբ, ինչպես նախորդիվ է նշվել, ՄԻԵԴ–ը հիշեցրել է, որ ***«միակ»*** ապացույց է հանդիսանում մեղադրյա-

լի դեմ արված միակ վկայությունը: ***«Վճռորոշ»*** ապացույցները պետք է մեկնաբանվեն նեղ իմաստով, որպես այնպիսի նշանակության կամ կարևորության ապացույց, որը հավանական է, որ որոշիչ լինի գործի արդյունքի համար: Այն դեպքում, երբ վկայի չստուգված վկայությունն օժանդակում է այլ հաստատող ապացույց, գնահատումն առ այն, թե արդյոք այն որոշիչ է, կախված կլինի օժանդակող վկայության ուժից, որքան ուժեղ է հաստատող ապացույցը, այնքան քիչ հավանական է, որ բացակա վկայի վկայությունը համարվի որոշիչ (Ալ Քավայայի գործը, կետ 131):

Քանի որ ՄԻԵԴ–ը չի հանդիսանում գործը քննող չորրորդ ատյան, ապա որոշում կայացնելիս ՄԻԵԴ–ի համար առաջնային է այն, թե ինչ գնահատականներ են տվել ներպետական դատարանները՝ ապացույցի ***«միակ»–ը և «վճռորոշ»–ը*** որոշելու հարցում: ՄԻԵԴ–ը պետք է գնահատի ներպետական դատարանների հետևությունները՝ ***«միակ» և «վճռորոշ»*** *ապացույցների վերաբերյալ* իր իսկ ձևավորված դիրքորոշումների լույսի ներքո և պարզի, թե արդյոք ներպետական դատարանների գնահատականները ապացույցի միակ և վճռորոշ լինելու հարցում կարող են լինել անընդունելի կամ կամայական (տե՛ս *Մաքգլինն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2012 թ. հոկտեմբերի 16–ի վճիռը, գանգատ թիվ 40612/11, կետ 23, *Գարոֆոլոն ընդդեմ Շվեյցարիայի* գործով 2013 թ. ապրիլի 2–ի վճիռը, գանգատ 4380/09, կետեր 52, 56–57): Եթե ներպետական դատարանների դիրքորոշումները բացակայում են կամ պարզ չեն, ապա անհրաժեշտություն է առաջանում ՄԻԵԴ–ի կողմից տալ սեփական գնահատականը բացակայող վկայի ցուցմունքների վերաբերյալ՝ ***«միակ»–ը և «վճռորոշ»–ը*** լինելու հարցում (տե՛ս *Ֆավրովիչի* գործը, կետ 58, *Պիչուգինն ընդդեմ Ռուսաստանի* 2012 թ. հոկտեմբերի 23–ի վճիռ, գանգատ թիվ 38623/03, կետեր 196–200, Ցեբերի գործը, կետեր 54–56, *Նիկոլիտսասն ընդդեմ Հունաստանի* 2014 թ. հուլիսի 3–ի վճիռը, գանգատ թիվ 63117/09, կետ 35):

Երրորդ թեստի կապակցությամբ ՄԻԵԴ–ի դիրքորոշումները կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

Այն դեպքերում, երբ դատապարտումը բացառապես կամ որոշիչ աստիճանի հիմնված է բացակա վկաների վկայության վրա, ներպետական դատարանը պետք է գործը լավագույնս մանրակրկիտ վերլուծության ենթարկի: Այդպիսի վկայության ընդունման հետ կապված վտանգի պատճառով այդ մանրակրկիտ վերլուծությունը ուժեղ դատավարական երաշխիքների համակցությամբ, կդառնա հավասարակշռող կարևոր գործոն: Անհրաժեշտ են բավարար կերպով հակակշռող գործոններ փոխհատուցելու վկայության ընդունման արդյունքում պաշտպանության կողմի համար առաջացած դժվարությունները:

Այսպես՝ նման հակակշիռ են.

1. Դատարանում բացակայող վկայի ցուցմունքների տեսաձայնագրության հրապարակումը, որը կատարվել էր մինչդատական վարույթի ընթացքում: Այս հանգամանքը թույլ կտա դատարանին, մեղադրանքի և պաշտպանության կողմերին հետևել ցուցմունք տվողի վարքագծին՝ սեփական կարծիքը ձևավորելով նրա կողմից տրված ցուցմունքների հավաստիության վերաբերյալ (*Ա. Գ–ն ընդդեմ Շվեդիայի* գործով *2012 թ. հունվարի 10–ի վճիռը, գանգատ թիվ* 315/09, *Չմուրան ընդդեմ Լեհաստանի* 2012 թ. ապրիլի 3–ի վճիռը, գանգատ թիվ 18475/05, կետ 50, *Սալիխովի* գործը, § 117, *Դ. Տ–ն ընդդեմ Նիդերլանդների* գործով 2013 թ. ապրիլի 2–ի վճիռը, գանգատ թիվ 25307/10, կետ 50, *Եվգենի Իվանովի* գործը, կետ 49, *Ռոսինն ընդդեմ Էստոնիայի* գործով 2013 թ. դեկտեմբերի 19–ի վճիռը, գանգատ թիվ 26540/08, կետ 62, *Գոնսալես Նաջերան ընդդեմ Իսպանիայի* 2014 թ. ապրիլի 11–ի վճիռը, գանգատ թիվ 61047/13, կետ 54):

2. Բացակայող վկայի ցուցմունքները հաստատող ապացույցների առկայությունը (տես *Սիկան ընդդեմ Ռումինիայի* գործով 2009 թ. հուլիսի 9–ի վճիռը, գանգատ թիվ 12036/05, կետեր 76–77, *Պրաժինան ընդդեմ Ռումինիայի* գործով 2014 թ. հունվարի 7–ի վճիռը, գանգատ թիվ 5592/05, կետեր 58 և 60, *Բրզուժինսկին ընդդեմ Լեհաստանի* գործով 2013 թ. սեպտեմբերի 17–ի վճիռը, գանգատ թիվ 23789/09, կետեր 85–86): Այդ ապացույցները կարող են ներառել մասնավորապես.

ա) այն անձանց ցուցմունքները, ում բացակայող վկան տեղեկու-

թյուններ է հայտնել դեպքից անմիջապես հետո (*Ալ Քավայայի* գործը, կետ 156, Դ. Տ–ի գործը, կետ 50, *Մաքգլինի* գործը, կետ 23, *Գոնսալես Նաջերայի* գործը, կետ 55),

բ) հանցագործությունը հիմնավորող փաստացի առկա այլ ապացույցները, այդ թվում՝ դատաբժշկական եզրակացությունները (տե՛ս *Մաքգլինի* գործը, կետ 24, ԴՆԹ–ի մասով) կամ տուժողի առողջության կամ նրա ցուցմունքների հավաստիության վերաբերյալ փորձագիտական եզրակացությունները (տե՛ս *Գանին ընդդեմ Իսպանիայի* գործով 2013 թ. փետրվարի 19–ի վճիռը, գանգատ թիվ 61800/08, կետ 41, *Ռոսինն ընդդեմ Էստոնիայի* 2013 թ. դեկտեմբերի 19–ի վճիռը, գանգատ թիվ 26540/08, կետ 56, *Գոնսալես Նաջերան ընդդեմ Իսպանիայի* գործով 2014 թ. ապրիլի 11–ի վճիռը, գանգատ թիվ 61047/13, կետ 61),

գ) մեծ նշանակություն է տրվում այն փաստին, որ բացակայող վկայի ցուցմունքները համընկնեն դատարանում հարցաքննվող վկաների ցուցմունքների հետ, և որ այդ տեղեկությունները վերջիններս ստացել են բացակայող վկայից դեպքից անմիջապես հետո: Բացի այդ՝ կարևոր է, որ այդ վկաները դատարանում ցուցմունքներ տան, և նրանց արժանահավատությունը ճշտվի խաչաձև հարցաքննության միջոցով (տե՛ս Ալ Քավայայի գործը, կետ 156):

3. Պաշտպանության կողմին կարելի է առաջարկել, որպեսզի հարցերը ուղղվեն միջնորդավորված, գրավոր ձևով կամ մինչդատական կամ դատական վարույթների ընթացքում (տե՛ս *Տ. Ն–ն ընդդեմ Շվեդիայի* գործով վերոնշյալ օրինակը, *Եվգենի Իվանովի* գործը, կետ 49, *Շոլերն ընդդեմ Գերմանիայի* գործով 2014 թ. դեկտեմբերի 18–ի վճիռը, գանգատ թիվ 14212/10, կետ 60):

4. Մինչդատական վարույթի ընթացքում պաշտպանության կողմին՝ վկային հարցեր տալու իրավունքի իրականացման հնարավորության ստեղծումը, այդ թվում՝ դատարանում ցուցմունքների ամրապնդման գործընթացի (դատական դեպոնացման) միջոցով: Նման մինչդատական լսումները թույլ են տալիս կանխել ռիսկային այն իրավիճակները, երբ կարևոր վկաներից մեկը ցուցմունքներ տալու համար չներկայանա դատարան (տե՛ս *Գանիի* գործը, կետ 48, *Ռոսինն ընդդեմ Էստոնիայի*

2013 թ. դեկտեմբերի 19–ի վճիռը, գանգատ թիվ 26540/08, կետ 56, *Ա. Գ–ն ընդդեմ Շվեդիայի*, 2012 թ. հունվարի 10–ի վճիռը, գանգատ թիվ 315/09, *Վրոնչենկոյի* գործը, կետեր 61 և 63, *Չմուրան ընդդեմ Լեհաստանի* 2012 թ. ապրիլի 3–ի վճիռը, գանգատ թիվ 18475/05, կետ 51: Սեքսուալ բնույթի հանցագործություններով անչափահասի շահերի մասով տե՛ս *Տ. Ն–ն ընդդեմ Շվեդիայի* գործը, *Էյնգերն ընդդեմ Ավստրիայի* 2012 թ. մայիսի 10–ի վճիռը, գանգատ թիվ 28328/03, կետեր 41–42, *Տրամպևսկին ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրարապետության* գործով 2012 թ. հուլիսի 10–ի գործով վճիռը, գանգատ թիվ 4570/07, կետ 44):

5. Մեղադրյալին լրացուցիչ անգամ պետք է հնարավորություն տրվի ներկայացնելու իրադարձությունների իր վարկածը և կասկածի տակ դնելու վստահությունը բացակայող վկայի հանդեպ՝ վկայակոչելով վերջինիս և մյուս վկաների ցուցմունքների միջև առկա որոշակի հակասություններ (տե՛ս *Էյնգերի* գործը, կետ 43, *Դ. Տ–ի* գործը, կետ 50, *Գանիի* գործը, կետ 48, *Գարոֆոլոյի* գործը, կետեր 52 և 56–57): Այն դեպքերում, երբ վկայի անձը հայտնի է պաշտպանության կողմին, վերջինիս պետք է հնարավորություն տրվի վերհանելու և քննելու բոլոր դրդապատճառները, որոնք կարող են կասկածի տակ դնել բացակայող վկայի ցուցմունքների հավաստիությունը: Թեկուզև դա արդյունավետ միջոց է, այնուամենայնիվ, զիջում է անմիջականորեն կատարվող առերեսմանը (կոնֆրոնտացիային) (տե՛ս Ցեբերի գործը, կետ 63, *Գարոֆոլոի* գործը, կետ 56, *Սիկայի* գործը, կետ 73, *Բրզուժինսկու* գործը, կետ 88):

Շատչաշվիլու գործով ՄԻԵԴ–ի Մեծ պալատը հաստատել է, որ «վկայի չներկայանալու համար հարգելի պատճառների բացակայությունն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ՝ եզրակացնելու, որ դատավարությունը եղել է անարդար: Սակայն այդ հանգամանքը դեռ հանդիսանում է որպես կարևոր գործոն, որը կարող է փոխել նժարի կողմը դեպի ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 1–ին մասի և 3–րդ մասի «դ» կետի խախտում: Բացի այդ՝ հաշվի առնելով այն, որ ՄԻԵԴ–ի խնդիրն է պարզել, թե արդյոք ողջ դատավարությունը եղել է արդարացի, ՄԻԵԴ–ը պետք է վերլուծի ոչ միայն «հակակշիռ» միջոցների բավարար լինելը այն դեպ-

քերում, երբ բացակայող վկայի ցուցմունքները եղել են «միակն» ու «վճռորոշը» մեղադրյալի դատապարտման համար, այլ նաև այն դեպքերում, երբ ՄԻԵԴ–ը գտել է, որ բավարար չափով պարզ չէ, թե ապացույցները արդյոք հանդիսանում են «միակն» ու «վճռորոշը», սակայն, այնուամենայնիվ, հավաստիացել է, որ դրանք կրում են զգալի բնույթ և դրանց ընդունումը կարող է վնասել պաշտպանության կողմին:

Հակակշիռ միջոցների անհրաժեշտ աստիճանը, որը բավարար կլինի, որպեսզի դատաքննությունը համարվի արդար, կախված կլինի բացակայող վկայի ցուցմունքների կշռից: Ինչքան մեծ տեղ է զբաղեցնում այդ ապացույցը անձի դատապարտման գործում, այնքան ավելի ծանրակշիռ պետք է լինեն հակակշիռ միջոցները, որպեսզի դատավարությունը ամբողջությամբ լինի արդար» (տե՛ս *Շատչաշվիլու* գործը, կետեր 117–118):

Վկաներին առերես հարցաքննելու իրավունքի ապահովման հետ կապված կանոնները վերաբերելի են նաև անանուն վկաների օգտագործման հետ կապված հարցերում: Այսպես՝ *Կոստովսկին ընդդեմ Նիդերլանդների* գործով ՄԻԵԴ–ը գտել է, որ «ՄԻԵԿ–ը քրեական վարույթի քննության փուլում չի բացառում այնպիսի աղբյուրների վրա հենվելը, ինչպիսիք անանուն իրազեկիչներն են: Այնուհանդերձ, անանուն ցուցմունքները մեղադրական դատավճիռ կայացնելու համար որպես բավարար ապացույց օգտագործելը սույն գործով այլ խնդիր էր առաջացրել: Այն առաջացրել է պաշտպանության իրավունքի սահմանափակումներ, որոնք անհամատեղելի էին ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածում տեղ գտած երաշխիքների հետ: Կառավարությունը փաստացի ընդունեց, որ գանգատաբերի մեղադրական դատավճռի կայացման հիմքում «վճռորոշ չափով» դրված էին եղել անանուն ցուցմունքները»: Վերոգրյալի հիման վրա ՄԻԵԴ–ը եզրակացրել է, որ տեղի է ունեցել ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետի խախտում՝ 6–րդ հոդվածի 1–ին կետի հետ միասին (տե՛ս *Կոստովսկին ընդդեմ Նիդերլանդների* 20.11.1989 թ. № 11454/85, կետ 44, *Դուրսոնն ընդդեմ Նիդերլանդների* գործով 1996 թ. մարտի 25–ի վճիռ, գանգատ թիվ 20524/92, *Վան Մեհելենը և մյուսներն ընդդեմ Նիդերլանդների* 23.04.1997 թ. №№. 55/1996/674/861–864):

ՄԻԵԴ–ը հակընդդեմ հարցման իրավունքին անդրադարձել է նաև *Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում: Այսպես՝ նշված գործով դիմումատուն բողոքել է, որ իրեն հնարավորություն չի տրվել հարցաքննելու վկա Օ–ին, ում նախաքննության ժամանակ տված ցուցմունքները գործի քննության բոլոր փուլերում դրվել են իր մեղադրանքի հիմքում:

Սույն գործով ՄԻԵԴ–ը նշել է, որ, «ճանապարհային երթևեկության կանոնների խախտմամբ անզգուշությամբ մարդու մահ առաջացնելու համար դիմումատուի դատապարտման հիմքում, ի թիվս այլոց, դրվել է վկա Օ–ի կողմից նախաքննության ժամանակ տրված ցուցմունքը: Դիմումատուի և այդ վկայի առերեսում չի կատարվել: Վերջինս, չներկայանալով դատարան, նաև պնդել է, որ վախենում է իր հանդեպ հաշվեհարդարից: Ուստի գործի քննության որևէ փուլում դիմումատուն այդ վկային հարցաքննելու հնարավորություն չի ունեցել: Այնուամենայնիվ, սխալ է պնդելը, որ դիմումատուի դատապարտման համար վճռորոշ է եղել վկա Օ–ի ցուցմունքը: Նրա դատապարտման հիմքում դրվել են նաև երկու կարևոր ականատես վկաների՝ Ժ–ի և Մ–ի ցուցմունքները, երեք այլ վկաների ցուցմունքները, ինչպես նաև մի շարք փորձագետների եզրակացություններ և զննությունների արձանագրություններ:

Վերոգրյալի հիման վրա ՄԻԵԴ–ը եզրակացրել է, որ այն հանգամանքը, որ դիմումատուն չի կարողացել հարցաքննել վկա Օ–ին, սույն գործի պարագայում չի սահմանափակել պաշտպանության կողմի իրավունքներն **այնքան**, որ հանգեցնի ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետի խախտմանը (տե՛ս *Մամիկոնյանի* գործը, կետեր 39–47): Այս մեջբերման մեջ մենք իրավացիորեն շեշտել ենք «այնքան» բառը, քանի որ դա լավագույնս արտահայտում է ՄԻԵԴ–ի մոտեցումը առ այն, որ բոլոր դեպքերում հրապարակային դատավարության պայմաններում վկային հարցաքննելու մասին միջնորդության մերժումը հանդիսանում է միջամտություն մեղադրյալի արդար դատաքննության իրավունքին: Սակայն ամբողջ հարցը կայանում է նրանում, թե արդյոք ապացույցների համակցության շրջանակներում տվյալ սահմանափակումը

կարող էր հանգեցնել, ինչպես նշում է քրեական դատավարության օրենսգիրքը, քրեական դատավարության էական խախտման:

Հակընդդեմ հարցման իրավունքը ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների լույսի ներքո քննարկման առարկա է դարձել նաև ՎԴ–ի նախադեպային իրավունքում:

Այսպես՝ Համայակ Սահակյանի գործով 11.20.2011 թ. որոշմամբ ՎԴ–ն անդրադարձել է պաշտպանության միջոցների ներքո գտնվող երեք վկաների՝ չբացահայտված բովանդակությամբ ցուցմունքների օգտագործման իրավաչափությանը:

ՎԴ–ն գտել է, որ, «*հանցագործության բացահայտման նպաստող անձանց պաշտպանությունը՝ ընդհանրապես, և պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունը՝ մասնավորապես, հետապնդում են իրավաչափ նպատակներ և ինքնին անհամատեղելի չեն մեղադրյալի՝ արդար դատաքննությունն ապահովող իրավական արժեքների հետ: Սակայն հանցագործության բացահայտմանը նպաստող անձանց պաշտպանությունը կանոնակարգող քրեադատավարական իրավանորմերը մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավական մեխանիզմները գործադրելիս հարկ է նկատի առնել, որ դրանք չեն կարող հանգեցնել մեղադրյալի՝ արդար դատաքննության իրավունքի չեզոքացմանը: Ուստի խնդրո առարկա հարցի կապակցությամբ հանրային և մասնավոր իրավաչափ շահերը պետք է այնպես հավասարակշռվեն, որ մեղադրյալը չզրկվի «զենքերի հավասարության» իրավունքից և արդյունավետ պաշտպանության հնարավորությունից*» (Համայակ Սահակյանի վերաբերյալ 11.20.2011 թ. թիվ ԼԴ/0212/01/10 գործով կայացված որոշում):

Առերես հարցաքննության խնդիրներին ՎԴ–ն անդրադարձել է նաև *Սարիբեկ Հարությունյանի* վերաբերյալ 31.05.2014 թ. թիվ ԵԱՔՐԴ/0189/01/12 և *Հարություն Սարգսյանի* վերաբերյալ 27.02.2015 թ. թիվ ՇԴ/0172/01/12 գործերով կայացրած որոշումներում:

Այսպես՝ Ս. Հարությունյանի վերաբերյալ գործով ՎԴ–ն քննարկել է առերեսման իրավաչափությունը այն պայմաններում, երբ մեղադրյալը (կասկածյալը) հրաժարվում է ցուցմունք տալուց:

Մասնավորապես որոշման 26–րդ կետում մեջբերված՝ ՄԻԵԴ–ի դիրքորոշումների հիման վրա ՎԴ–ն որոշման 27–րդ կետում արձանագրել է, որ «*քրեական դատավարությունում արդար դատաքննության հիմնարար իրավական արժեքի բաղադրատարրերից է պաշտպանության կողմի իրավունքը հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) ենթարկել մեղադրական բովանդակությամբ ցուցմունք տված վկաներին: Ընդ որում՝ նշված իրավունքի իրացման համար անհրաժեշտ է, որպեսզի պաշտպանության կողմին տրվի մեղադրյալի դեմ հանդես եկած անձանց ցուցմունքները վարույթի որևէ փուլում վիճարկելու, նրան հարցաքննելու համարժեք և պատշաճ հնարավորություն (...)*»:

ՎԴ–ն արձանագրել է նաև, որ «ՔԴՕ–ն ընդհանուր առմամբ բովանդակում է պաշտպանության կողմի հակընդդեմ հարցման իրավունքը նաև նախաքննության փուլում կենսագործելու համար անհրաժեշտ իրավական մեխանիզմներ: Մասնավորապես ՔԴՕ 216–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Քննիչն իրավունք ունի կատարելու նախօրոք հարցաքննված երկու այն անձանց առերեսում, որոնց ցուցմունքներում էական հակասություններ կան: Քննիչը պարտավոր է կատարել առերեսում, եթե էական հակասություններ կան մեղադրյալի և մեկ այլ անձի ցուցմունքներում»:

«Մեջբերված քրեադատավարական նորմի, ինչպես նաև առերես հարցաքննության անցկացման կարգը սահմանող այլ դրույթների համադրված վերլուծությունից ակնհայտ է, որ առերեսումը քննչական գործողություն է, որի առաջնային նպատակը ապացույց ձեռք բերելն է այն պայմաններում, երբ առկա են էական հակասություններ երկու անձանց ցուցմունքների միջև: Մյուս կողմից, սակայն, առերեսումը նախաքննության փուլում միակ դատավարական միջոցն է, որի օգնությամբ վարույթն իրականացնող մարմինը կարող է հնարավորություն տալ անձին վիճարկելու իր դեմ տրված ցուցմունքները՝ դրանով իսկ ապահովելով պաշտպանության կողմի՝ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «դ» կետով երաշխավորված իրավունքը: Այլ խոսքով՝ առերես հարցաքննությունն իրականացվում է ոչ միայն գործով ճշմարտությունը բացահայտելու նպատակով, այլև հանդիսանում է նախաքննության փուլում մե-

ղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման միջոց: Հետևաբար անթույլատրելի է առերես հարցաքննության հնարավորությունը բացառել միայն այն պատճառով, որ կասկածյալը կամ մեղադրյալը, օգտվելով իր սահմանադրական իրավունքից, հրաժարվում է ցուցմունք տալուց»:

Շարունակելով վերոնշյալ վերլուծությունը՝ ՎԴ–ն որոշման 28–րդ կետում արձանագրել է, որ *«առերես հարցաքննության անցկացման կարգը կանոնակարգող քրեադատավարական իրավանորմերը մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավական մեխանիզմները գործադրելիս հարկ է նկատի ունենալ, որ դրանք չեն կարող հանգեցնել մեղադրյալի (կասկածյալի)՝ արդար դատաքննության իրավունքի չեզոքացմանը: Ուստի խնդրո առարկա հարցի կապակցությամբ հանրային և մասնավոր իրավաչափ շահերը պետք է այնպես հավասարակշռվեն, որ մեղադրյալը չզրկվի հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքից և արդյունավետ պաշտպանության հնարավորությունից»:*

Այս առումով ՎԴ–ն գտել է, որ *«ցուցմունք տալուց հրաժարվելու՝ մեղադրյալի սահմանադրական իրավունքի իրացումն ինքնին չի բացառում առերեսման (հակընդդեմ հարցման) հնարավորությունը: Այն դեպքում, երբ վկան մեղադրական բովանդակությամբ ցուցմունք է տալիս որևէ անձի դեմ, իսկ վերջինս օգտվում է իր լռելու իրավունքից, ապա վարույթն իրականացնող մարմինն այս օբյեկտիվ իրավիճակը կարող է գնահատել որպես փաստացի տրված երկու ցուցմունք, որոնց միջև առկա է էական հակասություն և այդ ընկալումն արձանագրել առերեսում անցկացնելու մասին որոշմամբ՝ իրական և պատշաճ հնարավորություն տալով պաշտպանության կողմին՝ հարցաքննելու վկային և վիճարկելու նրա հայտնած փաստական տվյալների ճշմարտացիությունը: Այս պայմաններում անցկացված առերես հարցաքննությունն ինքնին չի հանգեցնի քրեադատավարական օրենքի էական խախտման՝ ՔԴՕ 398–րդ հոդվածի իմաստով»* (տե՛ս Սարիբեկ Հարությունյանի վերաբերյալ գործով 31.05.2014 թ. թիվ ԵԱՔՐԴ/0189/001/12 որոշումը, կետեր 25–31):

II. Իրեղեն ապացույցների և փաստաթղթերի թույլատրելիության չափորոշիչները.

Քրեական գործերով իրեղեն ապացույցների և փաստաթղթերի թույլատրելիության հարցերին ՄԻԵԴ–ը հիմնականում անդրադարձել է ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածին վերաբերող գործերը քննելիս:

Դրանք հիմնականում վերաբերել են հաղորդակցությանը միջամտելու, հաղորդակցությունը վերահսկելու, բնակարանի և անձնական խուզարկության դեպքերին: Սակայն հարկ է նշել, որ ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի խախտումը ինքնին չի հանգեցնում ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտմանը: Այսպես՝ Խանի գործով (*Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 2000 թ. մայիսի 12–ի վճիռը, գանգատ թիվ 3594/97) դիմողը Միացյալ Թագավորություն էր ժամանել իր զարմիկի հետ, որի մոտ թմրանյութ է հայտնաբերվում: Խուզարկության արդյունքում դիմողի մոտ թմրանյութ չի հայտնաբերվել: Հինգ ամիս անց դիմողն այցելում է թմրանյութի առուվաճառքով զբաղվող ընկերոջը, որի բնակարանում, առանց վերջինիս իմացության, լսող սարք էր տեղադրվել: Արդյունքում ոստիկանությունը ստանում է դիմողի և նրա ընկերոջ զրույցի ձայնագրությունը, որտեղ դիմողը խոստովանում է, որ ներգրավված է եղել թմրանյութերի մաքսանենգության մեջ: Արդյունքում նա ձերբակալվում է և մեղադրվում թմրանյութերի հետ կապված հանցագործությունների համար:

ՄԻԵԴ–ում դիմողը պնդել էր, որ իշխանությունները խախտել են ՄԻԵԿ–ի 8–րդ և 6–րդ հոդվածները: ՄԻԵԴ–ը գտել է, որ տեղի է ունեցել ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի խախտում: Իսկ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի մասով ՄԻԵԴ–ը նշել է, որ դիմողն ունեցել է ձայնագրության նույնականությունն ու օգտագործման փաստը վիճարկելու լայն հնարավորություն, և այն հանգամանքը, որ նա հաջողության չի հասել, ՄԻԵԴ–ի գնահատականներում փոփոխություն չի մտցնում: Այնուամենայնիվ, ՄԻԵԴ–ը գտել է, որ 8–րդ հոդվածի խախտմամբ ձեռք բերված նյութի օգտագործումը չի հակասում ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածով նախատեսված արդարացիության պահանջներին: Այսինքն՝ ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի շրջանակներում ապացույցների թույլատրելիությանը անդրադառնալիս դատարանը չի

հիմնվել այն հանգամանքների վրա, թե արդյոք ապացույցը ձեռք է բերվել ներպետական օրենսդրության պահպանմամբ: ՄԻԵԴ–ը գնահատել է ամբողջ դատավարության արդարացիությունը և այդ լույսի ներքո հաշվի է առել, որ վիճահարույց ապացույցը վճռորոշ, առանցքային նշանակություն չուներ[17]:

ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի համաձայն՝ ներպետական մարմինները, ավելի կոնկրետ սույն դեպքում՝ վարույթն իրականացնող մարմինները, պարտավոր են հարգել անձի նամակագրության իրավունքը: Անձի նամակագրության հարգման իրավունքի նպատակն է պաշտպանել մասնավոր հաղորդակցության գաղտնիությունը, և այն մեկնաբանվել է որպես այլ անձանց հետ չընդհատված և չգրաքննված հաղորդակցություն ունենալու իրավունք[18]:

«Նամակագրություն» եզրույթը բավական լայն է և ներառում է հաղորդակցության ձևերի մեծ մասը, ուստի նաև հանցագործության կանխարգելման կամ քննության համար օգտագործվող տարաբնույթ հնարքներ՝ ներառյալ հաղորդակցությանը միջամտելը (տե՛ս *Մելոունն ընդդեմ Միացյալ Թագավորության* 1984 թ. օգոստոսի 2–ի վճիռը, գանգատ թիվ 8691/79, կետ 64, *Զախարովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2015 թ. դեկտեմբերի 4–ի Մեծ պալատի վճիռը, գանգատ թիվ 47143/06, կետեր 302–303), լսման էլեկտրոնային սարքերի օգտագործումը (տե՛ս *Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2000 թ. մայիսի 12–ի վճիռը, գանգատ թիվ 35394/97, կետ 25, *Պ. Գ–ն և Ջ. Հ–ն ընդդեմ Միացյալ Թագավորության* 2001 թ. սեպտեմբերի 2–ի վճիռը, գանգատ թիվ 44787/98, կետեր 37 և 42), էլեկտրոնային փոստի մոնիթորինգը (տե՛ս *Քոպլանդն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2007 թ. ապրիլի 3–ի վճիռը, գանգատ թիվ 62617/00, կետեր 41–42) և հսկողության GPS–ային սարքերի օգտագործումը (տե՛ս *Ուզունն ընդդեմ Գերմանիայի* գործով 2010 թ. սեպտեմբերի 2–ի վճիռը, գանգատ

[17] Տե՛ս Դ. Մելքոնյան, Ապացույցների թույլատրելիության եվրոպական չափանիշները, Պետություն և իրավունք, N 4 (42), 2008, էջեր 14–19:

[18] I. Roagna, Protecting the Right to Respect for Private and Family Life under the European Convention on Human Rights, Council of Europe Human Rights Handbooks (2012 Council of Europe Publishing), p. 32.

թիվ 35623/05, կետեր 49–53), որոնք առաջացնում են միջամտություն ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածով նախատեսված իրավունքների իրականացման նկատմամբ[19]:

Քաղաքացիներին գաղտնի հսկելու լիազորությունները ՄԻԵԿ–ով թույլատրելի են միայն այնքանով, որքանով դրանք իրականացվում են բացառապես ժողովրդավարական ինստիտուտների երաշխավորման համար: ՄԻԵԴ–ն ընդունում է, որ փոստի, նամակագրության և հաղորդակցության հսկողությունը բացառիկ հանգամանքներում անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ ազգային անվտանգության և/կամ անկարգությունների կամ հանցագործության կանխարգելման[20]:

Այսպես՝ ապացույցներ հավաքելիս անհրաժեշտ են որոշ երաշխիքներ, որպեսզի նամակագրության նկատմամբ միջամտությունն անհամաչափ միջամտություն չառաջացնի 8–րդ հոդվածի նկատմամբ: Այնուամենայնիվ, ինչպես ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածով նախատեսված իրավունքների նկատմամբ միջամտության այլ ձևերի, այնպես էլ այս ձևերի դեպքում քննիչները պարտավոր են ապահովել հաղորդակցության նկատմամբ իրականացված միջամտության համապատասխանությունը ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի 2–րդ մասի պահանջներին:

ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի պահանջների բավարարման համար անհրաժեշտ երաշխիքները կարող են տարբեր լինել՝ կախված գործի հանգամանքներից, մասնավորապես տարբեր կարող են լինել հնարավոր միջոցառումների բնույթը, շրջանակը և տևողությունը, դրանց կիրառության համար պահանջվող հիմքերը, նման միջոցառումներ թույլատրելու, իրականացնելու և վերահսկելու իրավասությամբ օժտված մարմինները և ազգային օրենսդրությամբ նախատեսված իրավական պաշտպանության միջոցները[21]:

---

[19] J. Murdoch & R Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 68.

[20] I. Roagna, Protecting the Right to Respect for Private and Family Life under the European Convention on Human Rights, Council of Europe Human Rights Handbooks (2012 Council of Europe Publishing), p. 51–52.

[21] I. Roagna, Protecting the Right to Respect for Private and Family Life under the European Convention on Human Rights, Council of Europe Human Rights Handbooks (2012 Council of

ՄԻԵԴ–ը տարբեր գործերով կայացված վճիռներում հետևողականորեն նշել է, որ ոստիկանական քննության նպատակով հաղորդակցությանը միջամտելու պարագայում «օրենքի դրույթները պետք է բավականաչափ պարզ լինեն, որպեսզի քաղաքացիները համարժեք չափով ընկալեն այն հանգամանքները և պայմանները, որոնցում և որոնցով պետական մարմիններն իրավունք ունեն կիրառելու անձնական կյանքի և նամակագրության հարգման իրավունքի նկատմամբ միջամտության գաղտնի և վտանգի հավանականություն առաջացնող տեսակը» (տե՛ս *Բիկովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2009 թ. մարտի 10–ի վճիռը, գանգատ թիվ 4378/02, կետ 78):

Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ–ը նշել է, որ «Ներպետական օրենսդրությունը պետք է սահմանի պետական մարմինների կողմից ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի 1–ին մասով երաշխավորված իրավունքներին կամայական միջամտության դեմ իրավական պաշտպանության միջոց: Մասնավորապես այն դեպքում, երբ գործադիր իշխանությունն իրականացնում է գաղտնի գործունեություն, կամայականության վտանգներն ակնհայտ են: Քանի որ հաղորդումների վերահսկման միջոցառումների իրականացումը գործնականում բաց չէ շահագրգիռ անհատների կամ հանրության լայն զանգվածների կողմից ուսումնասիրության համար, ապա իրավունքի գերակայությանը կհակասի, եթե գործադիր իշխանությանը կամ դատավորին շնորհվի անսահմանափակ լիազորությամբ արտահայտվող իրավական հայեցողություն: Հետևաբար օրենքը պետք է բավարար հստակությամբ նախատեսի իրավասու մարմիններին տրամադրվող ցանկացած նման հայեցողության շրջանակը և դրա իրականացման եղանակը՝ հաշվի առնելով տվյալ միջոցառման օրինական նպատակը՝ անհատին կամայական միջամտության դեմ համապատասխան պաշտպանություն տրամադրելու համար» (տե՛ս *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2012 թ. հոկտեմբերի 2–ի վճիռը, գանգատ թիվ 22491/08, Ժիրայր Սեֆիլյանի վերաբերյալ գործով 2014 թ. մայիսի 31–ի թիվ ՎԲ–13/07 որոշումը): Խնդրո առարկա հարցը սույն գործով կայանում էր նրանում, որ գաղտնալսման մասին որոշում կա-

Europe Publishing), p. 51–52.

յացնելու պահին ՀՀ իրավական դաշտում բացակայում էր օպերատիվ–հետախուզական գործունեության կարգավորման վերաբերյալ ինքնուրույն օրենք, և նման համապարփակ գործունեությունը կարգավորվում էր քրեական դատավարության օրենսգրքի երկու հոդվածներով, որի պայմաններով գործունեությունը կարգավորվում էր բավականին թերի՝ արդյունքում առաջացնելով անորոշություն բազմաթիվ առանցքային հարցերի կարգավորման առնչությամբ: ՄԻԵԴ–ը օրենքի բացակայության պայմաններում գաղտնալսում անցկացնելու մասին որոշման ընդունումը գնահատեց որպես անօրինական կարգով ընդունված որոշում, քանի որ նշված երկու հոդվածները չէին կարող ապահովել իրավական որոշակիություն: Հանրային վայրերում տեսողական դիտարկման միջոցով օպերատիվ–հետախուզական տվյալներ հավաքելու մասով ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածը կիրառելի է միայն այն դեպքում, երբ պետության գործողությունները չեն սահմանափակվում պարզ դիտարկմամբ և ներառում են նաև անհատների ակտիվ մոնիթորինգ (տե՛ս *Պեկն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2003 թ. հունվարի 28–ի վճիռը, գանգատ թիվ 44647/98, կետեր 57–63): Անձի ակտիվ մոնիթորինգը կարող է ներառել ձայնային և տեսագրողական դիտարկումը, որը նույնպես պետք է բավարարի 8–րդ հոդվածի 2–րդ մասի պահանջները: *Պերին ընդդեմ միացյալ Թագավորության* գործով ՄԻԵԴ–ը գտել է, որ ոստիկանության բաժին հասնելուց հետո գանգատաբերի գաղտնի տեսանկարահանումը «օրենքին համապատասխան» չի եղել, քանի որ ոստիկանությունը չի կատարել վարքագծի կանոնագրքով նախատեսված ընթացակարգերի պահանջները: Նույն վճռի համաձայն՝ անվտանգության տեսախցիկների ընթացիկ օգտագործումը ոստիկանության բաժինների նման տարածքներում, որտեղ դրանք իրավաչափ և կանխատեսելի նպատակների են ծառայում, ինքնին ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի առնչությամբ խնդիր չի առաջացնում, իրավիճակը տարբեր է, երբ դրանց օգտագործումը գերազանցում է անվտանգության տեսախցիկների սովորական կամ ակնկալվող օգտագործման շրջանակը, օրինակ, երբ ոստիկանները փորձում են անձի տեսանելի պատկերներ ստանալ վկաներին ցուցադրելու համար, և երբ գոյություն չունի ակնկալիք, որ

կասկածյալը տեսանկարահանվում է նույնականացման նպատակով (տես *Պերին ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2003 թ. սեպտեմբերի 25–ի վճիռը, գանգատ թիվ 63737/00, կետեր 44–49):

Քննության ընթացքում անձի բնակարան ֆիզիկապես մուտք գործելը՝ զննում կամ խուզարկություն իրականացնելու նպատակով համարվում է միջամտություն ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածով պաշտպանվող՝ անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի իրականացման նկատմամբ:

ՄԻԵԴ–ն անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի իմաստով «բնակարան» եզրույթը լայն է մեկնաբանում, ուստի ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածով պաշտպանություն է նախատեսվում նաև այլ վայրերի, օրինակ՝ բիզնեսի տարածքների խուզարկության դեպքում, եթե դրանցում գոյություն ունի «անձնականի հարգման խելամիտ ակնկալիքը»: *Պեևն ընդդեմ Բուլղարիայի* գործով խնդիրը վերաբերել է նրան, թե արդյոք գանգատաբերի՝ պետական մարմնի տարածքում գտնվող գրասենյակի խուզարկությունն առաջացրել է միջամտություն նրա անձնական կյանքի հարգման իրավունքի և բնակարանի անձեռնմխելիության հարգման իրավունքի նկատմամբ (տես *Պեևն ընդդեմ Բուլղարիայի* գործով 2007 թ. հուլիսի 26–ի վճիռը, գանգատ թիվ 64209/01, կետ 37): Դատարանը խնդիրը դիտարկեց *«անձնականի հարգման խելամիտ ակնկալիքի»* չափանիշով՝ համարելով, որ «գանգատաբերը նման ակնկալիք ուներ եթե ոչ ամբողջ գրասենյակի, այլ առնվազն իր գրասեղանի և պահարանի դարակների նկատմամբ: Ուստի, գանգատաբերի գրասեղանը և պահարանի դարակներն ընդգրկած խուզարկությունը պետք է համարել միջամտություն նրա անձնական կյանքին» (տես *Պեևի* գործը, կետ 39): Այսպիսով՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից անձի բնակարան կամ ժամանակավոր բնակության այլ վայր ֆիզիկապես մուտք գործելը միջամտություն է անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի նկատմամբ:

Ինչ վերաբերում է քննության ընթացքում փաստաթղթի կամ ապացույցի առգրավմանը, ապա դա նույնպես համարվում է միջամտություն անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ, ուստի

պետք է իրականացվի համարժեք երաշխիքներով, այն է՝ լինի «օրենքին համապատասխան», հետապնդի «իրավաչափ նպատակ» և «անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում»:

Հետևապես, ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի խախտումից խուսափելու համար պետք է ապահովեն, որպեսզի խուզարկությունը և առգրավումը կատարվեն չարաշահումից պաշտպանող համարժեք և արդյունավետ երաշխիքների ապահովմամբ (տես *Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի* գործով 1993 թ. փետրվարի 25–ի վճիռը, գանգատ թիվ 10828/84, կետ 56): Մասնավորապես խուզարկությունը կատարելու համար բավարար չէ, որ այն համապատասխանի ներպետական օրենսդրությանը: Խուզարկությունը պետք է նաև անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և համաչափ լինի հետապնդվող իրավաչափ նպատակին:

Նախ և առաջ, վարույթն իրականացնող մարմինները պետք է կատարեն միայն օրենքին համապատասխանող խուզարկություններ կամ առգրավումներ: Դա նշանակում է, որ խուզարկության յուրաքանչյուր դեպքի համար պետք է ստանալ դրա առարկան և շրջանակը սահմանազատող անհատական թույլտվություն (տես *Իմակաևան ընդդեմ Ռուսաստանի* գործով 2006 թ. նոյեմբերի 9–ի վճիռը, գանգատ թիվ 7615/02, կետ 188): Օրենք ասելով՝ պետք է հասկանալ նաև օրենքի որակը, մասնավորապես, թե արդյոք օրենքը տվյալ իրավահարաբերությունը կարգավորում է մանրամասնորեն: Օրինակ՝ արդյոք խուզարկության թույլտվություն ստանալու հիմքերը օրենքով սահմանված են հստակորեն և մանրամասնորեն, թե սահմանված են ընդհանրացված, անորոշ դրույթներով, որի պայմաններում դժվար է հասկանալ խուզարկության թույլտվություն հայցելու հիմքերը և պայմանները: Ուստի վարույթն իրականացնող մարմինները պարտավոր են խուզարկության թույլտվություն ստանալ նախքան խուզարկությունը կամ առգրավումը կատարելը, իսկ իրավասու մարմինները պարտավոր են «վերաբերելի և բավարար» հիմքեր ներկայացնել՝ նման սանկցիա տալու համար: Այսպես՝ *Սմիռնովն ընդդեմ Ռուսաստանի* գործով ՄԻԵԴ–ը, արձանագրելով ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի խախտում, նկատել է, որ «… խուզարկության սանկցիայի չափազանց լայն ձևակերպումները ոստիկանությանն ան-

սահմանափակ հայեցողություն էին վերապահում՝ որոշելու, թե որ փաստաթղթերն են «հետաքրքրություն ներկայացնում» քրեական քննության համար: Դրա հետևանքով իրականացվել էր լայնածավալ խուզարկություն և առգրավում: Առգրավված նյութերը չէին սահմանափակվել երկու մասնավոր ընկերությունների բիզնեսին առնչվող նյութերով: Հաշվի առնելով զննված և առգրավված նյութերը՝ ՄԻԵԴ–ն արձանագրել է, որ խուզարկությունը ոտնահարել է մասնագիտական գաղտնիքն այն աստիճան, որ անհամաչափ է եղել հետապնդվող իրավաչափ նպատակին, ինչպիսին էլ որ վերջինս լինի» (տես *Սմիռնովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2007 թ. հունիսի 7–ի վճիռը, գանգատ թիվ 71362/01, կետ 48): Նշված գործով դիմումատուն անձամբ չի մեղադրվել կամ կասկածվել որևէ հանցագործության կամ այլ ապօրինի գործունեության մեջ, սակայն նա եղել է քրեական գործով անցնող չորս անձանց ներկայացուցիչը: ՄԻԵԴ–ը նշել է, որ «որևէ քայլ չի ձեռնարկվել մասնագիտական գաղտնիքով պաշտպանվող արտոնյալ նյութերի անվտանգությունը երաշխավորելու ուղղությամբ»: Խուզարկության թույլտվությունը «կազմվել էր» խիստ ընդհանրական ձևակերպումներով՝ առանց տարբերակման հիշատակելով «բոլոր առարկաները և փաստաթղթերը, որոնք հետաքրքրություն կունենան քրեական գործի քննության համար՝ առանց որևէ սահմանափակման»: Ավելին՝ թույլտվությունը որևէ տեղեկություններ չէր պարունակում ընթացիկ քննության, խուզարկության նպատակի կամ այն մասին, թե ինչու էին կարծում, որ գանգատաբերի բնակարանի խուզարկությամբ կհայտնաբերվեն հանցագործության մասին վկայող ապացույցներ: Վերոգրյալի հիման վրա ՄԻԵԴ–ը գտել է, որ «ներպետական իշխանությունները չեն կատարել խուզարկության թույլտվություն տալու համար «վերաբերելի և բավարար» հիմքեր ներկայացնելու իրենց պարտականությունը» (*Սմիռնովի* գործը, կետեր 46–47):

Ինչ վերաբերում է այն հարցին թե կատարված խուզարկությունը կամ առգրավումը հետապնդել են իրավաչափ նպատակ և անհրաժեշտ են եղել ժողովրդավարական հասարակությունում, ապա այդ մեթոդների օգտագործման մասին որոշումը պետք է համաչափ լինի գործի կոնկրետ հանգամանքներում հետապնդվող իրավաչափ նպա-

տակին: Այսպես՝ *Բակն ընդդեմ Գերմանիայի* գործով դիմումատուն պնդել է, թե խուզարկությունը և առգրավումը չեն հետապնդել իրավաչափ նպատակ և իրականացվել են հապճեպ կերպով՝ առաջին դատական նիստից ընդամենը մեկ օր անց, և որ առգրավված փաստաթղթերը նշանակություն չեն ունեցել դատավճռում ապացույցների գնահատման համար: ՄԻԵԴ–ը, սակայն, համարել է, որ այն ժամանակվա ընկերության աշխատողների ինքնությունը բացահայտող փաստաթղթերի հայտնաբերման և առգրավման նպատակով տրված կարգադրությունը հետապնդել է ՄԻԵԿ–ին համահունչ նպատակներ, այն է՝ անկարգությունների կամ հանցագործությունների կանխումը և այլ անձանց իրավունքների ու ազատությունների, մասնավորապես ճանապարհների այլ օգտագործողների կյանքի և առողջության իրավունքների պաշտպանությունը (տես *Բակն ընդդեմ Գերմանիայի* գործով 2005 թ. ապրիլի 28–ի վճիռը, գանգատ թիվ 41604/98, կետեր 39, 41):

Ինչ վերաբերում է խուզարկության կատարման եղանակին, ապա տարածքի խուզարկությունը պետք է իրականացնել՝ խուսափելով հնարավոր չարաշահումներից և ապահովելով ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածով անձանց համար նախատեսված իրավունքների արդյունավետ պաշտպանությունը (*Կուչերան ընդդեմ Լեհաստանի,* 17.06.2007 թ., գանգատ թիվ 48666/99, կետ 122): Այսպիսով՝ խուզարկությունը չի կարող անհամաչափորեն ոտնահարել անձի անձնական կյանքը, ուստի խուզարկության միջոցներն ինքնին պետք է համաչափ լինեն:

«Անձնական կյանքի անձեռնմխելիություն» եզրույթը ներառում է նաև անձի ֆիզիկական և հոգեբանական ամբողջականությունը (*Ջիլիանը և Քվինտոն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2010 թ. հունվարի 12–ի վճիռը, գանգատ թիվ 4158/05, կետեր 61–66): Անձի ինքնուրույնության գաղափարը կարևոր հիմնարար սկզբունք է 8–րդ հոդվածով ընձեռված երաշխիքների մեկնաբանման համար (տես *Պրեթին ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2002 թ. ապրիլի 29–ի վճիռը, գանգատ թիվ 2346/02, կետ 61):

Անձի խուզարկությունը՝ ներառյալ ինտիմ խուզարկությունը, կարող է տեղավորվել 8–րդ հոդվածի շրջանակի մեջ, եթե այն ներառում է որո-

շակի աստիճանի հարկադրանք, քանի որ հոժարակամորեն խուզարկության ենթարկվելը միջամտություն չի հանդիսանա (տես *Ջիլիանի և Քվինտոնի* գործը, կետեր 61–66):

Անձի բնակարանի խուզարկության կամ անձի խուզարկության ընթացքում ուժի գործադրումը պետք է խիստ սահմանափակված լինի: Ավելորդ ուժի գործադրման դեպքում մեթոդը հավանաբար անհամաչափ կդառնա հետապնդվող իրավաչափ նպատակին՝ առաջացնելով ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի խախտում:

Ավելին՝ խուզարկության և առգրավման ընթացքում ուժի գործադրումը կարող է որոշ հանգամանքներում առաջացնել, ինչպես արդեն նշվել է, ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի (խոշտանգման և անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելք) խախտում: Ներպետական մարմինները պետք է ապահովեն, որ խուզարկությունը և առգրավումն իրականացվեն մարդու արժանապատվությանը համահունչ եղանակով՝ չմիջամտելով անձի ֆիզիկական կամ բարոյական ամբողջականությանը:

ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի և դրանց կապակցությամբ ՄԻԵԴ նախադեպերը լայնորեն կիրառվել են ՎԴ–ի կողմից առանձին գործերով բողոքներ քննելիս՝ ձևավորելով և զարգացնելով ներպետական նախադեպային իրավունքը: ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածին ՎԴ–ն անդրադարձել է՝ քննելով բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների առգրավման (տես Գ. Սարգսյանի վերաբերյալ 13.09.2013 թ. թիվ ԱՎԴ/0015/07/13 և Կ. Հարությունյանի վերաբերյալ 15.08.2014 թ. թիվ ԵԿԴ/0223/07/14 որոշումները), խուզարկություն կատարելը թույլատրելիս անձի՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի ապահովման և այլ հարցեր (տես Սեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի վերաբերյալ գործով 18.12.2015 թ. թիվ ԵՇԴ/0073/07/15 որոշումը), ձայնագրառման փորձաքննության եզրակացությունն անթույլատրելի ճանաչելու հարցերը (Մ. Մարգարյանի վերաբերյալ գործով 2012 թ. նոյեմբերի 1–ի թիվ ԵԿԴ/0081/01/11 որոշումը):

Բնակարանի խուզարկության վերաբերյալ վերոնշյալ ՄԻԵԴ–ի դիրքորոշումները դրվել են ՎԴ–ի Սեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաջար-

յանի վերաբերյալ 18.12.2015 թ. թիվ ԵՇԴ/0073/07/15 որոշման հիմքում: Այսպես՝ նշված գործով ՎԴ–ն գտել է, որ *«ՄԻԵԴ–ը ... անդրադառնալով ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի մեկնաբանությանը, կայուն նախադեպային պրակտիկա է ձևավորել առ այն, որ անձի՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքին միջամտությունը ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի 2–րդ մասի տեսանկյունից պետք է լինի արդարացված, այսինքն՝*

– պետք է կատարվի «օրենքին համապատասխան»,

– հետապնդի Կոնվենցիայի 8–րդ հոդվածի 2–րդ մասում ամրագրված մեկ կամ մի քանի օրինական նպատակ,

– այդ նպատակներին հասնելը պետք է լինի «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում» (տե՛ս ի թիվս այլնի, Սմիռնովն ընդդեմ Ռուսաստանի գործով 2007 թվականի հունիսի 7–ի վճիռը, գանգատ թիվ 71362/01, կետ 37, Կոլեսնիչենկոն ընդդեմ Ռուսաստանի գործով 2009 թվականի ապրիլի 9–ի վճիռը, գանգատ թիվ 19856/04, կետ 30):

ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքի համաձայն՝ «անհրաժեշտություն» հասկացությունը ենթադրում է, որ միջամտությունը համապատասխանում է անհետաձգելի հասարակական պահանջին և համաչափ է հետապնդվող նպատակին: Միջամտության՝ «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» լինելը գնահատելիս Եվրոպական դատարանը հաշվի է առնում, որ հայեցողության որոշակի շրջանակ թողնված է Պետություններին: Այնուամենայնիվ, Կոնվենցիայի 8–րդ հոդվածի 2–րդ մասում նախատեսված բացառությունները պետք է նեղ մեկնաբանվեն և դրանց անհրաժեշտությունը կոնկրետ գործով պետք է համոզիչ կերպով հաստատվի: Մասնավորապես բնակարանի խուզարկության առնչությամբ Եվրոպական դատարանը գնահատում է՝ արդյոք այդ միջոցի կիրառման անհրաժեշտության համար ներկայացված հիմքերը եղել են «վերաբերելի» և «բավարար», և արդյոք վերոնշյալ համաչափության սկզբունքը պահպանված է: Վերջինիս կապակցությամբ Եվրոպական դատարանը նախ պարզում է՝ արդյոք համապատասխան օրենսդրությունը և պրակտիկան անձանց տրամադրում են համարժեք և արդյունավետ երաշխիքներ չարաշահումների դեմ, այնուհետև հաշվի է առնում գործի կոնկրետ հանգամանքները՝ պարզելու համար

արդյոք միջամտությունը եղել է համաչափ հետապնդվող նպատակին (տե՛ս Սմիռնովն ընդդեմ Ռուսաստանի գործով 2007 թվականի հունիսի 7–ի վճիռը, գանգատ թիվ 71362/01, կետեր 43–44): Որպես վերջին հանգամանքի գնահատման չափանիշ՝ Եվրոպական դատարանը, ի թիվս այլնի, հիմք է ընդունում այն հանցագործության ծանրությունը, որի կապակցությամբ խուզարկությունը կատարվում է, թույլտվությունը տալու կարգը և հանգամանքները, մասնավորապես այդ պահին հավելյալ ապացույցների առկայությունը, թույլտվության բովանդակությունը և սահմանները՝ հատուկ ուշադրություն դարձնելով խուզարկվող բնակարանի բնույթին և այն երաշխիքներին, որոնք կիրառվել են միջամտության ազդեցությունը ողջամտորեն սահմանափակելու համար (տե՛ս Բաքն ընդդեմ Գերմանիայի գործով 2005 թվականի ապրիլի 28–ի վճիռը, գանգատ թիվ 41604/98, կետ 45)» (տե՛ս *Ս. Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի* վերաբերյալ գործով 2015 թ. դեկտեմբերի 18–ի թիվ ԵՇԴ/0073/07/15 որոշումը, կետ 20):

Նշված որոշմամբ ՎԴ–ն, շարունակելով միջազգային և ներպետական իրավական կարգավորման վերլուծությունը, անդրադառնալով խուզարկության կատարման իրավական և փաստական խնդիրներին, համադրելով դրանք գործի փաստական հանգամանքների հետ, արձանագրել.

«– Քննիչի միջնորդության մեջ որպես խուզարկության փաստական հիմք վկայակոչվել է միայն Շենգավիթի բաժնից ստացված գրությունն այն մասին, որ նույն բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ հնարավոր է հափշտակված ոսկյա զարդերը թաքցված լինեն Սեպուհ Թադևոսյանին պատկանող բնակարանում:

– Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ վկայակոչել է գրությունը և դրա հիման վրա եզրահանգել, որ հնարավոր է, որ Սեպուհ Թադևոսյանի բնակարանում և օժանդակ կառույցներում խուզարկությամբ հայտնաբերվեն ոսկյա զարդերը՝ բավարարելով քննիչի միջնորդությունը:

– Վերաքննիչ դատարանն էլ իր հերթին գտել է, որ քննիչն իր որոշ-

մամբ ներկայացրել է խուզարկություն կատարելու անհրաժեշտության վերաբերյալ համապատասխան հիմնավորումներ, իսկ Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության:

Վերոգրյալից հետևում է, որ ստորադաս դատարանները որպես խուզարկություն կատարելու թույլտվություն տալու հիմք են դիտարկել միայն Շենգավիթի բաժնից ստացված վերոնշյալ գրությունը՝ առանց գնահատման ենթարկելու դրանում առկա տվյալները: Այսպես ստորադաս դատարաններն անտեսել են հանգամանքներն առ այն, որ օպերատիվ տեղեկությունների ձեռքբերումը դասվում է այն օպերատիվ–հետախուզական միջոցառումների շարքին, որոնք ընդգրկված չեն նախնական դատական վերահսկողության օբյեկտների շրջանակում, դրա արդյունքն ամրագրված է միայն փաստաթղթային ձևով, աղբյուրը բացահայտված չէ: Գործի նյութերում առկա չեն այլ հանգամանքներ, որոնք հնարավորություն կտան գնահատելու այդ տվյալը, ինչպես նաև բացակայում են այլ տվյալներ, որոնց հետ համակցությամբ քննարկվող օպերատիվ տվյալը կարող էր հիմք հանդիսանալ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու համար: Նման պայմաններում՝ միայն վկայակոչված օպերատիվ տվյալի հիման վրա խուզարկություն կատարելու թույլտվություն տալը բովանդակազրկել է քննարկվող քննչական գործողության նկատմամբ դատական վերահսկողության էությունը, այն դարձել է ձևական, իսկ անձի՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը՝ վերացական և պատրանքային, ինչն անթույլատրելի է» (տես Ս. Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի վերաբերյալ գործով որոշում, կետեր 27–27.1):

§ 3. Ապացույցն անթույլատրելի ճանաչելու դատավարական կարգը և հետևանքները

Հիմնարար դրույթներ

- Ապացույցների ձեռքբերման գործընթացում էական են այն խախտումները, որոնք դրսևորվել են մարդու և քաղաքացու սահմա-

նադրական իրավունքների և ազատությունների խախտմամբ, կամ օրենքով երաշխավորված այլ իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ, որոնք կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

- Փաստական տվյալի՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը կարող է հաստատվել՝ այդ մասին համապատասխան հետևությունները, քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման մեջ պարզապես ներառելով:
- Դատարանը փաստական տվյալի՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիության հարցին, հետևաբար այդպիսի որոշում կայացնելուն չի կարող անդրադառնալ դատական քննության նախապատրաստական փուլում կայացվող յոթ որոշումներից և ոչ մեկի շրջանակներում:

ՔԴՕ–ի 105–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ «Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա»:

2015 թ. դեկտեմբերի 6–ի փոփոխություններով գործող ՀՀ Սահմանադրության 63–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ «Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է»:

ՀՀ Սահմանադրության վկայակոչված նորմը, կարծում ենք, հետայսու հնարավորություն է տալիս պնդելու, որ օրենքով սահմանված կարգի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման հնարավորությունն առավելապես կապված է թույլ տված խախտումների հետևանքները վերացնելու հնարավորության հետ, քանի որ հիմնական իրավունքների, այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքի

խախտումը չի կարող վերացվել այլ միջոցներով, հետևաբար այդպիսի խախտմամբ ձեռք բերված ապացույցն անթույլատրելի է ձեռք բերելու պահից:

«Մարդու հիմնական իրավունքներ» ասելով՝ այս դեպքում պետք է հասկանալ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ կողմից վավերացված և ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող միջազգային իրավական ակտերով սահմանված մարդու իրավունքների և ազատությունների (օրինակ՝ անձի անձնական անձեռնմխելիության, անձնական և ընտանեկան կյանքի և բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտումը, իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ ցուցմունք չտալու իրավունքը և այլն), ինչպես նաև ուղղակի արգելքների խախտումները (օրինակ՝ ՄԻԵԿ–ի 3–րդ, 5–րդ, 8–րդ հոդվածներ և այլն), քրեական դատավարության սկզբունքների խախտումները, օրինակ՝ անձի անձեռնմխելիության, բնակարանի անձեռնմխելիության, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության, քրեական դատավարության լեզվի կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի և դրա ապահովման ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու և այլն:

Ապացույցներ ձեռք բերելիս քրեադատավարական օրենքի էական խախտումների կոնկրետ օրինակներ է պարունակում ՎԴ նախադեպային պրակտիկան:

Այսպես՝ Մելինե Մարգարյանի վերաբերյալ գործով 2012 թ. նոյեմբերի 1–ի թիվ ԵԿԴ/0081/01/11 որոշմամբ ՎԴ–ն քրեադատավարական օրենքի էական խախտմամբ, հետևաբար և անթույլատրելի ապացույցներ է համարել անհատի կողմից կատարված ձայնագրառման սկավառակը և սկավառակում առկա խոսակցությունը վերծանող փորձաքննության եզրակացությունը՝ նշելով, որ «*խոսակցությունների լսման և ձայնագրառման միջնորդություն դատարան չի ներկայացվել, դատարանը համապատասխան որոշում չի կայացրել: Լազերային սկավառակը վարույթն իրականացնող մարմնին է ներկայացրել անհատը, ով հայտնել է, որ ձայնագրառումը կատարվել է իր ամուսնու կողմից: Այսինքն՝ նշված*

փաստական տվյալը ձեռք է բերվել տվյալ քրեական գործով քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի կողմից, անձանց հաղորդակցվելու ձայնագրառման քրեադատավարական կարգի էական խախտմամբ:

Նշվածը հիմք է տալիս պնդելու, որ փորձագետի եզրակացությունը թույլատրելի ապացույց չէ, քանի որ եզրակացության հիմքում ընկած փաստական տվյալը՝ լազերային սկավառակի բովանդակությունը կազմող տեղեկատվությունը, ձեռք է բերվել օրենքի պահանջների խախտմամբ, իսկ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման սահմանադրական արգելքը վերաբերում է նաև դրանցից բխող ապացույցներին»:

Արմեն Սարգսյանի վերաբերյալ գործով 2009 թ. սեպտեմբերի 16–ի թիվ ԵՔՐԴ/0295/01/08 որոշմամբ ՎԴ–ն համաձայնել է ստորադաս դատարանի հետևությանն այն մասին, որ անձին ձեռնաշղթայով ճանաչման ներկայացնելը հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221–րդ հոդվածի 3–րդ մասի պահանջներին (ճանաչման ենթակա անձը ներկայացվում է ճանաչողին նույն սեռի և արտաքինով ու հագուստով ճանաչվողին հնարավորին չափ նման առնվազն երեք այլ անձանց հետ), հետևաբար այդ պայմաններում կատարված ճանաչման արդյունքներով կազմված արձանագրությունն անթույլատրելի ապացույց է՝ քննչական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված լինելու հիմքով:

Միաժամանակ նույն որոշմամբ ՎԴ–ն որպես անթույլատրելի ապացույց է գնահատել քննչական գործողության կատարման կարգի էական խախտմամբ կատարված ճանաչումից հետո ճանաչողի կողմից տրված ցուցմունքը՝ գտնելով, որ ճանաչման արձանագրությունը որպես անթույլատրելի ապացույց ճանաչելու պարագայում ճանաչման ներկայացնելուց հետո ճանաչողի տված ցուցմունքը չէր կարող որպես ապացույց օգտագործվել և դրվել անձի մեղադրանքի հիմքում, քանի որ ճանաչողի ցուցմունքի բովանդակությունն «*ամբողջությամբ հիմնված է եղել անթույլատրելի ճանաչված քննչական գործողության տվյալների վրա,*

իսկ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման սահմանադրական արգելքը վերաբերում է նաև դրանցից բխող ապացույցներին»:

Նաիրա Գելաշվիլու վերաբերյալ գործով 2007 թ. մայիսի 4–ի թիվ ՎԲ–72/07 որոշմամբ արձանագրելով, որ Ն. Գելաշվիլուն ձերբակալելիս, որպես կասկածյալ և մեղադրյալ հարցաքննելիս, քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից Ն. Գելաշվիլուն չի բացատրվել օրենքով հանձնման ենթակա դատավարական փաստաթղթերը՝ կասկածյալի և մեղադրյալի իրավունքների մասին գրավոր ծանուցումը և պարզաբանումը, ձերբակալման արձանագրության պատճենը, որպես մեղադրյալներ գրավելու որոշման պատճենը, իրեն հասկանալի լեզվով ստանալու իրավունքը՝ փաստելով, որ որպես թարգմանիչներ ներգրավված թարգմանիչների կողմից գրավոր թարգմանություն չի իրականացվել, և կասկածյալի ու մեղադրյալի կարգավիճակում գտնվող Նաիրա Գելաշվիլուն հանձնված բոլոր փաստաթղթերը կազմված են եղել հայերենով, ՎԴ–ն եկել է այն հետևության, որ նախաքննության ընթացքում թույլ է տրվել քրեադատավարական օրենքի՝ ՔԴՕ–ի 105–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետով նախատեսված էական խախտում (քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում դրվել և որպես ապացույց են օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքների՝ ՔԴՕ–ով նախատեսված լրացուցիչ երաշխիքների էական խախտմամբ), քանի որ «*նախաքննություն իրականացնող մարմինը չի ապահովել դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալի իրավունքների իրականացման լրացուցիչ երաշխիքները և չի պահպանել այդ սկզբունքի իրականացման համար էական նշանակություն ունեցող իմպերատիվ պահանջը, այն է՝ հանձնման ենթակա փաստաթղթերի վավերացված պատճենները չեն հանձնվել Նաիրա Գելաշվիլուն այն լեզվով, որին նա տիրապետում է, բացի այդ՝ գործի նյութերի ծանոթացմանը թարգմանիչ չի մասնակցել*»:

Ապացույցներ ձեռք բերելիս քրեադատավարական օրենքի խախտումներն իբրև էական կամ ոչ էական համարելու հարցում հստակություն մտցրեց Սարիբեկ Հարությունյանի վերաբերյալ գործով ՎԴ–ի՝

2014 թ. մայիսի 31–ի թիվ ԵԱՔԴ/0189/01/12 որոշումը, որի համաձայն՝ «*Ապացույցների ձեռքբերման գործընթացում էական չեն կարող համարվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի այն խախտումները, որոնցով չեն սահմանափակվել դատավարության մասնակիցների՝ օրենքով երաշխավորված իրավունքները կամ այդ իրավունքներից նրանք չեն զրկվել, ինչպես նաև այն խախտումները, որոնք ստացված փաստական տվյալների հավաստիության վրա չեն ազդել կամ չէին կարող ազդել: Այլ խոսքով՝ քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման ժամանակ թույլ տրված քրեադատավարական օրենսդրության խախտումները պետք է գնահատվեն՝ ելնելով դրանց բնույթից, ծանրությունից և վերոնշյալ գործողությունների արդյունքում ստացված ապացուցողական նյութի որակի և հավաստիության վրա դրանց ազդեցության աստիճանից: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապացույցն անթույլատրելի ճանաչելը՝ որպես իրավական հետևանք, պետք է տեղի ունենա միայն քրեադատավարական օրենսդրության էական խախտման առկայության պարագայում: Հակառակ դեպքում ապացույցների թույլատրելիության հարցին կցուցաբերվի ձևական մոտեցում, ինչն էլ կհանգեցնի ապացուցողական նյութի անտեղի կորստի*»:

Նշվածին համապատասխան՝ իբրև ոչ էական խախտում են գնահատման ենթակա, օրինակ, այն դեպքերը, երբ կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության արձանագրության, խուզարկության և առգրավման արձանագրության մեջ չի նշվում դրա կատարման տեղը կամ ժամանակը, քննչական գործողության արձանագրության մեջ դրա մասնակցի վերաբերյալ տվյալներում առկա են բացթողումներ և անճշտություններ, բացակայում են օգտագործված տեխնիկական միջոցների մասին տեղեկությունները:

ՔԴՕ–ի 121–րդ հոդվածի 4–րդ մասի համաձայն՝ «Քննչական գործողության արձանագրության ոչ լրիվությունը չի կարող մեղադրանքի նպատակներով լրացվել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, ինչպես նաև ընթերակայի և այլ անձանց ցուցմունքներով»:

Միաժամանակ ՔԴՕ–ի 105–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ «Մեղադրանքի կողմի թույլ տված քրեադատավարական օրենքի խախտման հետևանքով ապացուցողական նշանակությունը կորցնելու ենթակա նյութը պաշտպանության կողմի միջնորդությամբ կարող է թույլատրվել որպես ապացույց: Այդպիսի ապացույցը թույլատրվում է միայն համապատասխան կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ»:

Վերոգրյալից հետևում է, որ ՔԴՕ–ն չի նախատեսում հնարավորություն՝ շտկելու թեկուզև ոչ էական այն խախտումները, որոնց թույլ տրմամբ ձեռք են բերվել մեղադրող ապացույցներ, փոխարենը, վկայակոչված 105–րդ հոդվածի 3–րդ մասի ուժով դատավարական օրենքը հնարավորություն է ընձեռում պաշտպանության կողմի միջնորդությամբ թույլատրելի համարել արդարացնող ապացույցը, այն էլ՝ առանց որևէ լրացուցիչ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտության:

Վերոգրյալ մոտեցման արդարացիությունը հիմնավորվում է նրանով, որ մեղադրյալը պատասխանատու չէ քննիչի սխալների համար, որի հետևանքով վտանգվել է արդարացնող ապացույցը, և հաշվի առնելով, որ պաշտպանության կողմը զրկված է մեղադրանքի կողմի հետ հավասար ապացույց հավաքելու իրավունքից, ապացույց հավաքելու ընթացքում թույլ տրված խախտումների համար նրա նկատմամբ սանկցիաների կիրառումը չի կարելի իրավաչափ համարել:

Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործման սահմանադրական և քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգի էական խախտմամբ ձեռք բերված ապացույցն օգտագործելու դատավարական արգելքը տարածվում է քրեական դատավարության բոլոր փուլերի վրա՝ սկսած քրեական գործի հարուցումից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Նախնական քննության փուլում կայացվող այնպիսի որոշումների հիմքում, ինչպիսիք են որպես մեղադրյալ ներգրավելու, խափանման միջոց կիրառելու, տուժող, քաղ. հայցվոր, քաղ. պատասխանող ճանաչելու մասին որոշումները, պետք է ընկած լինեն բացառապես թույլատրելի ապացույցներ: Սրանով էլ պայ-

մանավորված է ձեռք բերված ապացույցներն անթույլատրելի ճանաչելու դատավարական կարգի հստակ սահմանման անհրաժեշտությունը:

Թեև ՔԴՕ–ն ապացույցներն անթույլատրելի ճանաչելու դատավարական կարգին առանձին հոդված է նվիրել, սակայն առկա է պրակտիկ մեծ նշանակություն ունեցող հարց, որը դեռևս շարունակում է մնալ չկարգավորված: Այսպես՝ ՔԴՕ–ի 106–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Փաստական տվյալների՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը, ինչպես նաև վարույթում դրանց սահմանափակ օգտագործման հնարավորությունը հաստատում է վարույթն իրականացնող մարմինը՝ սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ»:

Նշված հոդվածից, սակայն, պարզ չէ, թե մասնավորապես, փաստական տվյալի՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը արդյոք պետք է դրսևորվի այդ մասին համապատասխան որոշման կայացմամբ, թե վարույթն իրականացնող մարմինը պարզապես պետք է բավարարվի նշված ապացույցը որևէ հանգամանք հաստատված համարելու հիմքում չդնելով:

Իրավակիրառ պրակտիկայում հաճախ են հանդիպել դեպքեր, երբ հիշյալ հոդվածի հիմքով վարույթն իրականացնող մարմինը կայացրել է որոշում՝ փաստական տվյալի՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը հաստատելու մասին: Մինչդեռ այդպիսի որոշում կայացնելու իրավաչափությունը անվերապահորեն ընդունելի չէ: Այսպես՝ որոշում կայացնելուց առաջ հետաքննության մարմինը, գերակշիռ դեպքերում՝ քննիչը, պետք է վերլուծի, թե արդյոք հատկապես «որոշում» դատավարական ակտը կայացնելը չի սահմանափակում նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի՝ որպես ապացույցի գնահատման ինքնուրույն սուբյեկտի իրավունքը՝ նման որոշման հետ անհամաձայնության դեպքում օգտագործելու նշված փաստական տվյալը որպես ապացույց:

ՔԴՕ–ի 53–րդ հոդվածի 2–րդ մասի 12–րդ կետի համաձայն՝ «Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է

վերացնել հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը քրեական գործով վարույթը կարճելու մասին, ինչպես նաև նրանց այլ որոշումներ՝ **սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:**

Փաստական տվյալի՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը հաստատելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը վերացնելու լիազորություն ՔԴՕ–ն դատախազի համար չի նախատեսում, հիշյալ որոշումը փոփոխելու դատախազական ներգործության որևէ եղանակ կամ միջոց դատավարական օրենքով սահմանված չէ, որպիսի պայմաններում դատախազը նշված որոշման փաստական հիմնավորումների հետ համաձայն չլինելու դեպքում զրկվում է կոնկրետ փաստական տվյալը և՛ նախաքննության, և՛ դատաքննության ընթացքում որպես ապացույց օգտագործելու հնարավորությունից՝ չնայած նրան, որ դատախազը ապացույցի գնահատման ինքնուրույն և, ինչպես վերը նշվեց, վերջնական սուբյեկտն է մինչդատական վարույթում: Փաստորեն, փաստական տվյալի՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը հաստատելու մասին որոշումը զրկում է դատախազին՝ օրենքով նախատեսված դատավարական լիազորությունը (ապացույցի գնահատում և օգտագործում) իրացնելու հնարավորությունից, ինչն ակնհայտորեն հակասում է նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում, դատարանում մեղադրանքի պաշտպանություն իրականացնելու դատախազական բացառիկ լիազորությունների իմաստին և իրականացման տրամաբանությանը:

Վերը նշվածի հաշվառմամբ, հիմնավոր է թվում այն, որ փաստական տվյալի՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը կարող է հաստատվել այդ մասին համապատասխան հետևությունները, քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման մեջ պարզապես ներառելով, իսկ մեղադրական եզրակացությամբ գործը դատախազին ուղարկելու պարագայում կոնկրետ փաստական տվյալի՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը կարող է հաստատվել՝ այդ փաստական տվյալը որպես ապացույց մեղադրական եզրակացությունում չզետեղելով:

Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի վերաբերյալ գործով 2011 թ. դեկտեմբերի 22–ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշմամբ ՎԴ–ն արձանագրել է,

որ «*Քրեական դատավարության փուլային համակարգում հիմնական և վճռորոշ փուլը դատական քննությունն է: Դատական քննության փուլում են հետազոտվում մեղադրանքի հիմքում դրված ապացույցները և ըստ էության այդ փուլում են պատասխան տրվում քրեական գործի հիմնական՝ ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցին:*

Դատական քննությունը՝ որպես քրեական դատավարության կենտրոնական փուլ, իրենից ներկայացնում է դատավարական (դատական) գործողությունների կատարման և որոշումների կայացման բարդ համակարգ, որոնք իրականացվում են քրեադատավարական օրենքով ամրագրված իրավական կանոններին համապատասխան: Նշված կանոններն իրենց ամբողջության մեջ կազմում են դատական քննության ընդհանուր պայմանները և պարտադիր են դատական քննության ողջ ընթացքում: Վերոնշյալ պայմանների նախատեսումը նպատակ է հետապնդում ապահովելու քրեական դատավարության բոլոր սկզբունքների կենսագործումը՝ դրանով իսկ հասնելով արդար դատական քննության հիմնարար արժեքի անխափան իրագործմանը»:

Վերոգրյալից հետևում է, որ դատարանն է այն վերջնական սուբյեկտը, որը, հանդես չգալով մեղադրանքի կամ պաշտպանության կողմերում և արտահայտելով միայն իրավունքի շահերը, կոչված է վերջնական գնահատական տալու ներկայացված ապացույցներին՝ հանգելով ամբաստանյալի անմեղության կամ մեղավորության մասին հիմնավոր հետևության:

Նշվածից բխում է, որ, ի տարբերություն նախնական քննության փուլի, երբ փաստական տվյալի՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը որոշման կայացմամբ հաստատելը վերը բերված պատճառաբանություններով իրավաչափ չէ, դատական քննության փուլում, ճիշտ հակառակը, պետք է կայացվի այդպիսի որոշում, քանի որ.

ա. այն կանխորոշում է կողմերի՝ մրցակցության բոլոր դատավարական կանոնների պահպանմամբ իրենց դատավարական լիազորությունները իրականացնելու ծավալը,

բ. կողմերին հնարավորություն է տալիս ճիշտ կողմնորոշվելու դատավարական մարտավարությունն ընտրելիս ու շարունակելիս,

գ. դատարանը, ինչպես վերը նշվեց, ապացույցները գնահատող միակ և վերջնական սուբյեկտն է գործով դատական քննության փուլում, հետևաբար նման որոշում կայացնելը չի կարող անհամաչափ սահմանափակել կողմերի դատավարական լիազորությունների իրականացումը:

ՔԴՕ–ի 292–րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետազոտում է գործի նյութերը և քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում հետևյալ որոշումներից մեկը.

1) Դատական քննություն նշանակելու մասին.

2) Քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին.

3) Քրեական գործի վարույթը կասեցնելու մասին.

4) Գործը մեղադրողին վերադարձնելու մասին.

5) Քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին.

6) Գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին.

7) Ինքնաբացարկի մասին»:

Դատավարական օրենքի 293–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Դատարանը որոշում է կայացնում դատական քննություն նշանակելու մասին, եթե քրեական գործի նյութերում բացակայում են վարույթը կարճելու մասին հանգամանքները, ինչպես նաև մինչդատական վարույթը կատարված է առանց քրեադատավարական օրենքի էական խախտումների», 296–րդ հոդվածի 1–ին մասը սահմանում է, որ «գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշում դատավորը կայացնում է այն դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին, կամ արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկարագրությանը կամ չի բխում գործում առկա ապացույցներից», իսկ 297–րդ հոդվածի համաձայն՝ «անհրաժեշտ դատավարական գործողություններ կատարելու համար քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին որոշում դատավորը կայացնում է այն դեպքում, երբ հետաքննության և նախաքննության մարմինների կողմից թույլ են տրվել քրեադա-

տավարական օրենքի էական խախտումներ, որոնք չեն կարող վերացվել դատական քննության ընթացքում»:

ՔԴՕ–ի վկայակոչված իրավանորմերի համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ դատական քննության նախապատրաստական փուլում դատարանը փաստական տվյալի՝ որպես ապացույց հետագա օգտագործման անհնարինությունը հաստատելու հարցին կարող էր անդրադառնալ գործը դատական քննության նշանակելու, մեղադրողին կամ լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին որոշում կայացնելիս, մինչդեռ.

1. 2007 թ. հուլիսի 14–ի թիվ ՍԴՈ–710 և 2015 թ. հունիսի 9–ի թիվ ՍԴՈ–1213 որոշումներով ՀՀ Սահմանադրական դատարանը հակասահմանադրական և անվավեր է ճանաչել համապատասխանաբար՝ դատավարական օրենքի 297–րդ հոդվածը և 293–րդ հոդվածի 1–ին մասի «ինչպես նաև մինչդատական վարույթը կատարված է առանց քրեադատավարական օրենքի էական խախտումների» դրույթը:

2. Արդեն իսկ վկայակոչված՝ Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի վերաբերյալ գործով 2011 թ. դեկտեմբերի 22–ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշմամբ ՎԴ–ն արձանագրել է, որ «*Գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանը, պարզելով, որ արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկարագրությանը կամ չի բխում գործում առկա ապացույցներից, իրավասու չէ որոշում կայացնել գործը մեղադրողին վերադարձնելու մասին՝ առաջարկելով վերջինիս փոփոխել կամ լրացնել առաջադրված մեղադրանքը: Վճռաբեկ դատարանի կարծիքով գործը դատական քննության նախապատրաստելիս առաջադրված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու առաջարկով գործը մեղադրողին վերադարձնելը ոչ այլ ինչ է, քան մինչև գործի ըստ էության լուծումը տվյալ վարույթի հանգուցային հարցերի վերաբերյալ դատարանի սուբյեկտիվ դիրքորոշման արտահայտում: Ուստի, եթե առաջադրված մեղադրանքը փոփոխվի այս ինստիտուտի կիրարկմամբ և արարքին դատարանի նախաձեռնությամբ տրված նոր որակմամբ մեղադրական դատավճիռ կայացվի, ապա դատապարտյալն օբյեկտիվ հիմքեր կունենա պնդելու, որ գործը մեղադրողին վերա-*

դարձնելու պահից (նախքան դատավճռի կայացումը) դատարանն իր նկատմամբ որոշակի նախապրամադրվածություն է ունեցել:

Այս դեպքում ստացվում է այնպես, որ դատարանն առանց պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ապացույցների հետազոտման դրանց նախապես տալիս է հաստատված ապացույցի ուժ: Մինչդեռ մինչդատական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները դատարանի համար ունեն նախնական և օժանդակ նշանակություն, ուստի առանց պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտման՝ դրանց չի կարող հաստատված ապացույցի ուժ տրվել:

Հետևաբար մեղադրողին առաջարկելով փոփոխել կամ լրացնել առաջադրված մեղադրանքը՝ դատարանը դուրս է գալիս անկողմնակալության սկզբունքի շրջանակներից և ուղղորդում է մեղադրողին՝ իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի գործողություններ: Դատարանը խախտում է նաև կողմերի միջև հավասարության սկզբունքն ի շահ մեղադրող կողմի, արդյունքում տեղի է ունենում քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված մրցակցության սկզբունքի խախտում: Դատարանի կողմից նման որոշման կայացումն անհամատեղելի է նաև նշված իրավական ակտերով ամրագրված անմեղության կանխավարկածի հետ: Նման դատական ակտի կայացմամբ, ըստ էության, շրջանցվում է միջազգային իրավունքում համընդհանուր ճանաչում ստացած՝ «կասկածը մեկնաբանվում է հօգուտ մեղադրյալի» (in dubio pro reo) կանոնը»:

Վերոգրյալից հետևում է, որ դատարանը փաստական տվյալի՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիության հարցին, հետևաբար այդպիսի որոշում կայացնելուն չի կարող անդրադառնալ դատական քննության նախապատրաստական փուլում կայացվող հիշյալ յոթ որոշումներից և ոչ մեկի շրջանակներում:

Բաժին 3. Օպերատիվ–հետախուզական գործունեության արդյունքների օգտագործումը ՀՀ քրեական դատավարությունում

§ 1. ՕՀԳ արդյունքների և ապացույցների հարաբերակցությունը:

§ 2. Հանցագործության սադրանքը՝ որպես ՕՀԳ արդյունքների հավաստիության և թույլատրելիության վրա ազդող ինքնուրույն հանգամանք:

§ 3. Պետական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործումը:

Ուսումնական նպատակները

Այս մասն ուսումնասիրելով՝ ընթերցողը.

– կընդլայնի գիտելիքները օպերատիվ–հետախուզական գործունեության էության և նպատակի վերաբերյալ,

– կըմբռնի օպերատիվ–հետախուզական գործողությունների հիման վրա ապացույցների ձևավորման գործընթացը,

– կբացահայտի «Հանցագործության սադրանքի» բովանդակությունը ու հատկանիշները՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումների,

– կբացահայտի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումներով ձևավորված «զգալիորեն պասիվ ձևով քննության» չափանիշի բովանդակությունը և դերը հանցագործությունների սադրանքի հարցը քննարկելիս,

– կպատկերացնի ՀՀ քրեական դատավարությունում պետական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործման հետ կապված հնարավոր բարդությունները:

§ 1. ՕՀԳ արդյունքների և ապացույցների հարաբերակցությունը

Հիմնարար դրույթներ

- Հանցագործության բացահայտմանն ուղղված օպերատիվ–հետախուզական գործունեությունը ապացուցման գործընթացին օժանդակող և շատ դեպքերում այդ գործընթացն ուղղորդող գործունեության տեսակ է:
- ՕՀԳ արդյունքները համապատասխանում են ապացույցներին ներկայացվող՝ վերաբերելիության պահանջին:

«Օպերատիվ–հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետը որպես օպերատիվ–հետախուզական գործունեության նպատակ է հռչակում հանցագործությունների հայտնաբերումը, բացահայտումը, կանխումը և խափանումը:

Ակնհայտ է, որ վերը նշված նպատակն արդեն իսկ փաստում է օպերատիվ–հետախուզական գործունեության սերտ կապը քրեական դատավարությունում ապացուցման գործընթացի հետ, քանզի ակնհայտ է, որ հանցագործությունը կարող է բացահայտված համարվել, եթե ապացուցված են հանցագործության՝ էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները:

Փաստելով հանդերձ, որ քրեական դատավարությունում ապացուցման գործընթացը և այդ ապացուցմանն ուղղված օպերատիվ–հետախուզական գործունեությունը սերտորեն կապակցված են, այնուամենայնիվ, անհրաժեշտ է արձանագրել, որ դրանք ամենևին չեն նույնանում, այլ խոսքով՝ ապացուցումը չի կարող նշանակել օպերատիվ–հետախուզական գործունեության իրականացում՝ հանցագործությունը բացահայտելու համար:

Այսպես՝ արդեն իսկ վերը վկայակոչված ՔԴՕ–ի 104–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պար-

զում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ», իսկ 124–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Ապացուցումը գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է»:

Դատավարական օրենքի 104–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարության ընթացքում թույլատրվում է օգտագործել միայն այն փաստական տվյալները, որոնք ձեռք են բերվել սույն օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ»:

Վերը նշված հոդվածների վկայակոչված մասերի համադրումից ուղղակիորեն բխում է, որ փաստական տվյալները որպես ապացույց են գնահատվում այն դեպքում, երբ ձեռք են բերվել ՔԴՕ–ով սահմանված պահանջների պահպանմամբ, իսկ փաստական տվյալների հավաքումը, ստուգումը և գնահատումը իր հերթին համարվում է ապացուցում, եթե հավաքվել, ստուգվել և գնահատվել են բացառապես ՔԴՕ–ով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալներ:

Ակնհայտ է, որ դատավարական օրենքի 104–րդ հոդվածի 3–րդ մասում «սույն օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ» եզրույթն օգտագործելով՝ օրենսդիրը նկատի է ունենում ապացույցներ ձեռք բերելիս օրենքով նախատեսված դատավարական պահանջների պահպանվածությունը, որն, իր հերթին, համաձայն Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի վերաբերյալ գործով ՎԴ–ի 2014 թ. հոկտեմբերի 31–ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման, «ապացույցի թույլատրելիություն» հասկացության էությունն է կազմում:

Արդեն իսկ վերը նշվել է, որ, համաձայն ՎԴ–ի վկայակոչված որոշման, ապացույցի թույլատրելիությունը ենթադրում է.

– *աղբյուրի օրինականություն*. ապացույցը պետք է ձեռք բերվի միայն օրենքով սահմանված աղբյուրներից (ՔԴՕ–ի 104–րդ հոդվածի 2–րդ մաս),

– *ձեռքբերման միջոցների օրինականություն*. պետք է պահպանված լինեն ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ կատարելուն օրենքով առաջադրված պահանջները,

– *դատավարական ձևակերպում*. ապացույցը, դրա ձեռքբերման գործընթացը պետք է օրենքով սահմանված կարգով ենթարկվեն դատավարական ձևակերպման,

– *լիազորված սուբյեկտ*. այն պետք է ստացված լինի ապացույց ձեռք բերելու լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից (...):

ՔԴՕ–ի 104–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարությունում որպես ապացույցներ թույլատրվում են կասկածյալի ցուցմունքները, մեղադրյալի ցուցմունքները, տուժողի ցուցմունքները, վկայի ցուցմունքները, տվյալ գործի մեղադրանքի հետ առնչվող՝ մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի ցուցմունքները, դատապարտյալի ցուցմունքները, փորձագետի եզրակացությունը, իրեղեն ապացույցները, քննչական և դատական գործողությունների արձանագրությունները, այլ փաստաթղթեր»:

«Օպերատիվ–հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14–րդ հոդվածով թվարկված գործողություններից և ոչ մեկի կատարմամբ կասկածյալի, մեղադրյալի, տուժողի, վկայի, տվյալ գործի մեղադրանքի հետ առնչվող՝ մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի, դատապարտյալի ցուցմունք, փորձագետի եզրակացություն, քննչական և դատական գործողությունների արձանագրություն ստանալ հնարավոր չէ, այլ խոսքով՝ օպերատիվ–հետախուզական գործողությունների կատարմամբ հնարավոր չէ ստանալ փաստական տվյալներ վերը նշված աղբյուրներից:

Միաժամանակ հարկ է նշել, որ «ապացույցի աղբյուր» հասկացությունը ապացույցների ոչ բոլոր տեսակների վերաբերմամբ է կիրառելի նույն իմաստով: Այսպես, օրինակ՝ կասկածյալի կամ տուժողի ցուցմունքների աղբյուր է կասկածյալը կամ տուժողը, իսկ, օրինակ, հանցագործության գործիք հանդիսացող հրազենի՝ իրեղեն ապացույցի աղբյուրը ինքնին նույն հրազենն է: Այդ իսկ պատճառով ապացույցի ինքնուրույն տեսակներ հանդիսացող իրեղեն ապացույցի կամ այլ փաստաթղթի վե-

ռաբերմամբ առավել ճիշտ է օգտագործել «փաստական տվյալի ստացման աղբյուր» հասկացությունը այն իմաստով, որ, օրինակ, իրեղեն ապացույց հանդիսացող հրազենն այն աղբյուրն է, որից ստացվում է փաստական որոշակի տվյալ, օրինակ, այն մասին, որ հենց այդ հրազենից է արձակվել կրակոց:

Նման մոտեցման պայմաններում, երբ իրեղեն ապացույցը կամ այլ փաստաթուղթ, ինքնին, դիտարկվում է որպես փաստական տվյալի ստացման աղբյուր, անհրաժեշտ է փաստել, որ այս դեպքում դրա աղբյուրի օրինական լինելու մասին խոսելն ավելորդ է, սույն պարագայում անհրաժեշտ է պարզապես փաստել, որ ստացված տվյալը վերաբերելի է, օրինակ, որ տուժողին պատճառված մարմնական վնասվածքն առաջացել է նույն հրազենից արձակված կրակոցից:

Փաստորեն, վերոգրյալի հիման վրա կարող ենք եզրահանգել, որ օպերատիվ–հետախուզական գործունեության ընթացքում հայտնաբերված իրեղեն ապացույցը կամ այլ փաստաթուղթ միանգամից որպես ապացույց է հանդես գալիս ոչ թե այն պատճառով, որ օրինական չէ ապացույցի ստացման աղբյուրը, այլև այն պատճառով, որ դրանք ձեռք բերելու համար անհրաժեշտ են քննչական ու դատավարական գործողություններ, որոնք իրականացվում են ՔԴՕ–ով սահմանված կարգով, օրինակ՝ հրազենի կամ այլ փաստաթղթի առգրավում, հրազենը կամ այլ փաստաթուղթ որպես իրեղեն ապացույց ճանաչելու մասին որոշման կայացում:

Այսպիսով՝ ելնելով վերոշարադրյալից, կարելի է արձանագրել, որ հանցագործության բացահայտմանն ուղղված օպերատիվ–հետախուզական գործունեությունը, թեև սերտորեն կապված է ապացուցման գործընթացի հետ, այնուամենայնիվ, վերջինիս հետ չի կարող նույնանալ, և որ հանցագործության բացահայտմանն ուղղված օպերատիվ–հետախուզական գործունեությունը ապացուցման գործընթացին օժանդակող և շատ դեպքերում այդ գործընթացն ուղղորդող գործունեության տեսակ է:

Նույն կերպ՝ ՕՀԳ արդյունքները հանդիսանում են համապատասխան ապացույցը ձեռք բերելուն օժանդակող և ուղղորդող տվյալներ,

որոնց հիման վրա քրեական գործով վարույթի ընթացքում դատավարական օրենքով սահմանված թույլատրելի աղբյուրներից և (կամ) դատավարական օրենքով նախատեսված միջոցներով ձեռք են բերվում ապացույցներ:

Իր հերթին՝ վերը նշվածը թույլ է տալիս պնդել, որ ՕՀԳ արդյունքները, պարունակելով հանցագործության հանգամանքների ու փաստերի մասին կոնկրետ տվյալներ, միանգամից փաստում են այն, որ այդ արդյունքների հիման վրա ձեռք բերված ապացույցները վերաբերելի են, այլ խոսքով՝ ՕՀԳ արդյունքները համապատասխանում են ապացույցներին ներկայացվող՝ վերաբերելիության պահանջին:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 119–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետի համաձայն՝ «Քրեական վարույթում ապացույց են քննչական, գաղտնի քննչական, այլ դատավարական գործողությունների արձանագրությունները», իսկ 286–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Քրեական վարույթի ընթացքում կարող են կատարվել հետևյալ գաղտնի քննչական գործողությունները՝ ներքին դիտում, արտաքին դիտում՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ. նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային հաղորդակցության վերահսկում, ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում»:

«Օպերատիվ–հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 40–րդ հոդվածի 1–ին մասը վերը նշված գործողությունների արդյունքները համարում է որպես ապացույց՝ չնայած նրան, որ ՔԴՕ–ի 104–րդ հոդվածում այդ գործողությունների արդյունքները որպես ապացույցի առանձին տեսակ նախատեսված չեն:

Փաստորեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը, «Օպերատիվ–հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 40–րդ հոդվածի 1–ին մասում վկայակոչվող հիշյալ գործողությունների արդյունքները նախատեսելով որպես ապացույց, վերջ է դնում տևականորեն շարունակվող այն վեճին, թե ՔԴՕ–ում նախատեսված չլինելու պայմաններում արդյոք «Օպերատիվ–հետախուզական գործունեության

մասին» ՀՀ օրենքի 40–րդ հոդվածի 1–ին մասում նշված գործողությունների արդյունքները կարող են ապացույց համարվել:

§ 2. Հանցագործության սադրանքը՝ որպես ՕՀԳ արդյունքների հավաստիության և թույլատրելիության վրա ազդող ինքնուրույն հանգամանք

Հիմնարար դրույթներ

- Քննության հատուկ մեթոդների՝ գաղտնի գործակալների կամ քննության այլ քողարկված մեթոդների կիրառումը, թեև ինքնին չի կարող խախտել մարդու իրավունքները և արդար դատաքննության իրավունքը, այնուամենայնիվ, դրանց կիրառումը պետք է հստակ սահմաններ և երաշխիքներ ունենա:
- Հանցագործության սադրանքն առկա է այն դեպքում, երբ անձի մոտ հանցագործություն կատարելու նախաձեռնությունն ի սկզբանե բացակայել է և այն ձևավորվել է բացառապես իշխանության մարմինների, նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց գործողությունների հետևանքով:

Հանցագործության քննությանը գաղտնի գործակալների մասնակցության հարցին ՄԻԵԴ–ն առաջին անգամ անդրադարձել է *Լուիդին ընդդեմ Շվեյցարիայի* գործով (15.06.1992 թ., գանգատ թիվ 12433/86), այնուհետև ՄԻԵԴ–ը այս հարցի կապակցությամբ իր դիրքորոշումները զարգացրել է *Տեքսիերա դե Կաստրոն ընդդեմ Պորտուգալիայի* (տես *Տեքսիերա դե Կաստրոն ընդդեմ Պորտուգալիայի* գործով 1998 թ. հունիսի 6–ի վճիռը, գանգատ թիվ 25829/94, կետ 36) և այլ բազմաթիվ գործերով կայացված վճիռներում՝ ձևավորելով այդ հարցի կապակցությամբ կայուն նախադեպային պրակտիկա (տես *Վանյանն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2005 թ. դեկտեմբերի 15–ի վճիռը, գանգատ

թիվ 53203/99, կետ 46, *Խուդոբինի գործը, կետեր* 129, 137, *Բաննի-կովայի* գործը, կետեր 33–65, *Վեսելովն ու այլք ընդդեմ Ռուսաստանի* գործով 2012 թ. հոկտեմբերի 10–ի վճիռը, գանգատներ թիվ 23200/10, 24009/07 և 556/10, կետեր 88–94, *Լագուտինը և այլք ընդդեմ Ռուսաստանի* գործով 2014 թ. ապրիլի 24–ի վճիռը, գանգատներ թիվ 6228/09, 19123/09, 19678/07, 52340/08 և 7451/0989–101, *Յերեմցովն ու այլք ընդդեմ Ռուսաստանի* 27.11.2014 թ. գանգատներ թիվ 20696/06, 22504/06, 41167/06, 6193/07 և 18589/07 §§ 15–16, *Ռամանաուսկասի գործը,* կետեր 49–61, *Միլինիենն ընդդեմ Լիտվայի 2008 թ. օգոստոսի 24–ի վճիռը,* գանգատ թիվ 74355/01, կետեր 35–40, *Նոսկոն և Նեֆյոդովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 30.10.2014 թ., գանգատներ թիվ 5753/09 և 11789, կետեր 49–55):

Խուդոբինն ընդդեմ Ռուսաստանի գործում ՄԻԵԴ–ը նշել է, որ «ՄԻԵԿ–ը, մասնավորապես ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածը չի արգելում հատուկ քննչական մեթոդների կիրառումը՝ միևնույն ժամանակ սահմանելով, որ այդ մեթոդների կիրառումը չպետք է խախտի մարդու իրավունքները» (տես *Խուդոբինի* գործը՝ կետ 128, *Ռամանաուսկասն ընդդեմ Լիտվայի* 05.02.2008 թ. վճիռը, գանգատ թիվ 74420/01, կետեր 49–51, *Թեքսիերա դե Կաստրոյի* գործը՝ կետ 36, *«Եվրոֆինակոմն» ընդդեմ Ֆրանսիայի* գործով 2004 թ. սեպտեմբերի 7–ի որոշումը՝ բողոքի անընդունելիության մասին, գանգատ թիվ 58753/00):

Ռամանաուսկասն ընդդեմ Լիտվայի գործով վճռում ՄԻԵԴ–ը նշել է, որ «ՄԻԵԴ–ն ի սկզբանե հայտնում է, որ տեղյակ է ոստիկանության կողմից հանցանքների բացահայտման և քննության նպատակով ապացույցների որոնման և հավաքման դժվարությունների մասին: Այդ հանձնարարությունը կատարելու համար նրանք հատկապես ունեն գաղտնի գործակալների օգտագործման կարիք, մասնավորապես կազմակերպված հանցավորության դեմ և կոռուպցիայի դեմ պայքարում: ՄԻԵԴ–ն այս առումով նշել է, որ քննության հատուկ մեթոդների՝ գաղտնի գործակալների կամ քննության այլ քողարկված մեթոդների կիրառումը, թեև ինքնին չի կարող խախտել մարդու իրավունքները և արդար դատաքննության իրավունքը, այնուամենայնիվ, դրանց կիրա-

ռումը պետք է հստակ սահմաններ և երաշխիքներ ունենա» (տես *Ռամանաուսկասի* գործը, կետ 51):

Ընդհանուր առմամբ ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքը այդ հարցի կապակցությամբ հենց ուղղված է այդ սահմանների և երաշխիքների ձևավորմանը, որոնք տարիների ընթացքում կատարելագործվել և դարձել են կայուն նախադեպային պրակտիկա: Բացի այդ՝ հանցավորության զարգացմանը զուգընթաց ավելացել են նաև այն հանցագործությունների տեսակները, որտեղ կարող են քննարկման առարկա դառնալ հանցագործության սադրանքի հարցերը, օրինակ՝ հեղինակային իրավունքի խախտման վերաբերյալ հանցագործությունները: Այսպես՝ *Վոլկովն ու Ադամսկին ընդդեմ Ռուսաստանի* գործով դիմումատուները գանգատվել են այն առումներով, որ ոստիկանության օպերատիվ աշխատակիցները դրդել են իրենց վաճառել կոնտրաֆակտ համակարգչային ծրագրերը: Ուսումնասիրելով գործի հանգամանքները՝ ՄԻԵԴ–ը այս հարցի կապակցությամբ գանգատները համարեց անընդունելի՝ գտնելով, որ իրավապահ մարմինների գործողություններում բացակայում են սադրանքի տարրեր (տես *Վոլկովն ու Ադամսկին ընդդեմ Ռուսաստանի* գործով 2015 թ. մարտի 26–ի վճիռը, գանգատներ թիվ 7614/09 և 30863/10, կետ 28–46):

Բաննիկովան ընդդեմ Ռուսաստանի գործում ՄԻԵԴ–ը, ամփոփելով նախկինում կայացրած որոշումները, մանրամասն մշակել է երկաստիճան թեստ, որը բաղկացած է ՝

I. *բովանդակային (նյութական)* տարրից, որտեղ հիմնական հարցն այն է, թե պետական պաշտոնյաները մնացել են արդյոք «գլխավորապես պասիվ» գործելակերպի սահմաններում, թե դուրս են եկել այդ սահմաններից,

II. *ընթացակարգային (դատավարական)* տարրից, որտեղ հարցն այն է, թե դիմողը կարողացել է սադրանքի ենթարկվելու խնդիրն արդյունավետորեն ներկայացնել ներպետական ատյաններում, և ինչպես են ներպետական դատարանները վարվել այդ դեպքում:

«Նյութական» տարրի վերլուծության շրջանակներում ՄԻԵԴ–ը քննում է գործի փաստական հանգամանքները և գաղտնի միջոցառումները կարգա-

վորող իրավական հիմքերի որակը: ՄԻԵԴ–ի օբյեկտիվ մոտեցման շնորհիվ կատարվում է տարբեր բաղադրիչների բավականին բարդ հանրագումարային վերլուծություն, ներառյալ՝ փաստերի հավաքագրում, որի նպատակն է պարզել՝ արդյոք իրավասու պետական մարմինները չեն ստեղծել ռիսկ, որ անձը հանցանք կատարի տվյալ հետաքննության ներգործության հետևանքով: Վերլուծվում են նաև տեղեկությունների ստացման ավելի խիստ, նորմատիվ կողմերը, որոնք կոչված են խոչընդոտելու պետական մարմինների կողմից այնպիսի ոչ պատշաճ մեթոդների կիրառումը, որոնք կարող են հանգեցնել սադրանքի գործադրման, և որոնք պահանջում են, որ ներպետական դատարաններն ավելի գործուն դեր ստանձնեն այդ երևույթի վերացման հարցում (տե՛ս *Ռամանաուսկասի* գործը, կետեր 49–74, *Բաննիկովայի* գործը, կետեր 37–50): Այս առումով հարկ է հաշվի առնել հետևյալ՝ առավել կարևոր տարրերը.

1) Արդյո՞ք ներդրված գործակալների՝ իրավախախտման կատարմանը հանգեցրած հատուկ գործողությունները պատշաճ կարգով վերահսկվել են: Մասնավորապես, դատավորի կամ դատախազի կողմից կամ այլ մարմնի, որը չի մտնում օպերատիվ–հետախուզական միջոցառում իրականացնող մարմինների համակարգում (տե՛ս *Թեքսիերա դե Կաստրոյի* գործը, կետեր 36–37, *Վեսելովն ու այլք ընդդեմ Ռուսաստանի* գործով 2012 թ. հոկտեմբերի 10–ի վճիռը, գանգատներ թիվ 23200/10, 24009/07 և 556/10, կետեր 103–104):

2) Արդյո՞ք իրավասու մարմինները բավարար իրավական հիմքեր ունեցել են՝ օպերատիվ–հետախուզական միջոցառումները սկսելու համար: Օրինակ՝ որոշակի, նախօրոք սահմանված և ոչ պատահական թիրախ (*Խուդոբինի* գործը, կետ 134), և որ ավելի կարևոր է՝ այնպիսի տեղեկությունների տիրապետում, որոնք բավարար հիմք են տվել՝ հանցագործությանը թիրախի ներգրավվածությունը ենթադրելու համար (*Թեքսիերա դե Կաստրոյի* գործը, կետեր 37–38): Այս հարցը պարզաբանելու համար ՄԻԵԴ–ը գանգատի կոմունիկացիայի փուլում, որպես կանոն, կողմերին, մասնավորապես պատասխանող պետությանը կատարում է հետևյալ հարցադրումը՝ արդյոք օպերատիվ մարմինները

օպերատիվ միջոցառում կիրառելիս ունեցել են կասկած տվյալ անձի կողմից հանցագործության կատարման մասին: Այս՝ առաջին հայացքից պարզ հարցը իրականում բացահայտում է խորքային խնդիր, այն է, թե արդյո՞ք օպերատիվ միջոցառումն իրականացվել է արդեն հարուցված վարույթի հիման վրա, թե՞ թիրախի ընտրությունը կատարվել է պատահականորեն՝ առանց իրական կասկածի առկայության:

3) Արդյո՞ք թիրախն արդեն իսկ սկսել էր հանցավոր արարքներ կատարել, որոնք վերջին հաշվով իր դեմ ուղղված ապացույցների մասն են կազմել, նախքան պետական պաշտոնյաների միջամտությունը (*«Եվրոֆինակոմն» ընդդեմ Ֆրանսիայի* գործով 2004 թ. սեպտեմբերի 7–ի որոշումը՝ բողոքը անընդունելի ճանաչելու մասին, գանգատ թիվ 58753/00):

4) Արդյո՞ք պաշտոնատար անձինք գլխավորապես պասիվ մոտեցում են պահպանել օպերատիվ միջոցառման ընթացքում, ինչը նախ և առաջ որոշվում է նրանց փաստացի ներգրավվածության աստիճանը գնահատելով (տե՛ս *Ռամանուսկասի* գործը, կետ 71):

5) Արդյո՞ք այն դեպքերում, երբ պետական մարմինները մասնավոր կարգով գործող գործակալի են ներգրավվել միջոցառման ընթացքում, ստանձնել են այդ անձնավորության շարժառիթների և գործողությունների գնահատման պատասխանատվություն, որպեսզի կանխեն սադրանքի իրականացումը գործակալի հայեցողությամբ (*Ռամանաուսկասի* գործը, կետեր 62–65):

6) Արդյո՞ք պատշաճ կարգով ստուգվել է մասնավոր կարգով ներգրավված գործակալի քողարկված դրդապատճառների առկայությունն այն դեպքում, երբ այդ գործակալն է իր նախաձեռնությամբ դիմել իշխանություններին՝ հայտնելով հանցանք կատարելու թիրախի ենթադրյալ մտադրության մասին (տե՛ս *Միլինիենի* գործը, կետեր 37–41):

7) Մասնավոր գործակալի ներգրավման պարագայում հարկ է նախնական փաստերն ամբողջությամբ վերլուծել՝ ընդհուպ հանցանքի պլանավորման սկզբնական շրջանը, անկախ պետական մարմնի պաշտոնական միջամտության փուլից, թեև սահմանվել է, որ իրավասու մարմինները չեն կարող ex post facto օգտագործել մասնավոր կարգով հրահրված հանցագործության արդյունքները (Ռամանաուսկա-

սի գործը, կետեր 62–65): Այդքան էլ հստակ չէ, թե որոնք են իրավասու պետական մարմինների միջամտությանը նախորդող սկզբնական փուլում մասնավոր գործակալի կողմից ձեռնարկվող սադրիչ գործողությունների թույլատրելի սահմանները, և արդյոք այդ թույլատրելի սահմանները տարբերվում են (նվազ խիստ լինելու իմաստով) այն սահմաններից, որոնք կիրառվում են առանց մասնավոր գործակալների ներգրավման իրականացվող գաղտնի միջոցառումների պարագայում (Միլինյենի գործը, կետեր 37–41):

8) Ցանկացած գաղտնի միջոցառում պետք է համապատասխանի ցանկացած քննություն հիմնականում պասիվ կատարելու պահանջին: Այս կանոնը մասնավորապես բացառում է ցանկացած վարքագիծ, որը կարող է մեկնաբանվել որպես ճնշման գործադրում դիմումատուի վրա հանցագործություն կատարելու նպատակով, որը կարող է բնորոշվել որպես հանցագործության սադրում: Օրինակ՝ իրենց նախաձեռնությամբ դիմումատուի հետ կապվելը, առաջարկը կրկնելը, չնայած նախնական մերժմանը՝ համառորեն դրդելը, միջինից բարձր գին առաջարկելը կամ էլ դիմումատուի բնազդների վրա ազդելը՝ դիմումատուի մոտ խղճահարություն առաջացնելով կամ հիշեցնելով աբսենտեիզմի ախտանիշի մասին (տես *Վեսելովի* գործը, կետ 92, *Ռամանաուսկասի* գործը, կետ 67, *Վանյանի* գործը, կետեր 11 և 49, *Մալինինասն ընդդեմ Լիտվայի* գործով 2008 թ. հուլիսի 1–ի վճիռը, գանգատ թիվ 10071/04, կետ 74):

9) Իրավախախտման ամբողջական իրականացման նպատակով սադրանքի թիրախին որոշակի քայլերի դրդելը, օրինակ՝ գումար առաջարկելը թիրախի կողմից կաշառք վերցնելու ենթադրյալ գործելակերպն արձանագրելու նպատակով ինքնին չի խախտում հետաքննության ընթացքում գլխավորապես պասիվ դիրքորոշում պահպանելու պահանջը (*Միլինյենի* գործը, կետեր 34–41):

Երկրորդ տարրի շրջանակներում ՄԻԵԴ–ը ձեռնարկում է ներպետական դատարաններում սադրանքի գործադրումից պաշտպանության վերաբերյալ դիմողի կողմից հարց բարձրացնելու կարողության «ընթացակարգային» գնահատումը, և այդ պարագայում հարկ է հաշվի առնել հետևյալ կարևոր հանգամանքները.

1) Ներպետական օրենսդրությունը պետք է դիմողին ընձեռի դատաքննության ժամանակ սադրանքի գործադրման հարց բարձրացնելու հնարավորություն՝ առարկության, մեղադրանքի փաստերը հերքող պաշտպանական միջնորդության կամ այլ կարգով (*Ռամանաուսկասի* գործը, կետ 69): Ներպետական դատարանները պետք է մանրակրկիտ հետազոտեն գործում առկա նյութերը՝ սադրանքի գործադրմամբ ձեռք բերված ապացույցների բացառման նպատակով (*Խուդոբինի* գործը, կետեր 133–135):

2) Դիմողի վրա է դրված prima facie սադրանքի գործադրումից պաշտպանության հարց բարձրացնելու պարտականությունը (Խուդոբինի գործը, կետ 69), այնուհետև ապացուցման բեռն անցնում է մեղադրող կողմին, որը պետք է փորձի հակընդդեմ փաստարկներ բերել (*Ռամանաուսկասի* գործը, կետ 70):

3) Մեղադրող կողմից պահանջվում է ապահովել ապացուցողականության բարձր չափանիշ, երբ մեղադրողը փորձում է ցույց տալ, որ դիմողի՝ գործադրման վերաբերյալ պնդումներն ամբողջովին անհիմն են: Կասկածի առկայության դեպքում ներպետական դատարանները պարտադիր կարգով հետևություններ են անում, որոնք թեև պարզորոշ որոշարկված չեն (*Ռամանաուսկասի* գործը, կետ 70), սակայն ամենայն հավանականությամբ ենթադրում են սադրանքի առկայությունը, եթե այդ հետևությունները բավականաչափ հիմնավորված են դիմողի նախնական հաղորդմամբ: Այսպիսով՝ ստացվում է, որ մեղադրող կողմի ապացուցողական չափանիշը գտնվում է տրամաբանական կասկածի սահմանից դուրս կամ առնվազն՝ հստակ և համոզիչ ապացույցների միջակայքում[22]:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե որ հերթականությամբ է ՄԻԵԴ–ը անդրադառնում այդ հարցերին, բավարար է արդյոք միայն մեկ տարրի (նյութական կամ դատավարական) խախտման փաստի արձանագրմանը, ապա այստեղ գործում է ընդհանուր առմամբ ապացույց-

[22] Դավիդաս Վիտկաուսկաս, Գրիգորի Դիկով, Արդար դատաքննության պաշտպանությունը ՄԻԵԿ–ի լույսի ներքո. Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների վերաբերյալ ձեռնարկ, Ստրասբուրգ, 2012, էջ 84–85:

ների թույլատրելիությանը վերաբերող ՄԻԵԴ–ի մոտեցումը, և ինչպես բազմիցս է նշել ՄԻԵԴ–ը, այդ թվում՝ քննարկվող բնույթի գործերով, ՄԻԵԴ–ի խնդիրը ոչ թե ապացույցները անթույլատրելի ճանաչելու կանոնների սահմանումն է, այլ այնպիսի հարցի պարզումն է, թե արդյոք դատական քննությունը ամբողջությամբ եղել է արդարացի՝ ներառյալ ապացույցները ստանալու եղանակները (տես *Շատչաշվիլու* գործը, կետեր 100–101, *Ալ Քավայայի* գործը, կետ 118, *Ռամանաուսկասի* գործը, կետ 52, *Հարությունյանի* գործը, կետեր 60–63, *Մամիկոնյանի* գործը, կետ 41 և այլն):

«Հանցագործության սադրանք» հասկացությանը և դրա չափանիշներին ՄԻԵԴ–ն անդրադարձել է իր բազմաթիվ որոշումներում՝ օգտագործելով հավաքական Agent provocateur (սադրող գործակալ) տերմինը: Որոշելու համար, թե արդյոք տեղի ունեցել է սադրանք օպերատիվ–հետախուզական միջոցառման (օրինակ՝ կաշառքի նմանակում, վերահսկելի գնում կամ մատակարարում և այլն) արդյունքում, ՄԻԵԴ–ը առաջարկում է *ակտիվ* կամ *պասիվ միջամտություն* հասկացությունները, որոնցից առաջինը անիրավաչափ է.

«Ոստիկանության հրահրում է տեղի ունենում այն դեպքում, երբ ՕՀՄ իրականացնող անձինք՝ ոստիկանության աշխատակիցները կամ նրանց հրահանգով գործող անձինք, իրենց գործողությունները չեն սահմանափակում անձի հանցավոր գործունեությունը հիմնականում պասիվ եղանակով քննելով, այլ այնպիսի ազդեցություն են գործադրում անձի վրա, որով սադրում են այնպիսի հանցանքի կատարմանը, որը հակառակ դեպքում չէր կատարվի, և դա անում են, որ հնարավորություն ստանան հիմնավորելու հանցագործության դեպքը, այսինքն՝ ստանալ ապացույցներ և իրականացնել քրեական հետապնդում» (*Թեքսիերա դե Կաստրոյի* գործը, կետ 36):

Ակտիվ գործողությունը այլ կերպ գրականության մեջ կոչվում է թակարդում կամ ծուղակում: Թակարդման կամ ակտիվ գործողության մեկ այլ նկարագրությունը, ըստ ՄԻԵԴ–ի, հետևյալն է.

«Եթե քողարկված ոստիկանի գործողությունները հանցանք հրահրելու տպավորություն են թողնում և ոչինչ չի վկայում, որ հանցանքը տեղի

կունենար առանց նրա միջամտության, նման գործողությունը դուրս է գալիս քողարկված ոստիկանի գործողությունների թույլատրելի շրջանակներից և կարող է որակվել որպես հրահրում: Միջամտության նման եղանակը կարող է անդառնալիորեն խաթարել դատավարության արդարացիությունը» (Վանյանի գործը, կետ 47):

Ի վերջո, կարելի է առաջնորդվել առ այն, որ օպերատիվ աշխատակիցը ոչ թե ակտիվորեն ներգրավել կամ դրդել է անձին կատարելու հանցագործություն, այլ ստեղծել է հանցագործության կատարման համար նպաստավոր պայմաններ, որից իրավախախտը ազատորեն, իր կամքով օգտվել է:

«Հանցագործության սադրանք» հասկացությանը և դրա չափանիշներին ՎԴ–ն անդրադարձել է Գառնիկ Գալստյանի վերաբերյալ գործով 2014 թվականի դեկտեմբերի 16–ի թիվ ԵՄԴ/0027/01/14 որոշմամբ:

Նշված գործով Գ. Գալստյանին՝ ՔՕ 235–րդ հոդվածի 1–ին մասով մեղադրանք է առաջադրվել և վերջինիս դատավճռով մեղավոր է ճանաչվել «այն բանի համար, որ նա .... քննությամբ չպարզված հանգամանքներում ապօրինի ձեռք է բերել և իր ժամանակավոր բնակության վայրում ապօրինի պահել է ինքնաշեն եղանակով պատրաստված ակոսափող հրազեն հանդիսացող ատրճանակ (...)»: Ըստ ամբաստանյալի վճռաբեկ բողոքի՝ մինչև զենքի հայտնաբերման պահը վարույթ իրականացնող մարմնի կողմից որևէ արձանագրություն չի կազմվել, հետևաբար դրա հետևանքով ձեռք բերված ապացույցները չեն կարող դրվել մեղադրանքի հիմքում և առաջացնել քրեական պատասխանատվություն: Վկայակոչելով ՄԻԵԴ–ի՝ Բաննիկովայի և Ռամանաուսկասի գործերով կայացված որոշումները՝ բողոքի հեղինակը նշել է, որ տեղի է ունեցել հանցագործության սադրանք, մասնավորապես գործի նյութերից երևում է, որ իրավապահ մարմիններն ատրճանակի մասին իմացել են առնվազն 2014 թվականի հունվարի 11–ին, երբ ատրճանակը գտնվել է Նինե Եսայանի մոտ, սակայն օրենքով նախատեսված գործողություններ չեն իրականացրել նշված օրը, այլ դրանք կատարել են 2014 թ. հունվարի 12–ին, երբ այն արդեն գտնվել է Գ. Գալստյանի մոտ: Այսինքն՝ գործով վկաներ՝ Մանե Բաբայանի, Ն. Եսայանի և ոստիկա-

նության աշխատակիցների կողմից համաձայնեցված և անօրինական գործողությունների կատարման արդյունքում է ատրճանակը հայտնաբերվել Գ. Գալստյանի մոտ: Մինչդեռ ստորադաս դատարանները հանցագործության սադրանքի առկայությունը կամ բացակայությունը պարզելու ուղղությամբ չեն իրականացրել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ բավարարվելով անհիմն ու անօրինական պատճառաբանություններով:

Որոշման 14–15–րդ կետերում ՎԴ–ն, մեջբերելով ՄԻԵԿ–ի, ՀՀ Սահմանադրության և ՔԴՕ–ի արդար դատաքննության իրավունքը նախատեսող նորմերը, անդրադառնում է ՄԻԵԴ–ի կողմից տրված «հանցագործության սադրանք» հասկացությանը և նշում. *«ՄԻԵԴ–ը իր նախադեպային պրակտիկայում դատաքննության արդարացիության (ՄԻԵԿ–ի 6–րդ հոդված) համատեքստում սահմանել և մեկնաբանել է «հանցագործության սադրանք» հասկացությունը՝ անթույլատրելի համարելով սադրանքի արդյունքում ձեռք բերված ապացույցներն անձին դատապարտելու համար օգտագործելը:*

Այսպես՝ *Բաննիկովայի* գործով կայացված որոշմամբ ՄԻԵԴ–ը նշել է, որ *«(…) հանդիպելով սադրանքի վերաբերյալ բողոքի՝ ՄԻԵԴ–ը պետք է փորձի առաջին հերթին պարզել՝ կկատարվեր արդյոք հանցանքն առանց իշխանությունների միջամտության: ՄԻԵԴ–ի կողմից Ռամանաուսկասի գործով տրված սադրանքի սահմանման համաձայն՝ ոստիկանության կողմից հանցագործության սադրանքն առկա է այն դեպքում, երբ ներգրավված ոստիկանները, լինեն անվտանգության ուժերի անդամներ կամ նրանց հրահանգմամբ գործող անձինք, չեն սահմանափակվում հանցավոր գործունեությունը զգալիորեն պասիվ ձևով քննելով, այլ այնպիսի ազդեցություն են գործադրում օբյեկտի վրա, որով հրահրում են հանցագործության կատարում, որը հակառակ դեպքում չէր կատարվի, որպեսզի հնարավոր դարձնեն հանցագործության հաստատումը, այն է՝ ապահովեն ապացույցներ և հարուցեն քրեական հետապնդում* (*տե՛ս Ռամանաուսկասի գործը, կետ 55):*

Քննությունը «զգալիորեն պասիվ» կատարված լինելու հարցը որոշելիս ՄԻԵԴ–ը պետք է քննի գաղտնի միջոցառում իրականացնելու հիմ-

քում ընկած պատճառները և այն իրականացնող մարմինների վարքագիծը: ՄԻԵԴ–ը պետք է հիմք ընդունի այն, թե արդյոք եղել են օբյեկտիվ կասկածներ այն մասին, որ Դիմումատուն ներգրավված էր հանցավոր գործունեության մեջ կամ նախապրամադրված էր հանցագործություն կատարել: (…)

Օբյեկտիվ կասկածների չափանիշի հետ սերտորեն կապված է այն հարցը, թե որ պահից են իշխանության մարմինները սկսել գաղտնի միջոցառման իրականացումը, այսինքն՝ արդյո՞ք գաղտնի գործակալներն ուղղակի «միացել» են հանցավոր արարքին, թե՞ հրահրել են այն: (…)

Այս չափանիշը կիրառվել է մի շարք գործերով, որոնցով ոստիկանները ներգրավվել էին մասնավոր անձի (ոչ ոստիկանության հետ համագործակցողի կամ իրազեկիչի) կողմից նրանց այնպիսի տեղեկությամբ դիմելուց հետո, որ Դիմումատուն արդեն իսկ նախաձեռնել է հանցավոր արարքը: (…)

[Մի շարք գործերով] ՄԻԵԴ–ը, հանդիպելով իրավիճակների, որոնցում ներգրավված էին երրորդ անձինք, հաստատել է իր մոտեցումը և նույնպես գտել, որ սադրանք տեղի չի ունեցել: (…)

Գաղտնի գործակալի կողմից օրինական ներթափանցման և սադրանքի սահմանազատում կատարելիս ՄԻԵԴ–ը պետք է պարզի՝ արդյոք դիմումատուի վրա ճնշում է գործադրվել, որպեսզի նա կատարի հանցագործություն: (…)

Վերոգրյալ չափանիշները կիրառելիս ՄԻԵԴ–ը ապացուցման բեռը դնում է իշխանության մարմինների վրա: Այս կապակցությամբ ՄԻԵԴ–ը նշել է, որ սադրանքի բացակայությունն ապացուցելու պարտականությունը դրված է հետապնդման մարմինների վրա՝ պայմանով, որ ամբաստանյալի պնդումներն ամբողջապես անհավանական չեն (…)» (տես *Բաննիկովայի գործը*, կետեր 37–38, 43–45, 47–48):

ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքի վերլուծության հիման վրա ՎԴ–ն արձանագրել է, որ *«հանցագործության սադրանքն առկա է այն դեպքում, երբ անձի մոտ հանցագործություն կատարելու նախաձեռնությունն ի սկզբանե բացակայել է և ձևավորվել բացառապես իշխանության մարմինների, նրանց հետ համագործակցող կամ նրանց*

հրահանգմամբ գործող անձանց գործողությունների հետևանքով: Հետևաբար հանցագործության սադրանքի առկայության հարցը կարող է քննարկվել այն դեպքում, երբ իշխանության մարմինների կողմից իրականացվել են գործողություններ, որոնք օբյեկտիվորեն կարող էին այս կամ այն կերպ ազդել անձի կողմից հանցագործություն կատարելու նախաձեռնության ձևավորման վրա: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ «հանցագործության սադրանք» հասկացության շրջանակներում չեն ընդգրկվում այն գործողությունները, որոնք իրականացվել են իշխանության ներկայացուցիչ չհանդիսացող, ինչպես նաև նրանց հետ չհամագործակցող կամ նրանց հրահանգմամբ չգործող անձանց կողմից:

Միևնույն ժամանակ իշխանության ներկայացուցիչների, ինչպես նաև նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց կողմից իրականացված գործողությունները հանցագործության սադրանք կարող են գնահատվել այն դեպքում, երբ դրանք չեն համապատասխանի «զգալիորեն պասիվ ձևով քննություն» չափանիշին: Իրականացված գործողությունների՝ «զգալիորեն պասիվ ձևով քննություն» չափանիշին համապատասխանելու հարցը որոշելիս պետք է հիմք ընդունել.

– գործողություն իրականացնելու հիմքում ընկած պատճառները: Մասնավորապես, պետք է պարզել՝ արդյոք եղել են օբյեկտիվ կասկածներ այն մասին, որ անձը ներգրավված էր հանցավոր գործունեության մեջ կամ նախապատրամադրված էր հանցագործություն կատարելու:

– այն իրականացնող մարմինների վարքագիծը: Այս առումով պետք է պարզել՝ արդյոք քննություն իրականացնող մարմինների գործողությունները հրահրել են անձին հանցանք կատարելու:

Այսինքն՝ իրականացված գործողությունները չեն համապատասխանում «զգալիորեն պասիվ ձևով քննություն» չափանիշին, եթե այդ գործողություններն իրականացվել են առանց օբյեկտիվ կասկածներ ունենալու, որ անձը ներգրավված էր հանցավոր գործունեության մեջ կամ նախապատրամադրված էր հանցագործություն կատարել, ինչպես նաև դրանք հրահրել են անձին հանցանք կատարել:

Այլ խոսքով՝ հանցագործության սադրանքն իրենից ներկայացնում է իշխանության ներկայացուցիչների (նրանց հետ համագործակցող կամ

նրանց հրահանգմամբ գործող անձանց) կողմից իրականացված գործողություններ, որոնք դուրս են գալիս զգալիորեն պասիվ ձևով քննության շրջանակներից՝ պայմանավորելով անձի կողմից հանցագործություն կատարելու նախաձեռնության ձևավորումը, որպեսզի հնարավոր դարձնեն հանցագործության հաստատումը, այն է՝ ապահովեն ապացույցներ և հարուցեն քրեական հետապնդում:

Շարունակելով՝ ՎԴ–ն նշում է, որ «…*Գործի նյութերում առկա թիվ 16–14–0040 օպերատիվ հաղորդագրության քարտի ինչպես նաև ամբաստանյալ Գ. Գալստյանի, վկաներ Ա. Նազարյանի, Ն. Եսայանի, Մ. Բաբայանի ցուցմունքների վերլուծությունը վկայում է, որ՝*

– Գ. Գալստյանն ատրճանակը գտել է 2013 թ. դեկտեմբերին իր պապի տան նկուղում,

– 2014 թ. հունվարի սկզբին Գ. Գալստյանը եկել է Երևան և իր հետ բերել ատրճանակը,

– 2014 թ. հունվարի 8–ին Գ. Գալստյանի մոտ է եկել Ն. Եսայանը և պահանջել իրեն հանձնել ատրճանակը, իսկ Գ. Գալստյանը տվել է,

– այնուհետև Գ. Գալստյանը մի քանի անգամ խնդրել է վերադարձնել ատրճանակը, սակայն Ն. Եսայանը մերժել է,

– 2014 թ. հունվարի 12–ին՝ ժամը 16–ի սահմաններում, Գ. Գալստյանի մոտ է եկել Ն. Եսայանն իր թոռնուհու հետ և վերադարձրել ատրճանակը:

Վկա Մ. Բաբայանը նաև ցուցմունք է տվել այն մասին, որ 2014 թ. հունվարի 11–ին իր ծանոթ Մալաթիայի բաժնի ոստիկանության աշխատակցի հետ զրույցի ժամանակ նրան պատմել է Գ. Գալստյանի մոտ եղած ատրճանակի մասին:

Գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունից հետևում է, որ դրանցում առկա չէ որևէ ապացույց կամ տվյալ այն մասին, որ ոստիկանության աշխատակիցների կողմից իրականացվել է օպերատիվ–հետախուզական որևէ միջոցառում (գաղտնի գործողություն), որի արդյունքում ամբաստանյալն ապօրինի ձեռք է բերել զենք: Որևէ տեղեկություն առկա չէ նաև Ն. Եսայանի կամ Մ. Բաբայանի կողմից ոստիկանության Մալաթիայի բաժնի աշխատակիցների հետ համագործակցելու կամ նրանց հրահանգմամբ գործելու մասին:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով հանցագործության սադրանքի առկայության վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին, եզրահանգել է, որ ոստիկանության աշխատակիցների կողմից հանցագործության որևէ սադրանք չի կատարվել: (…)

(…) ՎԴ–ն արձանագրում է, որ գործի նյութերում ոստիկանության աշխատակիցների կողմից գաղտնի գործողություններ իրականացված լինելու, Ն. Եսայանի և Մ. Բաբայանի կողմից ոստիկանության հրահանգմամբ գործելու վերաբերյալ տվյալների բացակայության պայմաններում հանցագործության սադրանքի առկայության հարց չի կարող քննարկվել:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ բողոքաբերը փաստարկել է, որ մինչև զենքի հայտնաբերման պահը վարույթն իրականացնող մարմնի կողմից որևէ արձանագրություն չի կազմվել, իսկ հանցագործության սադրանքի բացակայությունը ապացուցելու պարտականությունը կրում է պետությունը՝ ՎԴ–ն անհրաժեշտ է համարում հատկապես ընդգծել, որ բողոքաբերը չի վիճարկում փաստերն այն մասին, որ ամբաստանյալն ատրճանակը գտել է և իր մոտ պահել դեռևս 2013 թ. դեկտեմբերին, այնուհետև՝ 2014 թ. հունվարի սկզբին իր հետ տեղափոխել է Երևան և միայն նույն թվականի հունվարի 8–ին Ն. Եսայանի պահանջով է հանձնել նրան: Ավելին՝ Ն. Եսայանին հանձնելուց հետո փորձեր է կատարել այն վերադարձնելու: Նշված փաստերից ակնհայտ է, որ զենքը ձեռք բերելու և պահելու նախաձեռնությունն ի սկզբանե եղել է Գ. Գալստյանինը: Վերոնշյալի հիման վրա ՎԴ–ն արձանագրում է, որ ոստիկանության կողմից գաղտնի գործողություններ իրականացված լինելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկները հիմնավորված գնահատելու դեպքում անգամ հանցագործության սադրանքի վերաբերյալ խոսք չի կարող լինել»:

Վերոգրյալի հիման վրա ՎԴ–ն գտել է, որ ստորադաս դատարանի հետևություններն այն մասին, որ ամբաստանյալ Գ. Գալստյանն իրեն մեղսագրվող արարքը հանցագործության սադրանքի արդյունքում չի կատարել, հիմնավորված են (տե՛ս *Գառնիկ Գալստյանի* վերաբերյալ գործով 2014 թվականի դեկտեմբերի 16–ի թիվ ԵՄԴ/0027/01/14 որոշումը, կետեր 14–18):

ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում միայն կաշառքի կամ առևտրային կաշառքի պրովոկացիայի համար: Այսպես՝ ՀՀ քր. օր. 350–րդ հոդվածի համաձայն՝ կաշառքի կամ առևտրային կաշառքի պրովոկացիան հանցագործության արհեստական ապացույցներ ստեղծելու կամ շանտաժի նպատակով պաշտոնատար անձին կամ առևտրային կամ այլ կազմակերպություններում կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթներ իրականացնող անձին առանց նրա համաձայնության դրամ, արժեթղթեր, այլ գույք տալու կամ գույքային բնույթի ծառայություններ մատուցելու փորձն է: Սակայն հաշվի առնելով ՄԻԵԿ–ի դրույթները, ՄԻԵԴ–ի նախադեպային դիրքորոշումները և ՀՀ վճռաբեկ դատարանի այդ հարցի կապակցությամբ դիրքորոշումները՝ գտնում ենք, որ այդ հոդվածը վերանայման կարիք ունի պրովոկացիայի (սադրանքի) թե՛ հանցագործությունների շրջանակի և թե՛ դրա բովանդակության առումներով:

§ 3. Պետական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործումը

Հիմնարար դրույթներ

- Գաղտնի տեղեկությունների կրող կարելի է համարել ոչ միայն նրանց, ում այդ տեղեկությունը հայտնի է մասնագիտական գործունեության բերումով, այլ ցանկացած անձի, որը այս կամ այն ձևով իրազեկ է այդ տեղեկությանը:
- Պետական գաղտնիք համարվող տեղեկությունները քրեական վարույթն իրականացնող մարմնին, վերջինիս՝ կոնկրետ դատավարական լիազորության իրականացման համար, կարող են տրամադրվել երկու եղանակով՝ գաղտնազերծվելուց հետո և առանց գաղտնազերծման:
- Ի տարբերություն ՔԴՕ–ի՝ ՄԻԵԴ–ի նախադեպային պրակտիկան ամրագրում է պետական գաղտնիք կազմող տեղեկությունները

պաշտպանության կողմին ընդհանրապես չտրամադրելու հնարավորություն:

Քրեական դատավարությունում դատարանի որոշման հիման վրա կարող են ձեռք բերվել ոչ միայն կասկածյալի կամ մեղադրյալի անվամբ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, այլ նաև վերջիններիս կողմից ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվող, վերահսկվող կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվող իրավաբանական անձի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:

2007 թ. ապրիլի 19–ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը ընդունել է բանաձև՝ լրտեսության և պետական գաղտնիքի հրապարակման հետ կապված հարցերով: Այդ բանաձևում նշվում է, որ Եվրոպայի խորհրդի անդամ շատ պետություններում օրենսդրական ակտերը, որոնք վերաբերում են պետական գաղտնիքի պաշտպանությանը, պետական գաղտնիք կազմող տեղեկությունները սահմանում են բավականին ընդհանրական ձևով, որը հնարավորություն է տալիս շատ լայն մեկնաբանելու «պետական գաղտնիք կազմող տեղեկություններ» եզրույթը: Արդյունքում՝ այդ հասկացության ներքո են ընդգրկվում նաև լրագրողների, գիտնականների, փաստաբանների և այլ իրավապաշտպանների գործունեության արդյունքում նրանց հայտնի դարձած տեղեկությունները: Այդ պատճառով, համաձայն հիշյալ բանաձևի, Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների դատական մարմինները պետք է հանդես գան պետական գաղտնիք կազմող տեղեկությունների հետ կապված պետական անվտանգության և խոսքի ազատության միջև անհրաժեշտ հավասարակշռությունն ապահովողի դերում՝ նկատի ունենալով, որ այն տեղեկությունը, որն արդեն հայտնի է հասարակությանը, չի կարող համարվել պետական գաղտնիք, հետևաբար այդպիսի տեղեկությունը հրապարակելու համար չի կարող սահմանվել որևէ տեսակի պատասխանատվություն: Հիշյալ բանաձևի համաձայն՝ ներպետական օրենքները պետք է բավականաչափ կոնկրետ սահմանեն «պետական գաղտնիք կազմող տեղեկություններ» հասկացությունը և ծանոթանալու համար հասանելի լինեն հասարակությանը:

«Պետական գաղտնիք կազմող տեղեկություններ» հասկացության հետ կապված հարցերն առավել ամբողջական ներկայացված են *Շտոլն ընդդեմ Շվեյցարիայի* գործով 2007 թ. դեկտեմբերի 10–ի ՄԻԵԴ–ի վճռում, գանգատ թիվ 69698/01:

Համաձայն նշված վճռի 54–րդ կետի՝ «պետական անվտանգություն», «հասարակական կարգ» հասկացությունները պետք է մեկնաբանվեն նեղ, և տեղեկությունը կարող է գաղտնի պահվել միայն այն դեպքում, երբ առկա է պետական անվտանգությունը կամ հասարակական կարգն ապահովելու անհրաժեշտություն:

Նշված վճռով ՄԻԵԴ–ն իբրև գաղտնի տեղեկությունների կրող է համարել ոչ միայն նրանց, ում այդ տեղեկությունը հայտնի է մասնագիտական գործունեության բերումով, այլ ցանկացած անձի, որը այս կամ այն ձևով իրազեկ է այդ տեղեկությանը (կետ 61):

Նույն վճռով ՄԻԵԴ–ը, վերահաստատելով ՄԻԵԿ–ի 10–րդ հոդվածով սահմանված՝ խոսքի ազատության իրավունքի անվերապահ ապահովման անհրաժեշտությունը, նշել է, որ այդ ազատությունը սահմանափակելու իրավաչափությունը կանխորոշող պայման է ժողովրդավարական հասարակությունում այդ սահմանափակման անհրաժեշտությունը (կետ 101):

Անդրադառնալով «սահմանափակման անհրաժեշտություն» եզրույթին՝ *Սթիլն ու Մորիսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2005 թ. փետրվարի 15–ի վճռում (գանգատ թիվ 68416/01) ՄԻԵԴ–ն արձանագրել է, որ «Պայմանավորվող պետություններն ունեն հնարավորություն ազատորեն որոշելու՝ արդյոք այդպիսի անհրաժեշտություն առկա է, թե ոչ, բայց, միևնույն ժամանակ, այդ ազատ հնարավորությունը ենթակա է համաեվրոպական վերահսկողության, ընդ որում՝ այդ վերահսկողությունը պետք է ընդգրկի ոչ միայն ներպետական օրերքներն, այլ նաև ներպետական դատարանների ակտերը: Այդպիսով՝ ՄԻԵԴ–ն ունի իրավունք՝ վերջնականորեն որոշելու, թե պետական իշխանության կողմից խոսքի ազատությունը սահմանափակելն արդյոք համատեղելի է եղել ՄԻԵԿ–ի 10–րդ հոդվածով ապահովվող իրավունքին» (կետ 87):

Արդեն իսկ հիշատակված՝ *Շտոլն ընդդեմ Շվեյցարիայի* գործով

2007 թ. դեկտեմբերի 10–ի վճռով ՄԻԵԴ–ը սահմանել է որոշակի չափանիշներ, որոնք տեղեկությունը գաղտնի համարելու հարցում ունեն կողմնորոշիչ նշանակություն: Դրանք են.

ա. Տեղեկության բնույթը, այլ խոսքով՝ այն, թե հանրային ինչ հետաքրքրություն է ներկայացնում այդ տեղեկությունը: Այս հարցում էական է այն, թե արդյոք հասարակությանն այդ տեղեկության մասին որևէ բան հայտնի է եղել մինչև հրապարակումը:

բ. Այդ տեղեկության հրապարակմամբ վրա հասնող հետևանքների բնույթը, այլ խոսքով՝ այն, թե արդյոք տեղեկության հրապարակումը կարող էր էական վնաս հասցնել պետական անվտանգությանը:

գ. Տեղեկությունը ձեռք բերելու եղանակը: Ընդ որում, համաձայն ՄԻԵԴ–ի դիրքորոշման, այս հարցում էական նշանակություն չունի, թե ում անզգուշության կամ դիտավորության հետևանքով է տեղի ունեցել գաղտնի ինֆորմացիայի արտահոսք, և անկախ այդ հանգամանքից, գաղտնի տեղեկության իրազեկ դարձած և այն հրապարակած անձը ենթակա է պատասխանատվության:

դ. Այն, թե ինչ տեսակի պատասխանատվություն է սահմանված՝ գաղտնի տեղեկությունը հրապարակելու համար: Ընդ որում, համաձայն ՄԻԵԴ–ի դիրքորոշման, առավել կարևոր նշանակություն ունի հատկապես պատասխանատվության տեսակը և ոչ թե կոնկրետ սանկցիայի խստությունը (կետեր 112–161):

Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի հետ կապված հարցերը կարգավորող հիմնական նորմատիվ իրավական ակտը 1996 թ. դեկտեմբերի 3–ին ընդունված՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքն է (այսուհետ նաև՝ Օրենք):

Համաձայն օրենքի 2–րդ հոդվածի 1–ին մասի՝ «Պետական գաղտնիքը Հայաստանի Հանրապետության ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ–հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար»:

Օրենքը, կախված պետական գաղտնիք կազմող տեղեկությունների կարևորությունից, բնույթից, դրանց պաշտպանության համար անհրաժեշտ միջոցների ծավալից, սահմանում է գաղտնիության երեք աստիճաններ՝ «Հատուկ կարևորության», «Հույժ գաղտնի», «Գաղտնի»՝ ընդգծելով, որ գաղտնիության աստիճանը պետք է համապատասխանի նշված տեղեկությունների տարածման հետևանքով Հայաստանի Հանրապետության անվտանգությանը պատճառվելիք հնարավոր վնասի ծանրության աստիճանին (հոդված 4):

Նույն օրենքի համաձայն՝ «Պետական կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների տարածումը, այդպիսի տեղեկությունների հրապարակումը կամ հոսակորուստն է, մասնավորապես.

ա) հրապարակումը սույն օրենքով գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցումը, հաղորդումը, տրամադրումը, առաքումը, ինչպես նաև որևէ ձևով մատչելի դարձնելն է այն անձանց, ովքեր այդպիսի տեղեկություններին առնչվելու թույլտվություն չունեն.

բ) հոսակորուստը սույն օրենքով գաղտնիք կազմող տեղեկություններին առնչվելու թույլտվություն ունեցող, ինչպես նաև դրանց պահպանության համար պատասխանատու անձանց անփութության հետևանքով այդպիսի տեղեկությունների արտահոսքը կամ կորուստն է» (3–րդ հոդվածի 2–րդ մաս):

Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8–րդ հոդվածի 3–րդ մասի «գ» և «դ» կետերը ՀՀ կառավարությանը լիազորում են սահմանել տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով օժտված պետական մարմինների պաշտոնատար անձանց ցանկը և պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը: Վերը նշված ցանկերը հաստատված են ՀՀ կառավարության 1997 թ. օգոստոսի 19–ի թիվ 350 և 1998 թ. մարտի 13–ի թիվ 173 որոշումներով: Առաջինով սահմանված են այն պաշտոնատար անձանց ցանկը, ովքեր օժտված են տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքը դասելու լիազորություններով, իսկ երկրորդով՝ տեղեկությունների բնույթը, որոնք կարող են հանդիսանալ պետական գաղտնիք: Վերջինը բխում է օրենքի՝

«Տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելը» վերտառությամբ 12–րդ հոդվածի 6–րդ և 7–րդ մասերից, որոնցով սահմանվում է, որ «պետական այն մարմինները, որոնց ղեկավարներն օժտված են տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով, մշակում են գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը, որոնցում ներգրավվում են՝ ա) պետական գաղտնիքի շարքին դասվող այն տեղեկությունները, որոնք տնօրինելու լիազորությամբ օժտված են իրենք, բ) ծառայողական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունները:

Պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկություններն ընդգրկում են **ռազմական բնագավառի տեղեկություններ, արտաքին հարաբերությունների բնագավառի տեղեկությունները, տնտեսության, գիտության և տեխնիկայի բնագավառի տեղեկություններ, հետախուզական, հակահետախուզական և օպերատիվ–հետախուզական գործունեության բնագավառի տեղեկություններ**»:

ՀՀ կառավարության այս որոշման հավելվածում սահմանվում են այն կոնկրետ տեղեկությունները, որոնք ընդգրկում են հիշյալ բնագավառները: Մասնավորապես, համաձայն հիշյալ որոշման հավելվածի 4–րդ բաժնի, **հետախուզական, հակահետախուզական և օպերատիվ–հետախուզական գործունեության բնագավառի տեղեկություններն ընդգրկում են** պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը կամ փաստացի վիճակը բացահայտող տեղեկությունները, տեղեկություններին առնչվելու թույլտվություն չունենալու, օտարերկրյա տեխնիկական հետախուզությունների և տեխնիկական միջոցների արտահոսքի դեպքերում տեղեկատվության պաշտպանությանն ուղղված ծրագրավորվող և անցկացվող միջոցառումները բացահայտող տեղեկությունները, նախագահական, կառավարական կամ այլ ձևի հատուկ կապի և տեղեկատվության, պետական ծածկագրերի, դրանց վերլուծման մեթոդների կամ միջոցների, ծածկագրման միջոցների, գաղտնագրման համակարգերին վերաբերող տեղեկությունները, հետախուզական, հակահետախուզական կամ օպերատիվ–հետախուզական

գործունեության ուժերը, միջոցները, մեթոդները, ծրագրերը, վիճակը կամ արդյունքները բացահայտող տեղեկությունները, ինչպես նաև այդ գործունեությունները ֆինանսավորելու մասին տվյալները, եթե դրանք բացահայտում են թվարկված տեղեկությունները, հետախուզական, հակահետախուզական կամ օպերատիվ–հետախուզական գործունեությունն իրականացնող մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած, աջակցություն ցուցաբերող անձանց վերաբերյալ տեղեկությունները, ՀՀ հետախուզական, հակահետախուզական մարմինների կադրային կազմին կոնկրետ անձանց պատկանելությունը բացահայտող տեղեկությունները, օպերատիվ զորահավաքային աշխատանքների վիճակը, արդյունքները, ինչպես նաև միջոցառումները բացահայտող տեղեկությունները:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2012 թ. մարտի 6–ի ՍԴՈ–1010 որոշումով անդրադարձավ պրակտիկայի ուժով ձևավորված իրավակարգավորմանը, համաձայն որի՝ գաղտնիացվում էին ոչ միայն պետական գաղտնիք հանդիսացող կոնկրետ տեղեկությունները, այլ նաև վերը նշված գերատեսչական ցանկերը: Արդյունքում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ քաղաքացին զրկվում էր ոչ միայն պետական գաղտնիք հանդիսացող տեղեկության մատչելիությունից, այլ նաև ուղեցույցից, թե ինչ բնույթի տեղեկությունը կարող է համարվել գաղտնիք (այլ ոչ թե տեղեկությունը ինքնին): Այլ կերպ ասած՝ գաղտնիք էր, թե ինչ է գաղտնիքը: Սահմանադրական դատարանը նման կարգավորումը հայտարարեց հակասահմանադրական՝ հիմնվելով իրավական որոշակիության հիմնարար սկզբունքի վրա, որի հիման վրա ՄԻԵԴ–ը նույնպես հաճախ որոշումներ է կայացնում այս կամ այն պետություն պետական գաղտնիքի վերաբերյալ օրենքների անհիրավաչափության մասին: Տվյալ դեպքում ՍԴ–ն հայտարարեց, որ տեղեկություններից բացի՝ գերատեսչական ցանկերի գաղտնագրումը նույնպես կարող է խոչընդոտել իրավունքի սուբյեկտներին կանխատեսելու իրենց գործողությունների իրավական հետևանքները, ինչը կարող է հանգեցնել ընդհուպ նրան, որ անձը կարող է կատարել քրեորեն հետապնդելի արարք՝ առանց այդ մասին տեղյակ լինելու և տեղյակ լինելու հնարավորությունից զրկված

լինելու: Նշվածը իրավամբ բարձրացնում է օրինականության սկզբունքի՝ իրավական որոշակիության խախտման մասին հարց:

«Օպերատիվ–հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 41–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Օպերատիվ–հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օպերատիվ–հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ուժերի, միջոցների ու աղբյուրների, մեթոդների, պլանների, այդ միջոցառումների արդյունքների, դրանց ֆինանսավորման, օպերատիվ–հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ գաղտնիության հիման վրա համագործակցող և համագործակցած անձանց մասին տեղեկությունները հանդիսանում են պետական գաղտնիք»:

Ինչպես կարելի է նկատել, «Օպերատիվ–հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 41–րդ հոդվածի 1–ին մասը կրկնում է ՀՀ կառավարության որոշման վկայակոչված հատվածի մի մասը:

Նույն «Օպերատիվ–հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 40–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ «Օպերատիվ–հետախուզական միջոցառումների արդյունքները քրեական վարույթն իրականացնող մարմիններին ներկայացնելու կարգը սահմանվում է օրենքով և օպերատիվ–հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների իրավական ակտերով: Օպերատիվ–հետախուզական գործունեություն իրականացնող մարմինը սույն օրենքով նախատեսված օպերատիվ–հետախուզական միջոցառումների ընթացքում ստացված տեղեկատվությունը կարող է փոխանցել միայն քրեական վարույթ կամ օպերատիվ–հետախուզական գործունեություն իրականացնող այլ մարմինների՝ նրանց խնդրանքով օրենքով իրենց վերապահված կոնկրետ լիազորության իրականացման համար՝ բացառությամբ սույն օրենքով սահմանված ոչնչացման ենթակա տեղեկությունների»:

Այսինքն՝ պետական գաղտնիք համարվող տեղեկությունները քրեական վարույթն իրականացնող մարմնին, վերջինիս՝ կոնկրետ դատավարական լիազորության իրականացման համար, կարող են տրամադրվել երկու եղանակով.

1. Օպերատիվ–հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի միջնորդությամբ, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 16–րդ հոդվածի հիմքով, դատարանի կողմից գաղտնազերծվելուց հետո:

2. Առանց գաղտնազերծման՝ քրեական վարույթն իրականացնող մարմնին տրամադրելով:

Ընդ որում, եթե առաջին դեպքում, գաղտնազերծվելուց հետո, տեղեկությունը դադարում է պետական գաղտնիք համարվելուց, և քրեական դատավարության մասնակիցները դրանց կարող են ծանոթանալ ՔԴՕ–ով սահմանված ընդհանուր կարգով, ապա երկրորդ դեպքում տեղեկությունը շարունակում է համարվել պետական գաղտնիք, հետևաբար այս դեպքում ՔԴՕ–ն քրեական դատավարության մասնակիցների համար նախատեսում է պետական գաղտնիքին ծանոթանալու հատուկ կարգ, մասնավորապես ՔԴՕ–ի 171–րդ հոդվածի 4–րդ մասի համաձայն՝ «Պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ կապված քրեական գործերով վարույթը հանձնարարվում է այդպիսի տեղեկությունները չհրապարակելու մասին ստորագրություն տված դատավորներին, դատախազներին, քննիչներին, հետաքննության մարմնի աշխատակիցներին»:

Նույն հոդվածի 5–րդ մասի համաձայն՝ «Պաշտպանները և մյուս ներկայացուցիչները, ինչպես նաև այլ անձինք, որոնց ծանոթացման համար ներկայացվում կամ այլ կերպ հաղորդվում են պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ, պետք է նախապես ստորագրություն տան այդպիսի տվյալների չհրապարակման մասին: Ստորագրություն տալուց հրաժարվելու դեպքում պաշտպանը և մյուս ներկայացուցիչը, բացի օրինական ներկայացուցչից, զրկվում են քրեական դատավարությանը մասնակցելու իրավունքից, իսկ մյուս անձինք պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ չեն ստանում: Չհրապարակելու մասին դատավարության մասնակցի տված պարտավորությունը նրան չի խոչընդոտում միջնորդելու պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները հետազոտել դռնփակ դատական նիստում»:

Բացի վերոգրյալից՝ դատավարական օրենքը նախատեսում է պետական գաղտնիքի պահպանության ապահովմանն ուղղված այլ

երաշխիքներ ևս, մասնավորապես արդեն իսկ վկայակոչված 171–րդ հոդվածի 2–րդ և 3–րդ մասերի համաձայն՝ «Անձինք, որոնց քրեական հետապնդման մարմինն առաջարկում է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան հաղորդել կամ ներկայացնել պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ, չեն կարող, վկայակոչելով պետական գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը, հրաժարվել այդ պահանջը կատարելուց, սակայն իրավունք ունեն դատախազից, քննիչից, հետաքննության մարմնից նախապես ստանալու քրեական հետապնդման մարմնի կողմից նշված տեղեկությունների ստացման անհրաժեշտությունը հաստատող, հարցաքննության կամ այլ համապատասխան քննչական գործողության արձանագրության մեջ արտացոլման ենթակա պարզաբանում:

Պետական գաղտնիք պարունակող, իրեն վստահված տեղեկությունների վերաբերյալ ցուցմունքներ տվող պետական ծառայողն այդ մասին գրավոր հաղորդում է համապատասխան պետական մարմնի ղեկավարին, եթե դա նրան ուղղակիորեն չի արգելում վարույթն իրականացնող մարմինը»:

Բացի այդ՝ դատավարական օրենքի 16–րդ հոդվածի 2–րդ մասը սահմանում է դռնփակ դատական քննություն անցկացնելու մասին որոշում կայացնելու դատարանի իրավունքն այն դեպքում, երբ դատական քննության առարկան է կազմում պետական գաղտնիքի հետ առնչվող հանցագործությունը:

Որպես պետական գաղտնիքի առգրավման և այն քրեական գործով վարույթի ընթացքում որպես ապացույց օգտագործելու օրինականության լրացուցիչ երաշխիք՝ դատավարական օրենքը սահմանում է նաև, որ «Այն փաստաթղթերի առգրավումը, որոնք պարունակում են պետական գաղտնիք, կատարվում է միայն դատախազի թույլտվությամբ՝ համապատասխան հիմնարկի ղեկավարի հետ համաձայնեցված կարգով» (ՔԴՕ 226–րդ հոդված, մաս 2–րդ):

Պետական գաղտնիք կազմող տեղեկությունների՝ քրեական դատավարությունում օգտագործելու հետ կապված հետաքրքրական նախադեպային դիրքորոշումներ է հայտնել ՄԻԵԴ–ը: Այսպես՝ *Լագուտինը*

և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի գործով ՄԻԵԴ–ի դիրքորոշման համաձայն՝ «չնայած նրան, որ արդար դատաքննության իրավունքը ներառում է նաև մեղադրանքի կողմի ունեցած բոլոր ապացույցների՝ պաշտպանության կողմին հասանելիություն, այնուամենայնիվ, Դատարանն ընդունում է, որ այս համատեքստում մրցակցության իրավունքը կարող է որոշակիորեն սահմանափակվել, եթե այդպիսի սահմանափակումն անհրաժեշտ է ազգային անվտանգության, այլ անձանց հիմնարար իրավունքների պաշտպանության կամ քննության ոստիկանական գաղտնի մեթոդների չբացահայտման համար» (*Լագուտինը և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2014 թ. ապրիլի 24–ի վճիռը, գանգատներ թիվ 6228/09, 19123/09, 19678/07, 52340/08 և 7451/09, կետ 98):

Էդվարդսը և Լյուիսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 2004 թ. հոկտեմբերի 27–ի վճռով (գանգատներ թիվ 39647/98, 40461/98) ՄԻԵԴ–ը, անդրադառնալով պետական գաղտնիք կազմող տեղեկությունների՝ դատաքննության փուլում հետազոտմանը, դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «հանրային շահի պաշտպանության նկատառումից ելնելով՝ պետական գաղտնիք կազմող տեղեկությունը պարունակող նյութը դատավարության կողմերի բացակայությամբ կարող է ներկայացվել գործը քննող դատավորին, որն էլ ամբաստանյալի շահերի հաշվառմամբ պետք է որոշի այդ ապացույցի թույլատրելիության և վերաբերելիության հարցը: Որպես կանոն՝ դատարանը պահանջում է, որ պաշտպանության կողմը դատաքննության ընթացքում հնարավորություն ունենա հարցաքննելու գաղտնի գործակալներին և սադրանքի մասին վկայություն տալու հնարավոր այլ անձանց: Չնայած դրան՝ այդ հարցի կապակցությամբ ՄԻԵԴ–ի դիրքորոշումը բացարձակ բնույթ չի կրում, մասնավորապես, այս կապակցությամբ արված կոնկրետ վերապահումը ՄԻԵԴ–ի համար կարող է ընդունելի լինել, եթե հիշյալ անձանց հարցաքննելու մասին միջնորդությունը մերժվել է հիմնավոր ու ողջամիտ պատճառաբանություններով» (կետեր 46–48):

Փաստորեն, ի տարբերություն ՔԴՕ–ի, որը թույլատրելի է համարում պետական գաղտնիք կազմող տեղեկությանը քրեական դատավարության մասնակիցներին, այդ թվում՝ մեղադրյալին և նրա պաշտպանին

չծանոթացնելու, ավելին՝ պաշտպանին քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելու միայն մեկ դեպք, այն է՝ երբ հիշյալ սուբյեկտները այդպիսի տվյալների չհրապարակման մասին ստորագրություն չեն տվել, ՄԻԵԴ–ի նախադեպային պրակտիկան ամրագրում է պետական գաղտնիք կազմող տեղեկությունները պաշտպանության կողմին ընդհանրապես չտրամադրելու հնարավորություն՝ պայմանով, որ մրցակցության իրավունքի այդչափ սահմանափակումն անհրաժեշտ է ազգային անվտանգության, այլ անձանց հիմնարար իրավունքների պաշտպանության կամ քննության ոստիկանական գաղտնի մեթոդների չբացահայտման համար:

Ակնհայտ է, որ բացի պետական գաղտնիք կազմող տեղեկություններից՝ և՛ հանրային, և՛ մասնավոր շահի ապահովումը չի կարող լիարժեք համարվել, եթե քրեական դատավարության ընթացքում չի ապահովում կոնկրետ դեպքերում այդ շահի բովանդակության մասը կազմող՝ ոչ հրապարակային տեղեկությունների պահպանությունը:

Խոսքը վերաբերում է օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքներին, մասնավորապես այնպիսի տեղեկությունների, որոնք կազմում են տարբեր ոլորտներում՝ ծառայողական, մասնավոր քաղաքացիաիրավական, առողջության պահպանման կամ վերականգման, բանկային գործառնությունների հետ կապված հարաբերություններում անձի գործունեության բովանդակության մի մասը:

Այս համատեքստում է, որ ոչ պակաս կարևորվում է ծառայողական, առևտրային, նոտարական, ապահովագրական, բժշկական, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության ապահովումը քրեական դատավարությունում:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 2–րդ հոդվածի 2–րդ մասը ծառայողական գաղտնիքը բնորոշում է որպես պետության կողմից պաշտպանվող՝ Հայաստանի Հանրապետության ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ–հետախուզական գործունեության բնագավառների այնպիսի տեղեկություններ, որոնք, պարունակելով պետական գաղտնիքի մաս կազմող

տվյալներ, թեև ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը, սակայն այդ տեղեկությունների տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141–րդ հոդվածը առևտրային գաղտնիքը բնորոշում է որպես տեղեկություն, որը երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:

Նոտարական գաղտնիքի սահմանումն առկա է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում, որի 5–րդ հոդվածի 1–ին մասը նոտարական գաղտնիքը բնորոշում է որպես նոտարի կողմից վավերացված կամ հաստատված փաստաթղթերից բխող՝ նոտարին հայտնի դարձած տեղեկություն:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության» մասին ՀՀ օրենքի 3–րդ հոդվածի 1–ին մասի 6–րդ կետի համաձայն՝ «Ապահովագրական գործունեության ընթացքում ապահովադրի, ապահովագրված անձի կամ շահառուի վերաբերյալ ապահովագրողին, վերաապահովագրողին, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձին հայտնի դարձած ապահովադրի, ապահովագրված անձի կամ շահառուի առևտրային գաղտնիքը կամ այլ տեղեկություն, որն ապահովադիրը կամ ապահովագրված անձը մտադիր են եղել գաղտնի պահել, և ընկերությունը, վերաապահովագրական ընկերությունը կամ ապահովագրական միջնորդը տեղյակ է կամ պարտավոր էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ»:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 7–րդ հոդվածի 2–րդ մասը արգելում է մարդու կամքին հակառակ նրա առողջական վիճակի մասին տեղեկությունը հաղորդել նրան կամ այլ անձանց: Այսինքն՝ սույն հոդվածը բժշկական գաղտնիք է համարում մարդուն բժշկական օգնություն ցույց տալու կամ բժշկական սպասարկում իրականացնելու բերումով բուժաշխատողին հայտնի դարձած՝ մարդու առողջական վիճակի մասին ցանկացած տեղեկություն:

«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4–րդ հոդվածը բանկային

գաղտնիքը բնորոշում է որպես բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկություններ, հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկություններ և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա ՔԴՕ–ն նախատեսում է համապատասխան դատավարական երաշխիքներ՝ օրենքով պաշտպանվող վերոգրյալ տեղեկությունների պաշտպանությունը քրեական դատավարությունում ապահովելու համար: Այսպես, դատավարական օրենքը, իրավակարգավորելով անձանց անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը (որի բովանդակությունն են կազմում նաև բժշկական, նոտարական, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները), սահմանում է հետևյալը.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան կյանքն անօրինական միջամտությունից, իր պատիվը և բարի համբավը ոտնձգությունից պաշտպանելու իրավունք:

2. Դատավարական գործողություններ կատարելիս առանց անհրաժեշտության չպետք է հավաքվեն, պահվեն, օգտագործվեն և տարածվեն անձի անձնական կամ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություններ, ինչպես նաև անձնական բնույթի այլ տվյալներ: Դատարանի, ինչպես նաև հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի պահանջով քննչական և դատական գործողությունների մասնակիցները պարտավոր են չհրապարակել նշված տեղեկությունները, որի համար նրանցից վերցվում է ստորագրություն:

3. Անձնական կամ ընտանեկան կյանքի ինտիմ կողմերին վերաբերող ապացույցները քրեական դատավարությանը մասնակցող այն անձանց պահանջով, որոնց սպառնում է անձնական կամ ընտանեկան

գաղտնիքի հրապարակումը, հետազոտվում են դռնփակ դատական նիստում:

4. Անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիության խախտումն առաջ է բերում օրենքով սահմանված պատասխանատվություն, իսկ դրա հետևանքով անձին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ օրենքով սահմանված կարգով» (ՔԴՕ, 171–րդ հոդված):

Նույն կերպ, ինչպես պետական գաղտնիք կազմող տեղեկություններ-ի պարագայում է, դատավարական օրենքը դատարանին իրավունք է վերապահում անցկացնելու դռնփակ դատական քննություն, եթե դատաքննության առարկան անձնական կյանքի անձեռնմխելիության հետ առնչվող հանցագործությունն է (ՔԴՕ, 16–րդ հոդված, 2–րդ մաս, 2–րդ պարբերություն, 1–ին կետ):

Անցնելով ծառայողական, առևտրային և նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանությունն ապահովող երաշխիքներ նախատեսելուն՝ ՔԴՕ–ն սահմանում է, որ.

«1. Քրեական դատավարության ընթացքում ձեռնարկվում են ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանման՝ օրենքով նախատեսված միջոցներ:

2. Դատավարական գործողություններ կատարելիս առանց անհրաժեշտության չպետք է հավաքվեն, պահվեն, օգտագործվեն և տարածվեն ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկություններ: Դատարանի, ինչպես նաև հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի պահանջով քննչական և դատական գործողությունների մասնակիցները պարտավոր են չհրապարակել նշված տեղեկությունները, որի համար նրանցից վերցվում է ստորագրություն:

3. Անձինք, որոնց քրեական վարույթն իրականացնող մարմինն առաջարկում է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան հաղորդել կամ ներկայացնել օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկություններ, չեն կարող, վկայակոչելով ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը, հրաժարվել այդ պահանջը կատարելուց, սակայն

իրավունք ունեն դատարանից, դատախազից, քննիչից, հետաքննության մարմնից նախապես ստանալու նրանց կողմից նշված տեղեկություններ ստանալու անհրաժեշտությունը հաստատող, համապատասխան քննչական կամ դատավարական գործողության արձանագրության մեջ արտացոլման ենթակա պարզաբանում:

3.1. Քրեական հետապնդում իրականացնող մարմինները նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստանալ դատարանի որոշման հիման վրա:

3.2. Քրեական հետապնդում իրականացնող մարմինները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստանալ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա:

3.3. Քրեական հետապնդում իրականացնող մարմինները վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն կարող են ստանալ միայն դատարանի որոշման հիման վրա:

4. Ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող, իրեն վստահված տեղեկությունների վերաբերյալ ցուցմունքներ տվող պետական ծառայողը և, անկախ սեփականության ձևից, ձեռնարկության, հիմնարկի կամ կազմակերպության աշխատողն այդ մասին գրավոր հաղորդում են համապատասխան ղեկավարին, եթե դա նրանց ուղղակիորեն չի արգելում վարույթն իրականացնող մարմինը:

5. Ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցներն այն անձանց պահանջով, որոնց սպառնում է նշված տեղեկությունների հրապարակումը, կարող են հետազոտվել դռնփակ դատական նիստում» (ՔԴՕ, 172–րդ հոդված):

Վերը նշվածի հետ մեկտեղ, ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանությանն ուղղված լրացուցիչ դատավարական երաշխիք է դռնփակ դատաքննություն անցկացնելու դատարանի իրավունքն այն դեպքում, երբ քննվելու է ծառայողական գաղտնիքի հետ առնչվող հանցագործության գործ (ՔԴՕ, 16–րդ հոդված, մաս 2–րդ):

Բացի այդ՝ որպես բանկային, նոտարական և ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու և դրանք որպես ապացույց օգտագործելու լրացուցիչ դատավարական երաշխիք է հանդես գալիս այդ տեղեկություններն առգրավելու հատուկ դատավարական կարգը, այն է՝ բանկային, նոտարական, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունների առգրավումը կատարվում է դատարանի որոշման հիման վրա (ՔԴՕ, 228–րդ հոդված, 1–ին մաս):

Քրեական դատավարությունում օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանությանն ուղղված խնդիրներին անդրադարձել է նաև ՎԴ–ն: Մասնավորապես, անդրադառնալով բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների՝ քրեական դատավարությունում պաշտպանության հարցերին՝ 2013 թ. սեպտեմբերի 13–ի թիվ ԱՎԴ/0015/07/13 որոշմամբ ՎԴ–ն արձանագրել է.

««*Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8–րդ հոդվածի համատեքստում մեկնաբանելով «անձնական կյանք» եզրույթը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ այն լայն հասկացություն է և ենթակա չէ սպառիչ սահմանման: Եվրոպական դատարանը գտել է, որ անձնական կյանքի ոլորտն ընդգրկում է մարդու առողջությունը, ֆիզիկական և հոգեկան ամբողջականությունը: Անձնական կյանքի իրավունքը ներառում է նաև անհատական զարգացումը, այլոց և ընդհանրապես արտաքին աշխարհի հետ հարաբերություններ հաստատելը և զարգացնելը (տե՛ս NADA v. SWITZERLAND գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 12–ի վճիռը, գանգատ թիվ 10593/08, կետ 151):*

«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4–րդ հոդվածի 1–ին մասի դրույթը մեկնաբանելով ՀՀ Սահմանադրության 23–րդ հոդվածի,

ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8–րդ հոդվածի և դրա վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված՝ սպասարկման կամ այլ գործառնությունների կապակցությամբ բանկի և անձի միջև հաստատված հարաբերությունները՝ որպես արտաքին աշխարհի հետ անձի հարաբերությունների տարատեսակ, հանդիսանում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8–րդ հոդվածով երաշխավորված՝ մարդու անձնական կյանքի մաս: Հետևաբար «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված տեղեկությունները՝ որպես մարդու անձնական կյանքի մաս, անձեռնմխելի են և դրանց ստացման վրա տարածվում են ՀՀ Սահմանադրության 43–րդ հոդվածում, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8–րդ հոդվածի 2–րդ մասում ամրագրված սահմանափակումները:

«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված վերոշարադրյալ դրույթների համակարգային վերլուծությունից երևում է, որ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա կարող է ձեռք բերվել բացառապես ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված կարգով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձի վերաբերյալ բանկային գաղտնիքը: Այլ խոսքով՝ անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունը կարող է տրամադրվել քրեական վարույթն իրականացնող մարմնին, եթե՝

ա) անձը ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված կարգով ներգրավվել է որպես կասկածյալ կամ մեղադրյալ,

բ) առկա է բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման նպատակով խուզարկություն կամ առգրավում կատարելու թույլտվություն տալու վերաբերյալ դատարանի որոշումը»:

Նույն որոշմամբ, մեկնաբանելով բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման հիմքերի վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և «Օպերատիվ–հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում առկա հակասությունը (այն առումով, որ «Օպերատիվ–հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը թույլատրելի է համարում նաև կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ չունեցող անձանց բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները վերահսկելը), ՎԴ–ն արձանագրել է, որ «բանկային գաղտնիքի վերահսկման կապակցությամբ պետք է կիրառվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172–րդ հոդվածի 32–րդ մասում ամրագրված դրույթը: Այլ խոսքով՝ վերահսկման ենթակա է բացառապես ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված կարգով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձի վերաբերյալ բանկային գաղտնիքը»:

Զարգացնելով քրեական դատավարությունում բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանությանն ուղղված հարցերի հետ կապված նախադեպային իրավունքը՝ 2014 թ. օգոստոսի 15–ի թիվ ԵԿԴ/0223/07/14 որոշմամբ ՎԴ–ն արձանագրել է.

Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, գործող օրենսդրական կարգավորման համաձայն, կարող են ստացվել առգրավման կամ խուզարկության քննչական գործողությունների կատարման արդյունքում… օրենսդրորեն սահմանված է այն անձանց սպառիչ շրջանակը, ում վերաբերյալ կարող են պահանջվել բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ: Այդ անձանց խիստ սահմանափակ շրջանակն ընդգրկում է միայն կասկածյալին և մեղադրյալին: Այսինքն՝ քրեական գործով վարույթի ընթացքում կարող են բացահայտվել ոչ թե ցանկացած անձի, այլ բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ (տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13–ի թիվ ԱՎԴ/0015/07/13 որոշումը): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62–րդ հոդվածի 1–ին մասի, 64–րդ հոդվածի 1–ին մասի և 202–րդ հոդվածի 1–ին մասի բովանդակությունից բխում է, որ ՀՀ քրեա-

կան դատավարության օրենսգրքի 172–րդ հոդվածի 3.2–րդ մասում և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10–րդ հոդվածի 1–ին մասում առկա կարգավորումները նախատեսում են այն անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ձեռք բերելու օրենսդրական հնարավորություն, որոնց վերաբերյալ քրեական գործով ձեռք բերված ապացույցներով նվազագույնը հիմնավոր կասկածի մակարդակով հիմնավորվել է, որ նրանք, հնարավոր է, հանրորեն վտանգավոր արարք կատարած լինեն:

Այսպիսով՝ ՀՀ ներպետական օրենսդրությամբ նախատեսված են բանկային գաղտնիքի պահպանության իրավական ռեժիմի սահմանափակման իրավաչափության և մասնավոր անձանց իրավունքների և օրինական շահերի ապահովման գործուն երաշխիքներ:

Սակայն հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության կարևորագույն սկզբունքը ենթադրում է, որ մարդու իրավունքներն ու ազատությունները բացարձակ չեն, և դրանց իրացումը պետք է հակակշռվի ավելի լայն հանրային շահով: Ինչպես արդեն նշվել է, թե՛ Եվրոպական կոնվենցիան և թե՛ ՀՀ Սահմանադրությունն իրավաչափ են համարում անձի համապատասխան իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումը ժողովրդավարական հասարակության կարևորագույն արժեքների պաշտպանության համար: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ Եվրոպական դատարանը խախտում չի արձանագրել բոլոր այն դեպքերում, երբ Եվրոպական կոնվենցիայի 8–րդ հոդվածով սահմանված իրավունքները սահմանափակվել են նույն հոդվածի 2–րդ մասով նախատեսված իրավաչափ նպատակների ապահովման համար (տե՛ս, ի թիվս այլոց, I.S. v. Germany գործով Եվրոպական դատարանի 2014 թվականի հունիսի 5–ի վճիռը, գանգատ թիվ 31021/08):

Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշման համատեքստում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172–րդ հոդվածի 3.2–րդ մասում ամրագրված դրույթի այն մեկնաբանությունը, որ դատարանի որոշման հիման վրա կարող են ստացվել բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի անվամբ բանկային հաշիվների վերաբերյալ

փվյալները, օրենսդրական այս դրույթի բովանդակության և կիրառման շրջանակների անհարկի նեղացում է: Նման մեկնաբանությունը չի համապատասխանում քննարկվող դատավարական (քննչական) գործողությունների առջև դրված խնդիրներին, էականորեն սահմանափակում է դրանց՝ քրեական գործով վարույթի համար ունեցած դերն ու նշանակությունը: Արդյունքում՝ մասնավոր շահը չարդարացված գերակայում է հանցագործությունների բացահայտման (հանցավորության դեմ պայքարի) հանրային շահի նկատմամբ:

…Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմինը պետք է քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցներով (փաստական տվյալներով) հիմնավորի, որ համապատասխան քննչական գործողության արդյունքում ձեռք են բերվելու կասկածյալին կամ մեղադրյալին մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին անմիջականորեն առնչվող և այն իրավաբանական անձին վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, որի գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից: Նման մեկնաբանության համար հիմք է ծառայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172–րդ հոդվածի 3.2–րդ մասի և 282–րդ հոդվածի համակարգային վերլուծությունը: Այսինքն՝ վարույթն իրականացնող մարմինը բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու համար առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին միջնորդությամբ պետք է ներկայացնի անհրաժեշտ և բավարար փաստեր, որոնք դատարանին հիմք կտան ողջամտորեն ենթադրելու, որ փվյալները, որոնք ակնկալվում է ստանալ համապատասխան քննչական գործողության կատարման արդյունքում, անմիջականորեն առնչվում են կասկածյալին կամ մեղադրյալին մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին և վերաբերում են նրա կողմից ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվող, վերահսկվող կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվող իրավաբանական անձին»:

Փաստորեն, սույն որոշմամբ ՎԴ–ն արձանագրեց, որ քրեական դատավարությունում դատարանի որոշման հիման վրա կարող են ձեռք

բերվել ոչ միայն կասկածյալի կամ մեղադրյալի անվամբ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, այլ նաև վերջիններիս կողմից ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվող, վերահսկվող կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվող իրավաբանական անձի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները՝ պայմանով, որ տվյալները, որոնք ակնկալվում է ստանալ համապատասխան քննչական գործողության կատարման արդյունքում, անմիջականորեն առնչվում են կասկածյալին կամ մեղադրյալին մեղսագրվող հանցավոր արարքին:

Դատական ակտերի ցանկ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. *Մատիցինան ընդդեմ Ռուսաստանի* գործով 2014 թ. մարտի 27–ի որոշում, գանգատ N 58428/10:

2. *Ռամանաուսկասն ընդդեմ Լիտվայի* գործով 2008 թ. փետրվարի 5–ի վճիռ, գանգատ թիվ 74420/01:

3. *Բարբերան, Մեսեգեն և Խաբարդոն ընդդեմ* Իսպանիայի գործով 1988 թ. դեկտեմբերի 6–ի վճիռ, գանգատ թիվ 10590/83:

4. *Շենքն ընդդեմ Շվեյցարիայի* գործով 1988 թ. հուլիսի 12–ի վճիռ, գանգատ թիվ 10862/84:

5. *Հովհաննիսյանն ընդդեմ Բուլղարիայի* գործով 2010 թ. դեկտեմբերի 21–ի վճիռ, գանգատ թիվ 31814/03:

6. *Խոդորկովսկին և Լեբեդևն ընդդեմ Ռուսաստանի* գործով վճիռ, գանգատներ թիվ 11082/06 և 13772/05:

7. *Վուլախը և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2012 թվականի հունվարի 10–ի վճիռ, գանգատ թիվ 33468/03:

8. *Մինելլին ընդդեմ Շվեյցարիայի* գործով 1983 թ. մարտի 25–ի վճիռ, գանգատ թիվ 8660/79:

9. *Դակտարասն ընդդեմ Լիտվայի* գործով 2000 թ. հունվարի 11–ի վճիռ, գանգատ թիվ 42095/98:

10. *Իսմաիլովը և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2009 թ. նոյեմբերի 26–ի վճիռ, գանգատ թիվ 33947/05:

11. *Կոնստասն ընդդեմ Հունաստանի* գործով 2011 թ. մայիսի 24–ի վճիռ, գանգատ թիվ 53466/07:

12. *Թելֆներն ընդդեմ Ավստրիայի* գործով 2001 թ. մարտի 20–ի վճիռ, գանգատ թիվ 33501/96:

13. *Նատունենն ընդդեմ Ֆինլանդիայի* գործով 2009 թ. մարտի 31–ի վճիռ, գանգատ թիվ 21022/04:

14. *Պավլենկոն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2010 թ. ապրիլի 1–ի վճիռ, գանգատ թիվ 42371/02:

15. *Արտիկոն ընդդեմ Իտալիայի* գործով 1980 թ. մայիսի 13–ի վճիռ, գանգատ թիվ 6694/74:

16. *Տրիպոդին ընդդեմ Իտալիայի* գործով 2001 թ. հոկտեմբերի 18–ի վճիռ, գանգատ թիվ 40946/98:

17. *Միրիլաշվիլին ընդդեմ Ռուսաստանի* գործով 2008 թ. դեկտեմբերի 11–ի վճիռ, գանգատ թիվ 6293/04:

18. *Շատչաշվիլին ընդդեմ Գերմանիայի* գործով 2015 թ. դեկտեմբերի 15–ի վճիռ, գանգատ թիվ 9154/10:

19. *Գանին ընդդեմ Իսպանիայի* գործով 2013 թ. փետրվարի 19–ի վճիռ, գանգատ թիվ 61800/08:

20. *Վան Մեհելենը և մյուսներն ընդդեմ Նիդերլանդների* գործով 1997 թ. ապրիլի 23–ի վճիռ, գանգատներ թիվ 21363/93, 21364/93, 21427/93, 22056/93:

21. *Ալ Քավայան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2011 թ. դեկտեմբերի 15–ի վճիռ, գանգատներ թիվ 26766/05 և 22228/06:

22. *Բիրուտիսը և մյուսներն ընդդեմ Լիտվայի* գործով 2002 թ. հունիսի 28–ի վճիռ, գանգատներ թիվ 47698/99 և 48115/99:

23. *Վլադիմիր Ռոմանովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2008 թ. հուլիսի 24–ի վճիռ, գանգատ թիվ 41461/02:

24. *Գարսիա Հերնանդեսն ընդդեմ Իսպանիայի* գործով 2010 թ. նոյեմբերի 16–ի վճիռ, գանգատ թիվ 15256/07:

25. *Սոլակովն ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրապետության* գործով 2001 թ. հոկտեմբերի 31–ի վճիռ, գանգատ թիվ 47023/99:

26. *Կլիմենտևն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2006 թ. նոյեմբերի 16–ի վճիռ, գանգատ թիվ 46503/99:

27. *Կոստովսկին ընդդեմ Նիդերլանդների* գործով 1989 թ. նոյեմբերի 20–ի վճիռ, գանգատ թիվ 11454/85:

28. *Դորսոնն ընդդեմ Նիդերլանդների* գործով 1996 թ. մարտի 26–ի վճիռ, գանգատ թիվ 20524/92:

29. *Բյոնիշն ընդդեմ Ավստրիայի* գործով 1985 թ. մայիսի 6–ի վճիռ, գանգատ թիվ 8658/79:

30. *Ալեքսանդր Զայչենկոն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2010 թ. փետրվարի 18–ի վճիռ, գանգատ թիվ 39660/02:

31. *Սաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 1996 թ. դեկտեմբերի 17–ի վճիռ, գանգատ թիվ 19187/91:

32. *Ջալոհն ընդդեմ Գերմանիայի* գործով 2006 թ. հուլիսի 11–ի վճիռ, գանգատ թիվ 54810/00:

33. *Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2007 թ. հունիսի 28–ի վճիռ, գանգատ թիվ 36549/03:

34. *Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի* գործով 2008 թ. հունիսի 30–ի վճիռ, գանգատ թիվ 22978/05:

35. *Ալենն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2013 թ. հուլիսի 12–ի վճիռ, գանգատ թիվ 25424/09:

36. *Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2000 թ. հոկտեմբերի 4–ի վճիռ, գանգատ թիվ 35394/97:

37. *Յուսուֆ Գեզերն ընդդեմ Թուրքիայի* գործով 2009 թ. դեկտեմբերի 1–ի վճիռ, գանգատ թիվ 21790/04:

38. *Գլադիշևն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2011 թ. դեկտեմբերի 6–ի վճիռ, գանգատ թիվ 7097/10:

39. *Լուցենկոն ընդդեմ Ուկրաինայի* գործով 2009 թ. մարտի 12–ի վճիռ, գանգատ թիվ 30336/04:

40. *Սալդուզն ընդդեմ Թուրքիայի* գործով 2008 թ. նոյեմբերի 27–ի վճիռ, գանգատ թիվ 36691/02:

41. *Մամադովն ընդդեմ Ադրբեջանի* գործով 2007 թվականի հունվարի 11–ի վճիռ, գանգատ թիվ 34445/04:

42. *Օ. Հալորան և Ֆրենսիսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2007 թ. հունիսի 29–ի վճիռ, գանգատներ թիվ 15809/02 և 25624/02:

43. *Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի* գործով 1993 թ. փետրվարի 25–ի վճիռ, գանգատ թիվ 10828/84:

44. *Սալաբյակուն ընդդեմ Ֆրանսիայի* գործով 1988 թ. հոկտեմբերի 7–ի վճիռ, գանգատ թիվ 10519/83:

45. *Բրյուսկոն ընդդեմ Ֆրանսիայի* գործով 2010 թ. հոկտեմբերի 14–ի վճիռ, գանգատ թիվ 1466/07:

46. *Բրանդշտետտերն ընդդեմ Ավստրիայի* գործով 1991 թվականի օգոստոսի 28–ի վճիռ, գանգատներ թիվ 11170/84, 12876/87, 13468/87:

47. *Դևեռն ընդդեմ Բելգիայի* գործով 1980 թ. փետրվարի 27–ի վճիռ, գանգատ թիվ 6903/75:

48. *Էկլեն ընդդեմ Գերմանիայի* գործով 1982 թ. հուլիսի 15–ի վճիռ, գանգատ թիվ 8130/78:

49. *Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի* գործով 2007 թ. հունվարի 18–ի վճիռ, գանգատ թիվ 19611/04:

50. *Գ. Կ–ն ընդդեմ Լեհաստանի* գործով 2004 թ. հունվարի 20–ի վճիռ, գանգատ թիվ 38816/97:

51. *Շաբելնիկն ընդդեմ Ուկրաինայի* գործով 2009 թ. փետրվարի 19–ի վճիռ, գանգատ թիվ 16404/03:

52. *Շտոլն ընդդեմ Շվեյցարիայի* գործով 2007 թ. դեկտեմբերի 10–ի վճիռ, գանգատ թիվ 69698/01:

53. *Սթիլն ու Մորիսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2005 թ. փետրվարի 15–ի վճիռ, գանգատ թիվ 68416/01:

54. *Լագուտինը և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2014 թ. ապրիլի 24–ի վճիռ, գանգատներ թիվ 6228/09, 19123/09, 19678/07, 52340/08 և 7451/09:

55. *Էդվարդսը և Լյուիսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2004 թ. հոկտեմբերի 27–ի վճիռ, գանգատներ թիվ 39647/98, 40461/98:

56. *Դելքուրտն ընդդեմ Բելգիայի* գործով 1970 թվականի հունվարի 17–ի վճիռ, գանգատ թիվ 2689/65:

57. *Բաննիկովան ընդդեմ Ռուսաստանի* գործով 2010 թվականի նոյեմբերի 4–ի վճիռ, գանգատ թիվ 18757/06:

58. *Մոնելն ու Մորիսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 1987 թվականի մարտի 2–ի վճիռ, գանգատներ թիվ 9562/81 և 9818/82:

59. *Մատիցինան ընդդեմ Ռուսաստանի* գործով 2014 թվականի մարտի 27–ի վճիռ, գանատ թիվ 58428/10:

60. *Ռոուվն ու Դևիսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2000 թվականի փետրվարի 16–ի վճիռ, գանգատ թիվ 28901/95:

61. *Թեքսիերա դե Կաստրոնն ընդդեմ Պորտուգալիայի* գործով 1998 թվականի հուլիսի 6–ի վճիռ, գանգատ թիվ 25829/94:

62. *Վանյանն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2005 թվականի դեկտեմբերի 15–ի վճիռ, գանգատ թիվ 53203/99:

63. *Խուդոբինն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2006 թվականի հոկտեմբերի 26–ի վճիռ, գանգատ թիվ 59696/00:

64. *Վեսելովը և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2012 թվականի հոկտեմբերի 2–ի վճիռ, գանգատներ թիվ 23200/10, 24009/07 և 556/10:

65. *Յերեմցովն ու այլք ընդդեմ Ռուսաստանի* 2014 թվականի նոյեմբերի 27–ի վճիռ, գանգատներ թիվ 20696/06, 22504/06, 41167/06, 6193/07 և 18589/07:

66. *Միլինիենն ընդդեմ Լիտվայի* գործով 2008 թվականի օգոստոսի 24–ի վճիռ, գանգատ թիվ 74355/01:

67. *Նոսկոն և Նեֆյոդովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 30–ի վճիռ, գանգատ թիվ 5753/09 և 11789:

68. *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2012 թվականի հոկտեմբերի 2–ի վճիռ, գանգատ թիվ 22491/08:

69. *Սմիռնովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2007 թվականի հունիսի 7–ի վճիռ, գանգատ թիվ 71362/01:

70. *Կոլեսնիչենկոն ընդդեմ Ռոսաստանի* գործով 2009 թվականի ապրիլի 9–ի վճիռ, գանգատ թիվ 19856/04:

71. *Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2010 թվականի մարտի 16–ի վճիռ, գանգատ թիվ 25083/05:

72. *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2015 թվականի մայիսի 31–ի վճիռ, գանգատներ թիվ 9935/06, 23339/06:

73. *Հորնքաստլը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2014 թվականի դեկտեմբերի 16–ի վճիռ, գանգատ թիվ 4184/10:

74. *Տամիններն ընդդեմ Ֆինլանդիայի* գործով 2004 թվականի հունիսի 15–ի վճիռ, գանգատ թիվ 40847/98:

75. *Սեթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2015 թվականի մարտի 31–ի վճիռ, գանգատ թիվ 55287/10:

76. *Ստոյմենովն ընդդեմ Մակեդոնիայի* գործով 2007 թվականի ապրիլի 5–ի վճիռ, գանգատ թիվ 17995/02:

77. *Բանդալետովն ընդդեմ Ուկրաինայի* գործով 2013 թվականի հոկտեմբերի 31–ի վճիռ, գանգատ թիվ 23180/06:

78. *Սոբկոն ընդդեմ Ուկրաինայի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 17–ի վճիռ, գանգատ թիվ 15102/10:

79. *Հերմին ընդդեմ Իտալիայի* գործով 2006 թվականի հոկտեմբերի 18–ի վճիռ, գանգատ թիվ 18114/02:

80. *Կրուասանն ընդդեմ Գերմանիայի* գործով 1992 թվականի սեպտեմբերի 25–ի վճիռ, գանգատ թիվ 13611/88:

81. *Վոժիգովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2007 թվականի ապրիլի 26–ի վճիռ, գանգատ թիվ 5953/02:

82. *Շուլեպովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2008 թվականի հունիսի 26–ի վճիռ, գանգատ թիվ 15435/03:

83. *Սևոստյաննովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2010 թվականի ապրիլի 22–ի վճիռ, գանգատ թիվ 37024/02:

84. *Սիյրակն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2013 թվականի դեկտեմբերի 19–ի վճիռ, գանգատ թիվ 38094/05:

85. *Էդուարդ Ռոժկովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2013 թվականի հոկտեմբերի 31–իվճիռ, գանգատ թիվ 34653/04:

86. *Նեֆյոդովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2013 թվականի մարտի 13–ի վճիռ, գանգատ թիվ 40962/04:

87. *Դվորսկին ընդդեմ Խորվաթիայի* գործով 2015 թվականի հոկտեմբերի 20–ի վճիռ, գանգատ թիվ 25703/11:

88. *Գալստյանն ըմդդեմ Հայաստանի* գործով 2007 թվականի նոյեմբերի 15–ի վճիռ, գանգատ թիվ 26986/03:

89. *Էլ Հասկին ընդդեմ Բելգիայի* գործով 2012 թվականի սեպտեմբերի 25–ի վճիռ, գանգատ թիվ 649/09:

90. *Օթոմանն (Աբու Քատադան) ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2012 թվականի հունվարի 17–ի վճիռ, գանգատ թիվ 8139/09:

91. *Սալիխովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2012 թվականի մայիսի 3–ի վճիռ, գանգատ թիվ 23880/05:

92. *Հուլկի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի* գործով 2003 թվականի հունիսի 19–ի վճիռ, գանգատ թիվ 28490/95:

93. *Գոսսան ընդդեմ Լեհաստանի* գործով 2007 թվականի հունվարի 9–ի վճիռ, գանգատ թիվ 47986/99:

94. *Բալսիտե–Լիդեիկյենեն ընդդեմ Լիտվայի* գործով 2008 թվականի նոյեմբերի 4–ի վճիռ, գանգատ թիվ 72596/01:

95. *Չական ընդդեմ Ալբանիայի* գործով 2009 թվականի դեկտեմբերի 8–ի վճիռ, գանգատ թիվ 44023/02S:

96. *S. N–ն ընդդեմ Շվեդիայի* գործով 2002 թվականի հուլիսի 2–ի վճիռ, գանգատ թիվ 34209/96:

97. *W. S–ն ընդդեմ Լեհաստանի* գործով 2007 թվականի հունիսի 19–ի վճիռ, գանգատ թիվ 21508/02:

98. *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2012 թվականի ապրիլի 10–ի վճիռ, գանգատ թիվ 8088/05:

99. *Եվգենի Իվանովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2013 թվականի ապրիլի 25–ի վճիռ, գանգատ թիվ 27100/03:

100. *Բլոխինն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2016 թվականի մարտի 23–ի վճիռ, գանգատ թիվ 47152/06:

101. *Բոդեշն ընդդեմ Ռումինիայի* գործով 2013 թվականի հուլիսի 18–ի վճիռ, գանգատ թիվ 29752/05:

102. *Վրոնչենկոն ընդդեմ Էստոնիայի* գործով 2013 թվականի հուլիսի 18–ի վճիռ, գանգատ թիվ 59632/09:

103. *Ցեբերն ընդդեմ Չեխիայի* գործով 2012 թվականի նոյեմբերի 22–ի վճիռ, գանգատ թիվ 46203/08:

104. *Կոստեցկին ընդդեմ Լեհաստանի* գործով 2013 թվականի հունիսի 4–ի վճիռ, գանգատ թիվ 14932/09:

105. *Պրաժինան ընդդեմ Ռումինիայի* գործով 2014 թվականի հունվարի 7–ի վճիռ, գանգատ թիվ 5592/05:

106. *Ֆավրովիչն ընդդեմ Լեհաստանի* գործով 2012 թվականի ապրիլի 17–ի վճիռ, գանգատ թիվ 43609/07:

107. *Նեչտոն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2012 թվականի հունվարի 24–ի վճիռ, գանգատ թիվ 24893/05:

108. *Սիգմատուլինն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2012 թվականի ապրիլի 24–ի վճիռ, գանգատ թիվ 1413/05:

109. *Մաքգլինն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2012 թվականի հոկտեմբերի 16–ի վճիռ, գանգատ թիվ 40612/11:

110. *Գարոֆոլոն ընդդեմ Շվեյցարիայի* գործով 2013 թվականի ապրիլի 2–ի վճիռ, գանգատ թիվ 4380/09:

111. *Պիչուգինն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2012 թվականի հոկտեմբերի 23–ի վճիռ, գանգատ թիվ 38623/03:

112. *Նիկոլիտսասն ընդդեմ Հունաստանի* գործով 2014 թվականի հուլիսի 3–ի վճիռ, գանգատ թիվ 63117/09:

113. *Ա. Գ–ն ընդդեմ Շվեդիայի* գործով 2012 թվականի հունվարի 10–ի վճիռ,գանգատ թիվ 315/09:

114. *Զմուրան ընդդեմ Լեհաստանի* գործով 2012 թվականի ապրիլի 3–ի վճիռ, գանգատ թիվ 18475/05:

115. *Դ. Տ–ն ընդդեմ Նիդերլանդների* գործով 2013 թվականի ապրիլի 2–ի վճիռ, գանգատ թիվ 25307/10:

116. *Ռոսինն ընդդեմ Էստոնիայի* գործով 2013 թվականի դեկտեմբերի 19–ի վճիռ, գանգատ թիվ 26540/08:

117. *Գոնսալես Նաջերան ընդդեմ Իսպանիայի* գործով 2014 թվականի ապրիլի 11–ի վճիռ, գանգատ թիվ 61047/13:

118. *Սիկան ընդդեմ Ռումինիայի* գործով 2009 թվականի հուլիսի 9–ի վճիռ, գանգատ թիվ 12036/05:

119. *Պրաժինան ընդդեմ Ռումինիայի* գործով 2014 թվականի հունվարի 7–ի վճիռ, գանգատ թիվ 5592/05:

120. *Բրզուժինսկին ընդդեմ Լեհաստանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 17–ի վճիռ, գանգատ թիվ 23789/09:

121. *Գոնսալես Նաջերան ընդդեմ Իսպանիայի* գործով 2014 թվականի ապրիլի 11–ի վճիռ, գանգատ թիվ 61047/13:

122. *Շոլերն ընդդեմ Գերմանիայի* գործով 2014 թվականի դեկտեմբերի 18–ի վճիռ, գանգատ թիվ 14212/10:

123. *Ա. Գ–ն ընդդեմ Շվեդիայի* գործով 2012 թվականի հունվարի 10–ի վճիռ, գանգատ թիվ 315/09:

124. *Էյնգերն ընդդեմ Ավստրիայի* գործով 2012 թվականի մայիսի 10–ի վճիռ, գանգատ թիվ 28328/03:

125. *Տրամպեվսկին ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրապետության* գործով 2012 թվականի հուլիսի 10–ի վճիռ, գանգատ թիվ 4570/07:

126. *Վերդամն ընդդեմ Նիդերլանդների* գործով 1999 թվականի օգոստոսի 31–ի վճիռ գանգատ թիվ 35253/97:

127. *Մելոունն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 1984 թվականի օգոստոսի 2–ի վճիռ, գանգատ թիվ 8691/79:

128. *Զախարովն ընդդեմ Ռուսաստանի* գործով [ՄՊ] 2015 թվականի դեկտեմբերի 4–ի վճիռ, գանգատ թիվ 47143/06:

129. *Ջ. Հ–ն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2001 թվականի սեպտեմբերի 2–ի վճիռ, գանգատ թիվ 44787/98:

130. *Քոպլադն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2007 թվականի ապրիլի 3–ի վճիռ, գանգատ թիվ 62617/00:

131. *Ուզունն ընդդեմ Գերմանիայի* գործով 2010 թվականի սեպտեմբերի 2–ի վճիռ, գանգատ թիվ 35623/05:

132. *Բիկովն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2009 թվականի մարտի 10–ի վճիռ, գանգատ թիվ 4378/02:

133. *Պեկն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2009 թվականի հունվարի 28–ի վճիռ, գանգատ թիվ 44647/98:

134. *Պերին ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2003 թվականի սեպտեմբերի 25–ի վճիռ, գանգատ թիվ 63737/00:

135. *Պեևն ընդդեմ Բուլղարիայի* գործով 2007 թվականի հուլիսի 26–ի վճիռ, գանգատ թիվ 64209/01:

136. *Իմակաևն ընդդեմ Ռուսաստանի* գործով 2006 թվականի նոյեմբերի 9–ի վճիռ, գանգատ թիվ 7615/02:

137. *Բակն ընդդեմ Գերմանիայի* գործով 2005 թվականի ապրիլի 28–ի վճիռ, գանգատ թիվ 41604/98:

138. *Կուչերան ընդդեմ Լեհաստանի* գործով 2007 թվականի հունիսի 17–ի վճիռ, գանգատ թիվ 48666/99:

139. *Ջիլիանը և Քվինտոն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2010 թվականի հունվարի 12–ի վճիռ, գանգատ թիվ 4158/05:

140. *Պրեթին ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 2008 թվականի ապրիլի 29–ի վճիռ, գանգատ թիվ 2346/02:

141. *«Եվրոֆինակոմն» ընդդեմ Ֆրանսիայի* գործով 2004 թվականի սեպտեմբերի 7–ի վճիռ, գանգատ թիվ 58753/00:

142. *Վոլկովն ու Ադամսկին ընդդեմ Ռուսաստանի* գործով 2015 թվականի մարտի 26–ի վճիռ, գանգատներ թիվ 7614/09 և 30863//10:

143. *Կրոմբախն ընդդեմ Ֆրանսիայի* գործով 2001 թվականի փետրվարի 13–ի վճիռ, գանգատ թիվ 29731/96:

144. *Օջալանն ընդդեմ Թուրքիայի* գործով 2003 թվականի մայիսի 12–ի վճիռ, գանգատ թիվ 46221/99:

145. *Իմբրիոսցիան ընդդեմ Շվեյցարիայի* գործով 1993 թ. նոյեմբերի 24–ի վճիռ, գանգատ թիվ 13972/88:

146. *«Եվրոֆինակոմն» ընդդեմ Ֆրանսիայի* գործով 2004 թ. սեպտեմբերի 7–ի վճիռ, գանգատ թիվ 58753/00:

147. *Դիմովիչն ընդդեմ Սերբիայի* գործով 2016 թ. հունիսի 28–ի վճիռ, գանգատ թիվ 24463/11:

148. *Մալինինասն ընդդեմ Լիտվայի* գործով 2008 թ. հուլիսի 1–ի վճիռ, գանգատ թիվ 10071/04:

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներ

1. Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ գործով 2010 թ. փետրվարի 12–ի թիվ ԵՔՐԴ/0632/01/08 որոշում:

2. Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի վերաբերյալ գործով 2014 թ. հոկտեմբերի 31–ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշում:

3. Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով 2011 թ. դեկտեմբերի 22–ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշում:

4. Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի վերաբերյալ գործով 2011 թ. դեկտեմբերի 22–ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշում:

5. Մարգար Հակոբյանի վերաբերյալ գործով ՎԴ–ի 2013 թ. մայիսի 8–ի թիվ ԵԿԴ/0168/01/12 որոշում:

6. Կարեն Սարուխանյանի վերաբերյալ գործով 2010 թ. օգոստոսի 27–ի թիվ ԼԴ/0301/01/09 որոշում:

7. Արայիկ Գզոյանի վերաբերյալ գործով 2010 թ. փետրվարի 12–ի թիվ ԵԱՔԴ/0049/01/09 որոշում:

8. Հեղինե Գալստյանի վերաբերյալ գործով 2015 թ. հունիսի 5–ի թիվ ԼԴ/0051/01/14 որոշում:

9. Անդրանիկ Ավետիսյանի վերաբերյալ գործով 2011 թ. հուլիսի 13–ի թիվ ԵԱՆԴ/0091/01/09 որոշում:

10. Էդվարդ Ադամյանի վերաբերյալ գործով 2014 թ. դեկտեմբերի 16–ի թիվ ԵԷԴ/0048/01/14 որոշում:

11. Գագիկ Միքայելյանի վերաբերյալ գործով 2009 թ. դեկտեմբերի 18–ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշում:

12. Մելինե Մարգարյանի վերաբերյալ գործով 2012 թ. նոյեմբերի 1–ի թիվ ԵԿԴ/0081/01/11 որոշում:

13. Արմեն Սարգսյանի վերաբերյալ գործով 2009 թ. սեպտեմբերի 16–ի թիվ ԵՔՐԴ/0295/01/08 որոշում:

14. Նաիրա Գելաշվիլու վերաբերյալ գործով 2007 թ. մայիսի 4–ի թիվ ՎԲ–72/07 որոշում:

15. Սարիբեկ Հարությունյանի վերաբերյալ գործով 2014 թ. մայիսի 31–ի թիվ ԵԱՔԴ/0189/01/12 որոշում:

16. «Արարատբանկ» ԲԲ ընկերության վերաբերյալ գործով 2013 թ. սեպտեմբերի 13–ի թիվ ԱՎԴ/0015/07/13 որոշում:

17. Կարեն Հարությունյանի և մյուսների վերաբերյալ գործով 2014 թ. օգոստոսի 15–ի թիվ ԵԿԴ/0223/07/14 որոշում:

18. Գ. Սարգսյանի վերաբերյալ գործով 2013 թ. սեպտեմբերի 13–ի թիվ ԱՎԴ/0015/07/13 որոշում:

19. Ս. Թադևոսյանի վերաբերյալ գործով 2015 թ. դեկտեմբերի 18–ի թիվ ԵՇԴ/0073/07/15 որոշում:

20. Ժիրայր Սեֆիլյանի վերաբերյալ գործով 2014 թ. մայիսի 31–ի թիվ ՎԲ–07/ 13 որոշում:

21. Նորիկ Պողոսյանի վերաբերյալ գործով 2010 թ. մարտի 26–ի թիվ ՀՅՔՐԴ2/0153/01/08 որոշում:

22. Համայակ Սահակյանի վերաբերյալ գործով 2011 թ. նոյեմբերի 20–ի թիվ ԼԴ/0212/01/10 որոշում:

23. Գառնիկ Գալստնյանի վերաբերյալ գործով 2014 թ. դեկտեմբերի 16–ի թիվ ԵՄԴ/0027/01/14 որոշում:

24. Հարություն Սարգսյանի վերաբերյալ գործով 2015 թ. փետրվարի 27–ի թիվ ՇԴ/0172/01/12 որոշում:

Օգտագործված գրականություն

1. Դ. Մելքոնյան, Ապացույցների թույլատրելիության եվրոպական չափանիշները, «Պետություն և իրավունք», N 4 (42), 2008, էջ 14–19:

2. Դ. Մելքոնյան, Ս. Հարությունյան, ՄԻԵԴ նախադեպային իրավունքի հիմնահարցերը քրեական գործերով, Ուսումնական ձեռնարկ, Եվրոպայի խորհուրդ, Արդարադատության Ակադեմիա, Երևան, 2015, 144 էջ:

3. Դավիթ Խաչատուրյան, Ապացույցների թույլատրելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիմնական նախադեպային դիրքորոշումները, Մարդու իրավուքնների եվրոպական դատարանի լրատու, N 3, 2008, էջ 3–40:

4. Դավիդաս Վիտկաուսկաս, Գրիգորի Դիկով, Արդար դատաքննության պաշտպանությունը ՄԻԵԿ–ի լույսի ներքո, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների վերաբերյալ ձեռնարկ, Ստրասբուրգ, 2012, 112 էջ:

5. J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 68.

6. I. Roagna, Protecting the Right to Respect for Private and Family Life under the European Convention on Human Rights, Council of Europe Human Rights Handbooks (2012 Council of Europe Publishing), p. 51–52.

Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ–97» ՍՊԸ–ի տպարանում
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+374 10) 23 25 28
էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak